

ՄԵԹՐ ՍՄԲԱՏ ՏԷՎԼԵԹԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ
ԷՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՍՓԻՒՔԻՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Յառաջարան եւ յաւելում
Դոկտ. Վաչէ Ղազարեանի

Փորժամուրթ, Ռոտ Այլընտ

2024

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ ԷՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՍՓԻԻՌԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ



Սմբատ Տեվելթեան

ՄԵԹՐ ՍՄԲԱՏ ՏԷՎԼԵԹԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍԻ ՏԱԳՆԱՊԻՆ
ԷՈՒԹԻՒՆԸ
ԵՒ
ՍՓԻՒՌԻՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ

Յառաջարան եւ յաւելուած
Դոկտ. Վաչէ Ղազարեանի

Փորթամուրթ, Ռոտ Այլընտ
2024

Library of Congress Control Number: 2024901386

Author: Smpad Devletian, Esq.
(Smp'at Tēvlēt'ean, Esq.)

Title: *The Essence of the Crisis of Antelias and the Responsibility of the Diaspora*
[Ant'iliasi Tagnabin ēutiwně Ew Sp'iwrk'in Pataskhanatuut'iwne]

Language: Armenian

Subjects:

Armenian Apostolic Church
Armenian Apostolic Church Unity
Conflict between the Cathilocaste of St. Etchmiadzin and Catholicosate of
Cilicia
Policies of the Armenian Democratic Liberal Party and the Armenian
Revolutionary Federation regarding the issue of church unity

Copyright © 2024 by Vatche Ghazarian
All Rights reserved under International and Pan-American Copyright Conventions.

Printed in the United States of America

ISBN: 978-1-931834-51-3

Mayreni Publishing, 2024

Բովանդակություն

Այս աշխատությունը (Դոկտ. Վաչէ Ղազարեան)	7
1. Ներածական	17
2. Սկզբնական իրողություններ	19
3. Երուսաղեմի Ողջագուրումը - Առաջին մերձեցում	21
4. Հայց. Եկեղեցիին նուիրապետական դրությունը	23
5. Թիւ 32 եւ 33 Յօդուածները	38
6. Երկրորդ մերձեցում տազնապի լուծումին համար	39
7. Աթոռակից-Կաթողիկոսի ընտրությունը Երրորդ մերձեցում - համերաշխութեան նոր ճիգեր ⁴²	
8. Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան յաջորդող բանակցությունները - Չորրորդ մերձեցում	53
9. Վերջին խօսակցություններուն հետեւող վիճակը	61
10. Որքան դատարկ են մեր վեճերը	70
11. Անկե՞ղծ է Անթիլիաս իր յայտարարություններուն ու կեցուածքին մէջ	71
12. Եկեղեցական-թեմական դրությունը թիւ 32 եւ 33 Յօդուածներու յապաւումէն յետոյ	78
13. Թիւ 32 եւ 33 Յօդուածներով ստեղծուած իրաւական վիճակը	79
14. «Հայրենիք»ին խմբագրականը եւ Անթիլիասի վերագրուած դերը	81
15. Անթիլիաս չհերքեց ըստածները	85
16. Երկուությունը	86
17. Անթիլիասի գործունէութեան բնոյթը	87
18. Կաթողիկոսներուն յաջորդները անոնց հոգիին ժառանգորդները չեն	96
19. Լուծելի՞ է Կիլիկիոյ Աթոռին տազնապը	98
20. Պաշտպանել Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անկախությունը	103
21. Կիլիկիոյ Աթոռը եւ Դաշնակցությունը - Դաշնակցությունը եւ մեր Եկեղեցին	105

22. Դաշնակցություն, Հայրենիք եւ Հայություն	111
23. Կարելի՞ է համերաշխությունը, գործակցությունը Դաշնակցության հետ	118
24. Լիբանանահայությունը կը բաղձայ անդորր գոյակցություն	122
25. Վերջին ջանք մըն ալ	123
26. Առաջարկ յառաջադրանքի եւ աշխատանքի	126
27. Տագնապին լուծումը պաշարող խորհրդածություններ	136
 Օգտագործուած կամ յիշատակուած աղբիւրներ	141
 Յաւելում	
Քաղումքներ ՌԱԿ-ի Ընդհանուր Պատգամաւորական Ժողովներու որոշումներէն եւ շրջաբերականներէն	145

ԱՅՍ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞ւ Հրապարակումը Այս Աշխատության

Տեվլեթեանի այս անտիպ աշխատությունը, որ լոյս տեսած պետք է ըլլար 1980ականներու երկրորդ կիսուն եւ որ, սակայն, ազգային իրադարձութիւններու բերումով զրկուած մնացած էր լոյսի բարիքէն, կը հրապարակուի իբրեւ պատմական վաւերագիր՝ առանց հետապնդելու վերաբարձումը վէճերու, որոնք մեր մօտիկ անցեալին բաւական մեղան հոսեցուցած էին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծոցին մէջ ներքին եւ արտաքին ազդակներու ազդեցութեամբ ստեղծուած տագնապին շուրջ:

Կարելի է զայն համարել խղճի պարտք մը հանդէպ սրտցաւ հայու մը, որ տքնած էր, ինչպէս ընթերցողը պիտի կարենայ հաստատել, լուրջ եւ առարկայական վաւերագրի մը պատրաստութեան վրայ եւ անկէ անձնական օրինակ մը յանձնած էր տողերս գրողին Նիկոսիոյ մէջ մեր հանդիպումներէն մէկուն ընթացքին:

Այդ պահուն, ցաւ կար իր բառերուն մէջ իր ուսումնասիրութեան հրապարակման յապաղումին համար: Կա՛ր բռնուն փափաքը զայն հրատարակուած տեսնելու: Կա՛ր նաեւ մտահոգութիւնը՝ թէ յապաղումը կրնար դառնալ աւաղանք մը յումպլետս վատնուած ժամանակի, եթէ յանգեր սկզբնական ծրագրի թողլըսմին:

Հեղինակը

Ասպարէզով իրաւաբան, թունդ հայրենասէր, ազգային-քաղաքական կողմնորոշումով ռամկավար ազատական, հոգեխառնութեամբ բանաստեղծ Սմբատ Տեվլեթեան (1923–2016) զաւակն էր Մուսթաֆա Զեմալի թրքական ազգայնական շարժման հայաջինջ քաղաքականութեան պատճառով հայրենի օճախը ետին ձգած եւ Յունաստան ապաստան գտած գաղթական ընտանիքի մը:

1936-ին, հայկական ուսումնական հաստատութեան մը մէջ հայեցի հիմնաւոր կրթութեան հետեւելու պատեհութիւն տալու համար իրեն, ծնողքը զինք կը դրկեն Նիկոսիոյ Մելգոնեան Վարժարանը, ուր իր ուշիմութեամբ կը յաջողի արագօրէն իւրացնել օտար լեզուներն ու գրաւել իր դասատուներուն ուշադրութիւնը իր գրական հակումներով:

Շրջանաւարտութենէ անմիջապէս ետք, Բ. Աշխարհամարտի օրերուն, ծառայութեան կը մտնէ անգլիական բանակին մէջ եւ պատերազմը տակաւին չաւարտած՝ զինք կը գտնենք լծուած ազգային աշխոյժ գործունէութեան, 1944-ին դառնալով հիմնադիրներէն մին Կիպրոսի Հայաստանի Բարեկամաց Միութեան:

Իր հայրենասիրական զգացումները զինք կը մղեն հրաժարելու անգլիացիներու մօտ իր աշխատանքէն՝ հայրենիքի մէջ մասնակցելու Գրողներու Միութեան Բ. համագումարին, 1946-ին, իր ուսուցչին՝ Վահէ-Վահեանի եւ խումբ մը այլ սփիւռքահայ գրողներու կողքին:

Վերադարձին՝ կը նուիրուի հայրենադարձութեան կազմակերպման աշխատանքին՝ իբրեւ անդամ Կիպրահայ Ներգաղթի Կոմիտէին, անտեսելով կասկածանքի եւ հալածանքի մթնոլորտը, որ ստեղծուած էր իր դէմ Հայաստան այցելած ըլլալուն համար:

1956-ին վկայեալ իրաւաբան է ան՝ իր սեփական գրասենեակով:

Այնուհետեւ՝:

Տէվլէթեան, որպէս 1959-ին նորագիր անդամ Ռամկավար Ազատական Կուսակցութեան, նորանկախ Կիպրոսի հայ համայնքի ներկայացուցիչ ընտրութիւններու օրերուն կ'ունենայ հիմնական դերակատարութիւն՝ ապահովելով հայրենասիրական ճակատի թեկնածուին յաղթանակը: Որպէս անդամ եւ ապա ատենապետ մաս կը կազմէ ազգային վարժարաններու հոգաբարձութեան, միաժամանակ ստանձնելով ատենադպրութիւնը Մելգոնեան Վարժարանի հոգաբարձութեան, զոր կը վարէ քառորդ դար անընդմիջաբար:

Զանազան թերթերու խմբագիր կամ աշխատակից՝ Սմբատ Տէրունեան գրչանունով ունի վեց բանաստեղծական հատորներ՝ «Մինչեւ Վերադարձ» (1946), «Լսէ, Տղաս» (1948), «Յամեցող Այգաբաց» (1959), «Ճառագայթ Ու Մշուշ» (1968), «Տարագիր Տաղեր» (1996) եւ «Արձագանգ Ու Յոլք» (2008): Իր բանաստեղծութիւններուն մէկ մասը երկու զանազան առիթներով մէկտեղուած են նաեւ Հայաստան հրատարակուած առանձին հատորի մը, ապա նաեւ ժողովածոյի մը մէջ: Իր չափածոյ երկերուն մէջ ընթերցողը կը գտնէ ինքնուրոյն գրական դիմագիծով, ազնուական ապրումներով զգայուն քերթող մը:

Աշխատութիւնը

Տէվլէթեան գտնուելով ՌԱԿ-ի տեղական թէ համագաղութային առումներով դեկավար դիրքերու վրայ՝ իբրեւ մասնակից Ընդհանուր Պատգամաւորական Ժողովներու եւ շրջան մըն ալ անդամ կուսակցու-

թեան Կեդրոնական Վարչութեան, իրմէ խնդրուած էր պատրաստել Էջմիածնայ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջեւ ստեղծուած տագնապին ու Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան վերահաստատման վերաբերեալ ուսումնասիրութիւն մը, ուր ներկայացուէին երկուստեք պարզուած կեցումքները, տարուող բանակցութիւններու ընթացքը եւ լուծման մը յանգելու տրամաբանական ուղին:

Տէվլէթեան ընդառաջած էր խնդրանքին եւ լծուած բծախնդիր աշխատանքի, ի գործ դնելով իր իրաւաբանի հմտութիւնն ու իրաւաբանէ մը սպասուող մերձեցում,- մշակումը փաստերու լեզուով առարկայական ուսումնասիրութեան մը:

ՌԱԿ Կեդրոնական Վարչութեան (այսուհետեւ՝ ՌԱԿԿՎ) 29 Նոյեմբեր 1983-ի նիստի ընթացքին ատենապետ Հրաչեայ Մեղրակեան կը տեղեկացնէ թէ Սմբատ Տէվլէթեան հեռաձայնային հաղորդակցութեամբ «յայտնած է Հայց. Եկեղեցւոյ միութեան խնդրով իրմէ ակնկալուած ծաւալուն ուսումնասիրութիւնը պատրաստած ըլլալը»:

Ապա, նոյն վարչութեան 10 Յունուար 1984-ի նիստի ատենագրութենէն կը պարզուի թէ Տէրունեան Կիպրոս այցելած Արամ Մէփէթեանի միջոցով հաղորդած է թէ շուտով «աւարտին պիտի հասցնէ Հայց. Եկեղեցւոյ միութեան խնդրով իր պատրաստած ուսումնասիրութեան մեքենագրումը եւ զայն պիտի ուղարկէ [ՌԱԿ-ի Կեդրոնական] Վարչութեան»:

29 Ապրիլ 1984-ին կայացած նիստի ատենագրութենէն կը պարզուի թէ Սմբատ Տէրունեան իր 12 Մարտ 1984 թուակիրով ՌԱԿԿՎ-ի ներկայացուցած է երկու օրինակ «ազգային-եկեղեցական տագնապի մասին իր պատրաստած ուսումնասիրութենէն» եւ թէ որոշուած է հեղինակին ուղղել շնորհակալական նամակ մը եւ «ուսումնասիրութիւնը առանձնաբար կարդալ եւ հաւաքաբար քննարկելէ ետք ճշդել զայն հրատարակելու հարցը»:

Յաջորդ նիստի ընթացքին, կայացած 20 Մայիս 1984-ին, ՌԱԿԿՎ-ն կ'որոշէ «Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւններու հարց»ին վերաբերող ուսումնասիրութիւնը հրատարակելէ առաջ «ունենալ նաեւ [Վազգէն Ա.] Վեհափառին կարծիքը»:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա.ի կարծիքն ունենալու պատեհութիւնը չ'ուշանար:

ՌԱԿԿՎ-ի ատենապետ Հրաչեայ Մեղրակեան Յունիսին Վազգէն Ա.ի հետ հանդիպումներ կ'ունենայ Փարիզի մէջ, ուր կը գտնուէր նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ. Սարգիսեան՝ բանակցելու Հայց.

Եկեղեցւոյ միութեան հարցով:

Ըստ ՌԱԿԿՎ-ի 30 Յունիս 1984-ի նիստի ատենագրութեան, Սեդրակեան աշխատանք տարած էր որ երկու կաթողիկոսներու «հանդիպումն անցնի անաղմուկ եւ չառնէ ողջագործումի ձեւ»: Վազգէն Ա. համաձայն գտնուած էր Սեդրակեանի առաջարկին եւ Գիւտ Սրբազան պապի ուղղութեամբ գործադրած էր ամէն ջանք, որպէսզի անաղմուկ անցնին հանդիպումները, որոնցմէ առաջինին ներկայ եղած է ՀԲԸՄ-ի նախագահ Ալեք Մանուկեան, իսկ երկրորդին, ենթադրաբար, լիբանանեան խորհրդարանի անդամ եւ զանազան նախարարական պաշտօններ վարած Խաչիկ Պապիկեան, որ առանցքային դերակատարութիւն ունէր ազգային կեդրոնական վարչութեան մէջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին փափաքով կայացած հանդիպման զլխաւոր քննարկումը վերաբերած էր Ամերիկայի երկու թեմերու միացման կարելիութեան: «Վեհափառը պնդած է որ միանալէ առաջ անթիփասական թեմը պէտք է ընդունի Էջմիածնի գերագահութիւնը, մինչ Գարեգին Բ. ուզած է որ երկու թեմերը նախ առանց պայմանի բարեկամանան եւ ապա միայն կատարուի անոնց միացումը»: Ատենագրութիւնը յաւելուածաբար կը նշէր թէ Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմի առաջնորդ Թորգոմ Արք. Մանուկեան Յուլիսին Էջմիածին պիտի մեկնէր նոյն հարցին կապակցութեամբ եւ թէ երկու կաթողիկոսները քննարկած էին նաեւ երկու Աթոռներու միջեւ ատենէ մը ի վեր ընդհատուած բանակցութիւններու վերսկսման կարելիութիւնը:

Կը նշուէր նաեւ. «Ընկ. Սեդրակեան ... շեշտած է թէ Ամերիկայի թեմերու միացումը մասնակի խնդիր մըն է միայն, հետեւաբար պայման է որ նախկինին նման արծարծուին Էջմիածնի կողմէ յառաջադրուած 5 կէտերը, որոնք անտեսուած մնացած են երկու կաթողիկոսներու այս հանդիպման ընթացքին: Ապա նշած է թէ Կուսակցութիւնս դեմ չէ բանակցութիւններու վերսկսման՝ եթէ Անթիփաս ուզէ ընդունիլ Էջմիածնի 5 կէտերը, միաժամանակ պայման դնելով որ բանակցութեանց համար կազմուելիք Էջմիածնական պատուիրակութեան մէջ ընդգրկուին մեր Շրջանակէն աշխարհական բանագնացներ...: Վեհափառը այս գծով յայտնած է իր սկզբունքային համաձայնութիւնը»:

Գալով Ս. Տէվլեթեանի խնդրոյ առարկայ ուսումնասիրութեան, «մեծապէս շահագրգռուած անով՝ Վեհը ուզած է զայն տեսնել, բայց առիթ չէ ունեցած կարծիք յայտնելու»:

Ուսումնասիրութեան վերաբերող յաջորդ արձանագրութեան կը հանդիպինք ՌԱԿԿՎ-ի 27 Հոկտեմբեր 1984-ի նիստի ատենագրութեան՝

Հ. Սեդրակեանի Հայաստան կատարած այցելութեան համարատուութեան բաժնին մէջ:

Սեդրակեան Էջմիածնի մէջ Վեհափառին հետ ունեցած է երեք երկար հանդիպում՝ քննարկելով «գաղութները յուզող բոլոր կարեւոր հարցերը»:

«Էջմիածին-Անթիլիաս յարաբերութեանց գծով պարզուել է թէ փարիզեան հանդիպումէն ետք, Գարեգին Բ. բանակցութիւնները վերսկսելու միտումով սիրալիր նամակ մը յղած է Վեհին ... Վազգէն Ա. համամիտ գտնուած է որ այսուհետեւ Անթիլիասի Աթոռի գահակալին հետ միատեղ հաղորդագրութիւններ կամ կոնդակներ չհրապարակուին, ապա հաստատուած է թէ Անթիլիասի նկատմամբ մեր [իմա՝ ՌԱԿ-ի- Վ.Դ.] որդեգրած ընդդիմադիրի կեցուածքն է ճիշդը եւ ոչ թէ հնչակեաններուն թոյլ ու զիջողական վարքագիծը, ցորչափ Էջմիածին-Անթիլիաս էական տարակարծութիւնները կը գոյատևեն»:

Սեդրակեան կ'աւելցնէ. «Ընկ. Սմբատ Տէվլէթեանի ուսումնասիրութեան մասին Վեհին կարծիքը շատ դրական է եւ յարմար կը գտնէ անոր հրատարակումը՝ առաջարկելով Ա. հատուածին ամփոփումն ու քանի մը փոքր ճշդումներ»:

ՌԱԿԿՎ-ի յաջորդ նիստին՝ 2 Նոյեմբեր 1984-ին, կ'որոշուի ուսումնասիրութիւնը իբրեւ թերթօն հրատարակել «Չարթօնք»ի մէջ եւ ապա զայն վերածել գիրքի:

Կը թուի թէ գործադրութեան անցնելէ առաջ, որոշումը փոխանցուած է հեղինակին, որմէ ստացուած է 7 Դեկտեմբեր 1984 թուակիր նամակ մը, որուն մասին 24 Դեկտեմբեր 1984-ի նիստի ատենագրութեան մէջ կը կարդանք թէ Տէրունեան իր ուսումնասիրութեան «... հրատարակութեան կապակցութեամբ կը ներկայացնէր կարգ մը պահանջներ» եւ թէ «նամակով բանաձեւուած առաջարկներուն հանգամանալի քննարկումը» յետաձգուած է յառաջիկայ նիստի մը:

Ուսումնասիրութեան վերաբերող յաջորդ արձանագրութեան կը հանդիպինք 3–4 Յունիս 1985-ին ՌԱԿԿՎ-ի Լառնագայի մէջ կայացուցած բացառիկ նստաշրջանի ատենագրութեան մէջ: Նիստերուն կը մասնակցէին Կեդրոնական Վարչութեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի ենթակազմի կարգ մը անդամներ եւս:

Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւններու քննարկումի ընթացքին ժողովականները կը հաստատեն թէ «ոչ մէկ դրական քայլ առնուած է ցարդ Անթիլիասի կողմէ եւ ոչ մէկ դրական նոր տուեալ կայ ներկայիս այդ յարաբերութիւններու բարուրքման ուղղութեամբ, ընդհակառակը՝ Անթիլիաս կը շարունակէ առաւելագոյն չափով օգտուիլ Վազգէն Ա. Վեհափառին բարի

տրամադրությունն ու շարունակել իր ծաւալողական գործունեությունը:

Իբրեւ ընդհանուր եզրակացությւն՝ որոշուեցաւ.-

1. Հայերէնով, ապա նաեւ անգլերէնով, հրատարակել ընկ. Մերթ Սմբատ Տէվէթեանի ուսումնասիրությունը Էջմիածին-Անթիլիաս յարաբերություններու մասին, անոր կցելով վաթսունականներուն յոյս տեսած այն նիւթերը, որոնք փաստացի տուեալներով կը պարզէին էությունը Էջմիածին-Անթիլիաս տագնապին: Ընկերներ Ուգունեան եւ Ազատեան յանձն առին ուսումնասիրութեան հրատարակման եղանակին շուրջ խորհրդակցիլ ընկ. Տէվէթեանի հետ:

2.- Գրքոյկով մը մերկացնել Գարեգին Բ. Կաթողիկոսի կեղծ-հաշտարար ընթացքը, բաղդատական պատկերը տալով անոր հայերէնով եւ օտար լեզուներով կատարած զիրար հակասող յայտարարություններուն, որոնք կը միտին արտաքին ճակատի վրայ ամրապնդելու Անթիլիասի հեղինակությունը Էջմիածնի հաշուոյն, իսկ ներքին ճակատի վրայ բթացնելու Էջմիածնի լիաթէք գերագահութեան ի խնդիր տարուող պայքարը: Այս գրքոյկին պատրաստությունը վստահուեցաւ ընկ. Ղազարեանի:

3.- Ամենայն Հայոց Հայրապետին յղել յուշագիր մը՝ շեշտելու որ Էջմիածին-Անթիլիաս բանակցություններու ժամանակ հետեւողականօրէն նկատի առնուին Էջմիածնի յառաջադրած 5 կէտերը...:

4.- Այս գծով ի հարկին աշխատանք տանիլ Հայաստանի պետական մարմիններու մօտ ալ»:

* * *

Տէվէթեանի աշխատութեան վերաբերեալ 1985-ի Յունիսի բացառիկ նստաշրջանէն ետք արձանագրություններ չեն կատարուած: 1987-ի վերջերուն արդէն կուսակցությունը սկսած էր հիմնական ուշադրութեան առարկայ դարձնել Լեւոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին կամ Արցախի Խորհրդային Հայաստանի վերակցման հարցը, որուն կապակցութեամբ յուշագիր մը ներկայացուած էր Կորպաչէի իր Միացեալ Նահանգներ այցելութեան առիթով 29 Նոյեմբեր 1987-ին: Քիչ անց՝ սկսած էին սաստկանալ Արցախի վերաբերող պահանջատիրական ցոյցերը, իսկ 1988-ի Դեկտեմբեր 7-ին վրայ հասած էր Սպիտակի աղէտը, որուն հետեւանքները համազգային ճիգերով դարմանելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը տուած էին ձեռք ձեռքի: Շատ հաւանաբար այս իրադարձություններն ու ստեղծուած նոր կացությունը Հայաստանի եւ Արցախի մէջ, ինչպէս նաեւ սփիւռքի տարածքին,

անկախման ապա նաև մոռացության մատնած էին աշխատության հրատարակությունը:

Հակիրճ նախապատմություն

Տեվլեթեան իր աշխատությունը կը սկսի 20 Փետրուար 1956-ին Հալեպի թեմի առաջնորդ Չարեհ Եպսկ. Փայասեանի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս դառնալու թուականը յիշատակելով:

Ան չէ շօշափած, եւ իր ծրագրին արդէն մաս չէր կազմեր շօշափել, թէ ինչ էր եղած դիրքը ՌԱԿ-ի դեկալարութեան 1940-ի վերջերէն մինչեւ այդ պահը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերաբերող հարցերու կապակցութեամբ, հետեւաբար անհրաժեշտ նկատեցինք ներկայացնել այդ շրջանին յատուկ կարգ մը տուեալներ, զանոնք քաղելով ՌԱԿԿՎ-ի ատենագրութիւններէն:

Կը պարզուի որ տակաւին Գարեգին Ա. Յովսէփեանցի վախճանումէն առաջ, տակաւին 1947-էն սկսեալ, ՌԱԿ-ը մտահոգ էր Անթիլիասը ներսէն ձեռք անցնելու նպատակով ՀՅԴ-ի տարած աշխատանքէն՝ դպրեվանք ուսանողներ ու հսկիչներ տեղադրելով:

12 Մարտ 1950-ին կը հաղորդուի թէ Դաշնակցութիւնը կ'աշխատի Ազգային Կեդրոնական Վարչութիւնը ձեռք անցնել, որով եւ կը մտածուի լծուիլ Ազգային Ժողովը յետաձգելու աշխատանքի, որովհետեւ նման յետաձգումի մը համար օրինական պատճառներ էին «Հալեպի թեմին երեսփոխաններուն օրինական հանգամանք չունենալը, քանի նոյն թեմին ազգ. երեսփոխանական ընտրութիւնները [Սուրիոյ նախագահ] Չօրավար [Հիւսնի] Չաիմի բռնատիրական օրերուն տեղի ունեցած էին՝ կազմակերպութեամբ եւ մասնակցութեամբ միմիայն դաշնակցականներուն. նոյնպէս՝ Դամասկոսի թեմին գաւառականի ընտրութեանց կատարուած չլլալը տակաւին, ինչպէս նաեւ Կիպրոսի թեմական ընտրութեանց օրէնքին կարգ մը փոփոխութիւնները որոնք վաւերացուած չէին»:

7 Ապրիլէն 15 Ապրիլ 1950-ին գումարուած բացառիկ նստաշրջանը կը հաստատէ. «Բազմաթիւ գաղութներու մէջ մասնաւորաբար 1947էն ստիկն Հ. Յ. Դաշնակցութիւնը տենդագին լծուած է իր մենատիրութիւնը հաստատելու աշխատանքին: Իր հայրենուրաց քաղաքականութեան մեծապէս կը նպաստէ միջազգային կացութիւնը եւ ան առանց միջոցներուն մէջ խտրութիւն դնելու, կարգ մը յաջողութիւններ ձեռք ձգած է արդէն զանազան գաղութներու մէջ: Այօրինի ընտրութիւններով, սպառնալիքներով եւ խոշտանգումներով Դաշնակցութիւնը տիրացած է կարգ մը թեմերու, եկեղեցիներու եւ դպրոցներու...: Հիմնական նպատակ ունենալով արտա-

սահմանի հայ գաղութները ենթարկել իր մենատիրութեան եւ ի հարկին գայն հակադրել ներկայ հայ հայրենիքին, Դաշնակցութիւնը իր պայքարը կեդրոնացուցած է մեր կուսակցութեան դէմ որպէս իր ծրագիրներուն իրագործման դէմ պայքարող ազգային ամենէն կարեւոր կազմակերպութիւնը...:

«Պէտք է կարեւորութեամբ մատնացոյց ընել դաշնակցութեան թշնամութիւնը հայ եկեղեցականութեան դէմ եւ անոր մղած անորակելի պայքարը Սբ. Էջմիածնայ եւ Կիլիկիոյ վեհափառ հայրապետներուն դէմ...:

«Կիլիկիոյ Մեծի Տանն Կաթողիկոսութիւնը Անթիլիասի մէջ կը հանդիսանայ մեր լուրջ ուշադրութեան առարկայ: Ծերունագարդ Գարեգին հայրապետին դէմ դաշնակցութեան մղած վատ պայքարը յառաջացուցած է ժողովրդային զգուանք...: Մեր կուսակցութիւնը պիտի շարունակէ ո՛չ միայն զօրավիգ կանգնիլ Կաթողիկոսին, այլ նաեւ պայքարիլ կաթողիկոսարանէն ներս դաշնակ ներթափանցումներուն դէմ»:

1952-ի Յունիսին Գարեգին Ա. Կաթողիկոսին մահով նոր փուլի մը առջեւ կը գտնուին կուսակցութիւնները:

ՌԱԿԿԸ-ի 16–21 Մայիս 1953-ի մասնաւոր նստաշրջանը կը հաստատէ. «ա) Կուսակցութիւնս չի կրնար Կիլիկիոյ կաթողիկոսական գահին վրայ Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ պարտադրուած որեւէ թեկնածու ընդունիլ. բ) ... Խաղ սրբազան Աջապահեան, առ ի չգոյէ ուրիշ լաւագոյն թեկնածուի՝ կրնայ ... ընդունելի թեկնածու նկատուիլ՝ որպէս անբասիր անցեալի տէր եւ Էջմիածնայ հաւատարիմ եկեղեցական», թէւ կուսակցութեան դիրքը պաշտօնապէս յայտարարելը յարմար չի նկատուիր «թաքթիք» պատճառներով: Կը նշուի թէ ՀՅԴ-ի թեկնածուներն են Հալեպի առաջնորդ Զարեհ Եպսկ. Փայապեանը, Պէյրութի առաջնորդ Խորէն սրբազան Բարոյեանը, Հիւս. Ամերիկայի առաջնորդ Տիրան սրբազանը եւ Պոլսոյ Պատրիարք Գարեգին Արք. Խաչատուրեանը, որոնք կուսակցութեան կողմէ յարմար թեկնածու չեն նկատուիր:

Արձանագրելով մէկտեղ թէ կուսակցութիւնը կ'աշխատի պատրաստել Անթիլիասի միաբաններու միտքերը, ներքին հսկողութիւն կը բանեցնէ կաթողիկոսարանին մէջ, կը նախապատրաստէ ազդեցիկ ազգայիններէ կազմուած ժողովրդային շարժում մը եւ կը յարաբերի հայրենասէր կազմակերպութիւններու հետ, մտահոգիչ կը նկատուի դպրեվանքի տեսուչ Դերենիկ սրբազանի կեցուածքը: Կը նշուի թէ Խաղ սրբազանի դէմ անակնկալօրէն պայքար բացած է ան, ապա նաեւ Պոլիս երթալով «երեւութապէս» յաջողած է համոզել, որ Գարեգին Պատրիարք թեկնածու դառնայ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան:

Կ'արձանագրուի նաեւ թէ Խաղ սրբազանի ընտրութեան բացարձակ անկարելիութեան պարագային, կարելի է նկատի ունենալ Գարեգին Պատրիարքը, Տիրան սրբազանը կամ Եզիպտոսի առաջնորդ Մամբրէ Սիրունեանը:

ՌԱԿ կաթողիկոսական ընտրութեան խնդիրը կենսական կը նկատէր, որովհետեւ դաշնակցութեան ենթակայ կաթողիկոսի մը յաջողութիւնը պիտի նշանակէր «Դաշնակցութեան յանձնել մեր ազգային-կրօնական մեծագոյն հաստատութիւնն ու պաշտօնական հեղինակութիւնը, որ ծառայելով դաշնակ քաղաքականութեան, կրնայ մինչեւ խզումի երթալ Ամենայն Հայոց Հայրապետութեան հետ, անջատելով արտասահմանը հայրենիքէն, խզելով անոր հոգեկան կապը մայր Աթոռին հետ, արտասահմանը հակադրելով հայրենիքին եւ վերջապէս կրօնական բարձր հեղինակութիւնն ու պաշտօնական հանգամանքը ծառայեցնելով իր ապագգային քաղաքականութեան»:

1955-ի Հոկտեմբեր 17-ի ատենագրութենէն կը տեղեկանանք թէ կուսակցութիւնը յաջողած է կաթողիկոսական ընտրութիւնը յետաձգել տալ եւ թէ սուրիական կառավարութիւնն ալ լուծարուած հռչակած է Հալէպի Գաւառական Ժողովը, բայց այս յաջողութեան դիմաց Դաշնակցութիւնը կրցած է սպառնալիքներու շնորհիւ ձեռք բերել Խաղ սրբազանի հրաժարականը տեղապահութենէ:

Ճամբան հարթուած էր Դաշնակցութեան ծրագիրներուն առջեւ: 10 Նոյեմբեր 1955-ի նիստը կ'արձանագրէ. «... Անթիլիասի մեզի համախոհ միաբաններու անհամերաշխութեան եւ իրարու հետ մրցակցութեան, ինչպէս նաեւ Չարեհ, Խորէն եւ Ղեւոնդ եպիսկոպոսներու ընտրական խաղերուն եւ մանաւանդ Խաղ Արք.ի յեղյեղուկ կեցուածքին իբր հետեւանք, Պէյրութի առաջնորդ, Դաշնակցութեան թիւ մէկ կամակատար Խորէն Եպիսկ. Բարոյեան ընտրուեցաւ Կիլ. Կաթ. Տեղապահ, ճնշման տակ հրաժարեալ Խաղ Արք.ի տեղ»:

24 Յունուար 1956-ի նիստին դիտել կը տրուի թէ Չարեհ Եպսկ. Սուրիական կառավարութեան մօտ աշխատանք կը տանի «որպէսզի սուրիական իշխանութիւնները իրենց ձեռքը քաշեն այս հարցերէն, որոնք կառավարութեան աւելորդ տաղտուկ կը պատճառեն եւ որպէս թէ յարուցուած են դժգոհ եւ կասկածելի շատ փոքր խումբ մը հայերու կողմէ, եւ կամ գոնէ կառավարութիւնը ձեւապէս անտեղեակ ուզէ մնալ այս վէճերուն՝ մինչեւ 14 Փետրուար 1956, երբ որոշուած է կատարել Կիլ. Կաթ. Ընտրութիւնը»:

* * *

Անցնինք, ուրեմն, 1983-ին վերջակիտուած ՏԵՎԼԵԹԵԱՆԻ հարազատօրէն վերարտադրուած բնագրին, Յաւելուած բաժնով տալով Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ մասին 1929-էն մինչեւ 1988 ՌԱԿ-ի զանազան ընդհանուր պատգամաւորական ժողովներու որդեգրած բանաձեւերն ու կարգ մը յատկանշական շրջաբերականներ, որոնք ատենին հրատարակուած էին «Պայքար» ամսագրին մէջ (Բ. տարի, թիւ 3–4, Յունիս-Յուլիս 1994), հետագայ առիթի մը թողլով եկեղեցական միութեան առնչուող իրադարձութիւններուն եւ ՌԱԿ-ի դիրքորոշումներուն ներկայացումը 1988-էն ետք եւ մինչեւ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին վախճանումը, որմէ ետք ականատես եղանք Հայոց Եկեղեցւոյ պատմութեան մէջ ամօթալի իրադարձութեան մը, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոսը,- որ խօսքով միութիւն ջատագովելով՝ գործքով հակառակը կ'ապացուցէր ընդդէմ երթալով Էջմիածնայ Մայր Աթոռի շահերուն,- միամտաբար թէ այլապէս անարդարանալիօրէն բարձրացուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռին:

Դոկտ. Վաչէ Ղազարեան

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ

Սփիւռքը, բառին մեկնութեամբ եւ իր էութեամբ, հարազատ երկրէն դուրս տարտղնուած եւ իրարմէ անջատ հաւաքականութիւններով ապրող հայ գոյութիւններու ընդհանուր անունն է: Օտար ափերու վրայ եւ հեռու երկինքներու տակ երկարաձգուող տարագրութիւն մը, որ այլակերպուած շարունակութիւնն է պատմութեան պատուհասէն հազիւ ճողոպրած ժողովուրդի մը մնացորդը դէպի կորուստ քշող ճակատագրական հալածանքին:

Բնական էր, ուրեմն, որ արտասահմանի հայութեան կեանքը իբրեւ ամբողջութիւն՝ ըլլար թափառական, տաժանագին եւ անոք: Սպասելի էր որ ան ըլլար աննախատեսելի եւ անմխիթար: Ըլլար շարայարում մը ցնցումներու, նահանջներու եւ անկումներու եւ մերթ՝ անձերբազատելի յաճախանք մը յուսաբեկումի ու տրտմութեան:

Ուստի այդ իմաստով՝ չէինք ակնկալեր որ բախտը մեզի վերապահած ըլլար խնջոյք ու հանդէս: Բայց գաղտնի կը յուսայինք որ ան մասամբ մեղմէր յամառ իր մոլեգնութիւնը: Եւ անոր համար է որ 1956 տարին յատկապէս ծանր երեւցաւ, առանձնացաւ իր սարսափին մէջ: Ան վկայ եղաւ անակնկալ պատահարի մը, որուն քով աննշան թուեցան մեր միւս ցաւերն ու անգօրութիւնները:

Յօրինուեցաւ բարդութիւն մը, որ ծանօթ է որպէս Անթիլիասի հարց: Եւ անով ծայր տուաւ կամ յայտնաբերուեցաւ զարմանալի տարակարծութիւն մը, որ բուն բաժանում յառաջացուց Հայաստանեայց Եկեղեցիի նուիրապետական դրութեան եւ ամբողջ կառոյցին մէջ: Ստեղծուեցաւ կնճռոտութիւն մը, որ իր էութեան ու ծաւալին բերումով, հազաւ համայնքային ազգային բնոյթ ու վրդովեց, փոթորկեց ամբողջ սփիւռքը: Դարձաւ հայութեան պառակտումի խորհրդանիշ:

Աւելի քան 27 տարիներ անցեր են այդ տրտում թուականէն ի վեր: Բայց տակաւին չէ լուծուած տագնապը: Ընդհակառակը, նորանոր իրադարձութիւններու յոյսին տակ, ներկայիս ան առած է տարբեր դարձուածք, ստացած է ուրիշ հանգամանք:

Ի՞նչ է այդ տագնապին բնոյթը:

Հիմա երբ պատահարներն ու երեւոյթները գոնէ մասամբ ձերբազատուած են զիրենք քօղարկած մշուշներէն, երբ խօսքերը ազատուած են իրենց ընկերացող աւելորդ կամ նպատակաւոր աղմուկներէն, երբ գլխա-

ւոր դերակատարներէն ոմանք ալ բաժնուած են մեզմէ ընդմիշտ, թերեւս կարելի է աւելի առարկայական հաւաքել տուեալները, քննել բացատրութիւնները, ուսումնասիրել ընդհանուր մթնոլորտը եւ խնդրի խորքին թափանցել: Եւ ի վերջոյ ըմբռնել նշանակութիւնը կատարուածին եւ հաստատել անոր շարժառիթներն ու բուն նպատակը:

Ժամանակն է, եթէ նոյնիսկ չէ ուշացած նման ճիգ մը, որ հարցը հրապարակային կերպով պարզուի, հաւաքական խիստ քննարկութեան ու դատումի ենթարկուի եւ հայութեան կողմէ ստանայ համապատասխան լուծում:

Չենք մտադրեր անդրադառնալ՝ խնդրոյ առարկայ բոլոր դէպքերուն եւ մանրամասնութիւններուն, որոնք տխուր պատմութեան մը ներքին ծալքերն են: Որոնք արցունքի եւ հառաչանքի մէջ թաթախուած էջերն են մեր վերջին երեսնամեակի մատեանին: Միայն կ'ուզենք յիշեցնել կարգ մը դրուագներ սկզբնական շրջանէն ու կանգ առնել անոնց յաջորդող քանի մը կարեւոր հանգրուաններու առջեւ: Վերակոչել իրողութիւնները այն չափով՝ որ կարելի ըլլայ հետեւիլ պատահարներու պատմումին:

* * *

2. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ «ԸՆՏՐՈՒԹԻՒՆ»Ը.

Երջանկայիշատակ Գաբեգին Ա. Յովսեփեան Հայրապետի վախճանումէն յետոյ, 1956 Փետրուար 20-ին տեղի ունեցաւ «ընտրութիւն»ը Բերիոյ թեմի առաջնորդ Չարեհ Եպիսկոպոս Փայասլեանին՝ որպէս նոր կաթողիկոս Անթիլիասի:

Կան հաւատացողներ թէ արտաքին միջամտութեամբ ու զէնքի ոյժով կատարուեցաւ այդ ընտրութիւնը: Պէտք է ընդունիլ թէ ընտրութիւնը նախորդող եւ անմիջապէս յաջորդող շրջաններուն, հրազեններու եւ գնդացիներու բացայայտ ներկայութիւն մը եղած է Անթիլիասի մէջ եւ շուրջ: Պետական զինեալ ոյժի ակներեւ ու միտումնաւոր ցուցադրութիւն մը: Իսկ կարգ մը շրջանակներ ակնարկութիւնները ըրած են այդ օրերուն թէ ամերիկեան կառավարութիւնը եւ տեղական իշխանութիւնները իրենց կողմն էին:

Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՉԱՆՔԵՐԸ ԵՒ

ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ.

Իրողութիւնը այն է թէ տիրող պայմանները եւ արագ կազմաւորուող նոր եղելութիւնները շփոթութիւն ու խունապ տարածեցին օրերուն մէջ: Անհաշտ քէնի եւ անվստահութեան վիի մը բացուեցաւ կողմերուն միջեւ : Եւ այդ կացութեան մէջ՝ կ'երեւի աննկատ թողուեցաւ ժողովուրդին կարեւոր մէկ զանգուածը: Իսկ բացառութեամբ Տ. Խորէն եւ Տ.Ղեւոնդ Եպիսկոպոսներուն, անտեսուեցաւ Հայց. Եկեղեցիին Եպիսկոպոսական ամբողջ դասը: Ամենայն Հայոց Հայրապետը, ստեղծուած ցաւալի վիճակը ի մտի ունենալով, Պէյրութ եկաւ այն ակնկալութեամբ թէ իր ներկայութիւնը կը մեղմացնէր բռնկած կիրքերը: Հնարաւոր կը դարձնէր տագնապին ելք մը գտնել հաւաքական ջանքով, եկեղեցական անհամաձայնութիւնը լուծել՝ ընդհանուրին կամքով եւ ի շահ բոլորին: Ան յորդորեց, իբրեւ առաջին քայլ, յետաձգել ընտրական գործողութիւնները եւ մինչ այդ խորհիլ լաւագոյն կարգադրութիւններու մասին: Բայց լսելի չդարձաւ այն խմբակցութեան, որուն յարեր ու փարեր էին Տ. Խորէն, Տ. Չարեհ եւ Տ. Ղեւոնդ Եպիսկոպոսները: Ու երբ կացութեան անյուսութիւնը ստուգուեցաւ, Մարտ 5–8 Գահիրէի մէջ Ն.Ս.Օ.Տ. Տ. Վազգէն Ա.Հայրապետի նախագահութեամբ,

տեղի ունեցաւ Եպիսկոպոսական համագումար մը, որ եղած ընտրութիւնը՝ թերի եւ անընդունելի համարեց միաձայն:

Գ. ՀԱԿԱԿԱՆՈՆԱԿԱՆ ՕԾՈՒՄ ԵՒ ԱՆՎԱԴԵՐ ՆՈՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Իսկ իբրեւ շարունակութիւն նախորդ դէպքերուն, 1956 Սեպտեմբեր 2-ին Տ. Չարեհ եպիսկոպոսին վրայ կատարուեցաւ օծում մը, որուն մասնակցեցան վերեւ յիշատակուած երկու եպիսկոպոսները եւ նաեւ Յակոբեան Ասորի Եպիսկոպոս Սեւերիոս, որովհետեւ երրորդ հայ եպիսկոպոս մը չգտնուեցաւ ակնարկուած նպատակին համար: Եւ այդ պատճառով՝ օծումը համարուեցաւ հակականոնական արարողութիւն մը:

Ուստի Հայց. Եկեղեցիին կողմէ Տ. Տ. Չարեհ Ա. Կաթողիկոսի ընտրութիւնը համարուեցաւ թերի եւ անընդունելի: Իսկ անոր վախճանումէն յետոյ՝ Տ. Տ. Խորէն Ա.-ի 1968-ի կաթողիկոսական ընտրութիւնն ալ նկատուեցաւ անվաւեր, նոյն կամ նման պատճառներով:

Դ. ՕՏԱՐ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆ.

Անկախ այն տեսակէտէն թէ ներքին անկանոնութիւններ ու թերացումներ եղած էին, յստակ էր թէ Կիլիկիոյ Աթոռը յանկարծ ստացած էր տարբեր նշանակութիւն մը: Կարծես թէ Կաթողիկոսը եւ անոր ընտրութիւնը չէին պատկաներ հայ ժողովուրդին, ոչ մէկ կապ ունէին անոր հետ: Կարծես այդ հարցերը վերաբերէին եւ իրաւասութիւնն ըլլային օտար շրջանակներու: Իրադարձութիւնները, թօթափելով իրենց ազգային եկեղեցական իմաստը, հազած էին հայութեան ծիրէն դուրս ինկող քաղաքական տարողութիւն: Կարծես թէ, յատուկ ծրագիրի մը հետեւելով, դաւադրութիւն մը պատրաստուած էր հայ ժողովուրդին եւ անոր եկեղեցիին դէմ:

* * *

3. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՈՂՋԱԳՈՒՐՈՒՄԸ - ԱՌԱՋԻՆ ՄԵՐՁԵՑՈՒՄ.

Ա. ՓՈՒԹԿՈՏ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԻՒՆ.

Իբրեւ հետեւանք տիրող կացութեան, որքան կ'անցնէր ժամանակը այնքան կը խորանար բացուած խրամատը եկեղեցական եւ համայնքային մեր կեանքին մէջ: Այդ իրողութեան դիմաց Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, որպէս գերագոյն գլուխ Հայց. Եկեղեցիին, իրաւասութիւն եւ պարտականութիւն ունէր զբաղելու խնդրով: Ի հարկին անտեսելով կարգ մը անբաղձալիութիւններ, մեր ժողովուրդին հիմնական շահերէն թելադրուած: Խորապէս խռոված՝ ան ջանքեր թափեց ստեղծուած տագնապին լուծումին, մեր եկեղեցիին միասնականութեան եւ մեր ժողովուրդին ներքին անդորրութեան ի խնդիր: Եւ անհասկացողութիւնները փարատած տեսնելու իր բաղձանքին մէջ, փութկոտութեամբ նախաձեռնարկ եղաւ կամ համաձայնեցաւ 1968 Հոկտեմբեր 26-ի Երուսաղէմի ողջագործումին, հակառակ որ դեռ չկային դրական պայմաններ կամ նախատուելներ նման քայլի մը համար, եւ հակառակ որ իր ուշադրութեան յանձնուեցաւ այդ պարագան: Մէկ խօսքով՝ Ամենայն Հայոց Վեհափառը, մոռնալով մօտիկ անցեալի տխուր դէպքերը, եւ առանց որեւէ պայմանի, ճանաչում շնորհեց Խորէն Ա. Կաթողիկոսին՝ հաւատքով ու լաւատեսութեամբ առաջնորդուած:

Բ. ԱՐԱՐՔԻՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ.

Բայց ողջագործումէն բխող ակնկալութիւնները եւ ուրախութիւնը շատ կարճատեւ եղան: Իրողութիւններու բիրտ ներկայութիւնը եկաւ շեշտելու եւ յիշեցնելու թէ Երուսաղէմի ողջագործումը ոչ մէկ իրական փոփոխութիւն բերած էր ընդհանուր կացութեան մէջ: Պարզապէս օրինականութիւն շնորհած էր Տ. Տ. Խորէն Ա.-ի Կաթողիկոսութեան: Մինչ միւս կողմէ, Անթիլիասին համար ոչ միայն փափաքելի, այլ անհրաժեշտ էր իր Աթոռակային կաթողիկոսական հանգամանքին ճանաչումը Հայց. Եկեղեցիին եւ անոր վերին գլուխին կողմէ: Որովհետեւ այդ կերպով՝ Կիլիկիոյ Աթոռը կը բարձրացնէր իր վարկը հայ իրականութեան եւ մանաւանդ Միջազգային կրօնական եւ այլ շրջանակներու աչքին: Ու վերջին պարագան յատուկ նշանակութիւն կը ստանար, ի մտի ունենալով Անթիլիասի դիտաւորու-

թիւները՝ համաշխարհային համագումարներու անջատ մասնակցելու եւ այլ գործունէութիւններ ունենալու: Անոր համար՝ զարմանալի պիտի չնկատուէր եթէ Անթիլիաս ճանաչումի միակ նպատակակէտով հետապնդած ըլլար ողջագործումը:

Գ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ.

Բայց սխալ էր եզրակացնել թէ տարբերութիւն չտեսնուեցաւ Էջմիածին-Անթիլիաս յարաբերութիւններուն մէջ: Թէ մեր համայնքային կեանքը շարունակուեցաւ նախկինին պէս: Պէտք է ճշդում մը կատարել այդ առնչութեամբ ըսելով թէ վիճակը աւելի վատթարացաւ: Անթիլիաս, թերեւս քաջալերուած ողջագործումով ապահոված իր նոր հեղինակութենէն, հետզհետէ առաւել եւս միջամուխ եղաւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրաւասութեան տակ գտնուող Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Պարսկաստանի եւ Յունաստանի թեմերուն ու Գարագասի համայնքին: Ըրաւ նաեւ կարգ մը այլ ոտնձգութիւններ, ինչպէս Մարսէլի մէջ՝ յամառ փորձելով Անթիլիասական անջատ թեմ մը հաստատել այնտեղ: Եւ մանաւանդ՝ Կիլիկիոյ Աթոռին կանոնադրութեան մէջ մտցուց ծանօթ Թիւ 32 եւ 33 յօդուածները¹:

* * *

¹ Կիլիկեան Աթոռի Ընդհանուր Ժողով, 23–26 Հոկտեմբեր 1972:

4. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Այդ նիւթին անցնելէ առաջ, սակայն, տեսնենք թէ ի՞նչ է Հայց. Եկեղեցիին աւանդական նուիրապետական դրութիւնը, բնորոշել կարենալու համար կատարուած արարքին խորքն ու դիտաւորութիւնը: Ասկէ զատ՝ նման աշխատանք մը նոյնքան կարելոր է հաստատելու համար Էջմիածնի եւ Անթիլիասի փոխադարձ կեցումաձքներուն օրինականութիւնը եւ որոշելու համար անոնց անջատ պատասխանատուութիւնը ընդհանուր կացութեան մէջ:

Ա. ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷԿ Է ԵՒ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ.

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին պաշտամունքի ազգային կառոյց մըն է, պաշտամունքը սահմանելով իբրեւ նոյն կրօնական խմբաւորումի անդամներու միութեան արտայայտութիւն: Ան մէկ է եւ անբաժանելի: Յատկանշուող այդ ընդհանրականը մեր հաւատքին էութիւնն իսկ է: Աղբիւրը՝ որմէ բխած է մեր հոգեկան գոյութիւնը:

Հայց. Եկեղեցին, նուիրապետական Աթոռներու դրութեամբ, նոյնինքն հաւատացեալ հայ ժողովուրդն է: Ան Սուրբ Էջմիածինը ունի իր հաւատքին որպէս կեդրոն: Եկեղեցիին սկզբունքները եւ դարերու ընթացքին սրբագործուած աւանդութիւնները կ'ընդունին ու կը հրահանգեն Ս. Էջմիածնի եւ անոր գահակալ Հովուապետին հոգեւոր իրաւասութեան գերակայութիւնը: Պատմական դրութիւն մը, որ թելադրուած է ազգային պահանջներէ եւ մտահոգութիւններէ եւ որ պահպանուած ու նուիրագործուած է եկեղեցիին հիմնումէն ի վեր:

Եւ այդպիսով՝ անանջատ ամբողջութիւն մը եղած է Հայց. Եկեղեցին, մէկ մարմինով եւ հոգիով, եւ մէկ գլուխով ու ներքին կարգ ու սարքով: Անոր գոյութեան խարխիս հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, աւելի քան հազար վեց հարիւր տարիներու նուիրականացած հեղինակութիւն մըն է իր կոչման եւ առաքելութեան վէմին վրայ ամուր պահուած ու կանգնած: Համազգային մշտանորոգ հաստատութիւն մը՝ սրբագործուած հայութեան հաւատքով, յոյսով ու գուրգուրանքով, որ դարձած է խորհրդանիշ մեր հաւատամքին եւ ամբողջականութեան:

Բ. ՊԱՏՄԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ.

Պատմական ուշագրաւ երեւոյթ է որ հայ ժողովուրդը ճգնաժամի պահերուն, երբ կորսնցուցած է իր պետական ու քաղաքական իշխանութիւնը, փորձած է հայ եկեղեցիին փոխանցել կամ անկէ ակնկալած է այդպիսի իրաւասութիւններու կիրարկումը: Եւ նմանօրինակ պայմաններու մէջ, եկեղեցին դարձած է հայ ժողովուրդին արտայայտութեան միջոցը եւ անոր ազգային ինքնութիւնը պահպանելու կոչուած կառոյցը՝ ընկերային, մշակութային գետնի վրայ: Միշտ պահելով, սակայն, Էջմիածնի եւ անոր Գահակալին նախամեծարութեան անառարկելի հանգամանքը:

Գ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԴՈՐՈՒԹԻՒՆԸ.

Հարցին ամբողջութիւնը եւ էութիւնը ըմբռնելու տեսակէտով՝ թերեւս օգտակար կ'ըլլայ պատմական արագ ակնարկ մը նետել հայ համայնքային դրութեան ծագումին եւ անոր զարգացումին կարելոր հանգրուաններուն վրայ: Այդ մտածումով՝ կը կատարուին երկու պարագայական բաժանումներ: Մէկը՝ «Մինչեւ Կ. Պոլսոյ Պատրիարքութեան Ստեղծումը», եւ Միւսը՝ «Հայերը Թուրքիոյ մէջ» վերնագիրներուն տակ:

Դ. ՄԻՆՉԵՒ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԶՈՒԹԵԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ.

Արաբական արշաւանքներու հետեւանքով, Հայաստանի ժողովուրդը մնաց Բիւզանդիոնի եւ իսլամական սեղմումներու միջեւ: Անել այդ կացութեան մէջ՝ ան տեղ տեղ մղեց անհաւասար կռիւներ եւ ընդհանուր առմամբ փորձեց հասկացողութեան եզր մը գտնել ոսոխին հետ: Բայց ի վերջոյ ընկճուեցաւ:

Յաղթական հաստատուած Խալիֆան, իր իշխանութիւնը ամրացնելու դիտաւորութեամբ, կարգ մը իրաւունքներ կը շնորհէր իր նոր հպատակներուն: Այդ նպատակին հասնելու միջոցը, ինչպէս կը յայտնուի շարք մը պետական աքթերէ, հիմնուած էր բնիկ հայ ժողովուրդի կրօնական-կենցաղային ազատութիւնը յարգելու սկզբունքին վրայ: Օրինակի համար, երբ մայրաքաղաք Դուին անձնատուր եղաւ (640 Հոկտեմբեր 6-ին) անոր քաղաքացիներուն տրուած «դաշնադրութիւն»ը ունէր հետեւեալ բովանդակութիւնը.

«Յանուն Աստուծոյ զթածին եւ ողորմածին, այս է գիրն որ Հապիպ որդի Մեսլիմի շնորհեց Դուինի քրիստոնեաներին, մոզերին, զրադաշտականներին եւ հրեաներին, թէ ներկաներին եւ թէ բացականերին: Ձեր անձինքների, ինչքի, եկեղեցիների, տաճարների եւ ձեր քաղաքի պարիսպների ապահովութիւնը ձեզ շնորհեցի եւ դուք

ապահովուած էք, եւ մենք այս դաշնադրութիւնը պիտի պահենք, քանի որ դուք հաճութիւն յայտնեցիք եւ խոստացաք գլխահարկ եւ կալուածատուութիւն վճարել»²:

Նմանօրինակ պայմանագիր մը տրուեցաւ Գառնիի, Աշոցքի, Կոգովիտի, Ագնուաց Ձորի, Նախիջեւանի, Սիսականի, Վայոց Ձորի եւ այլ քաղաքներու:

Իսկ երբեմն ալ հայ եկեղեցապետներ, խալիֆաներուն խոստանալ երաշխաւորելով թէ «ամենայն ազգ իմ ծառայեացեն ձեզ», հրովարտակով հաստատուած կարգ մը իրաւունքներ ապահոված են իրենց ժողովուրդին համար: Այդպիսի պարագայ մըն է Յովհաննէս կաթողիկոս Օձնեցի-Իմաստասէրը, որ 719-ին Դամասկոս երթալով խալիֆա Օմարի ներկայացուցած է պահանջներ, որոնց մաս կը կազմէր ստորեւ յիշատակուածը.

«Քրիստոնէաները չքոնադատուին հաւատքնին փոխել, այլ իւրաքանչիւրը իր կամքին թողուի»³:

Մինչեւ իսլամական արշաւանքները՝ Հայաստան բաժնուած էր, ինչպէս ծանօթ է, Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջեւ: Առաջինը, որ իր պետական կրօնքէն տարբեր դաւանանք չէր ընդուներ, հայերը յունականութեան մէջ ձուլելու հետամուտ էր: Մինչ պարսկական տէրութիւնը կ'աշխատէր իր կրօնը, մագդէականութիւնը պարտադրել հայութեան:

Բացայայտ է թէ հայերուն նկատմամբ Իսլամի մտայնութեան, վարած քաղաքականութեան մէջ կար հիմնական տարբերութիւն մը: Ան հայերուն, ինչպէս քրիստոնէայ բոլոր հպատակներուն, կրօնական-կենցաղային ազատութիւնը կը ճանչնար իբրեւ պետական դրութիւն՝ իրաւական վիճակով ու համապատասխան հետեւանքներով:

Արաբական տիրապետութեան յաջորդեց Բագրատունեաց իշխանութիւնը, որ շուրջ 120 տարի (924-25էն մինչեւ 1045) կրցաւ շարունակել իր գոյութիւնը: Անկէ յետոյ Հայաստան դարձեալ ենթակայ եղաւ արշաւանքներու: Այս անգամ Սելճուքներու կողմէ, 11-րդ դարու սեմէն սկսեալ: Նոյն շրջաններուն՝ Կիլիկիոյ մէջ հաստատուեցաւ հայկական իշխանութիւն, որ ծանօթ է իբրեւ Ռուբինեան Իշխանութիւն եւ որ տեւեց շուրջ 300 տարի (1080–1375): Սկիզբը՝ ան *Իշխանապետութիւն* էր (1080 1190): Իսկ յետոյ *Թագաւորութիւն* եղաւ: Վերջին վարչութեան խորտակման աղէտին, պետական կառոյցը տապալեցաւ ու կազմալուծուեցաւ: Արքաներն ու իշխանները երկիրը լքեցին եւ հեռացան իրենց հետ տանելով բիւրաւոր

² Լեւ, «Երկերի ժողովածու», Երեւան, 1967, Երկրորդ Հատոր, էջ 309:

³ Օրմանեան, «Ազգապատում», Կ. Պոլիս, սկսեալ 1912, հատոր Ա, էջ 824:

բնակչություն: Մինչ ետև մնացած անտեր ժողովուրդը տոկաց ու փարեցաւ իր եկեղեցիին:

Նոր ձեւաւորուող իրադրութեան մէջ՝ եկեղեցին կ'ընդարձակէր կրօնական իր ծիրը ու կը դառնար հայ ժողովուրդին ազգային ինքնութիւնը պահպանող ընկերային-մշակութային հաստատութիւն: Եւ մեր երկրին տիրողները, պայմաններու բերումով, հարկադրուեցան յարգել եկեղեցին եւ ընդունիլ հետզհետէ աճող անոր իրաւասութիւնները:

Երբ մեր երկրին իշխանութիւնը մահմետական Մոնկոլներուն փոխանցուեցաւ 13-րդ դարու կէսերէն սկսեալ, նոր տէրերը, իրենց անողորութենէն անջատ, ոչ միայն յարգեցին հայ եկեղեցին, այլ նաեւ ընդլայնեցին անոր իրաւասութիւնները եւ նոյնիսկ տուրքերէ զերծ կացուցին զայն:

Մոնկոլեան տիրապետութիւնը յաջորդող շրջանին անգամ, երբ Հայաստանի մէջ տիրեց անիշխանութիւն ու սարսափ, եկեղեցին հետապնդեց ընկերային, մշակութային իր դերը: Նոյնն էր վիճակը Հայաստան էն դուրս: Փոքր Ասիոյ տարբեր վայրերուն մէջ սելճուք եւ թուրք իշխանութեան տակ գտնուող հայ համայնքները կամ գաղութները կապուած մնացին եկեղեցիին, եւ տիրակալները ճանչցան անոնց աւանդական ինքնորոնութիւնը:

Հասկնալի է թէ իշխողները՝ հայութեան Հարցերուն վերաբերեալ իրենց կամքն ու պատգամները կը հաղորդէին, կարգադրութիւնները կը կատարէին եւ առ հասարակ յարաբերութիւնները կը պահէին եկեղեցիի պետին կամ գլուխին միջոցաւ ու միջնորդութեամբ: Չայն կը ճանչնային իբրեւ ժողովուրդին ներկայացուցիչ:

Այս բոլորը, սակայն, պարագայական ու պատահական բնոյթ կը կրէին: Տեղական հանգամանքով ու սահմանափակ տարողութեամբ երեւոյթներ էին գորս կարելի էր համարել սկզբնական ճիգեր համայնքային դրութեան կիրարկման: Նախնական, ցիրուցան այդ իրաւասութիւններն ու պարտաւորութիւնները՝ միացեալ եւ ընդհանրական առումով կրօնական ազգային հաստատութեան մը վերածուեցան Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան ստեղծումով:

Ե. ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐԹԻՈՅ ՄԷՋ

ա. ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՇՐՋԱՆ

Կ. Պոլսոյ գրաւման պատերազմի ընթացքին սպաննուած էր նաեւ Յոյն Պատրիարքը: Յաղթական Փաթիի Մուհամմէտ Բ. Յոյներուն հրահանգեց որ նոր պատրիարք մը ընտրէին: Այդ պահանջքին համաձայն՝ ընտրուեցաւ Ենատիոս (Գենատիոս) Բ.ը, զոր Փաթիի իր մօտ ընդունեց 1453 Յունիս 1-ին բիւզանդական շրջանի յատուկ մեծարանքով ու պատիւ-

ներով եւ անոր յանձնեց պատրիարքական գաւազանը:

Այդ շրջանին Պոլսոյ մէջ հայերուն թիւը աննշան էր: Թէեւ հայեր պետական բարձր պաշտօններ գրաւած էին եւ անոնցմէ ոմանք կայսերական գահին իսկ բարձրացած էին, բայց անոնք բոլորն ալ յոյն դաւանանքին յարած անհատներ էին: Քաղաքին մէջ թեմակալութիւն գոյութիւն չունէր: Կը յիշատակուի միայն մէկ հայ եկեղեցի, արուարձան Ղալաթիոյ մէջ⁴:

Սուլթանը յատուկ ճիգ թափեց որ քաղաքին մէջ հայեր եւ հրեաներ հաւաքուէին: Անոնք քաղաքական իմաստով վտանգաւոր չէին համարուեր ու տեսակ մը կրնային հակակշռել մեծամասնութիւն կազմող յոյները: Ասկէ զատ՝ իրենց ջանասիրութեամբ ու կարողութիւններով երկրին օգտակար տարրեր կը դառնային: Ու տասնեակ մը տարիներու ընթացքին՝ Փայթիի (նուաճող) մականունով յայտնի Մուհամմետ Բ. Սուլթանը Փոքր Ասիոյ զանազան քաղաքներէն ու վայրերէն Պոլիս բերել տուաւ ստուար թիւով հայեր⁵, զորս տեղաւորեց ապահովութեան կապակցութեամբ զգայուն նկատուած շրջաններու մէջ: Իսկ հայերը սիրաշահելու եւ անոնց հաւատարմութիւնը ապահովելու դիտաւորութեամբ, որոշեց անոնց համար ալ պատրիարքական աթոռ մը հաստատել: Այս նպատակով նշանակում կատարուեցաւ 1461-ին եւ առաջին Պատրիարքը դարձաւ ատենուան Պրուսայի առաջնորդ Յովակիմ Եպիսկոպոսը, *փայթիք* կոչումով:

Այդպիսով ստեղծուեցաւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը, զոր Օսմանեան Տէրութիւնը ընդունեց իբրեւ իր իշխանութեան սահմաններուն մէջ բնակող հայերուն կրօնական ու վարչական ներկայացուցիչը:

Պատրիարքական ամէն նոր նշանակում կը հաստատուէր յատուկ *պէրայթով* մը, որ կը պարունակէր որքան պատրիարքին իրաւասութիւններն ու առանձնաշնորհումները, նոյնքան՝ պարտաւորութիւնները պետութեան հանդէպ:

բ. ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Ներքին եւ արտաքին պահանջները գոհացնելու մտահոգութեամբ՝ Սուլթաններ, իրենց միջանկեալ *ֆէրման*ներով, իրաւունքի հաւասարութիւն ինչպէս նաեւ կեանքի, ինչքի ու պատիւի ապահովութիւն խոստացան:

⁴ Մ. Օրմանեան, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1914, հատոր Բ, Էջ 2149–2150: Մօտ 30.000:

⁵ Տես Միք. Վարանդեան, «Հայկական Շարժման նախապատմութիւն», Ժընեւ, 1912, հատոր Ա. էջ 29:

Մինչ Խրիմի պատերազմին յետոյ՝ 1856-ին Բարիզ գումարում Վեհաժողովին, Օսմանեան հպատակ քրիստոնեաներու հարցին առնչութեամբ Սուլթանը 1856 Փետրուար 16-ին կը ստիպուէր հրապարակել *ֆէրման* մը, որուն հիման վրայ՝ նոյն տարուան Մարտին ստորագրուած դաշնագիրին մէջ դրուեցաւ թիւ 9 յօդուածը⁶: Յիշեալ *ֆէրման*ին նպատակն էր ոչ-իսլամ հպատակներու վիճակը բարելաւել ու պետական դրութիւնը արդիակաւնացնել: Ան կը պարունակէր 26 հատուածներ, որոնցմէ երրորդին համաձայն՝ 1857 Մարտ 22ին պատրաստուեցաւ կանոնագիր մը, որ ներկայացուեցաւ Բ.Դրան: Բայց ան մերժեց զայն առարկելով թէ ազգային տուրք գանձելու նախատեսուած պարտադիր դրութիւնը պետութեան մէջ անջատ իշխանութիւն ստեղծելու բնոյթ ունէր:

Ի վերջոյ Բ.Դրան 1862 Փետրուար 14-ի հրամանագիրով կազմուած Յանձնախումբին կողմէ պատրաստուած նախագիծը, 1863 Մարտ 17-ին կը հաստատուի եւ Օրէնքի հանգամանք կը ստանայ:

Ան կ'երեւի Առաջին Շարք Տեսթուրի Բ. հատորին մէջ, էջ 938-961: Հետաքրքրական է յիշեալ հրամանագիրին առաջին մասը, ուր կ'ըսուի.

«Բարեկարգութեանց վերաբերեալ Կայսերական հրովարտակը կը պահանջէ, որ ամէն հասարակութիւն իր վայելած առանձնաշնորհութիւններն ու արտօնութիւնները որոշեալ պայմանաժամի մէջ՝ ի քննին առնելով, ժամանակին բերմանը եւ քաղաքակրթութեան արդեանցն ու գիտութեանց պահանջած բարեկարգութիւնները խորհրդածութեամբ որոշէ, ու Բարձրագոյն Դրան ներկայացընէ. եւ Հոգեւորական Գլխոց շնորհուած իշխանութիւնն ու ձեռնհասութիւնը՝ իւրաքանչիւր հասարակութեան ապահովուած վիճակին ու

⁶ «ՅՕԴՈՒԱԾ 9- Ն.Վ. Սուլթանը, իր հպատակներուն բարեկեցութեան համար ունեցած մշտական հոգածութեամբ ֆէրման մը հրատարակած ըլլալով, որով առանց կրօնի եւ ցեղի խտրութեան, անոնց վիճակը բարելաւելով հանդերձ, իր կայսրութեան քրիստոնեայ բնակչութեան նկատմամբ իր ունեցած վեհանձն դիտաւորութիւնները կը նուիրագործէ, եւ այդ մասին իր սնուցած զգացումներուն նոր ապացոյց մըն ալ տալ ուզելով, որոշած է դաշնակից պետութեանց հաղորդել իր Վեհապետական կամքէն ինքնաբերաբար բխած այդ ֆէրմանը: Դաշնադիր պետութիւնները կը ճանչնան սոյն հաղորդագրութեան բարձր արժէքը:

Հասկնալի է թէ ան որեւէ իրաւունք չի տար վերոյիշեալ պետութիւններուն, ոչ հաւաքաբար ոչ ալ առանձին, խառնուելու ոչ նորին Վեհափառութեան Սուլթանին իր հպատակներուն հետ ունեցած յարաբերութիւններուն, ոչ ալ անոր կայսրութեան ներքին գործերուն մէջ»:

նոր դիրքին հետ համաձայնության մեջ դրուի»⁷:

Թերեւս պետք է նաեւ ասելցնել թէ «Ազգային Սահմանադրութիւն»ը, որուն անդրադարձում պիտի ըլլայ յետագային, կը վերաբերէր միայն Հայց. Առաքելական Եկեղեցիին: Հայ կաթողիկներն ու բողոքականները ունէին իրենց անջատ ու մասնաւոր վիճակը:

գ. ԹՐԲԱՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

Այս արագ ակնարկը իր լրումին բերելու միտքով, փութկոտ անդրադարձում մըն ալ կ'ըլլայ արծարծուած նիւթին վերջին հանգրուանին:

Թուրք կառավարութիւնը, Լոզանի Դաշնագիրին թիւ 42 յօդուածին համաձայն, յանձն առած էր Թուրքիոյ մէջ բնակող ոչ-իսլամ համայնքներու անդամներուն ընտանեկան եւ անձնական իրաւունքներուն վերաբերեալ եւ անոնց աւանդութիւններուն համապատասխան օրէնքներ մշակել: Իրողութիւնը այն է, սակայն, թէ խնդրոյ առարկայ բոլոր համայնքները, դիւրաւ գուշակելի պատճառներով, շուտով հրաժարեցան յիշեալ դաշնագիրով իրենց համար նախատեսուած իրաւունքներէն: Եւ այդ կերպով նման աշխատանք մը այլեւս անելորդ դարձաւ:

Մինչ 1926 Մարտ 20-ին, թրքական հանրապետութիւնը գրեթէ լման ընդունեց Զուիցերիոյ Քաղաքային Օրէնքը (Code Civil), որուն ընտանեկան եւ անձնական իրաւունքներու յատկացումը տրամադրութիւնները սկսան կիրարկուիլ բոլոր քաղաքացիներուն համար առանց ցեղի ու դաւանանքի խտրութեան:

Վերջին օրէնսդրութեամբ, քրիստոնեայ միւս փոքրամասնութիւններուն շարքին, վերջ կը գտնէ նաեւ հայերուն համայնքային դրութիւնը: Ու Կ. Պոլսոյ Պատրիարքին իրաւասութիւնները կը պարփակուին զուտ կրօնական բնոյթով խիստ նեղ սահմաններու մէջ

2. ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին կ'որոշէ աշխարհագրական տեսակէտով շրջանները ու կը ճշդէ եկեղեցական իշխանութիւններուն սահմանները: Ամէն շրջան կ'ունենայ իր հոգեւոր պետը: Եւ այդ կերպով ունինք Երուսաղէմի, Կ. Պոլսոյ եւ Անթիլիասի թեմերը: Մնացեալները բոլոր կը կազմեն Էջմիածինի թեմերը:

⁷ Հայերէնի թարգմանութիւնը կ'ընկերակցի «Ազգային Սահմանադրութեան» հայերէն բնագիրին: Օրմանեան, «Ազգապատում», Երուսաղէմ, 1927, Գ. հատոր, էջ 4068:

Անոնցմէ՝ զատ՝ կան համապատասխան առաջնորդական շրջաններու իշխանութիւնները: Եւ անոնցմէ՝ իւրաքանչիւրին իրաւասութեան ծիրը ճշդուած է աշխարհագրական յստակ շրջաններով: Ամբողջական կառոյցը կը կազմէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին: Ան մէկ եւ նոյն եկեղեցին է ամբողջ աշխարհի վրայ, եւ անոր ամբողջութեան եւ նուիրապետութեան միակ գլուխն է Ամենայն Հայոց Վեհափառը:

Եկեղեցական միասնութեան կամ միութեան սկզբունքը չ'արտօնէր զանցառում կամ ոտնձգութիւն իրաւասութիւններու սահմաններու: Նոյնիսկ ամէն համայնք ունի ձեռնհասութեան յստակ աշխարհագրական սահմաններ: Օրինակի համար, նախապէս Ամերիկայի Միացեալ Նահանգները կը համարուէին մէկ շրջան, մէկ ընտրեալ թեմակալ առաջնորդով: 1927-ին երկրորդ թեմ մըն ալ ստեղծուեցաւ այնտեղ՝ Գալիֆորնիոյ թեմը: Պահանջքին համաձայն՝ հնարաւոր է աւելցնել կամ փոփոխել թեմերը կամ այլ ենթաբաժանումներ կատարել օրինական միջոցներով: Թոյլատրելի չէ, սակայն, ըմբռնելի չէ որ նոյն աշխարհագրական մասին մէջ երկու զատ կամ մրցակից հոգեւոր իշխանութիւններ ստեղծուին: Միացեալ Նահանգներու շրջանը Էջմիածնական թեմ է, ինչպէս ակնարկուեցաւ արդէն: Բայց այնտեղ կան եկեղեցիներ, որոնք անջատուած են ու ենթակայ են Անթիլիասին⁸: Այս վիճակը, եկեղեցական միասնականութեան եւ աւանդօրէն նուիրագործուած դրութեան իմաստով, կարելի չէ ընդունիլ կամ հասկնալ: Այսօրինի միջամտութեան մը հետեւանք է այս կացութիւնը:

Է. ՈՒՐԻՇ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

Դժուար է երեւակայել որեւէ եկեղեցի որ ընդունի իր բաժանումին տեսակէտը եւ մէկէ աւելի գլուխներ կամ պետեր ունենայ: Կը բաւէ անցողակի մտաբերել աշխարհի վրայ գոյութիւն ունեցող միւս եկեղեցիներէն շատերը, ըմբռնելու համար այս պարզ ճմարտութիւնը: Նոյնիսկ այն եկեղեցիները որոնք ցրուած են աշխարհի բոլոր կողմերը ու գոյութիւն ունին եւ կը գործեն այլազան երկիրներու, տարբեր ազգերու եւ ուրիշ վարչաձեւով ընկերութիւններու մէջ, եւ որոնց հետեւորդներուն թիւը հարիւրաւոր միլիոններու կը հասնի, չեն շեղիր, չեն կրնար հեռանալ այդ սկզբունքէն: Որովհետեւ, այլապէս, սերմանած պիտի ըլլան իրենց պառակտումին ու քայքայումին սերմերը եւ աշխատած պիտի ըլլան իրենց

⁸ Ամերիկայի մէջ բաժանումը սկսաւ 1933-ին: Ժամանակ մը բաժանուածները շարունակեցին գործել անջատ հանգամանքով, առանց որեւէ իշխանութեան ենթակայ ըլլալու:

կործանումին ի նպաստ: Որովհետև եկեղեցիի հոգևոր իշխանության մը ոյժը՝ անոր միասնականության մէջ է: Միասնականութիւն մը՝ որ կը պահպանուի միակ հովուապետի սկզբունքով:

Հայաստանեայց Եկեղեցիին միութեան սկզբունքը եւ հայ ժողովուրդին հոգևոր ազգային միասնականության գաղափարը չեն թոյլատրեր շեղում՝ դարաւոր կանոնէն եւ նուիրագործուած աւանդութիւններէն:

Ը. Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐԺԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ.

Կ'երեւի թէ 1860-ական թուականներուն ալ ծագած են եկեղեցական նման անհասկացողութիւններ: Ու շատ հետաքրքրական եւ ուսանելի է այն դիրքը՝ զոր բռնած են այն ատենուան Կ. Պոլսոյ խոհեմ եւ հեռատես պատասխանատուները. Ռուբէն Կիւմիշկերտանեան, Գրիգոր Օտեան, Ստեփան Փափագեան, Նահապետ Ռուսինեան եւ ուրիշներ, որոնք «Էջմիածնի Սայր Աթոռոյ Ամենայն Հայոց Ընդհանուր եւ գերագոյն եւ միակ գլուխն ու Կաթողիկոսն ըլլալը կը դաւանէին»⁹, եւ անոր համապատասխան կը կառավարէին Կիլիկիոյ ընտրական եւ այլ գործերը:

Եւ այս սկզբունքին կիրարկումով՝ Կ. Պոլսոյ Պատրիարքը որպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսի փոխանորդ կամ ներկայացուցիչ կը պաշտօնավարէր ամբողջ Օսմանեան տիրապետութեան մէջ: Իսկ այս ըմբռնումին ու ոգիին թէւ անուղղակի բայց յստակ մէկ արտայայտութիւնը կ'երեւի այն ներածականին մէջ, որ կցուած է Ազգային Սահմանադրութեան: Այդ վաւերաթուղթը ստորագրուած է «Բարձրագոյն Դրան Յանձնաժողովոյ» անդամներուն եւ «Ազգային Յանձնաժողովոյ» անդամներուն կողմէ որոնք միատեղ կը կազմէին «Կայսերական Տէրութեան» նշանակած «խառն Յանձնաժողովը»: Եւ այդ պարագան մասնաւոր նշանակութիւն կը ստանայ երբ նկատի ունենանք թէ Խառն Յանձնաժողովը «հարկաւոր դատեց» որ «ի վաղուց անտի ընդունուած ընթացքին համաձայն Սահմանադրութիւն մը պատրաստուի»:

Այդ ներածականին մէջ ըսուած է.

«Թ. Ազգային Վարչութիւնը երեք տեսակ պարտաւորութիւն ունի, որոց առաջինն է առ Կայսերական Տէրութիւն. այս է՝ Ազգը կատարելապէս հաւատարիմ հպատակութեան մէջ պահել, Ազգին թէ ընդհանրապէս եւ թէ ի մասնաւորի ամէն մէկ անհատներուն իրաւանց եւ արտօնութեանց՝ Տէրութեան կողմէն պահպանու-

⁹ Օրմանեան, «Ազգապատում», Երուսաղէմ, 1927, Գ.Հատոր, Էջ 4565–67:

թիւնը ապահովցրնել: Երկրորդն է առ Ազգն. որ է ճշմարտապէս գթութեամբ եւ հայրաբար վարուիլ: Եւ երրորդն՝ է առ Աթոռն Էջմիածնի, այն է՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ Կրօնական կանոնաց եւ օրինաց համեմատ վարուիլ»:

Իսկ երբ մանաւանդ նկատի առնուին ատենուան ազգային ու քաղաքական պայմանները եւ յարակից պարագաները, այն ատեն լիովին կ'ըմբռնուի հոն արձանագրուած խորհուրդին իմաստութիւնն ու խորութիւնը:

Էջմիածինի Գահակալին գերակայութեան ուղղակի ապացոյցը կու տայ 29-րդ յօդուածը: Ազգային կրօնական ժողովին վերաբերեալ աշխատանքներուն եւ իրաւասութիւններուն մասին խօսելով, յիշեալ յօդուածը կը հաստատէ.

«Յօդ. 29. Կրօնական ժողովը երբ չը կարենայ ինքնին լուծել զուտ կրօնական կարելուր խնդիր մը, եկեղեցական համագումար ժողով կը կազմէ՝ Կոստանդնուպօլիս գտնուող եպիսկոպոսները, Եկեղեցեաց քարոզիչ Վարդապետները, Աւագերեցները ու Աթոռակալները, եւ թէ հարկ ըլլայ նաեւ շրջակայ գաւառաց Առաջնորդները հրաւիրելով: Եթէ եկեղեցական համագումար ժողովն ալ խնդիրը իր ձեռնհասութենէն վեր դատէ, այն ժամանակ՝ Ընդհանրական Կաթողիկոսին կը դիմէ ստորագրեալ տեղեկագրով»:

Պարզ է թէ պատմական, աշխարհագրական եւ այլ տուեալներու բերումով, եւ ազգային իմաստութենէ թելադրուած, Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը, բացի իր ընթացիկ իրաւասութիւններէն ու ձեռնհասութիւններէն, կը գործէր նաեւ որպէս փոխանորդ կամ ներկայացուցիչ Մայր Աթոռի: Եւ այդ առումով՝ իշխանութիւն ունէր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու Երուսաղէմի Պատրիարքութեան վրայ: Եւ ոչ մէկ տարբերութիւն կ'ընէր այն իրողութիւնը թէ ենթակայ նուիրապետական աթոռներէն մէկը կաթողիկոսութիւն էր իսկ անոր վրայ իշխանութիւն կիրարկողը՝ Պատրիարքութիւն: Բայց որովհետեւ մինչ այդ փոխուած են Կ. Պոլսոյ Պատրիարքութեան դերն ու նշանակութիւնը, կրճատուած են նաեւ անոր իրաւասութեան սահմանները՝ պատմական ու քաղաքական տուեալներու եւ իրադարձութիւններու բերումով: Այսպիսի կարգադրութիւն մը, սակայն, եղած է Հայց. Եկեղեցիի եւ հայութեան համամտութեամբ եւ հաւանութեամբ:

Թ. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌ.

Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռը մասնաւոր Կաթողիկոսութիւն մըն է, որ ստեղծուած է պատմական, քաղաքական-աշխարհագրական պայմաններու թելադրութեամբ բայց առանց խախտելու Հայաստանեայց Եկեղեցիին

հիմնական կառույցն ու նուիրապետական դրությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Աթոռը, որ 4 ԺԱ պարբերութեան մէջ յիշատակուած պատճառներով՝ տեղափոխուած էր Կիլիկիա, Սիսէն Էջմիածին վերադարձաւ 1441-ին: Տարիներ ետք կազմաւորուեցաւ Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռը եւ ինչպէս անունն ալ կը բացատրէ, Կիլիկիոյ շրջանի հայութեան հոգեւոր կարիքներուն գոհացումին համար, իբրեւ զուտ տեղական բնոյթով Աթոռ: Այդ դրութիւնը կամ իրաւամիճակը շարունակուեցաւ Օսմանեան Կայսրութեան շրջանին ալ ու գոյատեւեց մինչեւ 1915, երբ Եղեռնի հետեւանքով՝ Կիլիկեան Աթոռը հարկադրուեցաւ հեռանալ իր նախկին վայրէն: Իր ժողովուրդին հետ եւ անոր պէս հալածական ու տարագիր, շրջան մը անտուն մնալէ յետոյ, Երուսաղէմի Պատրիարք Արքեպիսկոպոս Դուրեանի նախաձեռնութեամբ ու ճիգերով, եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ի համաձայնութեամբ, Կիլիկեան Աթոռի իրաւասութեան ժամանակաւորապէս փոխանցուեցան Դամասկոսի եւ Լիբանանի թեմերը, որպէսզի Կիլիկեան Աթոռը զօրանար ու գոյատեւէր նոր իրադրութեամբ ստեղծուած պայմաններու մէջ: Եւ այդ կերպով Կիլիկեան Աթոռը հաստատուեցաւ Անթիլիասի մէջ, իր հոգեւոր իշխանութեան ծիրին մէջ ունենալով Լիբանանը, Սուրիան ու Կիպրոսը, բայց միշտ որպէս տեղական Աթոռ:

Ուրեմն, ընդհանուր դրութեան շրջանակը կ'ամբողջանար Հետեւեալ կերպով:

Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը փոխանորդն էր Ամենայն Հայոց Հայրապետին կամ Ս. Էջմիածինի, ինչպէս յիշատակուեցաւ:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը ենթակայ էր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, այդ առումով:

Երուսաղէմի Պատրիարքութիւնը, համապատասխան ընդհանուր հաւանութեամբ եւ օրինաւորաբար, իր հոգեւոր պատասխանատւութեան տակ գտնուող երկու շրջանները կը փոխանցէր Անթիլիասի Աթոռին, ինչպէս ակնարկուեցաւ:

Բաց Երուսաղէմի Պատրիարքութեան իրաւասութիւնները պայմանադրական ըլլալով, գոնէ հոգեւոր կերպով, յիշուած շրջանները տեսակ մը կախեալ էին ուղղակի Կ. Պոլսոյ Պատրիարքութենէն եւ անուղղակի, անոր միջոցաւ, Ամենայն Հայոց Կաթողիկոսէն:

Ուրիշ խօսքով՝ Երուսաղէմի Պատրիարքութիւնը, պահանջուած համամտութեամբ եւ օրինաւորաբար, կրնար յանձնել խնդրոյ առարկայ շրջանները Անթիլիասի Աթոռին, բայց իր ունեցած իշխանութեամբ անոնց վրայ: Այսինքն՝ ուղղակի ենթակայ Էջմիածինի: Երուսաղէմը չէր կրնար

բացարձակ, անկաշկանդ եւ առանց պայմանի փոխանցում կատարել: Պարզ այն պատճառով թէ ինք չէր կրնար տալ իր չունեցածը կամ չէր կրնար տալ իր ունեցածէն աւելին:

Իսկ Անթիլիաս արդէն, իր կարգին, նոր ստացած իր երկու թեմերուն կապակցութեամբ մանաւանդ, ձեռով մը ենթակայ էր Կ. Պոլսոյ Պատրիարքութեան, ինչպէս նախապէս ակնարկուեցաւ, եւ անոր միջոցով կամ այլապէս՝ Էջմիածինի Նախամեծար Աթոռին:

Ու բնական հետեւութիւնը այն է թէ բոլոր թեմերը, ի վերջոյ, փոխանորդութեամբ կամ այլապէս, ենթակայ էին Էջմիածինի գերագոյն հոգեւոր իշխանութեան:

Կարելի է ըսել, ուրեմն, թէ Կիլիկիոյ Աթոռը, մանաւանդ իրեն վստահուած յիշեալ երկու թեմերու առնչութեամբ, մասնակի կաթողիկոսութիւն մըն է՝ Լիբանանի, Սուրիայի ու Կիպրոսի այժմու սահմաններուն մէջ միայն: Մասնաւոր Աթոռ մըն է տեղական ճշդուած ու սահմանուած իշխանութեամբ: Ան ունի իր արժանաւոր տեղը Հայց. Եկեղեցիի նուիրապետական կառոյցի ամբողջութեան մէջ, եւ այդ իմաստով՝ ենթակայ է Հայոց Ընդհանրական Կաթողիկոսութեան հոգեւոր կերպով, անկախ մնալով հանդերձ վարչական ու մատակարարական իր աշխատանքներուն մէջ:

Ժ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԴԱԴԱՐՈՒՄՈՎ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ

ՎԵՐԱԴԱՐՁԱԾ Է ՏԻՐՈՋ.

Լոգանի դաշինքին շնորհիւ՝ Օսմանեան տիրապետութիւնը թօթափած շրջաններ (Սուրիա, Լիբանան, Պաղեստին), տարիներու ընթացքին վեհապետական երկիրներ դարձան: Ու տեղական նոր կացութեան ենթարկուեցան նաեւ հայ գաղութները, որոնց անդամները ապաստան գտած էին այդ երկիրներուն մէջ:

Բայց հայ եկեղեցիին առումով՝ հիմնականին մէջ ոչ մէկ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Արտաքին քաղաքական կամ աշխարհագրական եւ այլ պայմաններ, ինչ բնոյթ ալ ունենային անոնք, իրենք իրենց չէին կրնար օրինաւորապէս ստեղծել նոր հոգեւոր գոյավիճակ կամ իրաւական դրութիւն: Սուրբ Էջմիածինի՝ հայերու վրայ ունեցած ընդհանրական դարաւոր հոգեւոր իշխանութիւնը Օսմանեան Կայսրութեան կամ որեւէ այլ պետութեան գոյութեան վրայ չէր հիմնուած կամ կախուած անկէ: Եւ ուստի չէր կրնար վերջ գտնել՝ նման տէրութեան մը քայքայումով կամ կրճատումով:

Եկեղեցական իրաւակարգը չի փոխուի ինքնաբերաբար: Բնական է,

հետեւաբար, հաստատել թէ ստեղծուած նոր իրադրութեամբ, Կ. Պոլսոյ Պատրիարքութեան փոխանորդի պաշտօնին դադարումով, Ամենայն Հայոց Հայրապետութեան գերագոյն ու գերագահ իշխանութիւնը ոչ թէ ջնջուած կամ բեկանուած է, այլ վերադարձած է իր բուն իրաւատիրոջ: Իրաւասութիւնը Կ. Պոլսոյ Պատրիարքութեան սեփականութիւնը չէր: Եւ անոր իրաւունքներուն դադարումով կամ սահմանափակումով չէր կրնար կորսուիլ: Պատրիարքարանը իշխանութիւնը կը կիրարկէր իբրեւ Սուրբ Էջմիածինի փոխանորդ: Եւ ուստի պէտք է եզրակացնել թէ Կիլիկիոյ Աթոռն ալ, առանց ընդմիջումի, կապուած էր նախամեծար Աթոռին եւ կը շարունակէ մնալ միեւնոյն գոյավիճակին մէջ անոր նկատմամբ:

ԺԱ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌԱՆԻՍՏ ԿԵԴՐՈՆԸ.

Վաւերագրական կամ արձանագրութեան լրացումի նպատակով կ'երեւի թէ շատ փութկոտ ակնարկութիւն մըն ալ պէտք է ընել Եկեղեցիի գերագոյն մարմինին եւ անոր Աթոռանիստ կեդրոնին վերաբերեալ:

Ըստ պատմագրական տուեալներու եւ տեսութիւններու, Հայաստան-եայց Առաքելական Եկեղեցին կազմաւորուած է 301-ին Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի ձեռքով եւ Հայրապետական Աթոռը հաստատուած է Էջմիածինի մէջ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը, իբրեւ հայ եկեղեցիին գերագոյն գլուխը, դարերու ընթացքին նշանակալի դեր ունեցած է մեր ժողովուրդին նաեւ քաղաքական կեանքին առնչուած հարցերու լուծումին մէջ: Իսկ երբեմն ալ, արտակարգ իրադարձութիւններու բերումով, կատարած է քաղաքական հեղինակութեան պաշտօններ, ինչպէս յիշատակուեցաւ արդէն: Այս առումով ան մնացած է կապուած հայ քաղաքական իշխանութեան բարձրագոյն մարմիններուն: Եւ անոնց հետեւելով, փոխադրուած է այնտեղ՝ ուր այդ հեղինակութիւնը տեղափոխուած կամ հաստատուած է:

Վերջին իմաստով պէտք է ըմբռնել նաեւ այն եղելութիւնը թէ Կիլիկեան Հայկական Իշխանութեան շրջանին, Հայրապետական Աթոռը, որպէսզի գտնուի հայ գերիշխանութեան կամ պետականութեան մէջ, Ժամանակաւոր կերպով կը փոխադրուի Կիլիկիա: Եւ իրապէս ալ երբ այնտեղի հայկական վարչութիւնը կը խորտակուի ու կը քայքայուի, դարձեալ կը վերադառնայ իր աւանդական վայրը, Էջմիածին:

Պատմական իրողութիւնը այն է թէ 1441-ին յատուկ հրաւերով գումարուած է եկեղեցական համաժողով, որուն կանչուած են բարձրաստիճան ու պատասխանատու հոգեւորականները, որոշելու համար Ընդհան-

րական Կաթողիկոսության Աթոռին փոխադրության հարցը՝ քաղաքական ու այլապես նոր իրադրության լոյսին տակ: Այդ համագումարին մասնակցած են, ժամանակակից պատմիչներու համաձայն, աւելի քան 300 պատուիրակներ, որոնց շարքին նաեւ աշխարհականներ՝ «ագատք եւ որդիք ագատաց, ձեռնաւորք եւ տանուտէրք»¹⁰: Ժողովը, ազգային-եկեղեցական պատճառներէ առաջնորդուած, յարմար կը դատէ Կաթողիկոսական Աթոռը՝ Սիսէն վերստին Էջմիածին փոխադրել: Եւ որովհետեւ օրուան Սիսի Գրիգոր Կաթողիկոսը կը մերժէ ընդառաջել ընդհանուրի տեսակէտին, նոյն ժողովը կը վճռէ այլեւս չճանչնալ Սիսի Աթոռակալը իբրեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ նոր կաթողիկոս կ'ընտրէ Կիրակոս Վիրապեցին¹¹:

Եւ այս կերպով, դարաւոր բացակայութենէ յետոյ, Հայոց Ընդհանրական Աթոռը Էջմիածին կը վերադառնայ

ԺԲ. ԷԶՄԻԱԾԻՆԻ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

ԻՐԱՒԱՍՈՒԹԻՒՆԸ

Կիլիկիոյ արքայական եւ հայրապետական իշխանութիւններուն վերջաւորութիւնը եղող Աթոռն է Անթիլիաս: Բայց ան հայ ժողովուրդինն է: Ինչպէս է Երուսաղէմի Աթոռը, միջազգային իր բոլոր մենաշնորհներով եւ առանձնաշնորհումներով, որ միշտ մնացած է բովանդակ ազգին անկապտելի սեփականութիւնը: Անկախ այնտեղ ժամանակ առ ժամանակ պատահածներէն: Եւ այդ պատկանելիութեան շարունակութիւնը առայժմ կ'ապահովուի կամ կը խորհրդանշուի Երուսաղէմի վրայ տեսակ մը զօրացումով հեղինակութեան Ամենայն Հայոց Հայրապետութեան ու գերագոյն Աթոռին: Իսկ Մայր Աթոռը կը ներկայացնէ հայ ժողովուրդը, որուն պատասխանատու է արդէն: Մինչ միս Աթոռները հոգեւորապէս ենթակալ են Էջմիածինին: Այսինքն՝ հայ ժողովուրդին, Էջմիածինին միջոցաւ:

Օրմանեան ճիշդ ամփոփած է Հայց. Եկեղեցիին ընդհանուր դրութիւնը երբ կ'ըսէ.

«Հակառակ իւր հաւատացեալներուն աշխարհի ամէն կողմերը ցրուած եւ սփռուած ըլլալուն, եւ հակառակ երկու Կաթողիկոսական եւ երկու Պատրիարքական մեծ աթոռներ ալ հաստատուած

¹⁰ «Հայ ժողովուրդի Պատմութիւն», Երեւանի Համալսարանի Հրատարակութիւն, Երեւան, 1975, էջ 600:

¹¹ Նոյնը, էջ 600:

ըլլալուն, ամէնքն ալ մէկ կեդրոնի ենթարկուած կը մնան: Եւ Էջմիածինն նստող Ամենայն Հայոց Կաթողիկոսին իրաւասութիւնը կը տարածուի բովանդակ Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ վրայ»¹²:

Մասնաւոր Աթոռի մը շահերը, ինչ տարողութեամբ ալ ըլլան անոնք, չեն կրնար ունենալ այնպիսի բնոյթ որ արդարացնեն անոր հակադրուիլը Էջմիածինին: Չեն թոյլատրեր անոր իրաւասութիւններուն միջամուխ ըլլալը կամ անոնց կապտումը խնդրոյ առարկայ Աթոռէն: Իսկ առանց արտակարգ բացայայտ պատճառի եւ իրաւունքի՝ Մայր Աթոռի իրաւասութիւններու ծիրէն ներս արշաւելը Աթոռի մը կողմէ պարզապէս անընդունելի է: Ինչ անունով ալ եղած ըլլայ այդ արարքը:

Թերեւս պէտք է նաեւ աւելցնել թէ Ամենայն Հայոց Հայրապետը *ազգրնտիր* է: Սահմանադրութեամբ կը նախատեսուի ամբողջ հայութեան, ուղղակի կամ ներկայացուցչական հանգամանքով, մասնակցութիւնը Էջմիածինի կաթողիկոսի ընտրութեան:

Եւ այդ առումով՝ Ս. Էջմիածինը կը խորհրդանշէ միութեան եւ միասնականութեան հաւատքը: Ամբողջականութեան եւ անբաժանելիութեան անփոխարինելի ոյժը:

* * *

¹² Օրմանեան, «Հայոց Եկեղեցի», Պուէնոս Այրէս, 1949, էջ 196:

5. ԹԻՒ 32 ԵՒ 33 ՅՕԴՈՒԱԾՆԵՐԸ.

Կիլիկիոյ Աթոռը ինքն իրեն իրաւասութիւն տուաւ իր կանոնագրութեան մէջ ներմուծելու համբաւաւոր 32-րդ եւ 33-րդ յօդուածները, ինչպէս յիշատակուեցաւ:

Բայց ի՞նչ էր էութիւնը այդ երկու յօդուածներուն:

Թիւ 32 յօդուածը Կիլիկեան Թեմ կը հռչակէր Էջմիածինի շրջանին պատկանող երեք թեմեր, Միացեալ Նահանգներ, Պարսկաստան եւ Յունաստան:

Իսկ թիւ 33 յօդուածը նախատեսութիւն կ'ըներ թէ Սփիւռքի ուրիշ թեմեր ալ կրնային միացուիլ Անթիփասի Աթոռին:

Հարց է, անշուշտ, թէ նման միակողմանի եւ ինքնակոչ արարք մը օրինական տեսակէտով ի՞նչ վաւերականութիւն կը ներկայացնէ: Բայց խնդրին այդ երեսին անդրադառնալը կը վերապահենք յետագայ առիթի մը:

Անցեալին եղած են անհասկացողութիւններ երկու աթոռներու միջեւ: Բայց անոնք կանոնագրութեան մաս չեն դարձուած: Եւ ուշագրաւ է այն պարագան թէ առաջին անգամ ըլլալով յստակ տարակարծութիւն մը, աւանդութեան եւ օրինական տրամադրութիւններու բացայայտ խախտում մը կը փորձուէր պարտադրել կանոնի ոյժի վերածելով զայն:

* * *

6. ԵՐԿՐՈՐԴ ՄԵՐՁԵՑՈՒՄ ՏԱԳՆԱԴԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ.

Ա. ՆՈՐ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐՈՒՆ ԻՄԱՍՏԸ.

Կարգ մը շփումներ տեղի կ'ունենան 1971-1972 շրջանին ու նամակներ կը փոխանակուին Մայր Աթոռի եւ Անթիլիասի միջեւ: Տ. Տ. Խորեն Ա. Կաթողիկոս, իրեն վերաբերեալ պատճառներով, կ'առաջարկէ հանդիպում մը կայացնել՝ Մայր Աթոռի եւ իր ներկայացուցիչներուն միջեւ, ենթադրաբար տիրող տարակարծութիւններն ու մշուշները փարատելու համար: Կարգ մը անորոշ փորձեր կ'ըլլան գոնէ ձեւական մերձեցումի բայց անոնք ոչ մէկ դրական կամ նշանակալից արդիւնքի կը յանգին:

1956-էն ի վեր անցած տարիներու եւ մանաւանդ Երուսաղէմի ողջագործումին փորձառութիւնը, յստակ ոչ մէկ ապացոյց տուած էր ենթադրելու թէ Անթիլիաս պատրաստ էր ընդունելու մեր եկեղեցիին պատմականօրէն նուիրագործուած աւանդական կարգն ու կանոնը: Ուրիշ խօսքով՝ Անթիլիասի մտայնութեան ու գործելակերպին մէջ դրական ոչ մէկ փոփոխութիւն տեսնուած էր: Անոր համար էր որ Ամենայն Հայոց Հայրապետը, Խորեն Ա.-ի 1972 Սեպտեմբեր 4 թուակիր նամակին ի պատասխան գրած Հոկտեմբեր 9 ամսաթիւ գրութեան մէջ յստակօրէն կ'ըսէր թէ իմաստ չէին կրնար ունենալ նոր հանդիպումներ, նոր բանակցութիւններ: Ընդհակառակը, անոնք կրնային նոր բարդութիւններ ստեղծել, քանի որ հիմնական հարցերու վերաբերեալ Անթիլիասի ընդհանուր կեցուածքին մէջ փոփոխութիւն չէր տեսնուեր:

Եւ իրապէս յատկանշական է այն պարագան թէ Անթիլիասի Աթոռակալը կը խօսի «գոյգ Կաթողիկոսներ»ու մասին: Մինչդէռ մեր եկեղեցիին դրութեան մէջ երբեք չեն եղած հաւասարագոր «գոյգ կաթողիկոսներ», քանի որ չկան գոյգ եկեղեցիներ: Կայ մէկ հայ ժողովուրդ, որ ունի մէկ Հայաստանեայց Եկեղեցի՝ նուիրապետական դրութեամբ ու կառոյցով, մէկ Ամենայն Հայոց Հայրապետութեամբ, որուն պատմական Աթոռն է Սուրբ Էջմիածինը:

Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ.

Ամենայն հայոց Վեհափառին վերոյիշեալ 9 Հոկտեմբեր 1972 թուակիր բացատրական նամակին մէջ ըսուած է, ի միջի այլոց.

«Հետևաբար Մայր Աթոռիս սպասումն է որ Ձերդ Սրբութիւնը յստակ ու վճռական իր խօսքով, կէտ առ կէտ հաստատել առաջադրուած հինգ սկզբունքները եւ իր պատրաստակամութիւնը յայտնէ՝ Մեզի հետ գործակցելու, ի խնդիր անոնց կենսագործման: Յիշեցման կարգով ստորեւ վերստին Ձեզի կը ներկայացնենք Մայր Աթոռիս բանաձեւած հինգ սկզբունքները:

Ա. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը ընդունի կանոնական եւ պատմութեամբ նուիրագործուած Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան սկզբունքը հոգեւոր վերին իշխանութեանը ներքեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Պատրիարքի, որ եղած է միշտ եւ կը մնայ միակ գերագոյն պետը եւ գլուխը ամբողջ Հայ Եկեղեցւոյ եւ անոր նուիրապետութեան, որուն հաւասարագոր այլ եկեղեցական իշխանութիւն ընդունելի չէ Հայ Եկեղեցւոյ կառոյցին մէջ:

Բ. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը յարգէ Հայ եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու իրաւասութեանց սահմանները եւ առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի համաձայնութեան եւ կարգադրութեան եպիսկոպոս կամ այլ հոգեւոր պաշտօնեայ չորկէ՝ Սուրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի թեմերէն դուրս, թեմեր՝ որոնցմէ Լիբանանի եւ Դամասկոսի թեմերը Անթիլիասի յանձնուեցան 1929-ին Երուսաղէմի Պատրիարքութեան կողմէ, որով չեղեալ պէտք է համարուին Անթիլիասի Կիլիկեան Աթոռի նոր կանոնագրութեան 32 եւ 33 յօդուածները:

Գ. Անթիլիասի Կիլիկեան Աթոռը յանձն առնէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրաւասութեան վերադարձնել Իրանի, Յունաստանի եւ Միացեալ Նահանգաց թեմերը եւ Գարագասի համայնքը:

Դ. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը ընդունի սկզբունքը որով միջեկեղեցական եւ միջազգային մակարդակի կազմակերպութիւններուն եւ համաժողովներուն Հայաստանեայց Եկեղեցին ներկայացուի Ամենայն Հայոց Կաթողիկոս Պատրիարքի կողմէ նշանակուած անձերով կամ պատուիրակութիւններով, մասնակցութեամբ նաեւ Կիլիկիոյ Աթոռի ներկայացուցիչներուն:

Ե. Անթիլիասի Կիլիկեան Աթոռը յարգէ սկզբունքը որ Ամենայն Հայոց Կաթողիկոս Պատրիարքի պատժական կամ կարգալուծման վճիռները վերջնական են եւ պարտադիր Հայ Եկեղեցւոյ նուիրապետական բոլոր Աթոռներուն եւ Թեմերուն համար»¹³:

¹³ «Էջմիածին» Ամսագիր, Նոյեմբեր 1972, էջ 31–33:

Ներկայացուած «հինգ սկզբունքները» յետ այսու պիտի կոչուին հինգ հարցերը:

Գ. ՀԵՏԵԻՈՂ ԼՌՈՒԹԻՒՆԸ – ԼԻԲԱՆԱՆԻ ՏԱԳՆԱԴՆԸ.

Վերոյիշեալ նամակը, ըստ երեւոյթին, համապատասխան արձագանգ չի գտներ եւ անկէ յետոյ լռութիւն կը տիրէ: Եւ նոյն վիճակը կը շարունակուի մինչեւ 1977 Մայիս:

Մինչ այդ արդէն 1976-ին ծայր տուած էին Լիբանանի քաղաքացիական կռիւները ու տեղական համայնքային բախումները տարերային հանգամանք հազած էին: Վտանգուած էր նաեւ Լիբանանի հայութիւնը ամէն տեսակէտով: Ֆիզիքական վերապրումի հարց կը ծագէր: Եւ այդ առիթով տեղոյն վրայ մերձեցումներ կ'ըլլային հայ քաղաքական երեք կուսակցութիւններու կողմէ: Անոնք, միւս ճիգերէն անջատ ու երկար բանակցութիւններէ յետոյ, կարգ մը ուրիշ յառաջադրանքներու կողքին, կ'որոշէին «հարթել ազգային, եկեղեցական տագնապը եւ վերականգնել հայ ժողովուրդի միասնականութիւնը»:

Բայց իրականութիւնը այն է թէ, հակառակ բոլոր խոստումներուն, յայտարարուած բարի տրամադրութիւններուն եւ ակնկալութիւններուն, ոչ մէկ յուսադրական նոր երեւոյթ պարզուած է: Ոչ մէկ նշանակալի քայլ առնուած է կամ նախաձեռնութիւն եղած է մինչեւ այն թուականը երբ տեղի կ'ունենան աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան, ձեռնադրութեան եւ օծման հանդիսութիւնները:

* * *

7. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ. ԵՐՐՈՐԴ ՄԵՐՁԵՑՈՒՄ – ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՃԻՓԵՐ.

Ա. ՀՐԱԲԷՐ ԷԶՄԻԱԾԻՆԻՆ.

Այդ առիթով՝ հոգելոյս Ս. Տ. Խորեն Ա. Կաթողիկոսը՝ Ամենայն Հայոց Ս. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին ուղղելալ 23 Յունուար 1977 թուակիր իր պաշտօնական գրութեամբ¹⁴ կը հրաւիրէ Մայր Աթոռը «որ Ամենայն Հայոց Հայրապետութիւնը մասնակցի սոյն ընտրութեան մէկ հոգեւորական եւ մէկ աշխարհական պատգամաւորներով՝ համաձայն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան 12-րդ յօդուածի տրամադրութեան»:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ 26 Ապրիլ 1977 թուակիր եւ հմր. 265 գրութեամբ կը պատասխանէ վերոյիշեալ հրաւեր-նամակին: Ան կ'ըսէ, ի միջի այլոց.

«Մենք սրտանց կ'ողջունենք Ձեր հրաւերը, անոր մէջ տեսնելով վերյառնումը այն բարի ոգիին որ սկիզբ տուած էր, մեր միջեւ Երուսաղէմ, մեր ողջագութեամբի օրերուն 1963-ին Հոկտեմբերին»¹⁵:

Ան հաւատք կը յայտնէ նաեւ թէ Ս. Տ. Խորեն Ա. Կաթողիկոս եւ ազգային-եկեղեցական մարմինները խորհած են դիմել այն միջոցառումներուն, որոնք օրինականացուելով՝ հնարաւոր պիտի դարձնեն որ Մայր Աթոռի ներկայացուցիչները մասնակցին աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան, «իբրեւ հրապարակային արտայայտութիւնը մեր երկու Աթոռներու միջեւ քսան տարիներէ ի վեր եղած անհասկացողութեանց վերացման»: Ամենայն Հայոց Կաթողիկոսը կը յայտնէ այն միտքը թէ երկու կաթողիկոսները մտահոգողը ոչ թէ պարզապէս ձեւական մասնակցութիւնն է Մայր Աթոռի ներկայացուցիչներուն Կիլիկեան Աթոռի Ազգային

¹⁴ Ներկայ գրութիւնը, ինչպէս նաեւ յաջորդող էջերուն մէջ մէջբերուած կարգ մը նամակներ, կամ անոնցմէ մասերը, առնուած են «Էջմիածին» ամսագիրի մէկ հրատարակութենէն որ կը կրէ «Յուսատրող Հեռանկարներ (Խմբագրական) եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի Աթոռակից Կաթողիկոսի Ընտրութիւն (Պաշտօնական նամակներու փոխանակում), Առանձնատիպ, «Էջմիածին» ամսագրի, 1977 Թ.Չ. համարից» ընդհանուր խորագիրը: Թ.Չ. (Յետ այսու կոչուած՝ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր 1977 Թ.Չ. համար), էջ 11:

¹⁵ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր 1977 Թ.Չ. համար), էջ 12:

Ընդհանուր ժողովին, այլ վերացումը այն «առարկայական պատճառներ»ուն, որոնք յառաջացուցին տագնապալի վիճակը «ի ցաւ մեր բոլորիս սիրտերուն եւ ի վնաս մեր սուրբ Եկեղեցիին ու մեր ժողովուրդի հիմնական ու տեւական շահերուն»:

Բ. ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ.

Նոյն նամակին մէջ Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետը կը շեշտէ Մայր Աթոռի մասնակցութեան հետեւեալ պարագան.

«Հետեւաբար կը խորհինք թէ, Մայր Աթոռիս ներկայացուցիչներու մասնակցութիւնը հնարաւոր դարձնելու համար, անհրաժեշտ է որ Աթոռիդ Ազգային ընդհանուր ժողովը նախքան ընտրութեան անցնիլը, իր իշխանութեամբ չեղեալ հռչակէ 32րդ եւ 33րդ յօդուածները ու նաեւ տրամադրութիւն յայտնէ պատշաճ բանաձեւումով մը, որ պթոռակից կաթողիկոսի ընտրութենէն եւ օծումէն յետոյ, շուրջ մէկ տարուան ընթացքին՝ մեր Աթոռներու միջեւ բանակցութիւններու եւ փոխադարձ հասկացողութեանց ճանապարհով, օրինաւոր եւ բարւոք լուծում գտնեն նաեւ միւս հարցերը, որոնք Ձեզ ուղարկած էինք 1971-ի Նոյեմբերին, Ձեր պաշտօնական ներկայացուցիչներու ձեռամբ, եւ զոր կրկին Ձեր ուշադրութեան յանձնած էինք Մեր 14 Փետրուար 1972 նամակով, հարցեր, որոնք կը կարօտին օրինական կարգաւորման, համաձայն մեր եկեղեցւոյ կարգ ու կանոնին: Յիշեցման կարգով ներփակ Ձեզի վերստին կը ներկայացնենք այդ հինգ հարցերը, բանաձեւուած Մեր Կողմէ նոյեմբեր 1971-ին:

Մեր ցանկութիւնն է եւ ակնկալութիւնը, որ ամէն ինչ առաջուց յստակուի, որպէսզի յետոյ անախորժ կացութիւններ չստեղծուին ոչ Մեզի եւ ոչ ալ Ձեզի համար: Որով լաւատեսութեամբ պիտի սպասենք Ձեր շուտափոյթ պատասխանին, որ Մայիս 22-ին գումարուելիք Աթոռիդ Ազգային ընդհանուր ժողովի օրակարգին վրայ պիտի դրուին Մեր առաջարկած վերոյիշեալ հարցերը, կարենալ սիրով նշանակելու համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներկայացուցիչները, որոնք պիտի բերեն պատկառելի Ազգային ընդհանուր ժողովիդ Մեր Օրհնութիւնը եւ ողջոյնը մեր հայրենի աշխարհին ու ժողովուրդին»¹⁶:

Կ'արժէ առանձնապէս կանգ առնել այս պատմական գրութեան վրայ, ըմբռնել անոր ոգին ու բովանդակութիւնը, հասկնալու համար հարցին էու-

¹⁶ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 Թ. Չ. համար, էջ 13:

թիւնն ու տարողութիւնը եւ իմանալու համար առաջարկուած մասնակցութեան եւ անկէ բխելիք գործակցութեան պայմաններն ու բնոյթը:

Գ. ՈՒՇԱԳՐԱՒ ԻՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս տեսակետով ուշադրութեան արժանի են հետեւեալ կէտերը.

- ա. Վազգէն Ա. Վեհափառը մատնանիշ կ'ընէ այն պարագան թէ Անթիլիասի կանոնագրութեան մէջ ներմուծուած նիւ 32 եւ 33 յօդուածներու տրամադրութիւնները, օրինակ մը տուած ըլլալու համար, հակասական են երկու Աթոռներու միջեւ համերաշխ գործակցութեան գաղափարին հետ:
- բ. «Յիշեցման կարգով», դարձեալ կը ներկայացնէ Հինգ Հարցերը:
- գ. Մայր Աթոռի ներկայացուցիչներու մասնակցութեան համար պայման կը դնէ որ Անթիլիասի Ազգային ընդհանուր ժողովը, նախքան ընտրութեան անցնիլը, «չեղեալ հռչակէ 32րդ եւ 33րդ յօդուածները»:
- դ. Կը պահանջէ որ Կիլիկիոյ Աթոռը նաեւ յանձնառու ըլլայ որ աթոռակից-կաթողիկոսի ընտրութենէն եւ օծումէն յետոյ, «շուրջ մէկ տարուան ընթացքին», «օրինաւոր եւ բարուք լուծում գտնեն» նաեւ միւս խնդիրները հինգ հարցերուն:
- ե. Էջմիածինի Գահակալը կը շեշտէ թէ կ'ակնկալուի որ յիշեալ յօդուածներուն հիման վրայ Էջմիածինէն առնուած թեմերը ակնարկուած ժամանակամիջոցի ընթացքին՝ վերադարձուին Էջմիածինին: Խնդիրը կը վերաբերի Ամերիկայի Միացեալ նահանգներուն, Պարսկաստանի եւ Յունաստանի թեմերուն: Ակնարկութիւն կ'ըլլայ նաեւ «Գարագասի համայնք»ին:
- զ. Տեսակ մը յանձնառութիւն կ'ուզուի թէ Մայիս 22-ին գումարուելիք ժողովի օրակարգին վրայ պիտի դրուին խնդրոյ առարկայ հարցերը՝ նշանակելու համար խնդրուած ներկայացուցիչները:

Դ. Տ. Տ. Խորէն Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Իսկ Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսը, Ամենայն Հայոց Հայրապետին ուղղեալ 2 Մայիս 1977 թուակիր իր նամակով կը պատասխանէ արծարծուած խնդիրներուն: Յիշեալ գրութեան նշանակութիւնը ի մտի ունենալով, յարմար կը դատենք զայն ներկայացնել իր ամբողջութեան մէջ:

«Շնորհազարդ Եղբայր ի Քրիստոս,

Շնորհակալությամբ ստացանք Ձեր Եղբայրության 26 Ապրիլ 1977 թուակիր եւ 265/77 թուահամար պաշտօնագիրը, ձեռամբ Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի անդամ Գերաշնորհ Տ. Սերովբէ Ս. Արքեպիսկոպոս Մանուկեանի, ի մասին Մեծին Տանն Կիլիկիոյ Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մասնակցութեան:

Ա. Նախ կ'ուզենք ճշդել, թէ 22 Մայիս 1977-ին գումարուելիք ժողովը պատգամաւորական ժողովն է, որ բացի կաթողիկոս ընտրելէ որեւէ այլ իրաւասութիւն չունի, որով կարելի չէ կանոնագրային փոփոխութիւն առաջացնել այս ժողովին միջոցով: Սակայն, անցնող Ազգ. Ընդ. Ժողովին մէջ կազմուած էր յանձնախումբ մը՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագիրը վերամշակելու համար: Նոյն ժողովին մէջ, ինչպէս նաեւ յետագային, ազգայիններու տրամադրութիւնները ամէն պատրաստակամութիւն ցոյց կուտային 32րդ եւ 33րդ յօդուածները կանոնագրէն դուրս ձգելու:

Այս հիման վրայ, առնելով Ս. Աթոռիս եպիսկոպոսներու, ազգ. մարմիններու եւ պատասխանատու ազգայիններու կարծիքները, կրնանք հաւաստիացնել Ձեզ, թէ յառաջիկային գումարուելիք Ազգ. Ընդ. Ժողովը վերոյիշեալ երկու յօդուածները պիտի վերցնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութենէն:

Բ. Ինչ կը վերաբերի կաթողիկոսական երկու Ս. Աթոռներու միջեւ գոյութիւն ունեցող տարակարծութիւնները տեսակցութիւններու եւ բանակցութիւններու ճամբով եւ շուտափոյթ կերպով վերացնելու խնդրին, Մենք միշտ պատրաստ եղած ենք բանակցութեանց ճամբով հասկացողութեան մը հասնելու տեսակէտին:

Կը հաստատենք նաեւ, թէ ըլլայ Ազգ. Ընդ. Ժողովի անդամները, ըլլայ ազգային պատասխանատուութիւններ ունեցող մարմիններն ու ազգայինները նոյնպէս տրամադիր են բանակցութեանց ճամբով հասկացողութեան մը գալու, որպէսզի ընդմիշտ անհետանան երկու Աթոռներու միջեւ գոյութիւն ունեցող բոլոր տարակարծութիւնները: Կը հաւատանք թէ փոխադարձ հասկացողութեան ոգիով կարելի պիտի ըլլայ Ձեր կողմէ արծարծուած հարցերն ու այլ հարցեր իրենց դրական լուծումին հասցնել ցանկալի արագութեամբ եւ յանգիլ ամբողջական համաձայնութեան՝ ի փառս Հայոց. առաք. ս. եկեղեցւոյ եւ ի շահ ազգիս հայոց:

Ի խորոց սրտի Ձեզի կը մաղթենք բոլոր տարակարծությունները ընդմիշտ բարձուած տեսնելու անխառն ուրախությունն ու երջանկությունը, եւ գեղուն սիրով կ'ողջունենք Ձեզ եւ Մայր Աթոռի Միաբանությունը, ինչպէս նաեւ հայրենի երկրի բովանդակ հայությունը:

Մնամ եղբայրական սիրոյ ողջագութրանօր,

Աղօթակից

ԽՈՐԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ»¹⁷

Ե. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԻՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ.

Նկատելի է թէ հինգ հարցերէն ոչ մէկը կը մերժուի կամ ոչ մէկին ընդդիմություն ցոյց կը տրուի Անթիլիասի Աթոռակալին կողմէ: Ոչ իսկ նուագագոյն անհամաձայնությունը, վերապահությունը կը նշմարուի Ամենայն Հայոց Հայրապետին միւս մտածումներուն եւ խորհուրդներուն նկատմամբ, կամ անոր գրութեան բովանդակութեան որեւէ այլ մասին առնչութեամբ, ինչպէս ակնարկություն կ'ըլլայ յաջորդող էջերուն մէջ: Միայն կ'ըսուի թէ Հայրապետին պահանջած նախապայմանը, որ կանոնագրային փոփոխություն կատարուի, կարելի չէ յարգել, որովհետեւ «22 Մայիս 1977-ին գումարուելիք ժողովը պատգամաւորական ժողովն է, որ բացի կաթողիկոս ընտրելէ որեւէ այլ իրաւասություն չունի»:

Թերեւս պէտք է աւելցնել թէ հինգ հարցերը կամ մնացեալ խորհուրդները նորություններ չէին Անթիլիասին համար: Անոնք բոլորն ալ ատենին արժարժուած էին Ամենայն Հայոց Վեհափառին կողմէ ու հաւանաբար քանի մը անգամներ:

Զ. ԷԶՄԻՎԾԻՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱԶԳԷՆ Ա.

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆՈՐ ՆԱՄԱԿԸ.

Վերոյիշեալ գրություններուն ու տրամադրություններուն յոյսին տակ եւ Տ. Սերովբէ Արքեպիսկոպոսի՝ Գերագոյն Հոգեւոր խորհուրդի Մայիս 9-ի նիստին դէպի Անթիլիաս իր կատարած առաքելութեան մասին տուած տեղեկագիրին հիման վրայ, Ամենայն Հայոց Հայրապետին նախագահութեամբ գումարուած Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը, իր ամբողջական նիստին, որուն հրաւիրուած էր նաեւ Տ. Եղիշէ Սրբազան Պատրիարքը, կ'որոշէ երկու ներկայացուցիչներով, Տ. Սերովբէ Արքեպ. Մանուկեանով

¹⁷ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 թ. Զ. համար, էջ 14:

եւ Տ. Ներսէս Եպս. Պոգապալեանով մասնակցիլ Անթիլիասի Մայիս 22-ի աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան եւ Մայիս 29-ի օծման հանդիսութիւններուն: Եւ այդ նպատակով Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսին ուղղուած Մայիս 10 ամսաթիւ իր նամակին մէջ Ամենայն Հայոց Վեհափառը կ'աւելցնէ.

«Մեր սուրբ եկեղեցին՝ ներքին միութեան, օրինականութեան եւ խաղաղութեան նաւահանգիստը տանող ճանապարհին վրայ, Մենք կը կամենանք հետեւողականօրէն մնալ լաւատես, համոզուած ըլլալով թէ Ձեր վերոյիշեալ նամակին մէջ յստակօրէն արտայայտուած հաւաստիացումները կարճ ժամանակի մէջ կեանքի պիտի կոչուին, յապաւումովք Ձեր կանոնագրի 32րդ եւ 33րդ յօդուածներուն եւ օրինական կարգաւորումովք ծանօթ հինգ հարցերուն, բանակցութեանց եղանակաւ, հարցեր, որոնց ուրախ ենք որ կ'ակնարկէ նաեւ Ձերդ Սրբութիւնը իր նոյն նամակին մէջ: Ձեր հաւաստիացումները իրօք միխիթարեցին Մեր սիրտը, որոնց կենսագործումով կը հաւատանք թէ նոր էջ մը պիտի բացուի մեր Աթոռներու յարաբերութեանց պատմութեան մէջ: կը հաւատանք թէ Մենք, Ձերդ Սրբութիւնը եւ նորընտիր Ձեր Աթոռակից եղբայրը միասնաբար, սրբութեամբ եւ վճռականութեամբ պիտի պահպանենք յետ այսու կանոնը մեր եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու պատմականօրէն նուիրագործուած իրաւասութեանց սահմաններու, համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ:»¹⁸

Գրութեան բուն միտքը, ինչպէս կը պարզուի, այն է թէ ոչ միայն օրինաւորութիւնը պէտք է վերահաստատուի, այլ նաեւ ըլլայ վերադարձ դէպի գոյավիճակը, որ կը տիրէր 1957-էն առաջ: Աւելին: Կը շեշտուի կարեւորութեամբ թէ երկուստեք «սրբութեամբ եւ վճռականութեամբ պիտի պահպանենք յետ այսու կանոնը մեր եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու պատմականօրէն նուիրագործուած սահմաններու, համերաշխ գործակցութեան մթնոլորտի մէջ»:

Է. ԽԱՆԴԱՎԱՌ ԵՒ ՅՈՒՍԱԼԻՑ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Մայր Աթոռի պատգամաւորներուն մասնակցութիւնը ջերմ խանդավառութեամբ կ'ողջունուէր բոլորին կողմէ եւ յոյսով ու բաղձանքով որ փակուէր մօտաւոր անցեալի տխուր գիրքը, եւ նոր ու մաքուր սկիզբ մը դրուէր, եւ ապագան դիմագրաւուէր ուրախութեամբ: Եւ ոչ մէկ կասկած

¹⁸ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 թ. 2. համար, էջ 15–16:

թէ Մայր Աթոռի այդ մասնակցութիւնը նոր էջ մը կը բանար եկեղեցական եւ համայնքային մեր արտերկրի կեանքին ինչպէս նաեւ սփիւռք-հայրենիք յարաբերութիւններուն մէջ:

Յատկանշական է թէ Մայիս 22-ին, Պատգամաւորական Ժողովին, հոգելոյս Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս խօսք առնելով ըսած է այդ առնչութեամբ.

«Մեր խոր բաղձանքն է որ մօտիկ ապագային, Հայաստանեայց Եկեղեցւոյ առջեւ բացուի լուսայեղ ճանապարհ մը, որ երկու Աթոռները կարենան միասնաբար ծառայել հայ ազգին: Կոչ կ'ուղղենք յարգամեծար պատգամաւորներուդ եւ յառաջիկային գումարելի Ազգ. Ընդհանուր Ժողովի անդամներուն որ այս ճամբուն վրայ խոչընդոտ հանդիսացող դժուարութիւնները — ի մասնաւորի 32-րդ եւ 33-րդ յօդուածներու հարց— վերացնեն եւ ամբողջական համերաշխութեան ճամբան հարթեն»¹⁹:

Յստակ են բաղձացուածները, ըստ ըսուածին: Վերացումը թիւ 32 եւ 33 յօդուածներուն եւ անհրաժեշտութիւնը այն ճիգին ու վերաբերումին, որոնք պիտի ամբողջական համերաշխութեան ճամբան հարթեն:

Իսկ յիշեալ Պատգամաւորական Ժողովը միաձայնութեամբ կ'արձանագրէ հետեւեալ բանաձեւը.

«Նկատի ունենալով նաեւ յատենի Պատգամաւորական Ժողովին Վեհափառ Հայրապետին կողմէ արտայայտուած բաղձանքը եւ հիմնուելով վերջին Ազգային Ընդհանուր Ժողովին արդէն իսկ արտայայտութիւն գտած տրամադրութեանց վրայ, ազգային պատգամաւորական ժողովը իր կարգին ջերմապէս կը թելադրէ իրաւասու ժողովներուն եւ մարմիններուն, եւ մասնաւորապէս յառաջիկայ Ազգային Ընդհանուր Ժողովին, նպաստել Հայաստանեայց Եկեղեցւոյ երկու Աթոռներուն միջեւ յամեցող տարակարծութեանց պատճառներու վերացման, ի մասնաւորի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան 32-րդ եւ 33-րդ յօդուածներու յարուցած դժուարութեանց հարթումով»:²⁰

Պէտք է ըսել թէ «յուզիչ եւ յուսադրական» եղան այդ առիթով Անթիլիասի մէջ արտասանուած ճառերը եւ մեր մամուլին մէջ ընդհանուր լաւատեսութեան արձագանգ եղող յօդուածները: Մայիս 29-ին տեղի ունեցած պաշտօնական ընդունելութեան ընթացքին՝ Տ. Տ. Խորէն Ա. Կաթողի-

¹⁹ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 Թ. Ձ. համար, էջ 6–7:

²⁰ Նոյնը, էջ 7:

կու, իր «անհուն ուրախությունն ու գոհունակությունն» արտայայտել վերջ Մայր Աթոռի ներկայացուցիչներու մասնակցութեան համար, կ'աւելցնէ.

«Դուք, գերաշնորհ եւ սիրելի ներկայացուցիչներ Ս. Էջմիածնի, փոխանցեցէք Ամենայն Հայոց Հայրապետին Մեր Վեհափառ եղբօր՝ Ն.Ս.Օ.Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին, մեր խոր շնորհակալութիւնը, Մեր եղբայրական ջերմ սէրն ու սրտագին բարեմաղթութիւնները իր առողջութեան եւ արեւշատութեան: Թող Նորին Սրբութիւնը Հայց. Եկեղեցւոյ շքեղ ծաղկումը միութեան ու միասնականութեան մէջ տեսնելու բարեբախտութիւնը ունենայ»²¹:

Ը. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ

Իսկ Տ. Տ. Գարեգին Բ. Աթոռակից Կաթողիկոսի Մայիս 30 թուակիր եւ Ամենայն Հայոց Հայրապետին ուղղուած գրութիւնը առանձնապէս հետաքրքրական է: Կ'արժէ զայն նկատի ունենալ իր ամբողջութեան մէջ:

«Վեհափառ Տէր եւ սիրելի Աւագ Եղբայր,

Երէկ, 29 Մայիսին, Կիրակի առաւօտ Անթիլիասի Մայր տաճարին մէջ ծունկի եկայ սուրբ խորանին վրայ եւ ձեռամբ Ն.Ս.Օ.Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոսի եւ Հայց. Եկեղեցւոյ տասը եպիսկոպոսներու ստացայ կաթողիկոսական օծում դառնալով աթոռակից-կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:

Այսօր, 30 Մայիսին՝ Երկուշաբթի առաւօտ, այս նոր պատասխանատուութեանս առաջին հանգրուանին, սրտի պարտք կը զգամ անդրանիկ պաշտօնական նամակս ուղղելու Ձերդ Վեհափառութեան, յայտնելու համար իմ սրտագագ ուրախությունն ու շնորհակալութիւնը այն սրտապնդիչ երեւոյթին համար, որով երջանկութիւնը ունեցայ թէ՛ իմ ընտրութեան, 22 Մայիսին, եւ թէ՛ օծմանս վայելելու ներկայութիւնն ու մասնակցութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան երկու պատուիրակներուն՝ յանձինս Գերշ. Տ. Սերովբէ Ա. Արքեպս. Մանուկեանին եւ Գերշ. Տ. Ներսէս Ս. Եպիսկ. Պոզապալեանին, առաքուած Ձերդ Ս. Օծութեան կողմէ:

Անհուն ուրախութիւնս անձնական չէ միայն, այլ ընդհանրական: Գոհունակութեան եւ ցնծութեան բացառիկ եւ ոգեւորիչ զգացումներով ողջունուեցաւ այս մասնակցութիւնը թէ՛ Պատգամաւորական Ժողովին եւ թէ՛ Ժողովուրդին կողմէ: Երեք առիթներով հրապարակային եւ գրաւոր արտայայտութիւններով իմ անկեղծ

²¹ Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 թ. 2. համար, Էջ 8:

ուրախությունս արտայայտեցի այդ երջանկաբեր երևոյթին համար: Կաթողիկոսական օծման առիթով արտասանած քարոզեսօրինակ մը կը ներփակեմ, որպէսզի անձամբ եւ ուղղակիօրէն տեղեկանաք իմ զգացումներուս մասին: Նորին Ս. Օծութիւն Տ. Տ. Խորէն Ա. Կաթողիկոս ինք եւս իր սրտագգաց ուրախութիւնն մէկէ աւելի անգամներ յայտնեց այս բարեբաստիկ առիթով: Վստահաբար Գերշ. Տ. Սերովբէ եւ Ներսէս սրբազանները մանրամասնօրէն կը զեկուցեն անցնող շաբթուան ընթացքին վերստեղծուած միասնութեան ոգիին եւ մթնոլորտին մասին: Ինչպէս Խորէն Ա. Վեհափառ Հայրապետը իր 2 Մայիս, 1977 թուակիր եւ 159/77 համար նամակով կը յայտնէ յառաջիկայ խորհրդակցութեանց, բանակցութեանց ճամբով, փոխադարձ սիրոյ եղբայրութեան եւ յարգանքի մթնոլորտի մէջ, մէկ եկեղեցիի գաղափարէն եւ սկզբունքէն առաջնորդուած, մենք եւս կը յուսանք եւ մեր գերագոյն կարելին ի գործ պիտի դնենք, որ կարելի փութով վերջ գտնեն տարակարծութիւնները եւ գործնական, սահուն եւ օգտաւէտ արտայայտութեան ընթացքին մէջ մտնէ՝ Հայց Եկեղեցւոյ Միութիւնը՝ ի փառս Աստուծոյ, եւ ի բարին հայ ժողովուրդին: Վստահ ենք, որ պատշաճագոյն ժամանակին եւ պատշաճագոյն ձեւով գործնական հունի մէջ կը մտնեն անհրաժեշտ խորհրդակցութիւններն ու բանակցութիւնները այս ուղղութեամբ: Յառաջիկայ շաբաթներու ընթացքին, երբ սկսինք գործնապէս լծուիլ մեր պաշտօնի վերաբերեալ աշխատանքներուն, մեր գործունէութեան մէջ առաջնահերթ տեղ կը գրաւէ Հայց. Եկեղեցւոյ միութիւնը զօրացնելու մեր նախանձախնդրութիւնը:

Զերմօրէն պիտի խնդրէի Զեզմէ որ Զեր աղօթքներուն մէջ յիշէիք զիս մանաւանդ սկզբնական այս օրերուն որպէսզի Աստուած զօրացնէ զիս այս ծանր պարտաւորութեանց մէջ:

Մնամ խոնարհ եղբայրական սիրով,

Աղօթակից

ԳԱՐԵԳԻՆ Բ.

ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ»²²

Աթոռակից-Կաթողիկոսին վերելի նամակը մասնաւոր կշիռ ու նշանակութիւն ունի յատկապէս երկու պատճառներով: Գրութիւնը կը հաս-

²² Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, 1977 թ. 2. համար, էջ 17–18:

տատել թե՛ ան տեղեակ է նախորդ ամբողջ թղթակցության եւ մանաւանդ Ամենայն Հայոց Հայրապետին՝ 26 Ապրիլ 1977 եւ 10 Մայիս 1977 թուակիր նամակներուն բովանդակութեան: Ասկէ՛ զատ՝ Աթոռակից-Կաթողիկոսը ինքն ալ կը խոստանայ օգնել հարցերու լուծման եւ «առաջնահերթ» տեղ տալ անոնց:

Թ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Որպէս լրացուցիչ երես թղթակցութեան այս մասին եւ իբրեւ արծարծուած նիւթերուն անդրադարձում, յիշատակենք թե՛ Ամենայն Հայոց Հայրապետը պատասխանած է Ս. Տ. Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսի յիշեալ գրութեան՝ 6 Յուլիս 1977 թուակիր նամակով²³: Յետոյ հետեւած են երկու գրութիւններ, մէկը Աթոռակից Կաթողիկոսէն, 24 Օգոստոս 1977 (թիւ 175/77) թուականը կրող եւ միւսը՝ Վազգէն Ա. Կաթողիկոսէն, 8 Հոկտեմբեր 1977 թուակիր հմբ. 657: Յիշեալ վերջին գիրին մէջ, ակնարկութիւն ընելէ յետոյ Ս. Տ. Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսի տագնապի լուծումին համար նպաստաւոր արտայայտութիւններուն եւ անոր բաղձանքին ու խոստումին այդ առնչութեամբ, Վազգէն Վեհափառը կարեւորութեամբ կը շեշտէ.

«Ինչպէս յայտնի է Ձեզի, այդ նոյն իղձը կազմեց Մայր Աթոռիս եւ Ձեր Աթոռի միջեւ վերջերս փոխանակուած նամակներուն առաջնորդող ոգին, եւ վերոյիշեալ յօդուածները վերացնելու խոստումի հիման վրայ Մեր ներկայացուցիչները սիրով եւ լաւատեսութեամբ ուղարկեցինք Անթիլիաս, այն վստահութեամբ որ անոնց վերացումով, այսինքն՝ վերահաստատումով մինչ 1956 թուականը գոյութիւն ունեցող փոխադարձ սիրոյ եւ համերաշխութեան մթնոլորտին, ճամբայ պիտի բացուի քսան տարիներու տագնապի հետեւանքները դարմանելու, որով եւ մեր եկեղեցական կեանքէն ներս պիտի ամրապնդուի ներքին միութիւնը եւ նորէն կեանքի պիտի կոչուի մեր Աթոռներու միջեւ եղբայրական գործակցութիւնը, ինչ որ հրամայական անհրաժեշտութիւն է մեր պանդուխտ ժողովուրդի հոգեւոր ու ազգային կեանքի շինութեան համար:

Կը խորհինք թե՛ վերջին ամիսներուն Ձեր Աթոռին ուղղած Մեր երեք նամակները յստակօրէն կ'արտայայտեն Մեր խոհերը եւ Մեր սպասումները ի սեր օրինականութեան ու կարգապահութեան պահպանման մեր Եկեղեցւոյ նուիրապետական կառոյցէն ներս, ի սեր ներքին միութեան վերահաստատման, ի սեր խաղաղ ու համերաշխ գործակցութեան մեր

²³ Նոյնը, էջ 19-20:

Աթոռներու միջեւ:

Միայն բարի տրամադրութիւնները եւ զգացական արտայայտութիւնները բնականաբար բաւարար չեն կրնար ըլլալ իրապէս շինարար դեր կատարել որքան ատեն մեր եկեղեցական կեանքէն չեն հեռացուած՝ բուն պատճառները ստեղծուած տագնապին:

* * *

8. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՅԱԶՈՐԴՈՂ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՉՈՐՐՈՐԴ ՄԵՐՁԵՑՈՒՄ.

Ա. ԽՆԴՐՈՅ ԱՌԱՐԿԱՅ ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Աթոռակից-Կաթողիկոսին ընտրության եւ օծման հանդիսությունները կը վերջանան 1977 Մայիս 29-ին:

Մինչ այդ ստեղծուած է նոր կացութիւն մը:

Ամենայն Հայոց Հայրապետը Անթիլիասին ներկայացուցած է կարգ մը պահանջքներ, որոնք պարփակուած են հինգ հարցերուն մէջ: Յատկապէս շեշտած է Էջմիածինի նախամեծարութեան պարագան եւ նաեւ թէ ոչ միայն պէտք է յապաւուին ծանօթ թիւ 32 եւ 33 յօդուածները, այլ նաեւ անոնց շնորհիւ գրաւուած թեմերը պէտք է վերադարձուին Էջմիածինին, եւ եկեղեցական-համայնքային ընդհանուր վիճակը վերադառնայ 1957-էն առաջ գոյութիւն ունեցած դրութեան: Վազգէն Վեհափառը առաջարկած է, ինչպէս յիշատակուեցաւ, որ առկաի հարցերը «օրինական եւ բարուր լուծում գտնեն» Աթոռակիցին առնչուած հանդիսություններէն «շուրջ մէկ տարուան ընթացքին», ատենին տեղի ունենալիք բանակցութիւններու ճամբով: Խորէն Ա. Կաթողիկոսն ալ հաւատք յայտնած է թէ կարելի պիտի ըլլայ «արծարծուած հարցերն ու այլ հարցեր իրենց դրական լուծումին հասցնել ցանկալի արագութեամբ եւ յանգիլ ամբողջական համաձայնութեան»: Մինչ Աթոռակից-Կաթողիկոսը խոստացած է իր «գերագոյն կարելին» ի գործ դնել «որ կարելի փութով վերջ գտնեն տարակարծութիւնները», աւելցնելով թէ «յառաջիկայ շաբաթներու ընթացքին, երբ սկսինք գործնապէս լծուիլ մեր պաշտօնի վերաբերեալ աշխատանքներուն, մեր գործունէութեան մէջ առաջնահերթ տեղ պիտի գրաւէ Հայց. Եկեղեցւոյ միութիւնը գորացնելու մեր նախանձախնդրութիւնը»:

Ամփոփելով, կարելի է ըսել թէ Կիլիկիոյ Աթոռակալները, առանց որեւէ առարկութիւն բերելու ըսուածներուն կապակցութեամբ, զանազան միջոցներով եւ առիթներով յայտնած են թէ իրենք ալ կը փափաքին որ վերահաստատուին եկեղեցական-համայնքային միասնականութիւնը, օրինաւորութիւնը եւ ներքին անդորրութիւնը: Ըսած են թէ հասարակաց են հինգ հարցերը լուծելու եւ անոնց հետ աղերսող տարակարծութիւնները շուտով բառնալու տենչն ու մտադրութիւնը: Իրենց խօսքերով

ու վերաբերումով տեւապէս ուզած են թողուլ այն տպաւորութիւնը թէ համաձայն են առաջարկուածներուն կամ նկատի առնուածներուն նման լուծումներու, ինչպէս շեշտուեցաւ:

Կրկնութենէ խուսափելու ճիգով, վերեւ նկարագրուած ընդհանուր կացութիւնն ու դէպքերը յետ այսու պիտի կոչուին՝ առարկայ խնդրոյ եղելութիւններ:

Բ. ԱԿՆԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՅԱՊԱՂՈՒՄ.

Մայր Աթոռը եւ մեր ամբողջ ժողովուրդը լաւատես սպասումով կ'ակնկալէին որ խօսքերը գործի եւ իրականութեան վերածուէին: Այսինքն՝ շուտով վերացուէին թիւ 32 եւ 33 ծանօթ յօդուածները եւ հետեւող բանակցութիւններով ու գործնական եւ անմիջական միջոցներով հնարաւոր ըլլար «բուժել տարիներու ընթացքին յառաջացած վերքերը», վերականգնել նախորդ վիճակը, վերահաստատել աւանդական կարգն ու սարքը մեր եկեղեցական կեանքին մէջ: Եւ այդ կերպով անդորրացնել սփիւռքը եւ բանալ անոր առջեւ նոր ու պայծառ հեռանկարներ:

Հակառակ այդ բոլորին, սակայն, յիշեալ նպատակին համար առաջին հանդիպումը տեղի ունեցաւ 1979-ի վերջին եռամսեային: Թէեւ ծանօթ չեն այն դժուարութիւններն ու պատճառները՝ որոնք ուշացուցին սկիզբը խօսակցութիւններուն, բայց շատ ուշագրաւ է այդքան երկար յապաղումը: Թերեւս որպէս արդարացում ըսուի թէ սպասուեցաւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ազգային Ընդհանուր Ժողով»ին, որ տեղի ունեցաւ 1978 Յունիս 13-17, որպէսզի նախ յապաւուէին 32-րդ եւ 33-րդ յօդուածները: Հնարաւոր էր, անշուշտ, ի մտի ունենալով հարցին համազգային տարողութիւնը եւ ստիպողական բնոյթը, առաջին պատեհութեամբ արտակարգ նիստ գումարել պահանջուած ու փափաքուած աշխատանքին համար: Եւ համոզիչ բացատրութեան մը բացակայութեան, տրամադրելի եղելութիւնները եւ իրողութիւնները միտքերուն մէջ մտահոգութիւն ու մշուշ կը սերմանեն: Մանաւանդ երբ փորձուի վերլուծել կացութիւնը յետադարձ ակնարկով:

Գ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ.

Իրողութիւնը այն է թէ, յատուկ թղթակցութենէ ու բանակցութիւններէ յետոյ Մայր Աթոռի եւ Անթիլիասի միջեւ, անոնց կողմէ նշանակուած ներկայացուցիչները իրենց առաջին հանդիպումը ունեցան 1979 Հոկտեմբեր 4-10 Ս. Էջմիածինի մէջ: Հոն կատարուած աշխատանքներուն մասին ատենին անոնք հրապարակեցին՝ «Հաղորդագրութիւն Ամենայն Հայոց

Կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսության ներկայացուցիչներու միջեւ կայացած Ժողովին» վերնագրով, եւ 12 Հոկտեմբեր թուականը կրող միացեալ յայտարարութիւն մը, որ յետ այսու պիտի կոչուի «Ներկայացուցիչներու Յայտարարութիւն»։ Բայց այդ հարցին էութեան անդրադառնալ է առաջ, տեսնենք թէ երկու Աթոռները ի՞նչպէս կը մեկնաբանեն անով ստեղծուած նոր կացութիւնը։ Շատ կարելոյ է նման ջանք մը, որովհետեւ, ինչպէս պիտի պարզանայ շուտով, Ներկայացուցիչներու Յայտարարութեան երկու կողմերուն տալ ուզած տարբեր մեկնաբանութեան հետեւանքով կը յառաջանայ նոր բարդութիւն մը, որ անելի բնոյթ կը ստանայ քիչ առ քիչ։

Դ. ՄԱՅՐ ԱԹՈՒԻՆ ԱԿՆԱՐԿԱԾ ԵՐԿՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ.

Ամենայն Հայոց Կաթողիկոսին տեսակէտը այն է թէ ներկայացուցիչները ճշդա՞ծ են հետեւեալ «հիմնական երկու սկզբունքները»։

- ա. Ճանաչումը եւ յարգումը Սուրբ Էջմիածինի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանգամանքին իբրեւ Ընդհանրական Հովուապետ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին։
- բ. Վերադարձը Էջմիածնապատկան այն թեմերուն, որոնք 1956 թուականէն յետոյ միացուած են Անթիլիասի Աթոռին։

Ե. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԸՄԲՈՆԱԾԸ.

Անթիլիասը, սակայն, կը թուի թէ նոյն կերպով չէ ըմբռնած Ներկայացուցիչներու Յայտարարութիւնը։ Եւ կամ մինչ այդ փոխած է իր կեցուածքը յիշեալ երկու կէտերուն հանդէպ։ Եւ անոր համար է որ 16 Սեպտեմբեր 1980 թուակիր՝ (թիւ 996-80) Ամենայն Հայոց Հայրապետին ուղղեալ ու խորէն Ա.ի եւ Աթոռակից-Կաթողիկոսի ստորագրութիւնները կրող նամակին մէջ կ'ըսուի, ակնարկելով ներկայացուցիչներու խօսակցութիւններուն.

«Մեր բոլոր խորհրդակցութիւններէն ի յայտ կուգայ որ առաջարկուած բաղձանքներուն յաւելեալ յստակացումի կարօտ կ'էտեր կան։ Փոխադարձ հասկացողութեան ոգիով յառաջ տարուած այդ բանակցութեանց եզրակացութիւններէն ոմանց պարագային, առաջարկուած լուծումներու գործնական, իրողական արտայայտման տեսակէտէն՝ տակաւին անորոշ մնացող եւ հետեւաբար առաւել յստակացումի կարօտ եղող կ'էտեր կան, որոնք հարկ է որ առաւել մանրամասնութեամբ քննարկուին եւ լուսաբանուին մեր եկեղեցւոյ կեանքին մէջ գործնականօրէն արտայայտուելու հայեցակէտէն դիտուած»։

Յարաբերաբար անորոշ ներածական այս խօսքերէն յետոյ, նամականագիրները կ'անցնին մասնաւոր երկու հարցերու.

«Այս առնչութեամբ, որպէս օրինակ, կը յիշատակենք հետեւեալ երկու կէտերը.- ա. Հայց. Եկեղեցւոյ մէջ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան առաջարկուած բանաձեւը, եւ բ. Պարսկաստանի, Յունաստանի եւ Հիւսիսային Ամերիկայի թեմերու հարցին առնչութեամբ առաջարկուած սկզբունքային ընդհանուր բանաձեւը. երկուքն ալ կը կարօտին յաւելեալ քննարկման աւելի յստակ ձեւով տեսնելու համար թէ ի՞նչ կը նշանակեն անոնք մեր եկեղեցւոյ կեանքի ներկայ դրութեան եւ կացութեան շօշափելի տուեալներու լոյսին տակ»:

Ու Խորէն Ա. Կաթողիկոս ու Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսը Վազգէն Ա. Կաթողիկոսին կ'առաջարկեն որ յիշեալ նպատակին համար «հանդիպում մը տեղի ունենայ Անթիլիասի մէջ, որուն համար կ'առաջարկենք Յունուար 22-29 կամ Փետրուար 19-26 (1981) եւ կամ որեւէ այլ թուական ըստ Ձեր յարմարութեան»:

2. ԱՌԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆԸ.

Անթիլիասի ըրած առարկութիւնը՝ այդ հանգրուանին, շատ տարօրինակ կը թուի: Սկիզբէն գոյութիւն ունէին հինգ հարցերը, զորս Ամենայն Հայոց Վեհափառը ներկայացուցած էր շատ յստակ կերպով: Եւ այդ առնչութեամբ ոչ միայն ատենին տարակարծութիւն չէր յայտնուած, այլ նաեւ ցոյց տրուած էր տարբեր վերաբերում մը, ինչպէս ականարկութիւն եղաւ նախապէս:

Է. ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԸՆԴՈՒՄԻԼ ԹԻՒ 32 ԵՒ 33 ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՒՄ ԱՆՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ.

Ասկէ զատ՝ 32-րդ եւ 33-րդ յօդուածներու յապաւումով, Անթիլիաս տեսակ մը ընդունած կ'ըլլար թէ այդ յօդուածները համապատասխան չէին մեր եկեղեցւոյ նուիրապետական պատմական դրութեան: Եւ եթէ այդ էր իրողութիւնը, ինքնաբերաբար կը հետեւի թէ այդ յօդուածներուն միջոցով ստեղծուած կացութիւնը պետք էր փոփոխութեան ենթարկուէր ու վերահաստատուէր օրինական այն վիճակը, որ գոյութիւն ուներ յիշեալ յօդուածներուն Կիլիկիոյ կանոնագրութեան մէջ ներմուծուելէն առաջ: Այսինքն՝ այդ երկու յօդուածներուն հիման վրայ Անթիլիասին կողմէ առնուած թեմերը հարկ էր վերադարձուէին Մայր Աթոռին: Այլապէս անըմբռնելի եւ անպաշտպանելի պիտի ըլլար այն տեսակետը որ թէւէ կ'ընդունէր ապօրի-

նութիւնը երկու յօդուածներուն բայց կը մերժէր վերադարձնել ինչ որ առնուած էր անօրինական երկու տրամադրութիւններուն շնորհիւ:

Ը. ԾՐԱԳՐՈՒՄԸ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՆՊԱՏԱԿԸ.

ա. ԸՍՏ ԷԶՄԻՎԾԻՆԻ. Այդ իսկ հասկացողութեամբ՝ Մայր Աթոռը յիշեալ երկու սկզբունքները համարած է վերջնական: Նկատած է այն դրական խարիսխը, որուն վրայ պիտի հիմնուէին յաջորդող բանակցութիւններն ու հասկացողութիւնները:

Իրականին մէջ այդ երկու սկզբունքները տրամաբանական մեկնութիւն մըն էին տիրող իրադրութիւններուն: Ամենայն Հայոց Հայրապետի նախապայմաններէն էին՝ Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան իր ներկայացուցիչներուն մասնակցութեան համար: Եւ հաւանաբար անոր համար է որ Ամենայն Հայոց Հայրապետը, 1980 Դեկտեմբեր 16 թուակիր եւ թիւ 776 գրութեամբ, ողջունելով հանդերձ բանակցութիւնները վերսկսելու հրաւերը, կը յայտնէ իր կարծիքը բանակցութիւններով որոշուածին եւ յետագայ խօսակցութիւններուն նպատակին մասին: Վերեւ ակնարկուած երկու սկզբունքներուն ակնարկելէ յետոյ, կ'աւելցնէ.

«Արդարեւ այս սկզբունքները կեանքի կոչելու եւ գործադրութեան դնելու համար է, որ անհրաժեշտ կը դառնայ երկրորդ հանդիպումը Մեր եւ Ձեր ներկայացուցիչներուն: Ձեր նամակէն սակայն Մեզի համար պարզ չեղաւ այս պարագան: Ընդ հակառակը Մենք եւ մեր թեմակալ առաջնորդները այն տպաւորութիւնը կրեցինք թէ այս երկրորդ հանդիպումը Դուք կը նախատեսէք վերստին քննարկման առարկայ դարձնելու համար վերոյիշեալ երկու սկզբունքները, որոնք ճշդուած եւ ընդունուած էին միահամուռ կերպով նաեւ Ձեր լիազօր ներկայացուցիչներու կողմէ: Եւ Ձեր նամակով կը յայտնէք նաեւ Մեզ թէ տակաւին չէք ստացած Ձեր որոշ թեմերու կարծիքները խնդրոյ առարկայ հարցերու վերաբերեալ:

.....

Մենք եւ մեր Եկեղեցւոյ եպիսկոպոսաց դասը անհրաժեշտ կը գտնենք յստակօրէն ճշդել եթէ Ձեր Աթոռը հնարաւոր կը գտնէ գործնապէս վերականգնել կանոնական միութիւնը մեր Եկեղեցւոյ, յարգելով Մեր եւ Ձեր ներկայացուցիչներու առաջին հանդիպումին որդեգրած վերոյիշեալ երկու հիմնական սկզբունքները»:

բ. ԸՍՏ ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԻՆ. Ամենայն Հայոց Հայրապետին վերջին նամակին Անթիլիասի Աթոռակալները կը պատասխանեն՝ 26 Փետրուար 1981 թուակիր եւ թիւ 9781 գրութեամբ: Այնտեղ կը կրկնեն հարցը ու

կ'աւելցնեն. (էջ 1-2)

«Շատ բնական էւ արդար առաջարկ մըն էր Մեր կատարածը, որովհետեւ խօսակցութեանց համար նշանակուած երկու պատուիրակութիւնները յատուկ նամակով իրենց աշխատանքներու արդիւնքը եւ եզրակացութիւնները՝ բաղձանքի ձեւով խմբագրուած բանաձեւումներու տակ՝ յանձնած էին երկու Կաթողիկոսական Աթոռներու Գահակալներու ուշադրութեան:

Մենք նոյն նախանձախնդրութեամբ նկատի ունեցանք առաջարկուած բոլոր այս բանաձեւերը: Խորհրդակցաբար մեր Ազգային Կեդրոնական եւ թեմական վարչութեանց եւ իշխանութեանց հետ...»:

Թ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԳՈՐԾԸ ԵՒ ԱՆՈՆՑ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ.

Հիմա տեսնենք թէ ի՞նչ են ներկայացուցիչներու կատարած գործին էութիւնը եւ անոնց յայտարարութեան բովանդակութիւնը:

Նախ դժուար է համաձայնիլ թէ եղածները «բաղձանքի ձեւով խմբագրուած բանաձեւումներ» էին յանձնուած «երկու Կաթողիկոսական Աթոռներու Գահակալներու ուշադրութեան», ինչպէս կ'ըսուի Անթիլիասի կողմէ: Այդ առնչութեամբ ուշագրաւ է այն հատուածը, ուր Ներկայացուցիչներու Յայտարարութիւնը հեղինակաւոր կերպով ու կարելորութեամբ կը շեշտէ.

«Ժողովս որոշեց իր աշխատանքներուն արդիւնքը ներկայացնել Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն, տնօրինելու համար պարտն ու պատշաճը»²⁴:

Ուրեմն, պարզ «բաղձանք»ի արտայայտութիւն ըլլալէ աւելի, արձանագրութիւնները եղած են «տնօրինելու համար պարտն ու պատշաճը»:

Իսկ խօսելով վստահուած գործին էութեան ու ծիրին մասին, Ներկայացուցիչներու Յայտարարութիւնը կը յայտնէ թէ Ժողովին նպատակը եղաւ բանակցութիւններ վարել վերացնելու համար նուիրապետական երկու Աթոռներու միջեւ 1956-էն ասդին ստեղծուած տարակարծութիւն-

²⁴ «Հաղորդագրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ներկայացուցիչներու Միջեւ Կայացած Ժողովին», «Դիւան Յանձնախումբերու Ժողովին» կողմէ՝ 12 Հոկտեմբեր 1979 թուակիր, «Կիպրահայ Տեղեկատու» «Ամսական Լրատու Ազգային Առաջնորդարանի», Բ. Տարի թիւ 11, Նոյեմբեր 1979, էջ 8:

ները եւ վերահաստատելու Հայց. Առաքելական Եկեղեցւոյ ամբողջական Միութիւնը»:

Կը տեղեկանանք, նոյնպէս, թէ գումարուած են հինգ նիստեր «եղբայրական ջերմ մթնոլորտի մէջ եւ Հայց. Եկեղեցւոյ միութիւնը իրապէս վերահաստատելու փափաքէն առաջնորդուած»: Իսկ ժողովը հաստատել է յետոյ թէ «ղրական արդիւնքներ արձանագրուեցան», շարադրած է հինգ բանաձեւեր, որոնց առաջին երեքը հետեւեալներն են.

«1. Ժողովականները ճամբաներ եւ լուծումներ փնտռեցին, որոնք կրնան վերացնել թիւր հասկացողութիւնները իւրաքանչիւր Կաթողիկոսի հանգամանքին եւ իշխանութիւններուն վերաբերեալ, յայտարարելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընդհանրական հովուապետի հանգամանքը Հայոց Առաքելական Եկեղեցւոյ:

2. Ժողովը նոյն ոգիով իր գոհունակութիւնը յայտնեց 32-րդ եւ 33-րդ յօդուածներու վերացումի մասին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութենէն, հաւատալով որ այդ վերացումը ճամբայ կը յարդարէ թեմերու հարցի լուծումին:

3. Վերոյիշեալ թեմերու առնչութեամբ ժողովս կ'ընդունի վերադարձի սկզբունքը 1957 թուականէն առաջ գոյութիւն ունեցող իրավիճակին, Վեհափառ Հայրապետներուն թողովով այդ ուղղութեամբ առնուելիք քայլերը»²⁵:

Թիւ 4 բանաձեւը կը վերաբերի համաշխարհային խորհուրդին «միակ պատգամաւորութեամբ ներկայացնելու հարցին» եւ թիւ 5-ը՝ «պատժական եւ կարգազրկման որոշումներու փոխադարձ յարգումին»:

Իսկ անդրադառնալով կատարուած գործին, յայտարարութիւնը կ'եզրակացնէ.

«Ժողովականները իրենց կատարած աշխատանքը նկատեցին դրական կարելոր նախաքայլ մը եւ յոյս յայտնեցին, որ ապագային կայանալիք ժողովներով եւ փոխանակուելիք նամակներով համաձայնութիւն գոյանայ բոլոր հարցերու շուրջ, յիրագործումն մեր եկեղեցւոյ միութեան եւ հայ ժողովուրդի միասնականութեան»²⁶:

Ներկայացուցիչներու Յայտարարութիւնը կը հասկցնէ թէ Ժողովականները համաձայնուած կէտերը կը նկատեն աւելի վերջնական քան թէ պայմանական: Եւ այդ առնչութեամբ յոյս կը յայտնեն որ յետագային

²⁵ Նոյնը, էջ 7:

²⁶ «Կիպրահայ Տեղեկատու» «Ամսական Լրատու Ազգային Առաջնորդարանի», Բ. Տարի թիւ 11, Նոյեմբեր 1979, էջ 7:

«համաձայնություն գոյանալ բոլոր հարցերուն շուրջ»:

Իսկ յաջորդ ժողովի իբրեւ թուական կ'ըսուի թէ «կը նախատեսուի 1980-ի Մարտ ամիսը»:

Ուշադրութենէ պէտք չէ վրիպի այն իրողութիւնը թէ Կիլիկիոյ Կաթողիկոսները, յիշեալ իրենց գրութեամբ, կ'ընդունին թէ ականարկուած բանակցութիւնները «յառաջ տարուած» էին «փոխադարձ հասկացողութեան ոգիով», եւ թէ այդ բանակցութիւնները «եզրակացութիւններ»ու յանգած էին:

Ժ. ՈՐՈՆՔ ԷԻՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՊԱՏԳԱՄԱԻՈՐՆԵՐԸ.

Ուշադրութեան արժանի կէտ մըն է գիտնալ թէ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ներկայացուցած են պատասխանատու եկեղեցականներ՝ Գերշ. Տ. Արտաւազդ Արք. Թրթռեան, Գերշ. Տ. Տաթև Եպս. Սարգիսեան, Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Աշնեան, ու Տիար Վահէ Սէթեան եւ Տիար Վարդգէս Տէր Կարապետեան: Վերջին երկու անձնաւորութիւնները, այն ատեն գոնէ, Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովին դիւանի կամ պատասխանատու անդամներ էին:

* * *

9. ՎԵՐՋԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՀԵՏԵՒՈՂ ՎԻՃԱԿԸ.

Ա. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ «ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔ»Ը՝
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻՆ.

Պատկերը ամբողջացնելու նպատակով, թերեւս օգտակար է արագ անդրադարձում մը ընել նաեւ 1983 Յունուար 26–30ին գումարուած Ազգային Ընդհանուր Ժողովին մէջ Աթոռակից-Կաթողիկոսին արտասանած «Ողջոյնի խօսք»ին²⁷: «Էջմիածին-Անթիլիաս Յարաբերութիւններ» խորագիրը կրող մասին մէջ, ան ըսելէ յետոյ թէ վերջին «չորս տարիներու մեր գործունէութեան գլխաւոր առանցքներէն մէկը եղաւ մեր ջանքն ու աշխատանքը ի խնդիր հայ եկեղեցւոյ միութեան ամրապնդումին», կ'աւելցնէ թէ իր «միտքին ու սիրտին մէջ անստուեր, աննուաղ եւ զօրաշէշտ տեղ եւ խոր արմատ եւ հիմք ունեցան Ս. Էջմիածնի Մայր Աթոռին հետ Կիլիկեան Ս. Աթոռի յարաբերութեանց բարելաւումը եւ տարակարծութեանց ու թիւրիմացութեանց վերացումը»: Բայց տանք յաջորդող հատուածը իր ամբողջութեան մէջ որպէսզի եղած արտայայտութեան հարազատութիւնը չխաթարուի:

«Մենք ջանացինք մարդկային կարելիութեան մեր բոլոր չափերովն ու չափանիշներովը հաղորդել Ս. Էջմիածնի մեր ամբողջական պատրաստակամութիւնը՝ հայ եկեղեցւոյ մէջ վերջին երեսնամեակին ստեղծուած դժուարութիւնները լուծուած տեսնելու: Անցնող չորս տարիներու ընթացքին երկու պատուիրակութիւններ ուղարկուեցան Ս. Էջմիածին, թէւ տարբեր առիթներով, բայց վստահաբար յարաբերութիւններու սերտացման հասարակաց նպաստի դերով: Անցեալ Ազգ. Ընդհ. Ժողովին կողմէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան 32-րդ եւ 33-րդ յօդուածներու յապաւումը փաստական առաջին տուեալն էր այս շրջանի յարաբերութեան դրական սկզբնաւորութեան, Կիլիկեան Աթոռի կողմէ: Ապա, Ս. Էջմիածնի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռներու դիրքի, Գահակալներու հանգամանքի, յարաբերութեան, ինչպէս նաեւ նախապէս, պատմականօրէն, Ս. Էջմիածնի պատկանող եւ 1957–58-էն ասոյին Կիլիկեան Ս. Աթոռի իրաւասութեան տակ գտնուող թեմերու եւ այլ յարակից փոխ-

²⁷ «ՀԱՍԿ», թիւ 1, Յունուար 1983, էջ 27–36:

յարաբերական հարցերու շուրջ 1979-ին, բանակցութեանց Խառն Յանձնախումբի եզրակացութիւնները նկատեցինք դրական քայլ եւ ուզեցինք անոնցմէ ոմանց մասին ունենալ առաւել յստակացում՝ բանակցութեանց շարունակումով, ինչ որ բնական ընթացքն է եւեւ բանակցութեան պարագային, վերջնական եզրակացութեան եւ փոխադարձօրէն ընդունելի, տոկուն, աներկդիմի հասկացողութեան եւ համաձայնութեան յանգելու համար: Բայց ահա յանկարծ գտնուեցանք դէմ յանդիման այնպիսի վերաբերումի Ս. Էջմիածնի կողմէ, ըստ որուն առանց մեր կողմէ ընդունելու կարգ մը սկզբունքներ, որոնք յիշուած են Ազգ. Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովի տեղեկագրին մէջ, իմաստ չունէր խօսակցութեանց անմիջական շարունակումը:

Արդ, սկիզբէն իսկ յստակ էր Ս. Էջմիածնի համար, որ Կիլիկեան Ս. Աթոռը պատրաստ ըլլալով ազատ, եղբայրական, անկեղծ խօսակցութեան՝ պատրաստ չէր եւ չէ պայմանական ձեւով յարաբերութեան, այսինքն՝ որոշ պայմաններու պարտադրութեամբը Կիլիկեան Աթոռին: Այդ պարագային բանակցութիւնները կը կորսնցնեն իրենց արժէքը եւ սպասուած արդիւնքին հասնիլը անկարելի կը դառնայ: Կիլիկեան Ս. Աթոռին կողմէ Ս. Էջմիածնի Մայր Աթոռին նախամեծարութեան ճանաչումը երբեք չ'ենթադրէր Կիլիկեան Կաթողիկոսական Աթոռին *Կաթողիկոսական* անկախութեան ստուերացումը: Պատմականօրէն նուիրականացած եւ այժմու ալ կեանքի պայմաններէն պահանջուած անկախութիւն մըն է այդ գոր Կիլիկեան Աթոռը չի կրնար խնդրոյ առարկայ դարձնել եւ զայն Կ. Պոլսոյ եւ Ս. Երուսաղէմի Պատրիարքական Աթոռներու հաւասարութեան գիծին վրայ դնել, ինչ որ կը նկատուի որպէս հիմնական տեսակէտ Ս. Էջմիածնի դիրքին մէջ»²⁸:

Բ. ԷԶՄԻԱԾՆԻ ԿՈՂՄԷ ԵՂԱԾ ԱՆԱԿՆԿԱԼԸ ԱՆԹԻԼԻԱՍԻՆ.

«Ողջոյնի խօսք»ին ընդհանուր իմաստին անդրադառնալ առաջ, պիտի ուզէինք մատնանիշ ընել նաեւ փոքրիկ բայց շատ յատկանշական հատուած մը: Աթոռակից-Կաթողիկոսը կ'ըսէ ակնարկելով Էջմիածինի արծարծած երկու սկզբունքներուն. «Բայց ահա յանկարծ գտնուեցանք դէմ յանդիման այնպիսի վերաբերումի մը, Ս. Էջմիածինի կողմէ.....»:

Արտայայտութեան այս բանաձեւումը եւ անով յայտնաբերուած ոգին արտայայտչական վրիպանք մը չեն թուիր ըլլալ: Ոչ ալ պատահական են՝ ըստ երեւոյթին: Ամենայն Հայոց Հայրապետին ուղղուած 28 Փետրուար

²⁸ «ՀԱՄԿ», թիւ 1, Յունուար 1983, էջ 33:

1981 թուականի եւ թիւ 97–81 եւ երկու Կաթողիկոսներուն կողմէ ալ ստորագրուած գրութիւնը, որուն անդրադարձանք նախապէս, ակնարկելով միշտ նոյն նիւթին, կ'ըսէ. «Մեզի համար անակնկալ էր Ձեր 16 Դեկտեմբերի վերոյիշեալ նամակով արտայայտուած նոր մօտեցումը»:

Բայց խնդրոյ առարկայ պահանջները սկիզբէն մաս կազմած են հինգ հարցերուն, որոնք պարբերաբար ու կարելորութեամբ Էջմիածինին կողմէ ներկայացուած են Անթիլիասին: Նոյնիսկ իբրեւ նախապայման դրուած են Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան եւ օծումին ներկայացուցիչներ դրկելու առնչութեամբ, ինչպէս ակնարկուեցաւ ասկէ առաջ: Եւ իրապէս «նոր մօտեցում» վերագրել եւ անով «անակնկալ»ի հանդիպած ըլլալու վիճարկութիւնը ոչ միայն անհիմն է ու անպաշտպանելի, ոչ միայն լիովին խզուած է ճշմարտութենէն, այլ նաեւ շատ բան կ'արտայայտէ ենթակաւերու անհատականութեան ու նպատակներուն մասին: Ըսել.. «Բայց ահա յանկարծ գտնուեցանք դէմ յանդիման այնպիսի վերաբերումի մը.....», երբ երկար տարիներէ ի վեր կար ու ենթականերուն ծանօթ էր այդ կեցումածքը, երբ բազմաթիւ պաշտօնական գրութիւններով եւ այլ միջոցներով շատ յստակ լեզուով ու բառերով փոխանցուած էր այդ անձնաւորութիւններուն իրենց մատնանշած «վերաբերում»ը: Երբ մերձեցումին ու բանակցութիւններուն կեդրոնական նպատակը այդ կը թուէր ըլլալ եւ այդ ցոյց կու տային իբրեւ իրենց բուն մտահոգութիւնը: Երբ Թերեւս խօսակցութիւններուն միակ նիւթն էր ան:

Եւ հնարաւոր չէ որեւէ յանցանք նետել անպարտաճանաչ կամ դաւադիր յիշողութեան վրայ, որովհետեւ փոխանակութիւններուն կարելոր մասը եղած է գրաւոր: Եւ եթէ այլապէս մոռացութեան պարագայ ըլլար, պաշտօնական գրութիւնները դիւրաւ կրնային յուշարարի դեր կատարել:

Մտահոգուած զարմացումով ու սրտաբեկ շուարումով հնարաւոր է դիմագրաւել Անթիլիասի Կաթողիկոսներուն այս ընթացքը: Ու կատակելու ոչ մէկ դիտաւորութիւն կամ տրամադրութիւն պէտք է փնտռել խօսքերուն մէջ, երբ ըստի թէ դէպքերուն հետեւողներուն համար իրապէս «անակնկալ» հարկ է եղած ըլլայ Կաթողիկոսներուն մերձեցումը «նոր» ցուցաբերուած մտայնութիւնը: Իրապէս «յանկարծ դէմ յանդիման» կը գտնուինք կարծես տարբեր անձնաւորութիւններու եւ այլ հետապնդումներու:

Գ. «ՆԱԽԱՊԱՅՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ»Ը ԿԱՄ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒ ՊԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Բայց ի՞նչն է գոր Անթիլիաս «նախապայման սկզբունքներ» կամ «պայ-

մաններու պարտադրութիւն» կը համարէ:

Էջմիածինը, ինչպէս յիշատակուեցաւ արդէն, սկիզբէն ունեցած ու ներկայացուցած է նոյն պահանջքներն ու կեցուածքը՝ տիրող տագնապին լուծման կապակցութեամբ: Այս իրողութիւնը դիւրաւ կը հաստատուի ամբողջ թղթակցութենէն եւ մանաւանդ Մայր Աթոռի 26 Ապրիլ 1977 թուակիր եւ հմր. 265 գրութեան բովանդակութենէն: Ու եթէ իրօք յիշեալ պահանջքներն ու կեցուածքը, անընդունելի «նախապայման սկզբունքներ» կը նկատուէին, եթէ անոնք կը հաւասարէին «պայմանական ձեւով յարաբերութեան, այսինքն որոշ պայմաններու պարտադրութեամբը Կիլիկեան Աթոռին», որուն պատրաստ չէր ու բուռն կերպով կ'ընդդիմանար Անթիլիաս, անոր Աթոռակալները այդ պարագան կրնային յայտնել ատենին առաջին իսկ պատեհութեամբ: Բայց անոնք ոչ մէկ առարկութիւն բերած են, ոչ մէկ ընդդիմախօսութիւն ըրած են այդ կապակցութեամբ մինչեւ յիշեալ նամակը: Ընդհակառակը, թողած են այն տպաւորութիւնը, որուն ակնարկութիւն եղած է խնդրոյ առարկայ եղելութիւններուն մէջ:

Բայց կայ նաեւ աւելին: Եթէ այդ եղած էր իրականութիւնը սկիզբէն ի վեր եւ ուրեմն՝ արծարծուած խնդիրներուն հանդէպ Անթիլիասի դիրքը մնացած էր նոյնը եւ անփոփոխ, հարց կը տրուի թէ ինչո՞ւ Կիլիկիոյ Աթոռին ներկայացուցիչները նման պարագայ մը չեն յայտնած բանակցական առաջին ժողովին սկիզբը, կամ ի՞նչ նիստերէն որեւէ մէկուն ընթացքին: Ինչո՞ւ չեն իսկ ակնարկած անոր: Ինչո՞ւ անոնք համամիտ եղած են Ներկայացուցիչներու Յայտարարութեան բովանդակութեան եւ ստորագրած են զայն: Եւ ինչո՞ւ մանաւանդ «իրենց կատարած աշխատանքը նկատեցին դրական կարեւոր նախաքայլ մը եւ յոյս յայտնեցին որ ապագային կայանալիք ժողովներով եւ փոխանցուելիք նամակներով համաձայնութիւն գոյանայ բոլոր հարցերու շուրջ»:

Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԱՆՏԵՂԵԱԿ ՂՐԿՈՒՄԸ ԵՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ:

Եւ այս հարցումներուն նշանակութիւնը աւելի կը շեշտուի, երբ նկատի ունենանք Անթիլիասը ներկայացնող պատգամաւորութեան եկեղեցական եւ աշխարհական անձնաւորութիւններուն տարողութիւնն ու հանգամանքը: Կը խորհինք թէ շատ դժուար պիտի ըլլայ գտնել ոեւէ մէկը որ փորձէ հաստատել, արդարացուցիչ որպէս պատճառաբանութիւն, թէ յիշեալ ներկայացուցիչները հաւաքաբար եւ անջատ իբրեւ անհատ, բոլորովին անտեղեակ էին Կիլիկեան Աթոռի մտածումներուն եւ կեցուածքին այդքան հիմնական խնդրի մը վերաբերեալ: Եւ Էջմիածինի մէջ տեղի ունեցած

հանդիպումին մասնակցելէ առաջ ալ ոչ մէկը գիտցած էր թէ այդ բոլոր պատասխանատու անհատները պարզապէս լուր չունէին թէ ի՞նչ կը մտածէր Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը արծարծուած հարցերուն նկատմամբ: Եւ այդպէս անտեղեակ եւ անգէտ դրկուած էին բանակցութիւններու, որպէս ներկայացուցիչներ, տիրող տագնապը բառնալու դիտաւորութեամբ:

Ե. ՏՐՏՈՒՄ ԵՐԵՒՈՅԹ.

Ընդհանուր կացութեան նախորդ վիճակին վերադառնալու ականաւորութիւնը նուազագոյն պահանջքն է այս պարագային «դժուարութիւնները լուծուած տեսնելու» կապակցութեամբ: Ան անխուսափելի նախապայման է որեւէ հասկացողութեան: Այլապէս, աւելորդ եւ անիմաստ կ'ըլլայ ոչ թէ ճիգը, այլ նաեւ որեւէ պարզ ականարկութիւն «յարաբերութիւններու սերտացման»: Ընդհակառակը, նման պարագայի մը, հնարաւոր չէ որեւէ տեսակի ու մակարդակի յարաբերութիւն պահել կամ մշակել որքան ատեն կը շարունակուի ստեղծուած հակա-կանոնական դրութիւնը եւ ապօրինութիւնը չի սրբագրուիր համապատասխան միջոցառումներով:

Նկարագրուած պայմաններուն տակ՝ պնդել թէ առաջարկուածները «նախապայմաններով կատարուած բանակցութիւններ» են, եւ յայտարարել թէ այդ պատճառով անոնք «ընդունելի չեն», ոչ թէ զարմանալի այլ տրտմելի երեւոյթ մը կը պարզեն:

Զ. ԻՆՉ Է ՀԵՏԱԳՊՆԴՈՒՄԸ

Բայց ուզուածը, որքան ալ զայն պահած ըլլա կարծեն ենթակաները, դիւրաւ տեսանելի է Անթիլիասի երկու Կաթողիկոսներու տողերուն ընդմէջէն: Անոնք բացէն կ'ըսեն.

«Բոլոր հարցերը ուսումնասիրելի եւ քննելի են, եւ միասնաբար, ազատ ու անկեղծ խօսակցութիւններով վճռելի՝ առանց նախապայմանի»²⁹:

Եթէ իրապէս ազատ ու անկեղծ պիտի ըլլայ խօսակցութիւնը, առաջին ու շեշտակի ըսուելիք խօսքը այն է թէ Անթիլիասի Աթոռը հակա-կանոնական ընթացքի մէջ գտնուած է, եւ այդ պատճառով ստեղծուած է ապօրինի կացութիւն մը, որ պէտք է բարձուի որեւէ այլ աշխատանքի նախաձեռնելէ առաջ: Ու եթէ Անթիլիաս կը մերժէ ընդունիլ նման անհրաժեշ-

²⁹ Անթիլիասի Աթոռակալներու նամակ՝ 26 Փետրուար 1981 թուակիր եւ թիւ 97/81, էջ 2–3:

տության մը, կը մերժէ վերահաստատել ապօրինութեամբ առնուածը, «միասնաբար» հասկացողութեան մը հասնելու երեւութական անոր տրամադրութիւնը, նուագագոյնը ըսած ըլլալու համար, «անկեղծութիւն» չի ներշնչեր:

Անթիլիաս իր ընթացքով կը պարտադրէ այն եզրակացութիւնը թէ իր բուն դիտաւորութիւնը հաւասարագօր Աթոռներու դրութիւն ստեղծել է: Էջմիածինի նուիրապետական գերակայութիւնը մերժելն է: Որեւէ կարգադրութիւն «միասնաբար» «վնռելի» դարձնելն է: Եւ այդ հիման վրայ՝ գողցուած թեմերու վերադարձը արգիլելն է: Հայց. Եկեղեցիին կէսը, եւ հաւանաբար սփիւռքի մասը, պահանջելն է, մոռնալով Կիլիկիոյ Աթոռին նուիրապետական ու պատմական դրութիւնը: Անտեսելով ամէն սրբութիւն եւ նուիրականութիւն: Մոռնալով ժողովուրդ ու անցեալ:

Է. ԱՆԹԻԼԻԱՍ ՓՈԽԱՎՈՐ Է ԻՐ ԿԵՑՈՒՄԸ:

Իրողութիւնները, դեպքերը եւ անոնց յարակից մանրամասնութիւնները կ'ըսեն թէ ակնարկուած արտայայտութիւնները եւ յայտնուած տեսակետները իբրեւ թէ յառաջադրուած նպատակներու կամ փափաքներու վերաբերեալ, չեն համապատասխաներ իրականութեան: Փաստերու եւ վկայութիւններու լեզուն կ'ըսէ բաներ որոնք բոլորովին տարբեր են Կիլիկիոյ Կաթողիկոսներու լեզուներու ըսածէն: Բացայայտ է թէ անկամբջելի խրամատ մը կայ Անթիլիասի Աթոռակալներուն խօսքերուն եւ անոնց գործերուն ու դիրքին միջեւ:

Կը խորհինք թէ հետեւութիւնը շատ պարզ է: Անթիլիաս մինչեւ Ներկայացուցիչներու Յայտարարութիւնը եւ անկէ վերջ որոշ շրջան մը, համամիտ եղած ըլլալու է կատարուածներուն ինչպէս նաեւ արծարծուած սկզբունքներուն: Բացի եթէ այդպէս ուզած է ձեւացնել իրեն վերաբերեալ պատճառներով: Բայց այս վերջին պարագան շատ հաւանական կարելի չէ համարել: Կիլիկիոյ Աթոռին դիրքին փոփոխութեան առաջին նշանն է Անթիլիասի երկու Գահակալներու 16 Սեպտեմբեր 1980 թուակիր նամակը, որուն արդէն ակնարկուեցաւ: Ուրեմն պէտք է եզրակացնել թէ Ներկայացուցիչներու Յայտարարութեան եւ այդ նամակին թուականին միջեւ ժամանակ մը, Կիլիկիոյ Աթոռը տեսած է թէ չի կրնար ընթանալ խոստացուած կամ կատարուած բանակցութիւններու գիծով: Եւ ուստի նոր մտահոգութեան համապատասխան փոխած է իր ընդհանուր կեցուածքը Մայր Աթոռի հետ յարաբերութիւններու եւ եկեղեցական տագնապին լուծումին վերաբերեալ: Եւ կամ, ինչ որ աւելի հաւանական կը թուի, նման վերաբերում մը պարտադրուած է Անթիլիասին վերին ոյժի մը, աւելի

բարձր իշխանութեան մը կողմէ: Ի վերջոյ Կիլիկեան Աթոռը, իր յայտնաբերած բոլոր բարի տրամադրութիւններէն, խոստումներէն ու կատարած բանակցութիւններէն յետոյ, տրամաբանական պիտի չլլար որ ուզէր, առանց արտակարգ ստիպողական պատճառի, առանց պարտադրանքի, տեսակ մը խոստումադրուժ երեւիլ եւ ինքզինք մատնել նման անպաշտպանելի ու խոցելի դրութեան:

Ը. ՊԱՐԿԵՇՏ ԿԵՐՊԸ.

Ինչ որ ալ ըլլայ իրողութիւնը, սակայն, աւելի պարկեշտ եւ արի ելք մը ընտրած կ'ըլլային Անթիլիասի Կաթողիկոսները, եթէ պարզապէս յայտնած ըլլային թէ փոխած էին իրենց միտքն ու դիրքը: Փոխանակ ծածկել ջանալու իրենց բուն դրդապատճառը: Ընթացք՝ որ ի վերջոյ շատ տխուր տպաւորութիւն կը թողու:

Երբ նկատի ունենանք ընդհանուր հարցին էութիւնն ու տարողութիւնը եւ մանաւանդ՝ անոր հետեւանքով մեր ժողովուրդին կրած վնասներն ու տառապանքը, խորապէս խռովելու պատճառներ կը խուժեն մեր վրայ ու տրտում խորհուրդներ անմխիթար կը պատեն մեզ:

Թ. ՈՂԶՈՅՆԻ ԽՕՍԶԻՆ ՏԱՐԲԵՐ ՄԷԿ ԵՐԵՍԸ.

Առայժմ մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք վերոյիշեալ «Ողջոյնի Խօսք»ին տարբեր մէկ մասին վրայ:

Քանի որ Աթոռակից-Կաթողիկոսը կ'ընդունի թէ խնդրոյ առարկայ թեմերը «նախապէս, պատմականօրէն, Ս. Էջմիածնի պատկանող եւ 1957–58-էն անդին Կիլիկեան Ս. Աթոռին իրաւասութեան տակ գտնուող թեմեր» են, ինչո՞ւ զանոնք իրենց տիրոջ վերադարձնելու հարցը որոշ «պայմաններու պարտադրութիւն» նկատէ: Նոյնը կարելի է ըսել «նախամեծար Մայր Աթոռ»ի վերաբերեալ խնդրին մասին: Մանաւանդ երբ ի մտի ունենանք նիւթին հետ աղերս ունեցող նախընթաց եւ յարակից դէպքերը եւ իրադարձութիւնները: Թերեւս նաեւ պէտք է ուշադրութիւն հրաւիրել քանի մը այլապէս անմեղ թուող երեւոյթներու վրայ: Օրինակի համար, «Ողջոյնի Խօսք»ը բաժնուած է ենթամասերու: Եւ անոնցմէ մէկը (դ), ունի հետեւեալ յատկանշական խորագիրը. «Կիլիկեան Աթոռի Համաթեմական Դերին Շեշտումը»³⁰: Ուրեմն Անթիլիասին համար կը նախատեսուի «համաթեմական դեր»: Իսկ «Միջ-եկեղեցական Յարաբերութիւններ» անունին տակ եղած հատուածը ոչ իսկ ակնարկութիւն կ'ընէ Էջմիածինին: Կարծես

³⁰ «ՀԱՄԿ», Թիւ 1, Յունուար 1983, էջ 30:

թե գոյութիւն չունենար Ամենայն Հայոց Հայրապետ մը, եւ մեր եկեղեցիին արտաքին բոլոր յարաբերութիւնները բացարձակ մենաշնորհը ըլլային Կիլիկեան Աթոռին:

Ժ. ԶԱՐԵՀ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՕՍՔԵՐԷՆ.

Աթոռակից-Կաթողիկոսը, իր տեսակէտը զօրացնելու դիտաւորութեամբ հաւանաբար, յարմար տեսած է մէջբերել երջանկայիշատակ Զարեհ Կաթողիկոսի խօսքերէն, զորս ան արտասանած է 1956 Փետրուար 20-ի տխուր շրջանին.

«Իմ սրտագին ողջոյնի խօսքս կ'ուղղեմ Էջմիածնայ նախամեծար Մայր Աթոռին, անոր արժանընտիր Գահակալ Վազգէն Ա. Կաթողիկոսին, այն հաստատ համոզումով եւ գիտակցութեամբ, որ նախամեծար Մայր Աթոռը եւ Կիլիկեան այս Աթոռը՝ լծակիցներ են եւ գործակիցներ, նոյն ժողովուրդին եւ Աւետարանին ծառայող Աթոռներ: Մեր Աթոռի կապը պիտի մնայ անքակտելի՝ Էջմիածնայ հետ, ինչպէս եղած է նախորդ կաթողիկոսներու օրով. պիտի մնայ անքակտելի, հակառակ անոր որ պիտի գտնուին այդ կապը թուլցնել ուզողներ: Պիտի պահենք անխախտ եւ ամուր պոյ կապը, որովհետեւ ան է որ մեզ պիտի պահէ մեր ազգային, եկեղեցական եւ կրօնական դիմագծութեան մէջ անայլայլ»³¹:

Ինչպէս կը տեսնուի, յիշեալ Կաթողիկոսն ալ կանխաւ եւ առանց պայմանի, կ'ընդունի Էջմիածինի «նախամեծար Մայր Աթոռ»ի հանգամանքը: Ինչո՞ւ արդեօք Աթոռակից-Կաթողիկոսը, օգնութեան կանչելով հանդերձ իր Սրբազան եղբօր իրեն նպաստաւոր խօսքերը, կը մերժէ ընդունիլ նուիրագործուած այդ իրականութիւնը:

Միւս տուեալներէն անկախ, կ'արժէ պահ մը եւս յամենալ Հոգեւոյս Զարեհ Կաթողիկոսի յիշատակուած մտածումներուն կողքին: Ան կ'ըսէ.

«Մեր Աթոռի կապը պիտի մնայ անքակտելի՝ Էջմիածնայ հետ, ինչպէս եղած է նախորդ կաթողիկոսներու օրով. պիտի մնայ անքակտելի, հակառակ անոր որ պիտի գտնուին այդ կապը թուլցնել ուզողներ»:

Եւ այսօրուան ճշմարտութիւններով դատելով, կարելի է հաստատել թէ ան ճիշդ գուշակած էր ըսելով թէ «պիտի գտնուին այդ կապը թուլցնել ուզողներ»: Որովհետեւ ինք շատ լաւ կը ճանչնար Անթիլիասի ներքին երեսը: Բայց որքան ափսոսալի սխալած էր «կապ»ին «անքակտելի»ու-

³¹ «ՀԱՄԿ», Թիւ 1, Յունուար 1983, էջ 34.

թեան կապակցութեամբ: Որովհետեւ այդ կապը ոչ միայն չէր պահուած այնպէս ինչպէս եղած էր «նախորդ կաթողիկոսներու օրով», այլ բոլորովին ծանօթ իրողութիւն է թէ ոչ մէկ նախորդ կաթողիկոսի օրով կապը եղած էր իր օրուանին եւ մինչեւ մեր օրերը երկարող շրջանին պէս անբաղձալի եւ աւաղելի:

Իսկ բացայայտ է թէ այն խոստումը թէ «պիտի պահենք անխախտ եւ ամուր՝ այդ կապը», ոչ միայն մնաց ամուլ խօսք, այլ նաեւ երբ զայն նկատի կ'ունենանք ընդհանուր ազգային, եկեղեցական իրադրութեան բովանդակութեան մէջ, ողորմելի արձագանգի մը կը վերածուի:

* * *

10. ՈՐՔԱՆ ԴԱՏԱՐԿ ԵՆ ՄԵՐ ՎԷՃԵՐԸ.

Կ'արժէ յատկապէս շեշտել ըլլալիքին համար իբրեւ պատճառ տրուած մասը, որ ձեւով մը եզրակացութիւնն ալ կը ներկայացնէ: Չարեհ Կաթողիկոսը կ'ըսէ թէ «պիտի պահենք անխախտ եւ ամուր՝ այդ կապը, *որովհետեւ ան է որ մեզ պիտի պահէ մեր ազգային, եկեղեցական եւ կրօնական դիմագծոյթեան մէջ անայլալ*»: Տարակոյս չկայ թէ ըսուածը խոր իմաստութիւն մըն է: Եւ եթէ այդ է ճշմարտութիւնը, եւ եթէ Անթիլիասն ալ վաւերացնելով զայն կը մէջբերէ ու կ'ընդունի, այդ «կապ»ը արժեւորելու լաւագոյն ձեւը չէ Կիլիկիոյ Աթոռին եւ Աթոռակալներուն կեցումածքը: Ըսուածը, որքան որ մենք կը հասկնանք, այն անառարկելի եւ անխորտակելի իրողութիւնն է թէ առանց Էջմիածինի չկայ հայ եկեղեցի, չկայ հայ հաւատք: Աւելին: Առանց այն հողին՝ որուն վրայ բարձրացած է Էջմիածինի սրբութիւնը, չկայ գալիք մեր ժողովուրդին համար:

Կ'անցնին ժամանակներն ու տրտմութիւնները: Օր մը վերջ կը գտնեն օտարութիւններն ու տարագրութիւնները: Եւ Սփիւռքը հեռուն կը դառնայ յուշ:

Բայց կը մնայ ժողովուրդը, կը մնայ պետութիւնը, կը մնայ Էջմիածինը: Եւ այդ ըմբռնումով՝ իրապէս որքան փոքր են մեր արարքները, որքան ծանծաղ են մեր մտածումները, որքան անցաւոր են մեր մտահոգութիւնները: Որքան անբովանդակ են մեր վեճերը, որքան անիմաստ են մեր փնտռած երեւակայական փառքերը:

Որքան անտեսիլք են մեր օրերը եւ հոգիները:

* * *

11. ԱՆԿԵՂԾ Է ԱՆԹԻԼԻԱՍ ԻՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՈՒ ԿԵՑՈՒՎԾՔԻՆ ՄԷՋ.

Ա. ԵՂԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Պահ մը հաւատանք Անթիլիասի թէ իրապէս կը ցանկար ու դեռ կը ցանկայ «մի տեսնել Հայց. Եկեղեցին, մէկ ազգի եւ մէկ եկեղեցիի անխախտելի սկզբունքով եւ նշանաբանով»³², թէ կ'ուզէր, ու թէ տակաւին կ'ուզէ, «առաւել եւս ամրացնել սիրոյ եւ եղբայրութեան անքակտելի կապը Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսական Ս.Աթոռին միջեւ»³³, թէ կը բաղձայ այն ինչ որ կ'ըսէ թէ կ'ըզայ: Եւ այդ իրողութենէն մեկնելով՝ տեսնենք թէ Անթիլիասի արարքները ի՞նչ չափով կը հաստատեն անոր այդ փափաքը կամ ի՞նչ համեմատութեամբ վստահելի վկաներ կրնան ըլլալ Կիլիկիոյ Աթոռին ներկայացուցած տեսակետներուն:

Այս նպատակին համար նկատի ունենանք, իբրեւ առաջին նախադրեալ, խնդրոյ առարկայ եղելութիւնները, ինչպէս նկարագրուած են անոնք թիւ 8 գլուխին Ա. հատուածին մէջ:

**Բ. ԹԻՒ 32 ԵՒ 33 ՅՕԴՈՒՎԾՆԵՐԸ ՊԷՏՔ ԶԷՐ ԳՈՅՈՒԹԻՒՆ
ՈՒՆԵՑԱԾ ԸԼԼԱՅԻՆ.**

Անխուսափելի է այն մտածումը թէ, եթէ իրապէս գոյութիւն ունենային ականարկուած իղձերն ու ոգին, պէտք չէր երբեք Կիլիկիոյ Աթոռի կանոնադրութեան մաս կազմած ըլլային թիւ 32 եւ 33 յօդուածները: Պէտք չէր նոյնիսկ միտքերէն անցած ըլլար նման արարք մը, որուն իմաստն ու ոգին ականբախօրէն հակաօրինական էին եւ հակոտնեայ՝ մեր եկեղեցիին դարաւոր նուիրապետական կառոյցին եւ նուիրագործուած դրութեան:

Գ. «MENSUEL» ԱՄՍԱԳԻՐԻՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԾԸ.

Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի պաշտօնաթերթ «Mensual» ամսագիրը, որ կը տպուի Ժընեւի մէջ, 1977 Յունիսի իր թիւին

³² Աթոռակից-Կաթողիկոսի նամակ՝ 24 Օգոստոս 1977 թուակիր եւ թիւ 275/77, էջ 1-2:

³³ Նոյնը, էջ 1:

մէջ, Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան առիթով ունէր մասնաւոր լրատուութիւն մը՝ որ իրեն դրկուած էր Անթիլիասէն: Այդ հաղորդագրութեան մէջ կային կարգ մը ուշագրաւ կէտեր: Օրինակի համար, վերնագիրը դրուած էր հետեւեալ կերպով.

«L'archeveque Sarkissian à la tête de l'Eglise apostolique Arménienne»: Այսինքն՝ Սարգիսեան արքեպիսկոպոսը Հայ առաքելական Եկեղեցիին գլուխ»: Մինչ Աթոռակից-Կաթողիկոսին մասին կ'ըսուէր.

«L'archeveque Karekin Sarkissian chef de l'Eglise apostolique arménienne d'Amerique»:

Որ կը թարգմանուի. «Գարեգին Արքեպիսկոպոս Սարգիսեան, Ամերիկայի հայ առաքելական Եկեղեցիին պետը»:

Մինչ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընդհանուր ժողովին մասին արտայայտութիւն եղած էր հետեւեալ ձեւով, «l'assemblée législative suprême de l'Eglise Arménienne dont le siège est situé à Antilias depuis 1930»:

Ու վերջին երկու տողերը հայերէնի վերածելով, կ'ունենանք.

«Հայ Եկեղեցիի գերագոյն Օրէնսդիր Ժողովը, որուն կեդրոնը հաստատուած է Անթիլիասի մէջ 1930-էն ի վեր»:

Որքան որ գիտենք, յիշուած բովանդակութեան վերաբերեալ որեւէ լուսաբանական գրութիւն չէ երեւցած յետագային:

Եթէ նոյնիսկ պաշտպանուի այն տեսակետը թէ կրնայ պատահիլ որ Անթիլիասի Կաթողիկոսարանը ոչ մէկ մասնակցութիւն ունեցած ըլլայ վերեւի հաղորդագրութեան մէջ, այն ատեն պիտի հարցուի: Ինչո՞ւ Անթիլիասի Աթոռակալները չհերքեցին գրուածները կամ գոնէ չտուին անհրաժեշտ բացատրութիւնները կամ լրացուցիչ կենսական տեղեկութիւնները, իրականութեան կամ ճշմարտութեան համաձայն:

Անջատ այդ բոլորէն, ուշագրաւ է այն երեւոյթը թէ խնդրոյ առարկան Գարեգին Բ. Կաթողիկոսն է եւ թէ բոլորովին անտեսուած է Խորէն Ա. Կաթողիկոսը:

Դ. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ.

Նոյն շրջանին, ծանօթ 32-րդ յօդուածին հիման վրայ առնուած Յունաստանի թեմին առաջնորդական պաշտօն ստանձնած Տ. Սահակ Արքեպիսկոպոսին Աթոռակից-Կաթողիկոսին կողմէ ուղղուած է օրինութեան գիր մը, որ շարադրուած է գրեթէ նոյն ոգիով եւ մտայնութեամբ: Եւ յատկանշական է որ անոր մէջ ոչ մէկ յիշատակութիւն կ'ըլլայ եկեղեցական տագնապը բառնալու Անթիլիասի խոստումին ու թափուած ճիգերուն

վերաբերեալ: Հարց մը՝ որ անմիջականօրէն կապ ունէր Յունաստանի հայ համայնքին մէջ ստեղծուած ու շարունակուող հակա-կանոնական դրութեան եւ մանաւանդ՝ սերտօրէն առնչուած էր այն կղերականին հետ, որուն առաջնորդական դիրք տրուած էր: Ոչ իսկ ամէնէն հեռաւոր ակնարկութիւնը եղած է այդ տեսակէտով: Կարծես թէ այդպիսի խնդիր գոյութիւն ունեցած չլլար երբեք:

Ե. ԿԻԼԻԿԵԱՆ ԱԹՈՌԻ ԹԵՄ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ.

Հակառակ թափուած ջանքերուն, համբերատար բանակցութիւններուն եւ յայտնուած յոյսերուն, Միացեալ Նահանգներու բաժանեալ եկեղեցիին կողմէ ոչ մէկ դրական քայլ առնուեցաւ: Ընդհակառակը, յիշեալ եկեղեցիի հոգեւոր պետ Տ. Մեսրոպ Եպս. Աշճեանի Ամենայն Հայոց Հայրապետին գրած վերջին նամակներէն մէկէն կը պարզուէր թէ Անթիլիաս եւ անոր ենթակայ ամերիկահայ եկեղեցիները կը յամառէին մնալ դիրքորոշումի մը եւ ընթացքի մը մէջ, որոնք տասնեակ տարիներէ ի վեր կատարուող բանակցութիւններու նպատակին եւ ոգիին եւ 1982-ին առաջարկուած Միութեան սկզբունքներուն կը հակասէին:

Ի վերջոյ Միացեալ Նահանգներու մէջ «Կիլիկեան Ս. Աթոռին ենթակայ թեմական կեանքի հիմնադրութիւնը» տեղի ունեցաւ 1983 Մայրիլ 10-ին, բաժանեալ եկեղեցիի առաջնորդ Մեսրոպ Եպս. Աշճեանի նախագահութեամբ: Ու կարելի չէ ըսել թէ այդ արարքը կատարուած է առանց Անթիլիասի գիտակցութեան եւ օրինութեան:

Զ. ԱՊՕՐԻՆԻ ԵԿԵՂԵՑԻԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ ՎԱՆՔՈՒՎԸՐԻ ՄԷՋ.

Բաժանարար ու հատուածամոլ նոյն քաղաքականութեան հետամուտ էին պատասխանատուները երբ քանի մը տարի առաջ Վանքուվըրի մէջ շուրջ 800 հոգիէ բաղկացած այդ փոքր գաղութին մէջ, ուր կազմակերպուած օրինաւոր եկեղեցական կեանք արդէն գոյութիւն ունէր, հաստատեցին ապօրինի երկրորդ եկեղեցի մը:

Է. ԲԱԺԱՆԵԱԼ ՆՈՐ ԹԵՄ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԷՋ.

Նոյն անգիշող ոգիին եւ նման նպատակի բացայայտ ու նորագոյն արտայայտութիւնը պետք է համարել Թորոնթոյի մէջ բաժանեալ եկեղեցիի նոր թեմ հաստատելու արարքը, որ տեղի ունեցաւ 1983 Մայիս 17-ին:

Ը. ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀԱԿԱՍԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ.

Աթոռակից-Կաթողիկոսը նիւ Եորքի Սեն Պարթոլոմէի եկեղեցիին մէջ,

Եքումենիք շարժումի ներկայացուցիչներուն աչքերուն նայելով, պատարագի ընթացքին կը յայտարարէ թէ Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին մէկ է եւ թէ. Վազգէն Ա. Վեհափառը Կաթողիկոսն է Ամենայն Հայոց: Բայց նոյն եկեղեցականը, գրեթէ նոյն շրջանին, 1983 Յուլիս 7-ին իբրեւ Անթիլիասի ներկայացուցիչ կը մասնակցի Վանքովորի մէջ գումարուող Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Ընդհանուր Ժողովին, առանց առած ըլլալու Ամենայն Հայոց Հայրապետին հաւանութիւնը եւ օրհնութիւնը այդ առնչութեամբ:

Թ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱԹՈՌԱՎԱԼԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԷԶՄԻԱԾԻՆԻ ՓԱՓԱՔԻՆ ԴԷՄ.

Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսը 1983-ին կ'այցելէ Միացեալ Նահանգներ, այսինքն՝ Էջմիածնական թեմ մը, առանց կանխաւ ստացած ըլլալու օրհնութիւնը Էջմիածինի Աթոռի Հովուապետին, որուն Ամենայն Հայոց Կաթողիկոս ըլլալը կը յայտարարէ այնտեղ ուր նպատակայարմար է: Եւ կայ նաեւ աւելին: Այդ թեմը կ'այցելէ Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ չճանչցուած, ապօրէն նկատուած բաժանեալ եկեղեցիի մը տեսակ մը հերձուածող առաջնորդի մը հրաւերով: Ընթացք՝ որ ձեւով մը քաջալերած կ'ըլլայ պառակտումը եւ աւելի խորացուցած զայն:

Այս եղելութիւնը թերեւս, առաջին մերձեցումով, յարաբերաբար անկարելոք կամ անմեղ թուի: Բայց այդպէս չէ խորքին մէջ: Ան կը հագնի իր բուն իմաստը՝ եթէ զայն տեղաւորենք ընդհանուր պատկերին մէջ անոր վերապահուած ճիշդ տեղը:

Պահ մը վերադառնանք վերջին բանակցութիւններուն, որոնք սկսան Խորէն Ա. Կաթողիկոսի 23 Յունուար 1977 թուակիր հրաւեր-նամակով: Այդ շրջանին բաւական պաշտօնական գրութիւններ փոխանակուեցան եւ այլ շփումներ տեղի ունեցան Էջմիածինի եւ Անթիլիասի միջեւ եւ անոնցմէ ոմանց արդէն անդրադարձանք: Անոնց մէջ կայ գրութիւն մը, 1977 Հոկտեմբեր 10 թուակիր եւ հմր. 688, որ Մայր Աթոռի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին կողմէ ուղղուած է Տ. Տ. Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսին՝ ի պատասխան 24 Օգոստոս 1977 թուականով անոր նամակին: Էջմիածինի այդ պաշտօնագիրին մտադրութիւնն է տալ կարգ մը լուսաբանութիւններ ու բացատրութիւններ՝ մասնաւոր երկու հարցերու առնչուած եւ ապա յայտնել ընդհանուր մտահոգութիւն մը՝ թէ Անթիլիասի կապուած կարգ մը դէպքեր ու երեւոյթներ ներդաշնակ չէին կատարուող բանակցութիւններուն եւ հասկացողութեան ոգիին, ոչ մէկ կերպով կը սատարէին բնականոն յարաբերութիւններ վերահաստատելու եւ Հայց. Եկեղեցիին ներքին

խաղաղությունը վերագտնելու տեսակետով: Եւ այդ բովանդակությամբ է որ այնտեղ եղած է հետեւեալ թելադրությունը կամ պահանջը.

«Եւ վերջապէս Ձեր ուշադրութեան ենք յանձնում, որ ինչքան ժամանակ չեն վերահաստատուած ցանկալի բնականոն յարաբերությունները եւ համերաշխ գործակցությունը մեր Աթոռների, կանխելու համար թիւր մեկնություններ, լաւ է որ Հայրապետական այցելություններ տեղի չունենային Սուրբ Էջմիածնի իրաւասութեանց ներքեւ գտնուող թեմերին ու եկեղեցիներին: Մենք վստահ ենք, թէ Ձերդ Սրբությունը՝ համաձայն պիտի լինի մեզ հետ»:

Բայց կ'երեւի թէ Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսը ոչ միայն արդարացուցիչ բացատրություններ կամ պատճառաբանություններ չէ տուած Էջմիածինի, այլ նաեւ բոլորովին անտեսած է անոր մտահոգությունը: Եւ ի վերջոյ Էջմիածինը, այս պարագային, մոռնալով նուիրապետական այլ ծանրակշիռ հարցերը, այն կողմն է որուն հետ Անթիլիաս կ'ուզէ խօսիլ, բանակցիլ եւ իբրեւ թէ հասկացողութեան մը գալ ի շահ եկեղեցիին ու ժողովուրդին:

Ժ. ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ ԸՍԵԼՈՎ ԱՆԹԻԼԻՊՍ ՊԷՏՔ Է ՀԱՍԿՆԱԼ.

Աթոռակից-Կաթողիկոսին նախապէս ակնարկուած «Ողջոյնի Խօսք»ին մէջ կայ հատուած մը, «Ո՛ւր Ենք Այսօր» խորագիրին տակ: Այնտեղ, ի միջի այլոց, ըսուած է.

«Նոր կացություններու եւ կարիքներու առջեւ կը գտնուինք, մեր եկեղեցւոյ առաքելութեան գծով, Քուէյթի եւ մանաւանդ Սէուտական Արաբիոյ եւ Արաբական ծոցի Էմիրական պետութեանց մէջ ապրող ու գործող Հայութեան պարագային: Գործի բերումով, տնտեսական նկատումներով այդ երկիրները գաղթած հայերու թիւը արագ եւ բարձր աճում արձանագրեց վերջին 8–10 տարիներու ընթացքին: Այնտեղ անմիջական կարիքներ կան հոգեւոր-եկեղեցական սպասաւորութեան եւ հայ լեզուի եւ ինքնութեան պահպանումի տեսակետով: Վերջին երեք տարիներու ընթացքին այդ շրջաններու հայութիւնը յատուկ ուշադրութեան առարկայ դարձաւ մեզի եւ Ազգ. Կեդր. Վարչութեան համար, ինչպէս պիտի նկատէք Վարչութեան տեղեկագրէն»³⁴:

Հատուածին ամբողջությունը ներկայացուեցաւ որպէսզի տողերուն ետեւ գտնուող բուն միտքը տեսնուի եւ հնարաւոր եղածին չափ լիակատար եւ հարազատ ըլլայ գծուող պատկերը: Որպէսզի թիւրիմացություններ

³⁴ «ՀԱՍԿ», Թիւ 1, Յունուար 1983, էջ 29:

կանխում ըլլան:

Վերելի խօսքերէն պարզ կը դառնայ թէ Անթիլիաս ինքն իրեն իրաւունք տուած է խառնուիլ յիշեալ գաղութներու կեանքին: Ու բիրտ կերպով խառնուած է անոր: Աւելի ճիշդ՝ գացած է ղեկավարելու այդ գաղութները՝ այնտեղ մենաստիւրոյն հաստատելու եւ հաստուածական շահեր ապահովելու դիտումով: Եւ ի վերջոյ կուսակցութեան մը ի նպաստ ծառայութիւններ մատուցանելու եւ բացարձակ հեղինակութիւն պարտադրելու միտումով: Այսինքն՝ գործադրելու «Ազգային Ընդհանուր Ժողով»ին որոշումները, որոնց պիտի ծանօթանանք քիչ վերջ:

Թոյլատրելի չէ եւ անըմբռնելի է որ Անթիլիաս, եւ մանաւանդ ատեն մը երբ բանակցութիւններ կը տարուին եւ Էջմիածինի ու Կիլիկիոյ Աթոռին միջեւ հասկացողութեան գետին մը իբրեւ թէ կը փնտռուի, ինքնագլուխ եւ անկոչ նախաձեռնութեամբ մը, միջամուխ ըլլայ իր թեմերէն դուրս գտնուող եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան իրաւասութեան ծիրին մէջ ինկող շրջաններու կեանքին ու գործին:

Երբ Գարեգին Բ.Աթոռակալը կ'ըսէ. «Նոր կացութիւններու առջեւ կը գտնուինք մեր եկեղեցւոյ առաքելութեան գծով», ու կը խօսի վայրերու մասին որոնք չեն իյնար Անթիլիասի աշխարհագրական սահմաններով ճշդուած իրաւասութեան մէջ, ինչո՞ւ արդեօք չ'ուզեր հասկնալ «Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի», որուն գերադաս եւ միակ կեդրոնը Սուրբ Էջմիածինն է ու գերագոյն պետը՝ Ամենայն Հայոց Հայրապետը: Եւ եթէ իրապէս «կարիքներ կան», ինչպէս կ'ըսուի, ո՞վ պարտականութիւն կամ իրաւասութիւն տուած է Անթիլիասին՝ ինքնամատոյց կերպով միջամուխ ըլլալու եւ ինքն իրեն տալու նոր առաքելութիւն մը՝ առանց որեւէ ձեւով խորհրդակցելու այլ պատկան մարմիններու հետ: Մանաւանդ՝ առանց այդ հարցը կանխաւ ներկայացնելու Էջմիածինի եւ առանց հաւանութիւնը առնել ու Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Առանց նոյնիսկ այդ մասին որեւէ տեղեկութիւն տալու անոնց: Մինչ, նոյն ատեն, Կիլիկիոյ Աթոռակալներէն մէկը եւ նոյն ճառին իսկ մէջ, կը յայտարարէ թէ կը հաւատան «մէկ հայ եկեղեցւոյ»: Այդ մասին պարզ ակնարկութիւն մը ընել հարկ չեն տեսած:

Մարդիկ աւելորդ կը համարեն նման ձեւական աշխատանքներ: Երբ անոնք «մեր եկեղեցին», «հայ եկեղեցին» կ'ըսեն, կ'երելի թէ կը հասկնան միմիայն Անթիլիասի Կաթողիկոսութիւնը: Ու երբ կը խօսին «հայ ժողովուրդ»ին կամ սփիւռքի մասին, դարձեալ նոյնը կը հասկնան: Այդպէս կը հաստատեն իրենց գործածած հոմանիշներու եւ բացատրական բառարանները:

Եւ արդէօք պարզ գուգադիպութի՛նն է որ «Mensuel» ամսագիրն ալ նոյն կամ նման արտայայտութիւն ունեցած էր:

Բայց կայ նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ազգային Ընդհանուր Ժողով»ին տեսակէտը այս նիւթին վերաբերեալ:

ԺԱ. ԱՆԹԻԼԻԱՍԻ «ՀԱՄԱԴՐՈՂԻ ԵՒ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԵՐ»Ը.

Այս տեսակէտը հաստատող բազմաթիւ պարագաներ կան: Բայց տանք յատկանշական նմոյշ մը զայն առնելով նոյն ժողովին՝ 26–30 Յունուար ատենագրութենէն: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովի մասին —26–30 Յունուար 1986— Չեկոյցին մէջ, «Տեղեկագիրներու Ներկայացում եւ Քննարկում» խորագիրին տակ, Բ մասին վերջընթեր պարբերութեան մէջ ըստւած է «Ազգային Ընդհանուր Ժողով»ին կողմէ.

«Ժողովս կը յանձնարարէ որ Ազգ. Կեդր. Վարչութիւնը աւելի սերտ կապեր պահէ թեմերուն հետ, եւ անհրաժեշտ առաջնորդութիւնը տայ թեմերուն, անոնց կանոնագրութեանց, տրամադրութեանց շրջագիծին մէջ, եւ անհրաժեշտ պարագաներուն ալ համահայկական ծրագիրներու նախաձեռնութեանց մէջ ունենայ համադրողի եւ ղեկավարի դեր»³⁵:

Թեւադրուածը շատ յստակ է: Աւելի խիստ հսկողութիւն պէտք է ըլլայ թեմերու կեանքին ու գործունէութեան վրայ: Եւ «անհրաժեշտ առաջնորդութիւնն» տրուի անոնց՝ իրենց կատարելիք աշխատանքներուն վերաբերեալ: Անոնց կանոնագրութիւնները, եթէ հարկ տեսնուի, պատշաճեցնելու է առաջադրուած նպատակներուն: Եւ ընել այնպէս որ «Ազգային Կեդր. Վարչութիւն»ը, կամ Կիլիկիոյ Աթոռը, «համահայկական ծրագիրներու նախաձեռնութեանց մէջ ունենայ համադրողի եւ ղեկավարի դեր»: Այսինքն՝ կարելի է համերաշխութիւն խաղալ, ըսել թէ հայ եկեղեցիի միասնականութիւնը կը հետապնդուի, մտահոգուիլ ձեւացնել հայութեան գերագոյն շահերով եւ, ծայրագոյն եւ անխուսափելի պարագային, նոյնիսկ զբաղիլ հայրենիքով եւ Էջմիածինով, բայց իբրեւ անփոփոխելի նպատակ ունենալով նոյն հեռանկարը: Գաղութները ենթարկել Անթիլիասի այնպէս որ ան «համահայկական ծրագիրներու նախաձեռնութեանց մէջ ունենայ համադրողի եւ ղեկավարի դեր»:

Ընդդէմ, անշուշտ, Էջմիածինի եւ հայրենիքի

* * *

³⁵ «ՀԱՄԱ», Թիւ 1, Յունուար 1983, էջ 19:

12. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԹԵՄԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒ 32 ԵՒ 33 ՅՕԴՈՒՎԾՆԵՐՈՒՆ ՅԱՊԱՒՈՒՄԷՆ ՅԵՏՈՅ.

Կայ, սակայն, նաեւ աւելի ահաւորը:

Յապաւուեցան, ինչպէս ակնարկուեցաւ, թիւ 32 եւ 33 յօդուածները, որոնց հիման վրայ Կիլիկիոյ Աթոռը բռնագրաւած էր Պարսկաստանի, Միացեալ Նահանգներու եւ Յունաստանի Էջմիածնական թեմերը ու կը սպառնար նոյն կերպով իրեն միացնել ուրիշներ ալ: Բայց հակառակ այդ իրողութեան, ան մերժեց իր տիրոջ վերադարձնել զանոնք: Ընդհակառակը, Միացեալ Նահանգներու համայնքին առնչութեամբ՝ փորձեց իբրեւ թէ օրինականացնել ապօրէն դրութիւնը, որ տեսակ մը կիսատ թողուած էր: Յիշեալ գաղութը բաժանեալ էր բայց պաշտօնապէս Անթիլիասի թեմ չէր յայտարարուած: Այդ արարքը եղաւ 1983 Ապրիլ 10-ին, ինչպէս յիշատակուեցաւ: Աւելին: Անթիլիաս ջանաց ձեռք անցընել ուրիշ թեմեր ալ, ինչպէս ըրաւ Գանատայի թեմին կամ անոր մէկ մասին պարագային:

Եթէ Անթիլիաս պիտի շարունակէր չվերադարձնել գրաւած թեմերը, եւ ուրիշ նոր թեմեր պիտի ապահովէր ու որսար, այն ատեն անիմաստ կը թուի եղած ըլլալ յիշեալ տխրահոշակ երկու յօդուածները անհանգիստ ընելով զանոնք կանոնագրութենէն դուրս թողելու յոգնութիւնը: Արարք մը՝ որ այնքան աղմուկով եւ գոհունակ ինքնագովութեամբ յայտարարուեցաւ ատենին ու տակաւին կը փորձուի գովասանք ու ծափահարութիւն հաւաքել այդ գործին համար:

Կարծես թէ բաղձանքներ չէին արտայայտուած, կարծես թէ խոստումներ չէին տրուած, կարծես թէ բանակցութիւններ չէին վարուած համերաշխութեան, միասնականութեան, ներքին խաղաղութեան ու կանոնաւորութեան համար հայութեան բարիքին մտահոգութիւններով: Եւ մանաւանդ՝ կարծես թէ Հայց. Եկեղեցիի նուիրապետական դրութիւն եղած չըլլար, ու Կիլիկիոյ Աթոռին իշխանութենէն զատ ուրիշ ոչ մէկ մարմին, հաստատութիւն կամ հեղինակութիւն գոյութիւն ունեցած ըլլար: Եւ Անթիլիաս եղած ըլլար միակ բացարձակ եւ միահեծան տէրը հայ եկեղեցիին եւ հայ ժողովուրդին:

13. ԹԻՒ 32 ԵՒ 33 ՅՕԴՈՒԱԾՆԵՐՈՎ ՍՏԵՂԾՈՒԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.

Երբ ի մտի ունենանք թիւ 4 Գլուխին բովանդակութիւնը, եւ յատկապէս Դ, Զ, եւ Ը. հատուածները, շատ պարզ կը դառնայ թէ Անթիլիասի ականարկուած արարքները *ultra vires* են: Այսինքն՝ անոր իրաւասութենէն վեր կամ ձեռնհասութենէն դուրս են:

Եկեղեցական կանոնական տեսակետով՝ Կիլիկիոյ Աթոռը ոչ մէկ իրաւական կամ այլ իրաւունք եւ հեղինակութիւն ունի փոփոխելու իր կանոնագրութիւնը այնպէս որ որեւէ կերպով Անթիլիաս միջամուխ կարենայ ըլլալ ուրիշ նուիրապետական Աթոռի մը իրաւասութիւններուն, ներքին աշխատանքներուն կամ անպատեհութիւն պատճառէ անոր: Մանաւանդ չի կրնար տարբեր Աթոռի մը պատկանող թեմեր իւրացնել կամ անոնց ներքին կեանքին միջամուխ ըլլալ որեւէ ձեւով, առանց ենթակայ Աթոռին եւ Հայց. Եկեղեցիի ընդհանուր հաւանութեան: Եւ եթէ ըրած է կամ փորձած է ընել, կամ կը շարունակէ ընել այդպիսի արարք մը, խնդրոյ առարկայ եղելութիւնը չի դադրիր հակականոնական ըլլալէ եւ անվաւեր նկատուելէ:

Կը հետեւի, ուրեմն, թէ թիւ 32 եւ 33 յօդուածները, որոնք ներմուծուեցան Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան մէջ, ոչ միայն բացառապէս կերպով հակա-կանոնական էին, այլ նաեւ սկիզբէն գուրկ էին իրաւական որեւէ տարողութենէ եւ հեղինակութենէ: Եւ անոնց վրայ հիմնուած որեւէ արարք կը մնայ ապօրէն եւ ուստի գուրկ՝ որեւէ վաւերականութենէ:

Իր պարզագոյն ձեւին մէջ իրողութիւնը այն է թէ Կիլիկեան Աթոռը եւ Աթոռակալը կը փորձեն բռնագրաւումով (*usurpation*) ուրիշ Աթոռի պատկանող իրաւասութիւնները կամ ձեռնհասութիւնը գործածել: Եւ այդ ապօրինի միջոցով ալ թեմեր կորզել:

Մէկը կը փորձէ գողնալ Հայց. Եկեղեցիէն: Դժբախտաբար մեր եկեղեցիին պատկանող նուիրապետական այրոջներէն մէկն է ան: Բայց կատարուածը չի դադրիր ապօրէն ըլլալէ, չի կասիր յափշտակութիւն կոչուելէ: Ուստի պէտք է պայքարիլ եղածին դէմ նոյնքան անգիշող ու բռուն որքան եթէ արտաքին ոյժի կամ օտար անձերու կամ մարմիններու կողմէ կատարուած ըլլար կատարումը:

Եթէ եկեղեցիէն գողցողը ներսէն մէկը ըլլայ, ներսէն ըլլալու իրողու-

թիւնը կատարուած արարքին որպէս արդարացում չի կրնար ծառայել: Ընդհակառակը, ասելի մեծ կ'ըլլայ յանցագործին մեղքը, որովհետեւ շորթել կը փորձէ մեր եկեղեցիին նուիրականութիւնը, անոր հեղինակութիւնն ու խորհուրդը, կորզել կ'աշխատի մեր գոյութեան իմաստը, շահագործելով իրեն վստահուած դիրքն ու պաշտօնը: Եթէ կողոպուտը եղած ըլլայ ոսոխի մը, օտարի կողմէ, թերեւս ունենայ հասկնալի պատճառներ: Բայց անըմբռնելի եւ աններելի կը դառնայ երբ ներսէն կը փորձեն դատարկել մեր հոգեկան հարստութեան գանձատունը: Եւ մարդիկ՝ որոնք պահակ նշանակուած են նոյն գանձատան:

* * *

14. «ՀԱՅՐԵՆԻՔ»ԻՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԸ ԵՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՎԵՐԱԳՐՈՒՄԾ ԴԵՐԸ.

«Հայրենիք» Օրաթերթի 1977 Յունիս 30 -ի թիւին մէջ հրատարակուած է «խմբագրական» մը, «Նոր Անկիւնադարձի Մը Առջեւ» խորագիրին տակ, Աթոռակից-Կաթողիկոսի ընտրութեան եւ Օծումին առիթով: Գրութեան հեղինակը եւ անոր միջոցաւ յիշեալ պաշտօնաթերթը կ'ընդունին թէ եկեղեցական տագնապը մեծ վնաս պատճառած է սփիւռքին եւ ուրախութիւն կը յայտնեն Էջմիածին-Անթիլիաս նոր մերձեցումին համար, մատնանիշ ընելով «Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պաշտօնական մասնակցութիւնը Գարեգին Բ.ի ընտրութեան եւ օծման հանդիսութիւններուն», ու զայն կ'ողջունեն իբրեւ «շրջադարձ»:

Հաւանաբար Հայութիւնը իր ամբողջութեան մէջ համաձայն ըլլար հիմնական մտածումներուն, որոնք կը յայտնուին նոյն գրութեան մաս կազմող հետեւեալ հատուածին մէջ.

«Վերջին քսան տարիներու մեր կեանքը արուեստական բան մը ունէր, խորթ բան մը, պղտորիչ բան մը. ու հիմա, կարծես, բոլոր միտքերն ու սիրտերը կը ձգտին թօթափել այդ Օտարութիւնը եւ նոյն երդիքին տակ աչք աչքի ապրիլ: Ոչինչ պէտք է խանգարէ օրուան մթնոլորտը»:

Ու եթէ իրապէս ըմբռնէինք այդ պարզ ու խորիմաստ ճշմարտութիւնները եւ անոնց համաձայն վերահաստատէինք ամէն ինչ այնպէս որ մեր եկեղեցական, համայնքային ընդհանուր դրութիւնն ու վիճակը վերադառնային իրենց նախկին օրինաւորութեան, մենք լիովին համամիտ պիտի ըլլայինք այդ «խմբագրական»ի փոխաբերական իմաստով ըսուած հետեւեալ խօսքերուն.

«Ազգովին կ'ապրինք օրուան այն պահը, երբ մուրը կը ցրուի եւ լոյսի առաջին ցոլքերուն հետ անսովոր անդորրութիւն մը կ'իջնէ հոգիներուն մէջ»:

Մինչդեռ այստեղ արտայայտուած միտքերն ու ոգին, իրենց հարազատութեան մէջ առնուած, կ'երեւին հաստատել այն հետեւութիւնը, թէ Անթիլիաս, զայն հովանաւորողներուն համամտութեամբ, որոշած է վերջապէս կանոնաւորել ամէն ինչ: Գոնէ այդպէս կը թուին հաւատալ «Հայրենիք»ն ու գրութեան հեղինակը, որոնք համոզուած են թէ «վերջին քսան

տարիներու մեր կեանքը արուեստական բան մը ունէր, խորթ բան մը, պղտորիչ բան մը»: Ակնարկելով եկեղեցական անկանոնութիւններուն, անոնք կը շեշտեն թէ «բոլոր միտքերն ու սիրտերը կը ձգտին թօթափել այդ օտարութիւնը»: Բայց անմիջապէս ըսենք է յիշեալ արտագրութիւնները չեն կատարուիր Անթիլիասի թողած ընդհանուր տպաւորութեան վերաբերեալ տեսակէտը զօրացնելու համար պարզապէս: Այլ կը ջանանք ըսել թէ «խմբագրականին» շարունակութիւնը կամ վերջին մասը, որ տեսակ մը եզրակացութիւն ալ կարելի է համարել, բոլորովին տարբեր է սկիզբին պարունակած բովանդակութենէն: Բայց թոյլ տանք որ տողերը իրենք խօսին իրենց մասին.

«Գարեգին Կաթողիկոսի հիմնական ձգտումներէն մէկը պիտի ըլլայ, մեր կարծիքով, Անթիլիասը իր աշխարհագրական պատկանելիութենէն դուրս բերել եւ վերածել համասփիւռքեան ազգային-հոգեւոր կեդրոնի մը, որուն համազգային դերակատարութիւն է վերապահուած: Լիբանանեան արուարձան մը ըլլալով հանդերձ, ան կոչուած է Կիլիկեան բոլոր թեմերու եւ Սփիւռքեան բովանդակ հայութեան ազգային, մշակութային, հոգեկան ապրումներուն, նաեւ Հայ Դատի բարձր գիտակցութեան մէկ խորհրդանիշը դառնալու եւ Անթիլիաս-Էջմիածին յարաբերութիւններու վարչական ներդաշնակութիւնն ու գործակցութիւնը անվրէպ իր անդրադարձումը ունենալու կոչուած է այս տեսակէտով»:

Ոչ ոք կրնայ ենթադրել, եթէ չգիտնայ, թէ նոյն գրութեան տարբեր մասերն են ակնարկուած հատուածները: Աւելին: Վերջինը՝ բացայայտ հակասումն է նախկիններուն: Մէկ կողմէն՝ եկեղեցական-ազգային միասնականութեան ջատագովութիւն կ'ըլլայ, կը մատնանշուին պառակտումի անկանգնելի վնասները, խստիւ կը յորդորուի որ օրինաւորութիւն տիրէ մեր եկեղեցական-գաղութային կեանքին մէջ եւ ուստի վերահաստատուին բեկանուած կանոնները, վերացուին ապօրինութիւններուն հետեւանքները: Եւ այդ հասկացողութեամբ նոր զարթնում մը ունենանք իբրեւ ժողովուրդ: Միւս կողմէ, սակայն, կ'առաջարկուի որ Գարեգին Բ. Կաթողիկոսի հիմնական ձգտումներէն մէկը ըլլայ. «Անթիլիասը իր աշխարհագրական պատկանելիութենէն դուրս բերել եւ վերածել համասփիւռքեան ազգային, հոգեւոր կեդրոնի մը՝ որուն համազգային դերակատարութիւն է վերապահուած»: Այս կապակցութեամբ նկատելի կ'էտ մըն է թէ խօսքը Անթիլիասի Աթոռին վերաբերելով հանդերձ, Խորէն Ա. Կաթողիկոսը դարձեալ մոռցուած է, քանի որ խնդրոյ առարկայ ժամանակ ան չէր վախճանած տակաւին: Ըստ «խմբագրական»ի հեղինակներուն, Անթիլիաս «կոչուած

է կիլիկեան բոլոր թեմերու եւ Սփիւռքեան բովանդակ հայութեան ազգային, մշակութային, հոգեկան ապրումներուն, նաեւ Հայ Դատի բարձր գիտակցութեան մէկ խորհրդանիշը դառնալու»:

Այսինքն՝ Անթիլիաս ոչ միայն պիտի պահէ իր բռնագրաւած թեմերը, այլ նաեւ ամբողջ սփիւռքը պիտի առնէ իր հովանաւորութեան տակ ու պիտի վարէ «բովանդակ հայութեան ազգային, մշակութային» կեանքը: Որովհետեւ «ան կոչուած է անոր հոգեկան ապրումներուն, նաեւ Հայ Դատի բարձր գիտակցութեան մէկ խորհրդանիշը դառնալու»: Եւ այդ բոլորին յաջողութեան համար կը թելադրուի գործածել կամ շահագործել, ուր որ անկ է, «Անթիլիաս-Էջմիածին յարաբերութիւններու վարչական ներդաշնակութիւնն ու գործակցութիւնը»: Չորս, անշուշտ, Էջմիածինը եւ հայութիւնը կ'ենթադրուի թէ միամտաբար պիտի տրամադրեն:

Եւ այդ նոր եւ ընդարձակ պատկերին մէջ, արդեօք ո՞ր կը Եւ մնայ Էջմիածինը: Ո՞ր կը մնայ սփիւռքը որպէս ազգային ու մշակութային տուեալ: Ո՞ր կը մնայ հայ ժողովուրդը, որուն կեանքը վարելու, որուն ճակատագիրը տնօրինելու իրաւասութիւնը կը բաշխուի:

Ըսուածներէն շատ պարզ կը յայտնուի թէ կը ծրագրուի Անթիլիասը դարձնել ամբողջ արտասահմանի եկեղեցական իշխանութիւնը ընդդէմ Էջմիածինի, որ, ըստ երեւոյթին, պէտք է բաւականանայ Հայաստանի ժողովուրդով ու թեմերով: Աւելին: Կը յառաջադրուի համասփիւռքեան քաղաքական վերին իշխանութեան եւ ոյժի վերածել Կիլիկիոյ Աթոռը, մեկուսացնելով կամ անտեսելով արտասահմանի քաղաքական միւս գործօններն ու շարժումները: Եւ այդ կերպով սփիւռքը հակադրել Հայաստանի: Անթիլիասի հեղինակութիւնը հակադրել հայրենի պետութեան:

Եւ այս բոլորը, անշուշտ, պիտի կատարուին համերաշխութեան, հասկացողութեան, գործակցութեան անունով ու «փոխադարձ յարգանքի ոգիով»:

Ոմանք պիտի ըսեն թէ ցնորական թռիչքներ են «խմբագրական»ին մէջ պարփակուած յոյսերն ու ակնկալութիւնները: Կրնայ ըլլալ: Բայց չեն դադրիր գրուած ըլլալէ: Ու չեն դադրիր ոմանց միտքին մէջ ծրագիր եւ յառաջադրուած գործունէութիւն կազմել է: Եւ ոչ իբրեւ կատակ կամ փորձ: Այլ որպէս լուրջ ու դաւանուած գործ, իբրեւ անխուսափելի եւ անվրէպ առաքելութիւն:

Բայց պիտի հարցուի թէ ի՞նչ է Անթիլիասի պատասխանատւութիւնը նախ այդ գրութեան մէջ եւ յետոյ՝ առաջարկուած դերին մէջ:

Ծանօթ է թէ «Հայրենիք»ը պաշտօնաթերթն է Դաշնակցութեան: Գաղտնիք մը չէ նաեւ թէ Անթիլիասի կարելոր գործերը, եթէ ոչ ուղղակի,

գոնէ անուղղակի կերպով կը վարուին այդ կուսակցութեան կողմէ: Ու դժուար պիտի ըլլայ գտնել հայ մը որ անկեղծօրէն համոզուի թէ Անթիլիաս կրնայ որեւէ քայլ առնել, մանաւանդ նշանակութիւն ունեցող քայլ, առանց այդ կազմակերպութեան հաւանութեան կամ գիտակցութեան: Միամտութիւն պիտի ըլլայ խորհիլ թէ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծիրին մէջ ոեւէ եկեղեցականի կը յանձնուի պատասխանատու կամ կարելորդ պաշտօն առանց Դաշնակցութեան ցուցմունքին եւ հրահանգին: Անթիլիասը, ըստ երեւոյթին, ամբողջապէս ինկած է այդ կուսակցութեան ճիրաններուն մէջ: Ու երեխայական պիտի ըլլար մտածել թէ Կիլիկիոյ Կաթողիկոսը կամ կաթողիկոսներ կրնային պիւրոյի փափաքէն տարբեր կամ անոր պահանջած ուղղութեան հակառակ աշխատանքներ տանիլ կամ շարժիլ:

* * *

15. ԱՆԹԻԼԻԱՍ ԶՀԵՐՔԵՑ ԸՍՈՒՎԾՆԵՐԸ.

Ամեն պարագայի, իրողություն է թե Կիլիկիոյ Կաթողիկոսությունը չհերքեց իրեն վերագրուած ապագայ գործունեությունն ու առաքելությունը: Նուազագոյն ճիգը չըրաւ ինքզինք անջատելու իրեն վերագրուած աշխատանքներէն եւ յառաջադրանքներէն՝ նոյնիսկ պարզ լուսաբանութեամբ մը: Չհամարձակեցաւ առարկել, գոնէ երեւոյթները փրկած ըլլալու համար, թէ ինչու «Հայրենիք» կը ծրագրէր Անթիլիասի կատարելիքները, ինչու կը խօսէր անոր անունով: Եւ ասիկա ատեն մը, երբ Էջմիածինի հետ բանակցություններ կը վարէր համոզելու համար Ամենայն Հայոց Հայրապետը՝ Կիլիկիոյ Աթոռակալներուն բարի դիտաւորություններուն կապակցութեամբ ու մեր եկեղեցական-ազգային կանոնաւորությունը վերահաստատելու եւ սփիւռքին ներքին անդորրությունը ապահովելու մտահոգություններով: Մանաւանդ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի եւ անոր Գահակալին նուիրագործուած նախամեծար հանգամանքը ընդունելու առնչութեամբ: Սուրբ Էջմիածինի պատկանող նոր թեմեր չկողոպտելու տեսակէտով: Ապօրէն առնուածներն ալ ետ դարձնելու տրամադրութեան կապակցութեամբ: Մինչ նոյն Կաթողիկոսությունը, ինչպէս տեսանք, յանդիմանական դիրք բռնեց կամ նմանօրինակ շեշտով բառեր գործածեց, երբ Էջմիածին իր իրաւունքները եւ օրինաւորութիւն ականկալեց: Նման պահանջք մը Անթիլիաս նկատեց Կիլիկիոյ Աթոռին վրայ պայմաններու պարտադրանք՝ ու գրեթէ խզեց կատարուող բանակցությունները՝ այդ պատճառով: Այսինքն՝ այլամերժօրէն ծայրայեղ դիրք մը բռնեց Անթիլիաս երբ կարծեց թէ իր իրաւունքները կը սահմանափակուէին կամ կը կաշկանդուէին:

* * *

16. ԵՐԿՈՒՌԹԻՆԸ.

Բայց «Հայրենիք»ի այս խմբագրականին վրայ առանձնապես կանգ կ'առնենք նաեւ ուրիշ պատճառով մը: Ինչպէս ակնարկեցինք, անոր մէջ երկուութիւն մը կայ: Առաջին մասը բարի խօսքերով, խորունկ հասկացողութեան արտայայտութիւններով ու շռայլ խոստումներով է լեցուած՝ իբրեւ թէ թելադրուած հայ գաղութներուն եւ հայութեան գերագոյն շահերէն եւ անոնցմով առաջնորդուած: Այս մասը կ'երեւի վաճառաշահութեան ցուցափեղկն է, ապրանքը ցուցադրելու եւ յաճախորդ համոզելու ծրագրուած: Մինչ երկրորդ մասը՝ հարազատ դէմքն է: Բուն նպատակը:

«Խմբագրական»ին մէջ տեսնուած երկուութիւնը գոյութիւն ունի, ունեցած է նաեւ Անթիլիասի գործունէութեան մէջ: Եւ անոր համար նշանակալից է իբրեւ երեւոյթ: Կը բաւէ յիշատակել խնդրոյ առարկայ եղելութիւնները: Եւ անմիջապէս աւելցնենք թէ այնպէս է նաեւ Դաշնակցութիւնը: Թրեւս այդպէս եղած է իր գոյութեան սկիզբէն ի վեր:

Բնական է, պարզ պատահականութեան պէտք է վերագրել այն զարմանալի իրողութիւնը թէ Անթիլիաս, «Mensue» ամսագիրը, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ազգային Ընդհանուր Ժողով»ը եւ «Հայրենիքը», բոլորն ալ միաբերան նոյն խօսքերը կ'ըսեն, նոյն հարազատ իմաստով: Եւ առանց, անշուշտ, իրարմէ լուր ունենալու: Առանց իրարու հետ խորհրդակցած ըլլալու: Բայց տխուրը այն ճշմարտութիւնն է թէ անոնք, դուրս թողելով «Mensuel» հրատարակութիւնը, որ անմեղ գոհ մըն է հաւանաբար, կը ջանան ժողովուրդը համոզել թէ իրենք կը դաւանին Հայց. Եկեղեցիին անբաժանելիութիւնը, կը տենչան վերահաստատումը մեր եկեղեցական-համայնքային կեանքին մէջ օրինաւորութեան ու կանոնաւորութեան: Այսինքն, ըստ իրենց, խորքին մէջ կը բաղձան իրենց ըսածին ու գործածին ճիշդ հակառակը:

* * *

17. ԱՆԹԻԼԻԱՍԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ ԲՆՈՅԹԸ.

Ա. ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ 1957-ԷՆ Ի ՎԵՐ.

Եկեղեցիին էությունը կրօնական է եւ ան կը պատկանի բոլորին: Ուստի եկեղեցին հեռու պէտք է պահուի քաղաքականութենէ եւ ան մնայ վեր՝ հատուածներէ ու կողմերէ: Պէտք է ըլլայ ամբողջ ժողովուրդին հետ եւ անոր կողքին՝ առանց խտրութիւն դնելու եւ առանց խմբակցական հաշիւներու:

Այս ճշմարտութենէն անջատ՝ հայութեան կենսական շահերը կը պահանջեն որ, արտերկրի ներկայ իրադրութեան մէջ, եկեղեցիին գործունէութիւնը ըլլայ ազգային-հայրենասիրական ծիրին մէջ եւ միշտ ժողովուրդին միասնականութեան, օրինաւորութեան սահմաններէն ներս:

Բայց ի՞նչ է Կիլիկիոյ Աթոռին պարագան: Ի՞նչ է անոր բռնած դիրքը այդ առումով:

Իրադարձութիւնները կը հաստատեն թէ 1957-էն ի վեր Անթիլիաս կարծր եւ անհասկնալի կեցուածք մը որդեգրած է ընդհանուր առմամբ: Աւելին: Ինքզինք հակադրած է Էջմիածինի եւ հայութեան Էջմիածնասէր զանգուածին: Առանց նկատի ունենալու թէ կանոնական տեսակէտով խոցելի ու դատապարտելի կը դառնային իր գործը եւ ընթացքը:

Անհրաժեշտ չենք նկատեր հաւաքել տրամադրելի կամ հնարաւոր բոլոր իրողութիւնները, որոնց շարքը կրնայ շատ երկարիլ: Արդէն ականարկուած տուեալներուն վրայ եթէ աւելնան «Կիլիկիոյ Աթոռը եւ Դաշնակցութիւնը» թիւ 21 գլուխին տակ եղող եւ յետագայ հատուածներուն մէջ խոստովանող համապատասխան եղելութիւնները, անոնք անջատօրէն թէ հաւաքարար բաւարար են հարազատօրէն պատկերացնելու Անթիլիասի եւ անոր Աթոռակալներուն մտայնութիւնը, ընդհանուր վերաբերումը, աշխատելու եղանակը, եւ այդ բոլորէն ցայտող բուն դիտաւորութիւնները: Այնու հանդերձ յիշատակենք քանի մը յաւելուածական պարագաներ, որոնք առանձին առանձին թերեւս վնասական կշիռ չեն ներկայացներ, բայց միասնաբար կը շարադրեն լուրջ դատապարտութիւն մը:

Բ. ԵՌԱԳՈՅՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ ԱՌՋԵՒ.

Անթիլիասի մայր տաճարին կից, Ապրիլ 24-ի նահատակաց Յուշարձանին առջեւ եռագոյն դրօշակ պարգուած է: Անտեսելով այն իրողութիւնը

թէ եռագոյնը, պարագաներու բերումով կամ այլապէս, Դաշնակցութեան եւ անոր վարքագիծին տեսակ մը խորհրդանիշը կը նկատուի: Մոռացութեան տալ փորձելով ներկայ Հայաստանի խրախուսիչ ու ներշնչող իրականութիւնը:

Գ. ԱՆԹԻԼԻԱՍ ՈՒ ՄԱՅԻՍ 28.

«Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» եւ Տ. Տ. Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսը, Մայիս 28-ով խորհրդանշուած հանրապետութեան եւ անով ծանօթ դրութեան 60-ամեակը պատրուակելով, ու ողջունելով զայն, 22 Մայիս 1978 թուական ու Վ/ԿԲ համար կրող մասնաւոր կոնդակով մը կը հրահանգեն «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ բոլոր թեմերուն, որ յատուկ կարգադրութեամբ, արժանաւայել շուքով, ամէն տարի, Մայիս 28-ին, մեր եկեղեցիներուն մէջ՝

ա) յատուկ աղօթք ու մաղթանք կատարեն Հայ ժողովուրդի ազատութեան եւ անկախութեան համար,

բ) մասնաւոր հոգեհանգստեան աղօթք կատարեն Հայաստանի Անկախութեան սիրոյն իրենց կեանքը զոհած հայ նահատակ հերոսներուն համար.....»³⁶:

Նիւթին էութեան անդրադառնալէ առաջ, կ'ուզենք ուշադրութեան առարկայ դարձնել «Կաթողիկոս Ամենայն Հայոց» արտայայտութիւնը: Այդ կապակցութեամբ տրուելիք բացատրութիւնը այն է, անշուշտ, թէ ըսուածը «Ամենայն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ» Կաթողիկոսութեան համար է: Այսինքն՝ «Ամենայն Հայոց» բացատրութիւնը բացարձակ չէ ու կը սահմանափակուի «Մեծի Տանն Կիլիկիոյ» ճշդումով: Խօսքը կը վերաբերի, պիտի բացատրուի, «Մեծի Տանն Կիլիկիոյ» «Ամենայն Հայոց» եւ, հետեւաբար, ըսուածը ճիշդ է: Բայց Անթիլիաս ունի մէկ եկեղեցական գլուխ, մէկ կաթողիկոս-հեղինակութիւն, նոյնիսկ Աթոռակից-Կաթողիկոսի պարագային, եւ ոչ մէկ շփոթութիւն կրնայ ծագիլ այդ տեսակետով եթէ իրապէս այդ եղած ըլլայ մտահոգութիւնը: Իսկ եթէ ընդունուի առաջարկուած «Ամենայն»ի մտայնութիւնը կամ դրութիւնը, այն ատեն կարելի պիտի ըլլայ ըսել, նոյն տուեալներով ու տրամաբանութեամբ, թէ հնարաւոր կը դառնայ յատկանշել կրօնապետ «ամենայն հայոց» Հիւսիսային Ամերիկայի, Ափրիկէի, Փրանսայի, Յունաստանի, Կիպրոսի եւ նոյնիսկ «ամենայն հայոց» Միլանոյի: Եւ ուստի նշմարելի է այն անլրջութիւնը որ «Ամե-

³⁶ «ՀԱՄԿ», Ապրիլ-Մայիս-Յունիս 1978, էջ 158:

նայն «Հայոց»ի թեթեւամիտ ու կամայական գործածութիւնը կը բացայայտէ մեր եկեղեցական միասնական ըմբռնումին առնչութեամբ: Բայց կայ նաեւ աւելին: «Ամենայն Հայոց» հեղինակութիւն դառնալ ուզելու տենչը պատահական եւ անցողակի երեւոյթ մը չի թուիր ըլլալ: Այլ, ընդհակառակը, ան կը բնորոշէ հոգեբանութիւն մը որ հաւատարմօրէն հետեւողական է յառաջադրուած ամբողջական գործունէութեան, ինչպէս կ'երեւին յայտնաբերել խնդրոյ առարկայ շրջանակներուն արդէն ակնարկուած եւ ասկէ յետոյ յիշատակուած աշխատանքները եւ անոնց ընդհանուր կեցուածքը:

Մէկ է, սակայն, Հայ Եկեղեցին: Եւ մէկ է «Ամենայն Հայոց» Կաթողիկոսը: Պատմական նուիրապետականութեամբ սրբագործուած անձեռնմխելի է այդ հանգամանքը ու կը պատկանի Էջմիածինի Հայրապետին միայն: Եւ անհասկնալի է, որ մարդիկ, որեւէ պատրուակով, փորձեն, կամ նոյնիսկ մտածեն, ազգային ըմբռնողութիւն եւ աւանդ դարձած այդ տիտղոսը գործածել ուրիշ ոեւէ եկեղեցականի մը կամ որեւէ հոգեւոր իշխանութեան մը առնչուած: Նման վերաբերում մը կրնայ նկատուիլ ոչ միայն պարզապէս թեթեւաբարոյ, այլ նաեւ հայութեան եւ անոր եկեղեցական աւանդական կառոյցին հանդէպ յարգանքի պակաս: Կրնայ համարուիլ սրբապղծութեան մերձեցող արարք: Նոյնիսկ:

Վերադառնալով կոնդակի ընդհանուր բովանդակութեան, պէտք է անմիջապէս նկատել թէ, բնականոն պայմաններու տակ, կղերականներ այդպիսի քաղաքական կամ առնուազն խնդրայարոյց հարցեր պիտի չարձարծէին եկեղեցական պաշտօնավարութեան ծիրէն ներս, այլ զանոնք թողէին պատմութեան արդար դատումին ու դատաստանին: Մանաւանդ որ, յուշերու շարանի մը շարունակութեան վրայ, դեռ կը նշմարուի նոյն Կաթողիկոսներուն հոգեւոր մէկ եղբօր, անբասիր եւ հեղինակաւոր կրօնապետի մը խողխողումը հայ եկեղեցիին խորանին վրայ, Մայիս 28-ով ներկայացուող մտայնութեան ու տարրերու աղերսուած:

Բայց ստուգենք թէ եղածը՝ անցեալի իրադարձութեան մը միամիտ եւ անմեղ յիշատակութիւնը կամ կոչո՞ւմն է, հայրենասիրական մաքուր բաղձանքներէ թելադրուած: Թէ՛ւ այդ կապակցութեամբ հարկ է դիտել տալ թէ, եթէ նոյնիսկ պահ մը ընդունինք թէ Մայիս 28-ը, ինչպէս եռագոյն դրօշակը, պատմական երեւոյթ մըն է եւ թէ այդ իմաստով նշուելու արժանի է, մեր դէմ կը ցցուի անձերբազատելի եւ անհանդարտ նոյն հարցումը: Ի՞նչպէս հնարաւոր է թոյլ տալ որ մասնաւոր անցեալ մը ներկայացնող թուական մը, կամ զայն խորհրդանշող դրօշ մը - որ ազգային թանգարանին մէջ կրնայ ունենալ իրեն արժանի տեղը - փառաբանուի եւ, նոյն ատեն, անխռով անտեսուին ու մոռցուին կենդանի ներկան, շնչող ու

բաբախող իրականությունը եւ գայն հովանաւորող դրօշը:

Պարզ է թէ երկու Կաթողիկոսները կ'արժարծեն խնդիր մը՝ որ հայ իրականութեան մէջ տիրող վէճերուն ու տարակարծութիւններուն հիմը կամ գլխաւոր պատճառն է: Աւելին: Բացայայտ եւ անհասկնալի խրոխտութեամբ կողմ կը բռնեն այդ տեսակէտով: Եւ իրենց ընթացքով նոր վիճակ մը կը ստեղծեն, նոր բարդութիւն մըն ալ աւելցնելով տիրող անբաղձալի կացութեան վրայ: Բոլորովին մոռնալով եկեղեցական-կրօնական բնոյթն ու հանգամանքը իրենց տրուած բարձր պաշտօնին, իրենք իրենց թոյլ կու տան որ նետուին իրենց իրաւասութեան ծիրէն դուրս գտնուող ոլորտներու եւ նախաձեռնութիւններու մէջ: Անոնք անխմանալի հպարտութեամբ ու բացարձակ իշխանութեան շեշտով կ'ուզեն պարտադրել ազգային ըմբռնումով անընդունելի եղելութիւն մը: Կը փորձեն պատմական վճիռ արձակել թիւրիմացութիւններով, շփոթութիւններով ու պայքարներով մշուշուած խորապէս քաղաքական եւ առնուազն վիճելի իրադարձութիւն մը, որ մեր ժողովուրդին ներկայ ժամանակներու բաժանումին միակ պատասխանատուն է:

Որքան կոնդակին ներածական խօսքերը, նոյնքան ալ նիւթին էութեան անդրադարձող եւ ապագային վերաբերող անոր արտայայտութիւնները կը յատկանշեն մասնաւոր տեսակէտ, յատուկ հաւատամբ ու ծրագրուած մտադրութիւն կամ աշխատանքի ուղի: Ջանանք տալ քանի մը նմոյշներ կամ վկայութիւններ այդ իմաստով:

Կաթողիկոսները, գովաբանելէ յետոյ հանրապետութեան կեանքին երկու տարիները, կ'աւելցնեն.

«Հագիւ երկու տարի ապրած Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, դէպքերու աննախատեսելի եւ աննպաստ դասաւորումի հետեւանքով, ինկաւ: Բայց Անկախութիւնը մնաց կենդանի՝ Ազատութեան եւ Անկախութեան համար արիւն թափած Հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ»³⁷:

Թերեւս նախ պէտք է ուշադրութիւն հրաւիրել այն իրողութեան վրայ թէ մակերեսային ու բոլորովին անտեղեակ կ'երեւի ըլլալ յայտնուած այն կարծիքը, որ տեղի ունեցած դէպքերը «աննախատեսելի» կը համարէ: Պատմութեան ուսանողը ոչ միայն գիտէ թէ անխուսափելի էր նման պատահար մը, այլ նաեւ կը զարմանայ թէ ինչո՞ւ այդքան ուշացաւ ան:

Բայց այդ բոլորէն անջատ, վերելի հատուածով կը յայտնուին երկու ուշագրաւ պարագաներ:

³⁷ «ՀԱՄԿ», Ապրիլ-Մայիս-Յունիս 1978, էջ 157:

Առաջինը այն է թե Կաթողիկոսները կը դաւանին թե «Անկախ Հանրապետութիւնը» «ինկաւ»: Մինչդեռ պատմական եղելութիւնները մեզի ուսուցանած են թե օրուան կառավարութիւնը երկիրը յանձնած է խորհրդային իշխանութեան՝ հասկացողութեամբ ու խաղաղ փոխանցումով:

Իսկ երկրորդը այն է, միշտ ըստ կոնդակի հեղինակներուն, թե այդ իսկ վայրկեանէն «անկախութիւն»ը անյայտացաւ կամ աւելի ճիշդ՝ մեռաւ այս կեանքին, մեր երկրին մէջ: Որովհետեւ անոնք հակադրելով ստեղծուած կացութիւնը՝ բաղձանքին, կը հաստատեն.

«Բայց Անկախութիւնը մնաց կենդանի՝ Ազատութեան եւ Անկախութեան համար արիւն թափած Հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ»:

Ուրեմն անկախութիւնը կենդանի մնացած է ոչ թե մեր իրականութեան մէջ, այլ միայն «Հայ ժողովուրդի գիտակցութեան մէջ»:

Իսկ գուշակելով ապագան, անոնք վստահ ապահովութեամբ կը խօսին վերջնական ելքի մասին, տեսակ մը յայտարարելով թե ներկայ մեր հայրենիքը չի կրնար ընդունելի կամ մշտական բնոյթ մը ունենալ իր էութեամբ: Ահա գործածուած բառերը.

«Եւ մենք կը հաւատանք որ ոչ մէկ ուժ, ոչ մէկ գաղափարաբանութիւն, ոչ մէկ վարչակարգ որ օտար է Հայ ժողովուրդի հարազատ ոգիին եւ պատմութեան՝ կրնայ ընկճել անոր մէջ ազատութեան կամքը, տենչն ու երազը»³⁸:

Եւ որպէսզի տարբեր մեկնաբանութիւններու եւ սխալ հասկացողութիւններու առիթ չտրուի, նոյն կոնդակը շարադրողները կը հաստատեն.

«Հայաստանի Անկախութեան ստեղծման այդ երջանկաբեր թուականէն ահա վաթսուն տարիներ ետք եւ ամենուրեք Մենք այդ կամքը զօրացած կը տեսնենք»³⁹:

Այդ երկու Վեհափառներու կարծիքին համաձայն՝ «ազատութեան եւ անկախութեան» ցնորքը որոնող բաղձանքները զօրացած են հայ ժողովուրդին մէջ «եւ ամենուրեք»: Ու վերջին այս արտայայտութիւնը կ'ամրացնէ նախապէս յայտնուած մեկնութիւնը թե Խորհրդային Հայաստանին ուղղուած են սպառնալիքի շեշտ հազած տողերը, եւ անոնց պարունակած՝ հայ ժողովուրդի «կամք»ին նկատմամբ հաւատքի վերագրուած վստահութիւնը:

Որպէսզի ընթերցողը, կամ ունկնդիրը, ոչ մէկ կասկած ունենայ

³⁸ «ՀԱՄԸ», Ապրիլ-Մայիս-Յունիս 1978, էջ 157–158:

³⁹ Նոյնը, էջ 158:

Կաթողիկոսներուն բուն դիտաւորութեան առնչութեամբ, անոնք շատ յստակ կերպով ու մասնաւոր ջանադիր ուշադրութեամբ կը շեշտեն իրենց արարքին նպատակը.

«Հայոց պատմութեան արդի ժամանակներու ամենէն վճռական այս անկիւնադարձի պանծացման այս գեղեցիկ առիթով, հայրական սիրով կը յորդորենք մեր ժողովուրդի զաւակները որ իրենց աննահանջ նուիրումով եւ արթուն, մեղուաջան եւ ստեղծագործական աշխատանքով Հայ ժողովուրդի ազատութեան եւ անկախութեան ձգտումին առաւել թափ տան եւ այս վաթսուամեակի բարեբաստիկ տօնակատարութիւնը վերածեն յառաջդիմութեան նոր աղբիւրի մը»⁴⁰:

Այսինքն՝ խորհուրդ կու տան որ հայ ժողովուրդը ջանայ ունենալ այն, գոր չունի: Ժողովուրդ մը, ինչպէս անհատ մը, չի կրնար ձգտիլ իր ունեցած ու վայելած մէկ բարիքին: Կրնայ պահպանել իր ունեցածը: Բայց կը ձգտի իր չունեցածին: Այլ բացատրութեամբ՝ յիշեալ եկեղեցականները միասնաբար կոչ կ'ընեն հայութեան որ «աննահանջ նուիրումով եւ արթուն» աշխատի «ազատ եւ անկախ» դառնալ: Խօսքը, անշուշտ, չի կրնար վերաբերիլ սփիւռքին, քանի որ արտասահմանը չունի անջատ ինքնութիւն եւ ինքնուրոյն պետական կամ այլ գոյացութիւն: Անկէ գատ՝ արդէն սփիւռքը այնքան տարտղնուած է, այնքան տարբեր իշխանութիւններու մէջ ցրուած ու կորսուած է որ անհեթեթ պիտի ըլլար մտածել զայն «ազատ եւ անկախ» դարձնելու մասին: Տարակոյս չկայ թէ կոչը ուղղուած պէտք է համարել ներկայ հայրենիքին եւ այնտեղ ապրող ժողովուրդին կեանքի տեսակին կամ ձեւին նկատմամբ: Ըսուածին իմաստը, ուրեմն, պէտք է հասկնալ եզրակացնելով թէ մեր «ձգտումը» հարկ է ըլլայ զանոնք առաջնորդել «ազատութեան եւ անկախութեան»: Կոնդակին տէրերը կ'ուզեն որ ոչ մէկ տարակոյս կամ շփոթութիւն յամենայ տրուած ցուցմունքներուն տեսակէտով: Ուստի շեշտակի, եւ առանց որեւէ վերապահութիւն արտօնելու իրենց բառերուն կը յայտարարեն.

«Համահայկական տարողութեամբ եւ ներդաշնակ ու միացեալ ջանքերով պէտք է լծուիլ Հայ ժողովուրդի ազատ եւ անկախ ապրելու իրաւունքի տիրացման նուիրական գործին»⁴¹:

Ինչպէս կը տեսնուի, թելադրուածը իրաւունք մըն է, որուն «տիրացման նուիրական գործին» պէտք է լծուինք: Հետեւաբար, թելադրողները կը

⁴⁰ Նոյնը, էջ 158:

⁴¹ Նոյնը, էջ 158:

մեկնին այն նախադրեալէն կամ համոզումէն թէ ներկայիս չունինք այդ «իրաւունք»ը: Եւ այդ իմաստով՝ եղածը խորքին մէջ գրգռութիւն մըն է որ ժողովուրդը մտածէ ու շարժի մատնանշուած ուղղութեամբ:

Եւ նոյն Եկեղեցականները կ'ըսեն թէ կ'անդրադառնան պատմական յիշեալ իրադարձութեան եւ անով ծանօթ գաղափարին «սիրոյն իրենց կեանքը զոհած հայ նահատակ հերոսներուն»,

«որպէսզի անոնց անսպառ եւ անսակարկ նուիրումի ոգին ներթափանցէ հայ նոր սերունդներուն մէջ եւ դառնայ նոր իրագործումներու աղբիւր.....»⁴²:

Պարզ բառերով, խնդրոյ առարկայ երկու Կաթողիկոսները կը պատգամեն որ «ազատութեան եւ անկախութեան» պատրանքը դառնայ «հայ նոր սերունդներուն» քաղաքական դաւանանքը կամ ուղեգիծը, եւ այդ ըմբռնումը, այդ նպատակակէտը «դառնայ նոր իրագործումներու աղբիւր»: Այսինքն՝ այդ տեսակ խորհուրդներու, նման իրականութեան մը վրայ հիմնուած ըլլայ հայութեան ապագան, դէպի հոն ընթանայ մեր գալիքը:

Այսպիսի թախծոտ եւ անմխիթար մտորումներու մէջ սուզուած՝ մարդ իրապէս հարց կուտայ թէ ամէնէն մոլեռանդ եւ ամէնէն անուղղայ դաշնակցականը պիտի կարենա՞ր արդեօք աւելի բացայայտ դարձնել իր դիտաւորութիւնը: Պիտի կարենա՞ր աւելի գայթակղալից ու գրգռիչ խօսքեր արտաբերել եւ աւելի ժամանակավրէպ տեսութիւններ հոլովել: Պիտի յանդգնէ՞ր վերել ուզուածէն աւելին պահանջել հայ ժողովուրդէն ի նպաստ, ի շահ եւ ի փառաբանութիւն իր գաղափարաբանութեան:

Ու դեռ կ'արժէ նաեւ այս առիթով մտաբերել թէ Անթիլիասի Կաթողիկոսները նման գործունէութիւն մը կ'ունենան ատեն մը, երբ անոնք բանակցութիւններ կը վարեն իբրեւ թէ հայ եկեղեցիին ներքին կանոնաւորութեան ու խաղաղութեան համար եւ ի խնդիր հայ ժողովուրդի միասնականութեան ու բարիքին:

Գ. ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԷԶՄԻԱԾՆԻ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ.

Անթիլիասի եւ անոր Աթոռակալներու ընդհանուր վերաբերումը եւ կեցուածքը հանդէպ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի շատ հեռու են նուիրապետական Աթոռի մը պատշաճ ընթացքէն՝ եկեղեցիի գլխաւորին կամ եկեղրոնին նկատմամբ: Չունին կրօնական հաստատութեան մը բռնած դիրքը՝ հանդէպ իր եկեղեցիին գլուխին: Այլ անոնց վարուելակերպը աւելի

⁴² Նոյնը, էջ 159:

կը նմանի անբարեացական, անհանդուրժող, հատուածական եւ ինքզինք ամէն գինով պարտադրել ուզող կուսակցական ծայրայեղ գիծի:

Ուշագրաւ է թէ Անթիլիասի միաբանութեան անդամները, Կաթողիկոսէն սկսեալ մինչեւ ամէնէն խոնարհը, հազուադէպ բացառութիւններով, Էջմիածնի եւ Հայաստանի նկատմամբ կ'արտայայտուին կամ դիրք կ'որդեգրեն գրեթէ նման դաշնակցական ուղղութեան եւ ըմբռնումին: Նախ կը խուսափին Էջմիածին եւ հայրենիք յիշատակելէ իրենց քարոզներուն մէջ կամ այլապէս: Իսկ սակաւ պարագաներուն երբ կը հարկադրուին խօսիլ, իրենց ըսածները լեցուած կ'ըլլան վերապահութիւններով, տարակուսանքներով ու երկդիմութեամբ, ճիշդ նման յիշեալ կուսակցութեան արտայայտութիւններուն եւ քարոզչութեան:

Դ. ԲՈՒՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ.

Կարգ մը մարդիկ եւ ոյժեր, հայութեան խորթ եւ անոր չվերաբերող պատճառներով, ուզեցին Անթիլիասը քաղաքական գործիք դարձնել, ուզեցին զայն զոհել կուսակցութեան մը շահադիտութեան: Եկեղեցին բերուեցաւ տեղ մը, ուր քաղաքական կազմակերպութիւն մը պարտադրեց իր կամքն ու տեսութիւնները՝ սրբազան խորհուրդներու եւ Անթիլիասի առաքելութեան նկատմամբ: Եւ անոր հետեւանքը եղաւ աղիտալի բաժանումը: Կիիկիոյ Աթոռը վերածուեցաւ քաղաքական արկածախնդրութիւններու եւ պայքարներու թատերաբեմ, ու ծանր խոցուեցաւ եկեղեցին, վնասուեցաւ հայ ժողովուրդը: Ցնցուեցաւ, պառակտուեցաւ սփիւռքը:

Այնպէս կը թուի թէ Անթիլիասի տազնաալի ստեղծումին եւ այդ տազնաալին անլոյծ մնալուն բուն պատասխանատուները, ինչպէս նաեւ անոնց գործակալներն ու գործակատարները, մարդիկ են որոնց հաւատարմութիւններն ու հաւատքը քաղաքական են, սքօղուած կրօնաշունչ խօսքերու եւ դիւանագիտական խօսակերու մէջ: Մարդիկ՝ որոնք անհաղորդ են հայ կեանքին, հայ ժողովուրդի մտահոգութիւններուն ու ոգորումներուն, անտարբեր են հայութեան տառապանքին ու խոհերուն, ականկալութիւններուն ու տեսիլքին:

Ե. ԻՆՉ ԿԸ ՄՏԱԴԻՒԷ ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԸ.

Ինչպէս կը պարզուի, ապօրինի եւ այլ արարքներով, ու ծրագրուածը կիրարկելու եւ ընդարձակելու համար որդեգրուած բուռն ու բիրտ միջոցներով, Անթիլիաս կը մտադրէ, իբրեւ անմիջական եւ անդրագոյն նպատակ, իրագործել այն դիտաւորութիւնները որոնք նշուեցան ասկէ առաջ: Իսկ որպէս անուղղակի եւ առնչուած ծրագիր, կը ջանայ նսեմացնել Սուրբ

Էջմիածինը եւ անջատել հայութեան տարահալած զանգուածները Մայր Աթոռէն: Հոգիով անջատուած պահել հայրենիքէն եւ այդպիսով հեռացնել զանոնք իրենց գոյութեան ակունքէն, անոնց արմատները՝ հայրենական հողէն: Ամէն պարագայի, այդ արդիւնքին կը հասցնեն Անթիլիասի թափած ճիգերը: Եւ ակնարկուած ընդհանուր նպատակակէտը եւ աշխատանքի բնոյթը՝ դաշնակցական գաղափարախօսութեան, անոր սկզբունքային հետապնդումներուն նման են: Չըսելու համար թէ Դաշնակցութեան ու Կիլիկիոյ Աթոռին խնդրոյ առարկայ յառաջադրանքները նոյնն են:

Այս առնչութեամբ պէտք է նկատի ունենալ նաեւ ներկայ գլուխին՝ «Անթիլիաս եւ Մայիս 28» խորագիրով մասը, եւ մտաբերել «Անկե՛ղծ է Անթիլիաս իր Յայտարարութիւններուն ու Կեցուածքին Մէջ» թիւ 11 Գլուխին մէջ յիշատակուած համապատասխան՝ հատուածները:

* * *

18. ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒՆ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ ԱՆՈՆՑ ՀՈԳԻՒՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ ՉԵՆ.

ՌԱԿ-ը ինչպես նաեւ անոր համակիր եւ համախոհ կազմակերպությունները, եկեղեցասէր շարժումներ եւ անձնաւորություններ, բոլորն ալ ժամանակ առ ժամանակ առաջարկեցին ու ջանացին ապաքաղաքականացնել Անթիլիասը որպէսզի ան լծուէր իր բուն նուիրապետական առաքելութեան: Բայց եղած ջանքերը ամուլ մնացին: Եւ անյաջողութեան պատճառները կարելի է դիւրաւ գուշակել:

Անթիլիասի տազնապահ կապակցութեամբ բուն պատասխանատուները եւ այդ առիթով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ յայտնաբերուած սկզբունքային տեսակետներն ու ոգին անհարազատ են Հայց. Եկեղեցիին: Չեն բխիր մեր դարաւոր, նուիրապետական դրութենէն կամ հասկացողութենէն ու խորթ են հայութեան:

Անթիլիաս 1956-էն ի վեր դադրած է ժողովուրդին ծառայել: Այլ ան կը ծառայեցնէ ժողովուրդը անձնական կամ հատուածական ու մենատիրական շահերու: Այլեւս անհաղորդ է մեր եկեղեցիի հարազատ նուիրապետական ոգիին, սրբություններուն եւ առաքելութեան: Եւ այդ իմաստով՝ 1956-ին սկսած տազնապով խորհրդանշուող Կիլիկիոյ Աթոռը դուրս կը մնայ մեր եկեղեցական-ազգային պատմական շարունակութենէն, դուրս կը մնայ մեր հաւատքի էութենէն:

Մեր պատմութեան մթին օրերուն, միայն օտարները, մեր ժողովուրդին ոսոխները Հայց. Եկեղեցին բաժնելու եւ պառակտելու այդպիսի արարքներ գործեր են: Կաշառքով, դաւադրութեամբ, խոստումներով եւ այլազան միջոցներով կամ ուղղակի բռնի, ներսէն քայքայեր են հայ եկեղեցին: Յազկերտէն, Բիւզանդիոնի կայսրերէն սկսեալ մինչեւ թուրք սուլթաններն ու ցարերը: Իսկ վերջին շրջաններուն ալ անյայտ ոյժեր կը ջանան նոյնը կատարել՝ իրենց շահերուն, իրենց նպատակներուն համար:

Անցեալին՝ հայ հոգեւորականը գտնուած է ազգային մարտի առաջին գիծին վրայ: Եւ յաճախ պատուով ու նուիրումով եւ մերթ հերոսաբար կատարած է իր առաքելությունը: Բայց երբեք չէ եղած հայ ժողովուրդին դէմ, ընդդէմ հայ եկեղեցիին:

Յաւալի է, որ Երանաշնորհ Գարեգին Ա. Կաթողիկոսի օրով մշակութային կեդրոնի, ներշնչումի աղբիւրի վերածուած Կիլիկիոյ Կաթողիկոսու-

թիւնը, անդամնալի մխրճուեցաւ տարբեր գործունէութեան մէջ եւ իր հեղինակութիւնը կորսնցուց հայութեան աչքին: Կորսնցուց նաեւ իր բարերար օգտակարութիւնը:

Կիլիկեան Երջանկայիշատակ Կաթողիկոսներուն յաջորդները, դառնալով հանդերձ նոյն գահին գահակալները, չկրցան ունենալ ու բաշխել շնորհներն ու օրհնութիւնը նախորդ մեր հայրապետներուն: Ժողովրդասէր հոգեւոր մեր առաջնորդներուն: Անանձնական ու նուիրեալ: Չկրցան անոնց հոգիին ժառանգորդները հանդիսանալ:

* * *

19. ԼՈՒԾԵԼԻՐ Ե ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌԻՆ ՏԱԳՆԱԳԸ.

Ա. ԷԶՄԻԱԾԻՆԸ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄ Է

Տազնապին լուծելիության մասին եղած հարցումին պատասխանը անմիջական է ու դրական:

Տազնապը լուծել, անշուշտ, կը նշանակէ հասկացողութեամբ վերահաստատել այն վիճակը՝ որ գոյութիւն ունէր 1957-էն առաջ մեր եկեղեցական-համայնքային իրադրութեան մէջ:

Պարզ է թէ Էջմիածինը ոչ միայն կ'ընդունի նման կարգադրութիւն մը, ու տրամադիր է դիւրացնելու զայն, այլ նաեւ երջանիկ պիտի զգայ անոր համար: Բայց ի՞նչ է Անթիլիասի մերձեցումը:

Բ. ԱՆԹԻԼԻԱՍԻ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ.

Եկեղեցական տազնապի սկզբնաւորութենէն ի վեր Կիլիկիոյ Աթոռը, հակառակ անոր կողմէ յայտնուած բարի տրամադրութիւններուն, միասնականութեան բաղձանքներուն, եղած յայտարարութիւններուն եւ անոր կատարած խոստումներուն, բացի 32-րդ եւ 33-րդ յօդուածներու վերացումէն, որուն անշատ անդրադարձանք, ոչ մէկ գետնի վրայ, ոչ մէկ կէտի առնչութեամբ տեղի տուած է եւ ոչ մէկ զիջում ըրած է ընդհանուր իր կեցուածքին մէջ: Ոչ մէկ իրական քայլ առած է մօտենալու Էջմիածինին, ոչ մէկ դրական ակներեւ ճիգ թափած է կուտակուած տարակարծութիւնները բառնալու եւ պառակտումով բացուած խրամատը փոքրացնելու դիտաւորութեամբ:

Այդ ուղղութեամբ բոլոր կարելոր աշխատանքները, համբերատար նախաձեռնութիւնները կատարուած են Ամենայն Հայոց Հայրապետին կողմէ, ի շահ Հայաստանեայց Եկեղեցիին եւ հայ ժողովուրդին: Բոլոր զիջումները եղած են Մայր Աթոռին կողմէ: Եղած են՝ տեսակ մը հայութեան կողմէ:

Եթէ Անթիլիաս իրապէս կը կամենայ յարգել Հայց. Եկեղեցիին սրբագործուած նուիրապետականութիւնը եւ ընդունիլ անկէ բխող Ս. Էջմիածինի հոգեւոր վերին հեղինակութիւնը, եթէ կ'ուզէ ճանչնալ եկեղեցիի միութեան եւ անբաժանելիութեան սկզբունքը, շատ պարզ է անոր ընելիքը: Թող յայտարարէ իր այդ կեցուածքը եւ բժախնդրօրէն գործադրէ զայն իր գործունէութեան ծիրին մէջ: Թող Էջմիածինին վերադարձնէ իր բռնա-

գրաւած թեմերը եւ յետ այսու ալ չփորձէ նման արարք կատարել: Այնքան դիւրին է լուծումը հարցին:

Բայց Կիլիկեան Աթոռը նման պատրաստակամութիւն եւ ընթացք չէ ցուցաբերած մինչեւ հիմա: Իսկ մեզի ներկայացուած տուեալները, անհամաձայնութեան ծանօթ եզրերը եւ անցեալի փորձառութիւնը շատ յուսադրական կարելիութիւններ չեն նախատեսեր: Ընդհակառակը, ստեղծուած է կացութիւն մը, ուր Կիլիկեան Աթոռը տրամադիր չի թուիր ընդունելու խնդրոյ առարկայ սկզբունքներն ու փոփոխութիւնները: Չանոնք կը նկատէ տեսակ մը նախապայմաններ, զորս միւս կողմը կը փորձէ պարտադրել բանակցութիւններէն առաջ: Անթիլիաս կ'ուզէ որ ոչինչ կանխաւ համաձայնուի սկզբունքային գետնի վրայ կամ այլապէս, եւ ամէն ինչ դառնայ նիւթ բանակցութեան, ու թերեւս նաեւ սակարկութեան, ինչպէս ակնարկուեցաւ ասկէ առաջ: Մինչ Էջմիածինը ամուլ եւ անիմաստ ջանք կը համարէ ըլլալիքը եթէ կանխաւ չընդունուին այն նախապայմանները, որոնք կ'ապահովեն եկեղեցիին նուիրապետական դրութիւնը եւ անոր անբաժանելիութիւնը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին Հայրապետութեան եւ Օրինութեան ներքեւ:

Գ. ԱՆՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԷՈՒԹԻՒՆԸ.

Ի՞նչ է, սակայն, տարակարծութեան իսկութիւնը:

Բացայայտ է թէ աստուածաբանական, աւետարանական, դաւանական, ծիսական կամ նման տարակարծութիւններ չեն կազմեր եկեղեցական երկփեղկումին հիմը: Հետեւաբար ուրիշ գետնի վրայ պէտք է փնտռել անհասկացողութեան բուն պատճառը:

Կը տարուի յամառ աշխատանք մը՝ որ տեղ տեղ դիտելիմ պայքարի շեշտ կը ստանայ, իբրեւ թէ մեր եկեղեցական իրաւունքներուն ի նպաստ: Կը ցուցաբերուի խիստ, անգիշող, մերժողական եւ անհասկնալի կեցուածք մը՝ ընդդէմ Էջմիածինի: Եւ այդ վերաբերումին իբրեւ պատճառաբանութիւն, անջատ կամ հաւասարագոր կաթողիկոսութեան պահպանումին որպէս վիճարկութիւն, կը ներկայացուին պաշտպանութիւնը Կիլիկիոյ Աթոռին իրաւասութիւններուն եւ ջատագովութիւնը անոր բացարձակ հոգեւոր իշխանութեան կամ ազատութեան: Բայց ի՞նչ անդրազոյն նպատակի համար:

Դ. ՉԻՋՈՒՄԸ ՆԱԽԸՆՏՐԱԲԱՐ Ի ՆՊԱՍՏ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ.

Այդ դիրքը կը բռնուի իբրեւ թէ ապահովելու համար Կիլիկիոյ Աթոռին անկախութիւնը: Բայց որմէ՞. Հայութենէ՞ն: Ծանօթ ընթացքը կ'որդեգրուի՝

իրբել թե պաշտպանելու համար Անթիլիասի իրաւունքները: Եւ արդեօք, նոյն տրամաբանութենէն առաջնորդուած, իմաստուն ու խղճահար եկեղեցական պաշտօնատար մը պէտք չէ նոյն բծախնդրութեամբ ու խստութեամբ պահպանել ու պաշտպանել իրաւասութիւններն ու հեղինակութիւնը դարաւոր Սուրբ Էջմիածինի եւ անոր գլուխը եղող Ընդհանրական Հայրապետին, նոյնիսկ ընդդէմ նուիրապետական Աթոռի մը գործուած անկանոնութեան կամ ոտնձգութեան մը պարագային: Եւ նոյնիսկ եթէ տեղ մը եկեղեցական կամ համայնքային առումով զիջում մը պիտի կատարուի, արդեօք պէտք չէ՞ այդպիսի զիջում մը ըլլայ նախընտրաբար ի նպաստ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի եւ անոր Ամենայն Հայոց Գահակալին, քան ուրիշ եկեղեցական իշխանութեան մը: Զանի որ ինչ որ տրուի անոնց, խորքին մէջ տրուած կ'ըլլայ Հայց. Եկեղեցիին, տրուած կ'ըլլայ հայ ժողովուրդին: Ի վերջոյ պէտք չէ մոռնալ թէ Անթիլիասի Աթոռը երբեք չի կրնար փոխարինել Ս. Էջմիածինը: Եւ Լիբանանը, կամ որեւէ այլ երկիր, չի կրնար փոխարինել Մայր Հայաստանը:

Թերեւս նաեւ պահ մը պէտք է կանգ առնել հարց տալու համար թէ իրբել թէ Անթիլիասը պաշտպանելու այդ բոլոր փորձերը կը կատարուին՝ Կիլիկիոյ Աթոռի՞ն, Անթիլիասի Աթոռակալներո՞ւն, անոր միաբանութեա՞ն ի նպաստ: Թէ ի շահ ուրիշ հաստուածի մը, որ բռնատիրութեան տակ առած է ու կը պահէ մեր եկեղեցին ու կրօնականները

Ե. ՉԱՐԵԱՑ ԱՐՄԱՏԸ.

Ազգային-եկեղեցական ծառայութեան մէջ գտնուող գործիչ մը, որքան ալ բարձր պաշտօնի վրայ դրուած ըլլայ ան, չի կրնար մեր ժողովուրդին շահը փնտռել անոր պառակտումին ու կոտորակումին մէջ: Այդ նոյն ժողովուրդին գոյութեան խնդիրն է իր միասնականութիւնը: Ու եթէ բաժանումը կը շարունակուի ձեւական եւ այլ արուեստական թէ վերագրուած անհամաձայնութիւններու հետեւանքով, նման պարագայի մը տարբեր տեղ պէտք է փնտռել չարեաց արմատը: Տուեալներուն ամբողջականութիւնը կը հաստատէ թէ եկեղեցիին, մասնաւոր Աթոռի մը կամ հայութեան մտահոգութիւններէն բխած չեն կրնար ըլլալ տարբերութիւնները: Անոնք պէտք է ծայր տուած ըլլան կամ խմբակցական-հաստուածական շահերէ եւ կամ անհատական փառասիրութեան եւ հաշիւի մտահոգութիւններէ:

Երբ եկեղեցին կամ Աթոռ մը կը դադրի իրեն որպէս մշտական, էական մտահոգութիւն եւ հեռանկար ունենալէ հայ ժողովուրդին գոյութիւնն ու բարօրութիւնը, անոր կենսական շահերն ու երագները, ան կը կասի Հայց. Եկեղեցի կամ անոր մէկ մասը ըլլալէ, եւ իրաւունք չ'ունենար այլեւս

յարգանք եւ աջակցութիւն ակնկալելու հայութենէն: Կը դառնայ մեր ժողովուրդին անհաղորդ, անոր օտար հաստատութիւն մը:

2. ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՇԱՀԵՐԸ.

Նոյնը կարելի է ըսել նաեւ հայ կրօնականին համար: Կղերական մը որ եկեղեցիին միջոցաւ հայ ժողովուրդին ծառայելու, անոր գերագոյն շահերը պաշտպանելու եւ անոր ազգային կեանքը պահպանելու մէջ չի տեսներ իր բարձրագոյն առաքելութիւնը, չի կրնար Հայց. Եկեղեցիին հարազատ պաշտօնատար համարուիլ, որքան ալ բարձրաստիճան իշխանաւոր դարձուած ըլլայ ան: Երբ եկեղեցականը, մոռնալով սրբութիւնները եւ իր ուխտը, կ'երթայ անձնական փառքի ետեւէ, նման ընթացք մը կը նշանակէ նուաստացում հոգեւորականի, նսեմացում եկեղեցիին, լքում մեր ազգային-եկեղեցական գերագոյն շահերու եւ արատաւորում մեր արժէքներուն եւ նուիրականութիւններուն: Կը նշանակէ՝ յանձնում աւանդութիւններու եւ հաւատքին ի խնդիր սեփական ցանկութեան, անհատական դիրքի եւ հաշիւի համար:

Տարբեր պայմաններու մէջ, ուրիշ աշխատասիրութեան մը ծիրին մէջ, պիտի արժէր ստուգել թէ Անթիլիասի տագնապիւն մէջ ի՞նչ դեր խաղացած է, ու կը շարունակէ խաղալ, կարգ մը եկեղեցականներու անձնական փառասիրական տենչը: Արդեօք անոնք, ստեղծուած պայմանները շահագործելով եւ ամիթէն լաւագոյնս օգտուելով, իրենց անձնական փառքն ու շահը չէ՞ն հետապնդեր: Մոռնալով եւ անտեսելով մեր սրբութիւններն ու ժողովուրդը: Եւ կամ զանոնք սակարկութեան նիւթ դարձնելով: Գործակցութիւն, ճիգ եւ նուիրում խոստանալով բոլոր կողմերուն բայց միայն իրենց անհատական կամ խմբային շահերուն ու դիրքին հետամուտ մնալով:

Է. ՀԱՒԱՏԱՑԵԱԼՆԵՐԷՆ ՉԵՆ ԿՐՆԱՐ ԱԿՆԿԱԼԵԼ.

Այդպիսի պարագաներու, եկեղեցի ու եկեղեցականութիւն չեն կրնար աւանդական ակնածանք ու վերաբերում սպասել հաւատացեալներէն, ժողովուրդէն:

Եկեղեցին ու եկեղեցականութիւնը պետք է ի վերջոյ ծառայեն հայ ժողովուրդին: Անով կ'իմաստաւորուի անոնց գործը: Անոնք միատեղ կամ անջատաբար ինքնանպատակ չեն: Չեն կրնար ըլլալ: Հայ ժողովուրդը չէ պարզապէս հաւաքականութիւն մը՝ սահմանուած հայ եկեղեցականներ ապրեցնելու կամ անոնց պաշտօն, հեղինակութիւն ու փառքի պատմունաններ հայթայթելու կրօնական դրութեան միջոցով

Ը. ԵՐԲ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ ԴՈՒՐԱ
Կ՛ԵԼԼԵՆ ԻՐԵՆՑ ԾԻՐԷՆ.

Իսկ երբ նուիրապետական անշատ Աթոռները, իրենց կարգին, իրենց-
մէ գերագահ եղող Աթոռին կամ միւսներուն հանդէպ չեն ցուցաբերեր
պատշաճ հաւատարմութիւն ու պատկառանք, անոնք ինքնաբերաբար
զիրենք հեռացուցած կ'ըլլան հայութենէն ու զիրենք զրկած՝ հայութեան
յարգանքէն, աջակցութենէն եւ նոյնիսկ ճանաչումէն: Իրենց ընթացքով
խաթարած կ'ըլլան կրօնական կարգն ու խորհուրդը, որոնք հիմն են
եկեղեցիին, անոր սրբութիւններուն եւ նուիրականութեան: Եւ ոչ մէկ
իրաւունք կ'ունենան խօսելու հայ եկեղեցիին կամ հայութեան անունով:

Հայ եկեղեցին իր վարչական կազմակերպութեամբ սփիւռքի մէջ
ղեկավար կը հանդիսանայ ազգային, եկեղեցական կեանքի կանոնաւոր
զարգացման, հոգեւոր եւ անձնուէր զինուորութիւն մը կը պատրաստէ
ծառայելու մեր ժողովուրդին կրօնական ու քաղաքակրթական մշակու-
թային յառաջդիմութեան: Բայց երբ դուրս կ'ելլէ իր առաքելութեան ծիրէն,
երբ անտարբեր եւ անհաղորդ մնայ հայութեան խռովքներուն, ոչ միայն
արտօնած կ'ըլլայ որ յարգեն զինք, այլ նաեւ ինքնաբերաբար կորսնցուցած
կ'ըլլայ իրեն շնորհուած կոչումը, առաջնորդութիւնն ու կարգը: Կորսնցու-
ցած կ'ըլլայ գործելու իրաւունքը: Կորսնցուցած կ'ըլլայ իր գոյութեան
պատճառը:

* * *

20. ՊԱՇՏՊԱՆԵԼ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆԸ.

Բայց այնպես կ'երևի թե տազնապին ու անոր լուծման արգելքներուն բուն դրդապատճառներուն ճշդումը հիմնական օժանդակութիւն մը չի կրնար ներկայացնել հարցը կարգադրելու տեսակէտով: Ու թերեւս կացութեան վերլուծումէն պարզուելիք իրականութիւնը իր մէջ պարփակ է հատուածական շահերու եւ անձնական փառասիրութիւններու խառնուրդէ մը յառաջ եկած բարդ բաղադրութիւն մը: Հետեւաբար, նպատակաւոր մար չի համարուիր՝ Անթիլիասի երեսութեան պաշտպանութեան դերակատարներուն միջեւ պատասխանատուութեան եւ աւարի բաշխումին ստուգման աշխատանք մը փորձել այս առիթով:

Ինչ որ ալ եղած ըլլայ բուն եղելութիւնը, հիմնական հարցը կը մնայ անփոփոխ: Ունինք աննախընթաց տազնապ մը, որուն լուծումը անյետաձգելի է: Մեզ կը տառապեցնէ բարդութիւն մը, գոր Անթիլիաս, այս կամ այն առարկութեամբ, կը մերժէ լուծել կամ ինքզինք անկարող կը ձեւացնէ լուծելու, պատճառաբանելով թէ Կիլիկիոյ Աթոռին իրաւունքները խնդրոյ առարկայ են:

Բայց չենք կրնար Ժամավաճառ ըլլալ մանրամասնութիւններով տարուած վէճերով եւ նուրբ ու թերեւս այլապէս կարելոր տարբերութիւններով: Չ'արտօնուիր մեզի այդ շռայլանքը: Հրամայական պահանջքը այն է թէ պէտք է այլեւս անյապաղ վերահաստատուի եկեղեցական-համայնքային բնականոն կեանքը:

Ու եթէ Կիլիկիոյ Աթոռն ու Աթոռակալները անդրդուելի կը մնան իրենց տեսակէտին մէջ, կը շարունակեն Անթիլիասը դարձնել քաղաքական պայքարի պատուանդան, կամ թոյլ կու տան որ ուրիշներ ընեն նման գործ մը, բուն դիտաւորութիւն ունենալով առայժմ սփիւռքի մէկ մասը եւ յետագային ամբողջ արտասահմանը հակադրել Ամենայն Հայոց Հայրապետին եւ Էջմիածինի, հակադրել հայրենիքին, ինչպէս նշուեցաւ, այն ատեն հայ ժողովուրդին կը մնայ պաշտպանել մեր եկեղեցին եւ անոր միութեան սրբութիւնը, պաշտպանել Մայր Աթոռին հոգեւոր հեղինակութիւնը: Պաշտպանել՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անկախութիւնը՝ անոր պաշտօնատարներէն ու վերջիններուն տէրերէն, այդ կերպով ապահովելով շարունակումը անոր առաքելութեան՝ մեր եկեղեցիին նուիրապետական

կառույցին մէջ: Եւ այդ աշխատանքը կատարել հնարաւոր բոլոր միջոցներով, վճռական ու խիզախ, անփոփոխելի ու վարակիչ լաւատեսութեամբ:

Բայց այս նիւթին պիտի անդրադառնանք յետագային:

* * *

21. ԿԻԼԻԿԻՈՅ ԱԹՈՌ ԵՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ.

Ա. ԱՆԹԻԼԻԱՍ ԿՐԵԱՅ ԳՈՐԾԵԼ ԱՆԿԱԽ.

Կայ էական հարցում մը: Եթե պահ մը ենթադրենք թե Անթիլիաս իբրեւ եկեղեցական իշխանություն ու կառոյց՝ անկեղծօրէն կը փափաքի լուծումը եւ տրամադիր է ընդունելու զայն այս կամ այն բանաձեւումով, կարելի՞ է իրականացնել բաղձացումը:

Անթիլիաս կրնա՞յ Դաշնակցութենէն անկախ եւ անոր տեսակէտին հակառակ, իբրեւ Կիլիկիոյ Կաթողիկոսություն, հարթել տարակարծությունները եւ վերահաստատել բնականոն յարաբերություններ Էջմիածինի հետ:

Տրամադրելի տուեալները կը հաստատեն թե Դաշնակցութիւնը ներսէն գրաւած է Անթիլիասը:

Աթոռակալին եւ բարձրաստիճան եկեղեցականներու գործակցությունն ու ծառայությունները ապահոված է զանոնք վարձատրելով ամէնէն առաջ: Չանոնք անձ առ անձ բարձրացուցած է հնարաւոր առաւելագոյն չափով, անկախ արժանիքէ ու փորձառութենէ, եպիսկոպոսություն, արքություն շնորհելով անոնց կամ առաջնորդական եւ այլ պաշտօն ապահովելով անոնց համար: Վիճակը պարզ կը դառնայ երբ նկատի առնուի 1957-էն ետք երկարող շրջանին մէջ պարփակուող գործունէութիւնը եւ ընդհանուր կեցուածքը կաթողիկոսարանին: Իսկ Կիլիկեան Աթոռի կղերականությունը Դաշնակցութիւնը իրեն կապուած կը պահէ անվերջանալի ու շռայլ խոստումներով: Պէտք չէ դուրս թողուլ նաեւ այն հաւանականութիւնը թե որեւէ աստիճանի բարձրացման ու դիրքի համար, եւ նոյնիսկ անկախ այդ բոլորէն, ու փոքր տարիքէն, կղերականի օծումէն առաջ կամ անկէ ետք, կրնայ այդ կազմակերպութիւնը կուսակցական օժած ըլլալ եկեղեցականները, եւ այդ կերպով աւելի եւս երաշխաւորուած զգայ իր իշխանութիւնը Անթիլիասի վրայ:

Կը թուի թե Անթիլիաս կը գործադրէ կամ կը փորձէ գործադրել կուսակցութեան նախատեսածը իրեն համար: Իսկ եթե Կիլիկիոյ Աթոռը ընդդիմանայ, ինչ որ խիստ անհաւանական կ'երեւի, պահանջուածը կը պարտադրուի: Ու եթե այնտեղ ալ դժուարություններ ներկայանան, զանոնք հարթելու լաւագոյն կերպեր կը գտնուին: Եթէ հարկ տեսնուի, պարագային համաձայն, կը գործադրուին նաեւ սպառնալիք, ներքին «գաղտ-

նիք»ներ յայտնաբերելու վտանգ եւ այլ «համոզիչ» միջոցներ, որոնց մէջ մասնագիտական փորձառութիւն ունենալ կը թուի յիշեալ կազմակերպութիւնը:

Հարկ չենք տեսներ անդրադառնալ բոլոր այն տուեալներուն եւ մանրամասնութիւններուն, որոնք նախորդ հատուածներուն բովանդակութեան մաս կազմած են: Բայց զանոնք նկատի կ'ունենանք առանց կրկնութիւն կատարելու:

Բ. ՇԱՐՔԱՅԻՆՆԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆՆԵՐ.

Դաշնակցական անդամներ կամ պատասխանատուներ, երբ յարմար առիթը ներկայանայ, կ'ընդունին, խորհրդապահական բնոյթ տալով իրենց խօսքին եւ ակներեւ ինքնագոհութեամբ, բայց առանց շատ ալ ծածկել փորձելու իրականութիւնը, թէ Անթիլիաս կը գտնուի իրենց կուսակցութեան ուղղակի հակակշիռին ներքեւ: Թէ Կաթողիկոս ու միաբանութիւն չեն հեռանար, չեն կրնար հեռանալ, Կիլիկիոյ Աթոռին համար կուսակցութեան սահմանած ծիրէն եւ աշխատելու եղանակէն:

Դաշնակցութիւնը այնքան խոր եւ այնքան լայն թափանցած ըլլալ կ'երեւի Կաթողիկոսութեան ու Կիլիկիոյ Աթոռին ներքին կառուցուածքին մէջ, որ շատ անհաւանական է, եթէ ոչ անհնար, որ Անթիլիաս կարենայ կամ յանդգնի այդ կուսակցութեան կամքին հակառակ կամ առանց անոր հաւանութեան կարելոր որոշում մը առնել ու գործել:

Գ. ԻՆՉ Է ԿԱՐԵՒՈՐԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

Ի մտի ունենալով Դաշնակցութեան ծրագիրները մեր եկեղեցիին եւ սփիւռքի ընդհանուր հարցին առնչութեամբ, ակնկալելի չի թուիր որ հաշտութեան եւ հասկացողութեան պայմաններէ յառաջացող իրավիճակը ընդունելի դառնայ այդ կուսակցութեան: Դաշնակցութեան համար համոզիչ փաստարկութիւններ չեն նկատուիր այն մտածումները՝ որոնք կը ձգտին հայ եկեղեցիին միասնականութեան եւ մեր ազգային, համայնքային ներքին խաղաղութեան: Հայ ժողովուրդին գերագոյն շահերը: Եւ նոյնիսկ այն պատճառաբանութիւնը թէ տագնապին լուծումով սփիւռքը պիտի դառնայ միասնական, պիտի կարենայ աւելի ամբողջական եւ հաւաքական ոյժերով նուիրուիլ ազգապահպանումի դժուարին գործին: Դաշնակցութեան համար վճռական կշիռ ունեցող տուեալները՝ կուսակցութեան շահերը, կուսակցութեան տիրապետութիւնը եւ անոր քաղաքական հեռանկարներն են: Եւ այդ ըլլալով իրականութիւնը, կարելի չ'երեւիր Դաշնակցութեան համամտութիւնը կամ գործակցութիւնը

ապահովելը այդ տեսակետով: Որովհետև, այլապես, տարբեր մտահոգություններ է անջատել անկախ, Դաշնակցությունը նահանջած պիտի ըլլայ քաղաքական իր սկզբունքներուն ու կեցուածքին մէջ: Չիջած պիտի ըլլայ իրեն վերագրած ղեկավարի իր դիրքը: Եղելութիւն մը՝ որ անհնարին կը թուի:

Դ. ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿ.

Բայց ի՞նչպէս Դաշնակցությունը հասաւ տիրապետող այս դիրքին: Թերեւս նպատակայարմար ըլլայ արագ յետադարձ անկարկ մը նետել անոր գոյութեան ու գործունէութեան վրայ, հարցը տեսնելու համար իր ամբողջութեան մէջ:

1920-էն մինչև Երկրորդ Համաշխարհային Պատերազմ տարածուող շրջանին, Դաշնակցությունը արտասահմանի մէջ հաստատած էր գրեթէ բացարձակ մենատիրութիւն մը: Անոր անմիջական հսկողութեան եւ հովանաւորութեան տակ էին, կարելի է ըսել անոր ենթակայ էին ուղղակի կամ անտեսանելի կերպով, մեր դպրոցներն ու եկեղեցիները, համայնքային մարմիններն ու գաղութային կեանքը իբրեւ ամբողջութիւն: Հայրենասէր կամ յառաջդիմասէր համարուող տարրը գոյութիւն ունենալով եւ հետզհետէ աճելով հանդերձ, աննշան էր ու փոքրամասնութիւն կը կազմէր: Ամէն պարագային՝ յատուկ լուրջ վտանգ մը չէր ներկայացներ Դաշնակցութեան եւ անոր ծրագիրներուն: Իսկ երբ մասնաւորներ նուազագոյն դժուարությունը ծագեցնէին, հարցերը կը փորձէին կարգադրել սպառնալիքներով եւ ի հարկին ահաբեկչական եւ այլ արտակարգ միջոցներով, կանգ չառնելով նոյնիսկ ոճիրներու առջեւ: Չենք ուզեր այստեղ անդրադառնալ ծանօթ սպանություններու, որոնք իբրեւ ցաւալի յուշ պէտք է պատմութեան յանձնուած մնան, որպէսզի հին խռովքներ ու վրդովմանք չվերարծարծուին: Իրողութիւն է թէ այդ շրջաններուն մեր վարժարաններուն, եկեղեցիներուն, մարզական եւ սկաուտական ակումբներուն վրայ կը ծածանէր եռագոյնը իբրեւ հայութեան խորհրդանիշ: Բայց Երկրորդ Համաշխարհային Պատերազմի ընթացքին եւ մանաւանդ անկէ յետոյ, նոր պայմաններ ստեղծուեցան արագօրէն: Կազմակերպուեցան, շատցան հայրենասիրական շարժումները, մեր միւս կուսակցությունները վերակազմուեցան, եւ անճանաչելի փոխուեցաւ սփիւռքի դիմագիծը: Հայաստան-սփիւռք սերտացող յարաբերությունները վճռական դեր մը ունեցան փոփոխութեան մէջ: Ուշագրաւ են այդ տեսակետով նաեւ Բարեգործականի կրթական աշխատանքը եւ ընդհանուր կեցուածքը՝ իբրեւ հայրենասիրական թարմ շունչ ու ոգի, իբրեւ Էջմիածինի եւ Ամենայն Հայոց Հայրա-

պետին պաշտպանություն եւ անոր հանդէպ հաւատարմություն, մնալով հանդերձ ապա-քաղաքական կազմակերպություն:

Ե. ՅՈՒՐՏ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐ.

Ստեղծուած նոր իրադրութեան մէջ, հայրենասիրական ոյժերը իբրեւ ամբողջություն, սկսան տէր կանգնիլ դպրոցներուն, ակումբներուն, մարզական եւ այլ շարժումներուն ու կերպով մը առաջնորդել այն առողջ գանգուածը արտերկրի հայութեան՝ որ համամիտ չէ Դաշնակցութեան մտայնութեան ու գործունէութեան եւ առ հասարակ հայրենիքին եւ Էջմիածինին հակադրուող անոր կեցուածքին: Դաշնակցութիւնը, իրեն հակառակ աճող հոսանքին առաջը առնելու դիտաւորութեամբ կամ գայն խորտակելու ակնկալութեամբ, այլազան միջոցներու շնորհիւ, ուղղակի եւ անուղղակի կերպերով, գրեթէ բոլոր երկիրներուն մէջ ուր հայ համայնքներ կը գտնուէին, եւ մանաւանդ այդ կազմակերպութիւնը հովանաւորող կամ անոր համար նպաստաւոր վարչակարգերու օրով, ծրագրուած կերպով սկսաւ զրպարտել ու բանասարկել իրեն ընդդիմադիր համարած բոլոր հայերն ու կազմակերպութիւնները որպէս իրենց բնական երկրին վտանգաւոր տարրեր: Օգտուելով ցուրտ պատերազմով ստեղծուած ընդհանուր հայրենասէր հայութեան համար աննպաստ ու ծանօթ հատուածին համար շատ բաղձալի պարագաներէն, մարդիկ արտակարգ ու զարմանալի առաւելութիւններ ձեռք ձգեցին: Եւ անոնց միջոցով իրենց տիրապետութիւնը հաստատեցին այլազան մարմիններու եւ շարժումներու վրայ: Պէտք եղած ատեն ոտնահարելով ժողովրդավարական սկզբունքները, գործածելով հնարաւոր ամէն ուղի ու կանգ չառնելով որեւէ միջոցի առջեւ: Որեւէ միջոցի, մէջն ըլլալով նաեւ մատնություն ու ֆիզիքական հաշուեյարդար: Եւ հարկ է ըսել թէ Դաշնակցութիւնը տասնամեակներով քաղեց առատ բերքը իր այդ քաղաքական սերմնացանին: Մանաւանդ կարգ մը կառավարութիւններու սահմաններէն ներս: Եւ այդ կերպով կրցաւ շրջան մը եւս իր հակազդեցութեան տակ պահել սփիւռքի ընդհանուր համայնքային-եկեղեցական կեանքին մէկ կարեւոր մասը:

Զ. ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹԻՒՆ.

Տարիներու ընթացքին, սակայն, Դաշնակցութեան այդ գործունէութիւնը դադրեցաւ բաղձալի արդիւնքներ ունենալէ քանի որ մինչ այդ կը փոխուէր նաեւ միջազգային ընդհանուր մթնոլորտը: Նոր իրադրութիւններու բերումով, երկու գեր-ոյժերու մերձեցումով եւ այլազան յարաբերութիւններու փոփոխութիւնով, կը ստեղծուէր քաղաքական ու միջազգային

նոր վիճակ մը, որուն մէջ այլ եւս հակա-համայնավար քարոզչութիւնն ու դիրքորոշումը կը կորսնցնէին իրենց նախկին նշանակութիւնը: Վերջին իրողութիւնը իր անխուսափելի եւ վճռական անդրադարձը կ'ունենար նաեւ Դաշնակցութեան վրայ իբրեւ կուսակցութիւն ու գործունէութիւն: Այդ իսկ պատճառով այդ կազմակերպութիւնը քիչ առ քիչ կը կորսնցնէր իր նախկին բացարձակ իշխանութիւնն ու մենատիրական ներկայութիւնը արտասահմանի հայ իրականութեան մէջ: Ուստի հարկ էր ստեղծել նոր վիճակներ, գտնել նոր միջոցներ, կորսուած կամ անհետացող հեղինակութիւնը եւ ազդեցութիւնը վերականգնելու եւ շարունակելու համար որպէս գործօն ոյժ: Եւ այդ առումով հրաշալի առիթը ներկայացաւ 1955–1956-ին:

Է. ԶԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.

Յետադարձ ակնարկին ենթարկուող դէպքերն ու փաստերը ցոյց կու տան թէ 'Դաշնակցութիւնը' այդ թուականէն ետք հետեւողականօրէն գործադրած է քաղաքական ծրագիր մը: Ու թերեւս անկէ տարիներ առաջ սկսած էր մշակել նման ծրագիր մը՝ դուրսէն կատարուած ցուցմունքներու համեմատ: Ըստ այդ ծրագիրին, պէտք էր ամէն միջոցով, արտաքին ամէն տեսակի աջակցութեամբ եւ միջամտութեամբ, ներքնապէս գրաւել Անթիլիասի Կաթողիկոսութիւնը: Եւ անոր միջոցաւ, գործածելով եւ ի հարկին չարաշահելով անոր եկեղեցական, ազգային հեղինակութիւնը, գրաւել հայ գաղութները եւ հայ կեանքին մէջ պահել կուսակցական գերիշխանութիւն մը՝ թաքնուած կրօնական շղարշին ներքեւ: Եւ այդ ոյժը գործածել քաղաքական նպատակներու համար:

Ինչպէս արդէն անցողակի ակնարկուեցան, ոչ միայն օտար չձածկուող ճնշումներով այլ նաեւ զինեալ միջոցներով պարտադրուեցաւ հայութեան Անթիլիասի բեմադրութիւնը:

Այդ տեսանկիւնէն պէտք է նայիլ Անթիլիասի տագնապին:

Ը. ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼԻՆ.

Թերեւս նպատակայարմար ըլլար շեշտել նաեւ ուրիշ ուշագրաւ պարագայ մը:

Փոքր պրպտում մը Դաշնակցութեան անցեալին մէջ բաւարար պիտի ըլլայ համոզելու թէ այդ կուսակցութիւնը, զոնէ մինչեւ 1956, եկեղեցիին ու եկեղեցականութեան նկատմամբ բռնած է դիրք մը որ, մեղմ բացատրութիւն մը գործածած ըլլալու համար, շատ հեռու է բարեկամական կամ բարեացակամ կոչուելէ: Հայց. Եկեղեցիին հանդէպ որդեգրած է կեցուածք մը, որ եղած է խստօրէն անհանդուրժող, թերահաւատ ու պարսաւական:

Եւ նման պզտիկ ճիգ մը պիտի դիւրաւ ստուգէ թէ Դաշնակցութիւնը կը բաղկացնեն մարդեր, որոնք անտարբեր եւ անհաղորդ մնացած են մեր կրօնական հաստատութիւններուն նկատմամբ տասնամեակներ շարունակ: Հակառակած են անոնց տեսալէս ու պայքարած են անոնց դէմ հնարաւոր բոլոր առիթներով ու կարելի բոլոր միջոցներով: Իսկ եկեղեցականներուն հանդէպ անոնց անցեալի վարմունքին չենք ուզեր ականարկել պարզապէս տխուր յիշատակներ չարթնցնելու համար:

Պարզ ճշմարտութիւնը այն է թէ միայն նոր օրերուն կուսակցութիւն եւ անդամներ Անթիլիասին, Աթոռակալին եւ անոր միաբանութեան պաշտպաններն ու ջատագովները եղած են: Եւ աւելին: Կը ջանան մեզ համոզել թէ անկեղծ է իրենց հետաքրքրութիւնը, թէ ճշմարիտ է իրենց հաւատքը եւ անշահախնդիր են իրենց նուիրումութիւնն ու երկիւղածութիւնը:

* * *

22. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆ

Ա. ՓՈԽՈՒՄԾ Ե ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Դաշնակցության տեսակետները, կեցուածքը եւ ընդհանուր վերաբերումը ներկայ Հայաստանին եւ անոր ժողովուրդին նկատմամբ, սկզբնական շրջանէն սկսեալ մինչեւ մեր ժամանակները, ծանօթ են բոլորին: Բայց վերջերս զանազան անձերէ ու խաւերէ արտայայտութիւն կը գտնէ այն գաղափարը, թէ Դաշնակցութիւնը փոխուած է այլեւս: Շարքայիներ ու Դաշնակցութեան համակիրներ ալ արձագանգ կ'ըլլան նոյն տեսակետին, թէւ առանց համոզիչ կամ հաստատող որեւէ փաստի եւ իրողութեան:

Նման եղելութիւն մը իրապէս գոյութիւն ունի՝ թէ աւելի բաղձանքի ձեւ առած պահանջքի մը ցոլացումն է: Հարկ է ստուգել իրողութիւնը: Ամէն պարագայի՝ զգալի է թէ ծրագրուած ջանք մը կը թափուի դաշնակցական շրջանակներու կողմէ որպէսզի յիշեալ միտքը լայն գետին գտնէ զաղործներուն մէջ: Հաւանաբար այդպիսի կացութիւն մը, ըստ պատասխանատուներուն, նպաստաւոր է իրենց կազմակերպութեան անմիջական եւ հեռաւոր նպատակներուն համար: Կ'երեւի թէ այդպիսի դիմագիծ մը կամ դիմակ մը աւելի բաղձալի կը դարձնէ Դաշնակցութեան ներկայութիւնը ու կը դիւրացնէ անոր տեսանելի եւ անյայտ յառաջադրանքներուն իրագործումը:

Ուստի դիմագրաւուելիք առաջին հարցը այն է թէ Դաշնակցութիւնը փոխա՞ծ է իր մտայնութիւնն ու գործելակերպը տարիներու ընթացքին՝ հայնոր իրադրութեան դիմաց եւ միջազգային կացութեան պատճառով:

Հարցումին պատասխանելու ճիգը չի կրնար անտեսել բոլոր այն եղելութիւններն ու տուեալները, որոնք նախապէս յիշատակուեցան կամ հետեւող էջերուն մէջ տեղ կը գտնեն: Մասնաւորաբար թիւ 21 ու 23 գլուխներուն համապատասխան բաժինները:

Բ. ՏԱՐԻՆԵՐ ԱՆՑԵՐ ԵՆ.

Հայաստանի Հանրապետութեան վախճանէն շուրջ 63 տարիներ անցեր են: Մինչ այդ աշխարհը փոխուած է անճանաչելի: Այն ոյժը որ հովանաւորած է մեր երկիրը, մեր ժողովուրդի ֆիզիքական գոյութիւնը, եւ որ առայժմ միակ եւ անփոխարինելի երաշխաւորութիւնն է Հայաստանի եւ Հայութեան, դարձած է երկու գեր-ոյժերէն մէկը:

Մինչ այդ մեր երկիրը ապրած է խաղաղություն մը, որուն նմանը չէ տեսած մեր ամբողջ պատմությունը եւ որ չէր գիտեր թէ կրնար գոյություն ունեցած ըլլալ այս արեւին տակ: Մեր մշակոյթը ծաղկած է աւելի քան որեւէ ժամանակ: Ու մեր հողերը, հոն ապրող կեանքերը ներծծած են հայեցիութեան եւ հայկականութեան այնպիսի որակ մը, զոր մեր երկիրը չէր ճանչցած երբեք ու երագած էր միշտ: Եւ իրողություն պիտի ըլլար հաստատել թէ ներկայ հայրենիքը՝ հնարաւորներուն մէջ առաւելագոյն գրաւականն է մեր ազգային երագներու իրականացումին:

Գ. ՀԱԿԱ-ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԱՅՔԱՐ.

Դաշնակցությունը, սակայն, պահած է իր ազգային փիլիսոփայությունը անփոփոխ: Ընկերային եւ այլ իր տեսակետները, իբրեւ ոգի ու տառ, վերածած է հակա-խորհրդային խաչակրութեան: Հակառակ իր շուրջ եղած քաղաքական, պատմական եւ աշխարհագրական փոփոխություններուն եւ նոր իրադրութեան: Եւ հակառակ մերթ ընդ մերթ, ու պարագայի համաձայն, արտայայտել ուզած ընկերվարական իր սկզբունքներուն: Ան մերժած է ճանչնալ Հայաստանի նուաճումներն ու յառաջդիմությունը: Տակաւին չէ կրցած ըմբռնել հայ իրականությունը եւ նոր կացությունը: Չէ կրցած համակերպիլ իշխանությունը կորսնցուցած ըլլալու իրողութեան եւ հաշտուիլ հայրենիքին ու զայն կերտող ժողովուրդին հետ: Նոր տուեալներուն հակառակ, Դաշնակցությունը շարունակած է հակա-համայնավար եւ հակա-Հայաստանեան իր կեցումները: Մնացած է նոյնքան անհանդուրժող ու ռիսերիմ: Եւ այն աստիճան՝ որ յաճախ զանազանություն չէ կրցած դնել Սովետ Միության եւ Հայաստանի միջեւ: Ներկայ Հայաստանը համարած է մաս համայնավար գոտիի, որուն դէմ ինքնամատոյց ու գոհունակ մաքառիլ ուխտած կերելի:

Դ. ԺԱՄԱՆԱԿԱՎՐԷՊ ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆ.

Նման կեցումներ թերեւ թոյլատրելի էին 1920-ին: Թերեւս հասկնալի էին մինչեւ երկրորդ համաշխարհային պատերազմը: Կրնայինք այն ատեն տակաւին տարուիլ խաբուսիկ յոյսերով: Բայց այսօր իրաւունք չունինք կոյր ու խուլ մնալու իրականութեան դիմաց, որ այնքան պարզ ու պերճախօս է: Իրաւունք չունինք զայն դատելէն խուսափելու:

Թիւերու, իրողություններու, ճշմարտություններու վկայությունները վանելով, Դաշնակցությունը կը յամառի մնալ մօտաւորապէս այն դիրքին վրայ, զոր ունէր 1920-ին եւ անկէ առաջ: Ներկայ Հայաստանի իրականությունը կարծես գոյություն ունեցած չըլլար երբեք: Կարծես թէ ժամանակը՝

ոչ թե տասնամեակներով, այլ տարիով իսկ յառաջացած չլլար: Կարծես թե ընկերային, շրջանային եւ այլ յեղաշրջումներ եղած չլլային: Քաղաքական, գաղափարախօսական, տնտեսական եւ այլ նոր իրադարձություններ տիրապետած չլլային աշխարհին եւ յատկապես կիրարկուած չլլային աշխարհագրական այն մասին մէջ ուր Հայաստանը կը բնակի: Կարծես ներկայ հայրենիքը մերը եղած չլլար: Գոյություն իսկ չունենար:

Ե. ԺԱՄԱՆԱԿԸ ԿԱՆԳ ԱՌԱՃ Է.

Կարծես թե Հայաստանի հայութեան հանդէպ սերը չէ շարժած Դաշնակցութեան սիրտին մէջ: Ոչ -բարեկամական ու թշնամական դիրք բռնած է ան յանախ: Իսկ երբեմն ցուցադրուող մերձեցումները երեւութական են միայն, պարզապէս ընդհանուրին հայրենասիրութենէն պարտադրուած կամ խուսափելու համար հայրենիքին դէմ դիրքորոշուած ըլլալու դատապարտութենէն: Ու Դաշնակցութիւնը իր գոյութիւնը արդարացնել ջանացած է հայրենիքին եւ անոր իրականութեան հանդէպ տեսապէս կասկած սերմանելով: Իր ժամանակը անցուցած է անոնց մասին ըսելով անորոշ, երկդիմի խօսքեր, կատարելով իբրեւ թե գաղափարախօսական եւ ազգասիրական բայց իրականին մէջ անիրատես, տգէտ եւ անգործադրելի յայտարարութիւններ, ժողովուրդը օրօրելով ցնորական անիրականալիութիւններով:

Դաշնակցութիւնը չկրցաւ կամ չուզեց պատշաճիլ եւ յարմարիլ հայութեան եւ մեր երկրին նոր իրադրութեան եւ աշխարհի նոր պայմաններուն: Այլ ակնկալեց որ այդ բոլորը իրեն յարմարէին Մինչ տասնամեակները իրարու հետեւելով կը թաւալէին, այդ կազմակերպութիւնը կը մնար ինքն իր մէջ ծուարած եւ իրմով ինքնագոհ: Կարծես թե ժամանակը կանգ առած ըլլար 1920 թուականի սեմին, կեանքը արձանացած ըլլար այնտեղ եւ ամէն ինչ մնացած ըլլար իր տեղը՝ նախկինին պէս:

Զ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՒԱԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Դաշնակցութիւնը կը ձգտի «ուժեղ եւ միական սփիւքի մը» ստեղծման: Բայց իր տիրապետութեան տակ գտնուող սփիւքի մը: Իր քաղաքական տեսակետներուն հետեւող սփիւքի մը: Իր արկածախնդրութիւններուն յօժարող եւ համամիտ սփիւքի մը: Եւ այդ նպատակին իրագործումին համար պարզապէս իբրեւ միջոց կը գործածէ Կիլիկիոյ Աթոռը, անոր Աթոռականները եւ միաբանութիւնը, ինչպէս ակնարկուեցաւ: Այնպէս ինչպէս պիտի գործածէր որեւէ այլ հաստատութիւն եւ հեղինակութիւն՝ առանց որեւէ վարանումի ու խղճահարութեան: Եւ

ամբողջ ծրագիրը կամ դաւադրութիւնը, քանի որ բացէն ու պատուաւոր կերպով չ'ըսուիր այս պարագան, անմիջականօրէն Էջմիածինին դէմ է բայց վերջնական իմաստով՝ ընդդէմ Հայաստանի:

Դաշնակցութիւնը կը յառաջադրէ տապալել հայրենի կառավարութիւնը, կամ կ'երազէ անոր տապալումը, որպէսզի ինք երթայ եւ իր իշխանութիւնը հաստատէ մեր հայրենիքին մէջ եւ հայ ժողովուրդին վրայ «ազատ»ութեան եւ «անկախ»ութեան իբրեւ առաքեալ, կամ այդ սին խաղին որպէս անբուժելի մոլի:

Աւելին: Դաշնակցութիւնը կը թուի ինքն իրեն տուած ըլլալ աշխարհը յեղաշրջելու պաշտօն մը: Ու կը ջանայ նաեւ հայութիւնը քաշել իր ետեւէն կամ քաշքշել իր հետ: Կ'ուզէ Հայաստանն ալ մտցնել այդ եղերական արկածախնդրութեան մէջ:

Է. ԽԵԼԱՑՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ոմանք պիտի խորհին թէ անիրականանալի ցնորամտութիւններ են Դաշնակցութեան ծրագիրն ու ակնկալութիւնները:

Թէ հայերուս համար քաղաքական հաւաքական ինքնասպանութիւն պիտի նշանակէ նման քայլ մը:

Թէ ներկայ պայմաններուն մէջ, աշխարհագրական, քաղաքական, ընկերային, տնտեսական եւ այլ, Հայաստանի ներկայ իրականութիւնը միակ հնարաւորն է եւ ապահովը:

Թէ այժմու դրութեամբ, հայ ժողովուրդը ստացած է, որպէս ապահովութիւն, տնտեսութիւն, բարեկեցութիւն ու գալիք, հնարաւոր առաւելագոյնը:

Թէ Դաշնակցութիւնը, իր ականաւոր կուսակցական ղեկավարներու իսկ խոստովանութեամբ, չ'եր կրցած երազել այսօրուանին մօտեցող Հայաստան մը, նոյնիսկ իր ոգեւորութեան եւ արբեցումի գազաթնակէտի օրերուն:

Թէ մենք աշխարհի ճակատագիրը փոխելու առաքելութիւն պէտք չ'է վերագրենք մեզի: Եթէ մարդկութիւնը պիտի փոխուի, պիտի յեղաշրջուի, իր գիտնալիքն է: Մինչ այդ մենք կ'ուզենք ապրիլ, ապրիլ խաղաղ ու ապահով: Կ'ուզենք աճիլ ու զօրանալ իբրեւ ժողովուրդ եւ հայութիւն, ուրախութեամբ դիմագրաւելու համար մեզի սպասող ապագան:

Բայց իրողութիւն է թէ կայ Դաշնակցութիւնը: Թէ կայ նաեւ անոր ստեղծած տազնապը Անթիլիասի:

Ը. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՉԷ ՓՈԽԱԾ ԻՐ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ.

Ուսումնասիրելի վերջ տրամադրելի բոլոր տուեալները, ուշադիր կերպով քննելի յետոյ ձեռք ձգուած երկարատեւ փորձառութիւնը, եւ ճանչնալի ետք Դաշնակցութիւնը այնպէս ինչպէս կենդանի կերպով ներկայացուցած են զայն իր իսկ ընթացքն ու արարքները, պարզ կ'ըլլայ հետեւութիւնը թէ Դաշնակցութիւնը ոչինչ փոխած է իր ուղղութենէն, կեցուածքէն ու մտայնութենէն հիմնական իր հետապնդումներուն առնչութեամբ:

Արդէն ատենին նաեւ Յ. Քաջագնունին, որ ոչ միայն հաւատաւոր կուսակցական մըն էր, այլ եղած է նաեւ հանրապետութեան շրջանի աչքառու վարչապետներէն մէկը, տարակուսած է թէ Դաշնակցութիւնը կրնայ փոխել «մտածելու ու գործելու եղանակներ»ը: Այդ հեղինակութիւնը շեշտակի ըսած է 1923-ին.

«Երեսուն տարւայ կուսակցական կեանքը դրել է մեր վրայ իր անջնջելի դրոշմը, հաստատել է աւանդներ ու սովորութիւններ, մտածելու ու գործելու եղանակներ, որոնցից մենք չենք կարող ազատուել»⁴³:

Մինչ այդ, անշուշտ, տարիներու թիւր բարձրացած է ութսունի:

Անուղղայ բարեմիտներն անգամ այլեւս չեն կրնար հաւատալ թէ Դաշնակցութիւնը անկեղծօրէն միութիւն ու գործակցութիւն կը ցանկայ:

Դաշնակցութեան սկզբունքային, գաղափարախօսական եւ ընդհանուր մտայնութեան ու նպատակներուն ուղիները, ինչպէս կը տեսնուի, չեն անցնիր հայութեան եւ մեր հայրենիքի իրականութեան ընդմէջէն: Չեն առաջնորդեր անոնց ու չեն իսկ տրամադրուած մերձենալու անոնց: Հայութեան ապագայի լայն պոռոտաները կը բացուին տարբեր շրջաններու մէջ ու կ'ընթանան տարբեր ուղղութիւններով: Դաշնակցութեան հին ճամբաները կը տանին դժուարին ու վտանգաւոր արահետներով, կը տանին դէպի անապահով անձանօթը:

Ուստի հաւանական չի թուիր որ այդ երկու ուղղութիւնները որեւէ ատեն, որեւէ տեղ հանդիպին իրարու: Այլ քաղաքականապէս ու բնածին այլամերժութեամբ ու տարբերութեամբ, անոնք հետզհետէ աւելի պիտի վանեն իրար, պիտի հեռանան իրարմէ:

Կարելի չէ, հետեւաբար, սպասել որ Դաշնակցութիւնը տրամադիր ըլլայ գործակցելու ուղղութեան մը մէջ եւ նպատակի մը համար զորս

⁴³ «Հ.Յ. Դաշնակցութիւնը Անելիք Չունի Այլեւս», Վիեննա, Միսիթարեան Տպարան, 1923, էջ 87:

իրենիններեն տարբեր կը նկատէ եւ նոյնիսկ հակոտնեայ կը համարէ անոնց: Կարելի չէ ակնկալել որ Դաշնակցութիւնը թոյլ տայ արմատական փոփոխութիւններ իր էութեան, մտածելակերպին ու գործելու եղանակին մէջ: Սպասել որ ան հրաժարի իր ինքնութենէն: Ընդհակառակը, Դաշնակցութիւնը ամէն ճիգ պիտի թափէ որ իրեն անհարազատ համարած իտելալին եւ անոր ձգտող կեանքին ընդդէմ պայքարի: Եւ իր այդ պայքարին մէջ, ինչպէս ակնարկուեցաւ, սփիւռքը գործածէ որպէս իր ոյժին խարխիւր, Հայց. Եկեղեցիին, Կիլիկիոյ Աթոռին միջոցով:

Այս ըլլալով իրականութիւնը, տրամաբանական պիտի չըլլար սպասել Դաշնակցութենէն որ տեսանելի ապագային ան կենար հայրենիքին, հայ ժողովուրդին կողքին եւ Էջմիածինի հանդէպ հաւատարմութեան դիրքերու վրայ:

Ոչ մէկ նշանակալից զիջում կատարած է մինչեւ հիմա Դաշնակցութիւնը: Ոչինչ փոխած է իր ինքնութենէն: Անոր կեդրոնական նպատակները եւ հոգին կը մնան նոյնը: Ինչ ալ եղած ըլլան անոր որդեգրած նոր կերպերը գործելու: Եւ ինչ որ ալ ըլլան նաեւ ժամանակ առ ժամանակ պարագայի համաձայն ու նպատակաւոր արտաբերած անոր խօսքերը:

Թ. ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՆՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ.

Մինչեւ հիմա տրուած բացատրութիւններն ու փաստերը լիովին կ'ապացուցանեն Դաշնակցութեան ընդհանուր կեցումներին, անոր վարած բացայայտ կամ ծածուկ քաղաքականութեան ու դիտաւորութիւններուն վերաբերեալ ըսուածները: Ասկէ գատ՝ արդէն այդ կուսակցութեան մամուլը առատ տուեալներ եւ անոր գործունէութիւնը անսպառ նիւթ կը հայթայթեն այդ տեսակէտով:

Բայց պիտի ուզէինք նորագոյն եւ անառարկելի հաւաստիութեամբ վկայութիւն մըն ալ ներկայացնել յաւելուածաբար, անսրբագրելի միամիտներն անգամ համոզելու, չհամոզուիլ յամառողներն իսկ անհանգստացնելու նպատակով: Վկայութիւն մը՝ որ կը բխի ինքնամատոյց խոստովանութենէ, եւ որ ցուցադրութեան կը հանէ Դաշնակցութեան մարմինն ու հոգին՝ առանց զարդի ու ձորձի:

Դաշնակցութիւնը ժամանակէ մը ի վեր կազմած է «Հայ Դատի Յանձնախումբ» մը, որուն, կ'երեւի, Միացեալ Նահանգներու Արեւմտեան Շրջանի Բաժինը վերջերս հայ ժողովուրդին ուղղած է դրամահաւաքի «կոչ» մը: Դրամ պիտի հաւաքէ որպէսզի «Հայ Դատ»ը հետապնդէ:

Այդ «կոչ»ին մէջ բացատրուած է յիշեալ մարմինին հանգամանքը հետեւեալ ձեւով.

«Հայ Դատի Յանձնախումբը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության քաղաքական բազուկն է եւ ունի գրասենեակներ համաշխարհային կարեւոր կեդրոններուն մէջ»⁴⁴:

Իսկ եթէ կը փափաքիք այդ Յանձնախումբին էութեան մասին յստակ գաղափար մը կազմել, դարձեալ կրնաք դիմել նոյն կոչին, եւ որ կ'ըսէ.

«Հայ Դադի Յանձնախումբը այն *կառոյցն* է, որ կրնայ բոլոր հայերը համախմբել Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստանի մը գաղափարին շուրջ»⁴⁵:

Հետաքրքիր էք գիտնալ նաեւ Յանձնախումբին նպատակները: Յիշեալ «կոչ»ը անմիջական ու պարզ կը բացատրէ ձեզի.

«Ան կը պահանջէ ազատագրումը Հայկական բոլոր հողերուն, որոնք բռնագրաւուած են Թուրքիոյ եւ Խ. Միութեան կողմէ, վերակերտելու համար աշխարհասփիւռ 7 միլիոն հայութեան հայրենիքը»⁴⁶:

Հակառակ անդիմադրելի փորձութեան, պիտի չուզենք որեւէ խօսք արտաբերել ակնարկուած «կոչ»ին վերելի պարունակութեան մասին: Կը վախնանք որ զայն մեկնել փորձելով, պիտի աղարտենք անոր սրտառուչ հարազատութիւնը, պիտի մշուշենք բովանդակութեան պայծառ անկեղծութիւնը: Երբ համապատասխան եզրակացութիւնները արդէն կը բխին ինքնաբերաբար եւ անխուսափելի հեշտութեամբ:

* * *

⁴⁴ «Նոր Օր» Եռօրեայ, Լոս Անճելըս, 1983 Յուլիս 12-ի թիւ:

⁴⁵ Նոյնը:

⁴⁶ Նոյնը:

23. ԿԱՐԵԼԻ՝ Է ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԻՒՆԸ, ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԵՏ.

Արդեն յիշատակուածներէն անկախ, համերաշխութեան ու գործակցութեան նպատակին համար հարկ է ի մտի ունենալ կարգ մը այլ պարագաներ ու խորհրդածութիւններ:

Ա. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ.

Նախ գաղափար մը կազմենք թէ ի՞նչ է գործակցութեան դաշնակցական ըմբռնումը, ի՞նչ է իր նպատակին հասնելու եղանակին վերաբերեալ անոր հասկացողութիւնը: Ահա թէ այդ կապակցութեամբ ի՞նչ կը վկայէ Յովհաննէս Զաջագնունին.

«Գործնականօրէն՝ մեր կուսակցութիւնը ձգտում է իրան ենթարկել, իր հսկողութեան տակ առնել թէ՛ օրէնսդիր մարմինը, թէ՛ կառավարութիւնը: Մենք քաջութիւն չունէինք (ոչ էլ կարողութիւն) բացէ ի բաց կուսակցական տիկտատուրա յայտարարելու, բայց եւ չէինք ուզում մնալ պարլամանդական կարգերի սահմանի մէջ ու փորձ էինք անում իրականացնել Հայաստանում իրթիհատականների գործելակերպը. կուսակցական տիկտատուրա ռամկավարական ձեւերի տակ քողարկուած»⁴⁷:

Կարծես ոչ թէ 1923-ին, այլ նոր գրուած են այդ տողերը: Անոնց հեղինակը այնքան հարազատ Ճանչցած է դերակատարներու հոգին, այնքան հարազատ արտայայտած է անոնց միտքը: Խօսքերը կը վերաբերին, անշուշտ, հանրապետութեան շրջանին Դաշնակցութեան ընթացքին: Բայց անոնք ճշմարիտ եղած են ամբողջ տելոդութեան, ու ճշմարիտ են այսօր, պահպանելով համեմատութիւնները եւ կատարելով անհրաժեշտ փոփոխութիւնները ստանձնուած աշխատանքներուն վերաբերեալ:

Բ. ՈՉ ՄԷԿ ՉԻՋՈՒՄ - ՊԱՏԿԵՐԸ ՆՈՅՆՆ Է ՄԻՇՏ.

Դաշնակցութիւնը հայ կեանքին մէջ ոչ մէկ ատեն, ոչ մէկ առիթով զիջողութիւն կատարած է ի շահ եկեղեցիին, ժողովուրդին կամ մեր

⁴⁷ «Հ.Յ. Դաշնակցութիւնը Անէլիք Չունի Այլեւս», Վիեննա, Մխիթարեան Տպարան, 1923, էջ 32:

գերագոյն շահերուն: Անոր հասկացողութիւնը այն է թէ Դաշնակցութիւնը վեր է ժողովուրդէն, եւ թէ Դաշնակցութեան շահերն են հայութեան հիմնական շահերը ի վերջոյ: Մասնաւանդ երբ զօրաւոր զգացած է ինքզինք, կամ իշխանութեանց հովանաւորութիւնը ունեցած է: Համերաշխութեան կամ գործակցութեան մասին մտածած եւ խօսած է լոկ այն ատեն երբ տկար համարած է ինքզինք: Եւ միայն այն վայրերուն մէջ ուր, եւ այն ժամանակները երբ ինքզինք անզօր զգացած է: Եւ առաջարկած «համերաշխութիւն»ը եւ «գործակցութիւն»ն ալ, մասնաւոր տեսակի մը կը պատկանին: Անոնք միշտ պէտք է ծառայեն իր նպատակներուն, պէտք է կատարուին իր նախաձեռնութեամբ, հովանաւորութեամբ կամ գլխաւորուին իր կողմէ: Ուրիշ խօսքով՝ զանոնք պէտք է գործածել, ի հարկին խաբելով կամ այլապէս, նոյն եւ անփոփոխ նպատակին հասնելու համար:

Ամէն մէկը թող նկատի ունենայ իր շրջապատը կամ գաղութը: Ու եթէ պահ մը աչքէ անցընէ վերջին քանի մը տասնամեակներու համայնքային կեանքը, վստահաբար պիտի գտնէ նման իրադրութիւն մը, պիտի ստուգէ առատ վկայութիւններ այդ տեսակէտով: Եւ ուշագրաւ է թէ որքան ալ տարբեր եւ իրարմէ հեռու ըլլան այն երկիրները՝ ուր գործած է Դաշնակցութիւնը, անոր մտայնութիւնը եւ աշխատելու եղանակը հիմնական գիծերու մէջ նոյնը մնացած են միշտ:

Դաշնակցութեան պարզած պատկերը նոյնը եղած է ամէն տեղ եւ ամէն ժամանակ:

Գ. ԼԻԲԱՆԱՆ ԵՒ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ.

Այդ իմաստով շատ յատկանշական է Լիբանանի գաղութը: Յիշատակած ըլլալու համար Կիլիկիոյ Աթոռին երեք թեմերէն գլխաւորը: Պահ մը անտեսելով անցեալին պատահած դէպքերը, կ'ուզենք բաւարարուիլ յարաբերաբար նոր շրջանի պատահարներով:

Լիբանանի մէջ ժամանակէ մը ի վեր կային քաղաքային, կրօնական-համայնքային տարակարծութիւններ, իշխանութեան բաշխումի պահանջներ ու բախումներ: Անոնց առնչուած էին անհատական կամ հատուածական զինեալ խումբեր: Ուրիշ իրողութիւն մըն էր գաղթական պաղեստինցիներուն ներկայութիւնը իբրեւ ժողովուրդ ու զինուորական ոյժ: Անոնց վրայ յետոյ աւելցան Մերձաւոր Արեւելքի եւ արաբական աշխարհի յատուկ, քաղաքական, տնտեսական եւ այլ շահեր ու տուեալներ: Իսկ խնդիրը աւելի կ'նճռոտեցին օտար բանակները, որոնք երկիր մտան որպէս հրաւիրեալ՝ Սուրիականին պէս, որպէս ներխուժող՝ Իսրայէլի պարագային նման, կամ եկան տարբեր անուններու տակ, ինչպէս

Միացեալ Ազգերու զինուորները եւ վերջին բազմազգ գունդերը: Կ'ըսուի թէ երկրին մէջ կը գործեն նաեւ այլ անպաշտօն ու ծածուկ զինեալ շարժումներ:

Այդ բոլորէն անշատ եւ անոնց կողքին, թերեւս պէտք է նաեւ յիշատակել երկու գեր-ոյժերու, Ամերիկեան ու Սովետական գործօն հետաքրքրութիւնը, աշխարհագրական ու քաղաքական տեսակետով շատ զգայուն այս գօտիին նկատմամբ: Շրջան մը՝ որ Մերձաւոր Արեւելք, արաբական աշխարհ կամ քարիւղի մտահոգութիւն կը կոչուի:

Այնպէս կը թուի թէ Լիբանանի մէջ հաւաքուած են՝ երկիր մը դէպի անել եւ ինքնակործանում առաջնորդող անհրաժեշտ բոլոր բաղադրիչ տարրերը: Իսկ վերջին կռիւներն ու բախումները աւելի եւս բարդացուցած են անյոյս վիճակը: Եւ հիմա մէկը կրնայ ըսել, մտացի վերլուծումի սահմաններուն մէջ մնալով միշտ, թէ Լիբանանի սանձաբեկ կացութիւնը կարող է դիրքաւ տանիլ միջազգային տարողութեամբ ընդհարումներու եւ համաշխարհային նոր աննախատեսելի բռնկումի մը: Եթէ երկու գեր-ոյժերը, անջատաբար եւ միատեղ, առանձնապէս պաղարիւն, համբերատար ու պատասխանատուութեան գիտակցութեամբ չվարուին վայրենացած վէճին հետ:

Այս ընդհանուր թոհուրոհին մէջ բռնուած է նաեւ Լիբանանի հայութիւնը: Սփիւռքի ամենէն ստուար գաղութը: Արտասահմանի գործունէութեան տեսակ մը կեդրոնը՝ կրթական, մշակութային, կազմակերպչական, մամուլի եւ այլ տեսակետներով: Եւ Լիբանանահայութիւնը՝ իբրեւ անհատ ընտանիք եւ ամբողջութիւն, կը գտնուի տագնապալի հարցականի մը առջեւ: Պէ՛տք է համբերէ, տոկայ եւ մնայ իր տեղը, յամառ սպասելով լաւ օրերու: Թէ պէտք է տարբեր կարգադրութիւններու մասին մտածէ: Եւ արդեօք տակաւին յետաձգելի՞ է նման քայլ մը, թէ ուշ է արդէն եւ որեւէ յապաղում ճակատագրական կը դառնայ:

Դ. ԲԱՆԱԿՑՈՒԱԾ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆ.

Հասկնալի է, անշուշտ, թէ Կիլիկիոյ Աթոռին ճակատագիրն ալ սերտօրէն կապուած է Լիբանանահայութեան բախտին:

Պահ մը ետ երթալով, ըսենք թէ Լիբանանի քաղաքացիական պատերազմին ու կրօնական խմբակցութիւններու անհաշտ կռիւներուն հետեւանքով, այդ երկրին հայութեան համայնքային գործունէութիւնը եթէ լիովին չէր կազմալուծուած, առնուազն յուրջ մտահոգութեան պահեր ապրած էր: Այդ պայմաններուն մէջ, բանակցութիւններ տեղի ունեցած էին հիմնապէս հայ երեք կուսակցութիւններուն միջեւ տարբեր մակարդակ-

ներով, եւ իբրեւ թէ այն ատեն կարելի եղած էր հասկացողութիւն մը՝ հասարակաց կեցուածքի ու գործի: Միատեղ դիրքորոշումի՝ ընդդէմ ընդհանուր վտանգին: Հոն իսկ, սակայն, ինչպէս յետագայ եղելութիւններն ու պատահարները ստուգեցին, անկեղծ չէին երեւութական ճիգն ու դիտաւորութիւնը Դաշնակցութեան: Շուտով երեւան եկան, ու պարագաներու օգնութեամբ աւելի շեշտուած կերպով, այդ կուսակցութեան մենատիրական ձգտումները եւ ինքնագլուխ գործելու եսասէր միտումը:

Վերջին տարիներուն բոլորիս տեսանելի էր այլեւս թէ քաղաքական արտաքին ու ներքին սարսափները ահաւոր տարողութիւն ստացած էին, կրօնական-համայնքային անհաշտ կռիւները՝ քայքայիչ բնոյթ հագած: Թէ Լիբանանի հայութեան ճակատագիրը խնդրոյ առարկայ դարձած էր երկրին մէջ յառաջացող սանձարձակ յեղաշրջումներուն պատճառով: Բայց Դաշնակցութիւնը, ճգնաժամի այս օրերուն իսկ, Անթիլիասի միջոցաւ եւ յայտնի թէ ծածուկ այլ ուղիներով ու կերպերով, շարունակեց մնալ անձնապաստան եւ այլամերժ ու գաղութին բախտը որոշելը նկատել անձեռնմխելի իր սեփականատիրութիւնը:

Ե. ՀԱՅՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԸ.

Մինչդեռ նման պայմաններու մէջ, իմաստութենէն անկախ՝ վերապրելու բնագոյական միտումը կ'ըլլայ, ամէն բանէ առաջ, միանալ իբրեւ հաւաքականութիւն: Մոռնալ բոլոր տարակարծութիւնները: Չանոնք անտեսել իբրեւ անհարկի պերճանք, թողուլ ապագային: Եւ համախմբուիլ որպէս ամբողջութիւն ու ժողովուրդ: Հայութեան անբաժանելիութեան, եկեղեցական միասնականութեան եւ հայ ազգութեան հովանաւորող գաղափարներուն շուրջ եւ անոնց ներքեւ հաւաքուիլ միատեղ եւ միասիրտ: Հայաստանի, Էջմիածինի եւ ընդհանուր հայութեան ամբողջակաւնութեան խորհուրդներով:

* * *

24. ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԲԱՂՁԱՅ ԱՆԴՈՐԻ ԳՈՅԱԿՑՈՒԹԻՒՆ.

Թէեւ գուտ լիբանանեան հարցը մեր անմիջական ուշադրութեան ծիրէն դուրս կը մնայ այս առիթով, բայց քանի որ արտայայտութիւն եղաւ այդ առնչութեամբ, պիտի ուզէինք արձանագրած ըլլալ մեր ժողովուրդին բաղձանքն ու մաղթանքը մօտալուտ եւ արդար լուծումի մը:

Պատահարներու տրամաբանութեան հետեւելով, դժուար պիտի չըլլայ գուշակել թէ Լիբանանի մէջ արտաքին կարգադրութեամբ հնարաւոր պիտի չըլլայ ներքին մերձեցում մը յաջողցնել: Թէ միայն ներքին համաձայնութիւն մը՝ խաղաղութեան յոյսեր պիտի ներշնչէ երկրին եւ անոր շրջապատին: Անկարելի չէ, սակայն, որ արտաքին հաւասարակշռուած, անշահախնդիր օժանդակութիւն մը մեծապէս նպաստէ հիմնական կողմերու տեսակէտներու մօտեցումին եւ անոնց միջեւ շաղախուելիք վստահութեան եւ համաձայնութեան: Եւ այդ իմաստով՝ թերեւս այդ երկու անջատ պարագաներուն մոգական միախառնումով կարելի ըլլայ իրագործել բաղձացուած հրաշքը:

Յուսանք որ զենքերը բոլորովին դադրին գոռալէ եւ իրարամերժ եւ հակամարտ տեսակէտներուն ու շահերուն դասաւորումը լուծումի մը ի խնդիր, թողուի դիւանագիտութեան եւ ապագային: Մենք միայն կրնանք մաղթել որ կողմերը ունենան հանդուրժողութիւն, զիջողութեան ոգի, նոր իրադրութիւնը տեսնելու հասունութիւն: Յուցաբերեն զանազան տարբերութիւններու գոյակցութիւնը ընդունելու եւ այդ գոյակցութենէն բխող իշխանութեան բաշխումը ճանշնալու կամքն ու քաջութիւնը: Հաւատալով թէ փութով պիտի վերահաստատուի Լիբանանի միասնականութիւնը, ամբողջականութիւնը եւ ներքին հանդարտութիւնը, ի շահ եւ ի բարօրութիւն Լիբանանի ժողովուրդին իբրեւ ամբողջութիւն: Եւ այդ կերպով ապահովուի, գոյատեւէ եւ աճի նաեւ հայ գաղութը: Այդ իմաստով հայութիւնը անկեղծ կը տենչայ Լիբանանի անդորրութիւնը եւ հոն ապրող համայնքներուն սրտագին գոյակցութիւնը:

* * *

25. ՎԵՐՋԻՆ ՋԱՆՔ ՄԸՆ ԱԼ.

Ա. ՇԱՐՔԱՅԻՆՆԵՐԷՆ ԵՒ ՀԱՄԱԿԻՐՆԵՐԷՆ ԱԿՆԿԱԼՈՒԱԾԸ.

Անվերջ աշխատանքներ կատարում են Դաշնակցության հետ հասկացողության գալու համար: Բայց մինչև հիմա հնարաւոր չէ եղած բաղձալի արդիւնքի մը հասնիլ: Կարելի չէ եղած որեւէ տեղ հասնիլ: Ոչ ալ տրամաբանական հաւանականութիւններ կը նշմարուին որ ասկէ յետոյ հնարաւոր դառնայ նման իրագործում մը:

Մենք շատ փոքր ենք իբրեւ ժողովուրդ ու ճղճիմ որպէս սփիւռք՝ մեր մէկ մասի կորուստի պերճանքին տոկալու համար: Հնարաւոր ամէն միջոցի դիմելու է որ այդ կորուստը արգիլուի եւ կամ նուազագոյն տարողութեան վերածուի: Բայց եթէ մարդկօրէն սպառած են՝ հայրենիքին եւ հայութեան շուրջ, Էջմիածինի օրինութեան տակ բոլորուելու բոլոր կարելիութիւնները, այն ատեն անմտութիւն պիտի ըլլար միացման գաղափարներով ու կոչերով օրօրուիլ տեւապէս: Տեղը, ատեն մը, պէտք է կասի այդ նպատակին յատկացումը վատնումն ու հատնումը, եւ անոնք որ կը հաւատան ներկայ իրադրութեան ու կը դաւանին թէ ասելին, գոնէ նոր օրերու բովանդակութեան մէջ, անհասանելի անրջանք է, պէտք է շարժին դէպի յառաջ: Յառաջ պէտք է շարժին վստահ եւ անգիդջ, ու ետեւ թողուն այն գաղափարաբանները, որոնք, եթէ անկեղծ են «Միացեալ, Ազատ եւ Անկախ Հայաստան»ի իրենց հանգանակին մէջ, ոչ թէ երեխայական միամտութիւն կը յայտնաբերեն, այլ ողբերգական բախտախաղերու կը դարպասեն:

Բայց կ'արժէ թափել հուսկ ճիգ մըն ալ: Կ'արժէ, որովհետեւ յաջողութեան պարագային՝ միակ շահողը հայ ժողովուրդը պիտի ըլլայ: Որովհետեւ հայութիւնը այդ կերպով պիտի կարենայ ինքզինք վերջապէս ձերբազատել «Միացեալ»ին յառաջացուցած բաժանումէն, «ազատ»ութեան գերութենէն եւ «անկախ»ութեան առկախութենէն: Պիտի կարենայ ետ դառնալ իրեն սպասող խորտակման անկումէն:

Այս անգամ, սակայն, Դաշնակցության շարքայիներուն եւ համակիրներուն կը մնայ ստանձնել նախաձեռնութիւնը, եթէ անոնք իրապէս կը տենչան բարեփոխել տխուր կացութիւնը: Մինչև հիմա անոնք պէտք է ըմբռնած ըլլան կատարուածին բնոյթն ու էութիւնը, աւերումին տեսակն ու տարողութիւնը: Գիտցած ըլլալու են թէ Անթիլիասի տագնապով սկսած

ու շարունակուող երկփեղկումը կ'առաջնորդէ ոչ թէ մեր եկեղեցիի պահպանումին ու զօրացման, այլ այդ հաստատութեան ստոյգ քայքայումին: Կը տանի հայութեան պառակտումին ու կործանումին: Ու թերեւս շարքայիններն ու գաղափարակիցները կը յաջողին հոն, ուր ձախողեցան բոլոր միւսները:

Կ'ուզենք հաւատալ թէ այդ անդամներուն եւ համախոհներուն մէջ կան թիւով նկատելի անձեր, որոնք ընդհանուր հայութեան կենսական շահերը կը գերադասեն հատուածական նկատումներէն: Կը նախընտրեն մեր մշտական բարիքները՝ երեւութական, ժամանակաւոր առաւելութիւններէ: Որոնք կը դաւանին թէ կուսակցութիւնը հայութեան համար է: Եւ ոչ թէ հայ ժողովուրդը՝ Դաշնակցութեան համար:

Այդ կուսակցութեան ազդեցութեան ծիրին մէջ պէտք է գտնուին տակաւին այդպիսի հայեր: Միրտեր՝ որոնք թփրտան հայուն, հայ սրբութիւններուն, հայ երկրին, հայ ժողովուրդին եւ անոնց ապահով ապագային համար: Եւ այդ բոլորը յիմար ու մահաբեր բախտախնդրութիւններէ հեռու պահելու, այդ բոլորը եւ անոնցմէ իւրաքանչիւրը գուրգուրագին, երկիւղած եւ իմաստուն պահպանելու պատրաստ կեանքեր: Անոնց նուիրուելու յօժար գոյութիւններ: Փոխանակ տեսաբանական անելներու մէջ կորսուելու: Ցնորական փիլիսոփայութիւններու ուղղութեամբ վազելու տեղ՝ հայրենիքի եւ հայրենասիրութեան անունով:

Իրենց էութեան մէջ հայութեան հարազատութենէն մասեր զգացող այդ էակներուն կը մնայ կարելի ամէն միջոց գործածել, ու փութով, որպէսզի վճռական ազդեցութիւն բանեցնեն պատասխանատուներուն վրայ եւ բարւոք ելքի մը առաջնորդուի ազգային խուճապը:

Բ. ԱՐԺԱՆԱՊԱՏՏՈՒՈՒԹԵԱՆ ՈՒ ԽՂՃԻ ՊԱՀԱՆՋԸ.

Իսկ եթէ ամուլ մնան անոնց ճիգերը, եթէ անոնք ալ համոզուին, ինչպէս «Հայրենիք» կը խոստովանի, թէ օտար ոյժեր են որ կը վարեն ու կը վճռեն խնդրոյ առարկայ հարցերը, այն ատեն իրենք ալ պէտք է յարին համայն հայութեան զօրաշարժին:

Չենք ուզեր սխալ հասկցուիլ: Իսօպը անհնազանդութեան կամ ըմբոստացումի չի վերաբերիր: Կը ջանանք պարզապէս ըսել թէ անձ մը հաւատարիմ պէտք է մնայ իր պատկանած կուսակցութեան եթէ գիտակից կերպով եւ համոզուած միացած է անոր, եւ որքան ատեն կը շարունակէ հաւատալ անոր գաղափարախօսութեան եւ յառաջադրանքներուն: Բայց այդ անհատին հաւատարմութիւնը պայմանադրական ու սահմանուած է խնդրոյ առարկայ կազմակերպութեան՝ ժողովուրդին եւ հայրենիքին

ապահովության, բարիքին ու բարգաւաճումին ի խնդիր յառաջադրած աշխատանքով: Անոնց ծառայելու անսակարկ եւ անանձնական նուիրումով: Անդամակցութիւնը ձեւ մըն է գործելու երկրիդ ի նպաստ, կազմակերպության մը միջոցաւ՝ հաւաքական ճիգով:

Ու երբ կը տեսնուի թէ յիշեալ նախապայման տուեալները բացակայ են կուսակցական առումով, եւ կամ ժամանակ մը ներկայ ըլլալով հանդերձ յետագային անյայտացած են, այն ատեն անդամը իրաւունք մը, պարտք մը ունի ձերբազատուելու կուսակցական իր կաշկանդումէն եւ իր հաւատարմութիւնը մատուցանելու ուղղակի իր ժողովուրդին կամ ուրիշ յարմարագոյն կերպով: Այդպէս կը պահանջէ մէկուն արժանապատուութիւնը: Այդ կը հրահանգէ անձի մը խիղճը:

Գ. ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԷՐ.

Եթէ Դաշնակցութիւնը անդրդուելիօրէն յամառ եւ անգիջող կը մնայ իր տեսակէտներուն եւ յառաջադրանքներուն մէջ: Իսկ հայութիւնը համոզուած է թէ սխալ է անոր կեցուածքը՝ ազգային գերագոյն շահերու դատումով, այն ատեն հայութիւնը իրաւունք չունի լռելու, իրաւունք չունի գործօն դեր չստանձնելու ամբողջ հարցին մէջ: Պարտականութիւն ունի զգաստութեան հրաւիրելու եւ ի հարկին դիմակազերծ ընելու դերակատարներն ու պատասխանատուները:

Մեր այս խօսքերը կը բխին ոչ թշնամանքէ եւ ոչ դառնութենէ: Այլ հարազատ, անխաթար հայրենասիրութենէ: Մեր բառերը կը հոսին մաքուր զգացումներէ եւ հետզհետէ աւելի խորացող ցաւէ:

Դ. ՆՈՐ ՍԱՅԹԱՔՈՒՄՆԵՐ ԱՐՏՕՆԵԼԻ ՉԵՆ.

Այլեւս իրապէս չեն մնացած լուսանցքներ՝ սխալ շարժումներու եւ անբաղձալի սայթաքումներու: Իրաւասութիւններու վերաբերեալ տեսարանական վէճերու շռայլքին: Պէտք չէ թոյլ տրուի որ կուտակուած դառնութիւնն ու բարկութիւնը պղտորեն մեր տեսողութիւնը, մշուշեն նպատակակէտը, որ մէկ է միշտ: Ազգին միաւորումը՝ հնարաւորը փրկելու համար: Պատմութիւնը, հեռաւոր թէ մերձաւոր, պերճախօս պիտի բացատրէ մեզի թէ ի՞նչ սխալներ կրկնելէ խուսափելու ենք:

Պատմութիւնը իմաստուն դարձուցած ըլլալու է մեզ:

26. ԱՌԱՋԱՐԿ ՅԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ.

Ա. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ.

Եթե՛ զանց ընենք քանի մը արժանաւոր բացառութիւններ, որոնք իբրեւ կազմակերպութիւն կամ անհատ կ'աշխատին հեռատես, հետեւողական ու լայնախոհ եւ հայութեան մտահոգութիւններէն թելադրուած, կարելի է ըսել թէ՛ ժամանակակից Արշակաւանի մը տպաւորութիւնը կը թողու սփիւռքը յաճախ: Հասնողը կրնայ ինքնագլուխ գործունէութեան ձեռնարկել հոն: Կրնայ անձնական նորելուկ եւ յաճախ տարօրինակ տեսակէտներ հրապարակ հանել ու կիրարկել՝ իբրեւ թէ որդեգրուած ձեւը ըլլար սկզբունքային նոր եղանակով մը գործելու: Զիչ չեն այն դէպքերը, ուր եսակեդրոն եւ ինքնանպատակ գործունէութիւններ տիրապետող բնոյթ կը ստանան: Մանաւանդ երբ անհրաժեշտ դրամական միջոցներ կան տրամադրելի: Եւ ոչ ոք կրնայ կասեցնել զանոնք: Նիւթական կամ բարոյական ոչ մէկ ոյժ կրնայ հակակշիռ ունենալ անոնց վրայ: Մարդիկ պարզապէս կը գործեն այնպէս՝ ինչպէս իրենք յարմար կը դատեն, մերժելով ենթարկուիլ ազգային բարոյականութեան որեւէ չափանիշի ու վանելով հաւաքական պատասխանատուութեան գիտակցութեան յետին նշոյլն իսկ:

Բ. ԵԹԷ Կ'ՈՒՉԵՆՔ ՄԵՂՍԱԿԻՑ ԵՂԱԾ ՉԸԼԼԱԼ.

Ու թերեւս այս արտառոց կացութիւնն է որ արտօնած է կամ դիւրացուցած է որ Անթիլիասի տազնապը ստեղծուի: Թերեւս նոյն պատճառով է որ անլոյծ կը մնայ այդ թնճուկը: Այնքան ժամանակ անցած է անոր սկզբնաւորութենէն ի վեր բայց ոչ միայն չէ մեղմացած լարուածութիւնը, ոչ միայն յուսադրական նշաններ չեն երեւիր հորիզոնին վրայ, այլ նաեւ տազնապը երթալէն կը հագնի նոր սրութիւն եւ աղիտալի բնոյթ կը ստանայ: Իսկ ատենէ մը ի վեր ան սկսած է ճնշել հայ կեանքին, հայ ամօրեային, հայ հոգիներուն վրայ:

Ու եթէ մինչեւ այսօր, հասկնալի եւ այլ պատճառներով, հայութիւնը մնացած է վերապահ եւ անտարբեր, մնացած է կրաւորական՝ տեսակ մը անտեղեակ ձեւանալով բարդութեան իրական բնոյթին ու տարողութեան, իր աչքերուն առջեւ տեսնելով հանդերձ բզկտուիլը մեր եկեղեցիի նուիրականութիւններուն եւ մեր միասնականութեան, այլեւս արտօնելի չէ որ նման վարմունք մը շարունակուի:

Կարելի չէ արդարացնել պարզապես բան մը չընելը, դրական կամ ժխտական: Նման ընթացք մը պատասխանատվությունն գերծ չի կացուցաներ մեկը: Բան մը չընելը, հոն ուր պետք է գործել, կամ բան մը ընելու մեջ թերանալը՝ հոն ուր պարտավորություն մը կայ արարք մը կատարելու կամ ընելու, երբեմն նոյնքան պատասխանատվություն կը նշանակե ենթակային համար որքան վնասարար անոր գործը:

Մեր մեջ կան շատեր, որոնք չեն ուզեր կորսնցնել ոեւէ մէկուն բարեկամությունը եւ կամ կ'ուզեն բոլորը իրենց բարեկամ ընել ու պահել: Չեն ուզեր «գէշ» ըլլալ ոեւէ մէկուն հետ: Չեն առարկեր որեւէ ձեռով եթէ նոյնիսկ ամենէն անհեթեթ առաջարկներուն հանդիպին: Չեն բողոքեր եթէ նոյնիսկ եկեղեցիին, հայութեան համար ամենէն աննպաստ ու վտանգաւոր կացութիւններ ստեղծուին: Իրենք «կողմերէն վեր» պետք է նկատուին: Ինչո՞ւ, կը խորհին անոնք, չվայելեն ոչ ոքի հետ ըլլալու առաւելութիւնները: Ինչո՞ւ բոլոր կողմերէն ալ չօգտուին իրենք: Եւ ի վերջոյ յաղթողին կողմը եղած չըլլան, ով ալ ըլլայ յաղթականը: Ինչո՞ւ ամեն կողմէ չփնտռուին, չպատուուին, չծափահարուին, չփառաբանուին եւ իմաստուն չդասուին ընդհանուրէն՝ իրենց ճարտար կեցուածքին համար:

Բայց վերջ մը տրուելու է այդ տխուր կացութեան:

Բոլորս գիտակցած ըլլալու ենք մինչեւ հիմա թէ արտասահմանը եւ մեր եկեղեցին ի՞նչ ծանր ցնցումներ կրեցին՝ եկեղեցական կանոններու խախտումին հետեւանքով յառաջացած տագնապին պատճառով: Եւ այլեւս հարկ է կանգ առնել վճռական՝ հանգոյցը լուծելու որոշումով: Այլապէս հաւանութեամբ կամ թուրեամբ մասնակից ու մեղսակից եղած պիտի ըլլանք գործուած ու շարունակուող ապօրինութիւններուն:

Անթիլիասի արուեստական անելը՝ անարգանք մըն է մեր իմացողութեան:

Գ. ԱՐՏԱՍԱՀՄԱՆԸ ՉԷ ՀԱՄԿՑԱԾ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՄԱՍՏԸ.

Արտասահմանի ակնարկելով՝ պետք է ըսել թէ հայերս չունինք պետական ըմբռնում, պետական մտածողութիւն: Չենք կրցած տակաւին հասկնալ պետութեան իրական իմաստն ու տարողութիւնը: Չենք կրցած գանազանել կառավարութիւնը, հայրենիքը, ժողովուրդը՝ կուսակցութենէն: Ու բնական է այս վիճակը որովհետեւ չենք ունեցած իբրեւ հաւաքականութիւն, քաղաքական դաստիարակութիւն, հաւաքական պատասխանատվութիւն եւ պետական կեանքի վարժութիւն: Եւ յաճախ կասկածելի է թէ իրապէս գիտակցած ենք մեր ստանձնած պարտավորութիւններուն ընդթին ու ծանրութեան:

Դ. ՄԵՐ ԲԱԺԻՆԸ ՄԵՐ ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՄԷՋ.

Հայերս, ընդհանուր առմամբ, թեթեւամիտ ըլլալու աստիճան անփոյոյ ու վարանոտ եղած ենք մեզի սպառնացող վտանգներուն հանդէպ, որովհետեւ չենք ըմբռնած անոնց էութիւնը: Չենք ունեցած ազգովին նախատեսելու ընդունակութիւնը: Շատ անգամներ սխալ ապացուցուած են մեր հաշիւներն ու նախահաշիւները, ու շարունակ անակնկալներու կամ կատարուած իրողութիւններու առջեւ գտնուած ենք իբրեւ ժողովուրդ: Եւ անոր համար պատմութեան ընթացքին մեր դժբախտութիւններուն, տխուր մեր ճակատագիրին մէջ քիչ բաժին կամ պատասխանատուութիւն չեն ունեցած մեր սեփական ապիկարութիւնը, քաղաքական խակութիւնը եւ հաւասարակշռուած մտածողութեան, լայնածիր դատողութեան բացակայութիւնը, աննշան դեր չէ. ունեցած իմաստութեան պակասը: Մեր գործերը որպէս կազմակերպուած հաւաքականութիւն, նոյնիսկ պետական կեանքը՝ երբ ունեցած ենք անցեալին, վարելու անպատրաստ գտնուած ենք: Եւ նման պարագաներու, պատասխանատու համարած ենք ուրիշները միշտ: Մանկականի մօտեցող միամտութեամբ ակնկալութիւններ ունեցած ենք անոնցմէ: Չենք ջանացած գտնել յանցանքի մեր բաժինը՝ մեզի սահմանուած դժբախտութիւններուն ու ողբերգութեան մէջ: Բայց պատմութիւնը արդարօրէն արձանագրած է մեր անկարողութիւնը եւ անձեռնհասութիւնը այդ տեսակէտով:

Ե. ԽՈՐՏԱԿՄԱՆ ՀԱՌԱՉՆԵՐ ՈՒ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ
ԱՂԱՂԱԿՆԵՐԸ.

Ներկայ Հայաստանը ուրախանալի, հոգեպարար բացառութիւն մըն է այդ իմաստով: Ան գտած է պատմական իր հունը եւ կ'ընթանայ այդ հունով՝ ապահով ու վստահ: Կ'երթայ անվտանգ՝ ամբողջ 63 տարիներէ ի վեր: Եւ ազգային բարեբախտութիւն մըն է այս եղելութիւնը: Դարերու ընթացքին չկրկնուած երեւոյթ մը:

Բայց որքան տարբեր է բախտը արտասահմանի:

Սփիւռքահայ իրականութեան մէջ մեր ոյժերը տրտմօրէն քիչ են: Ու եղածներն ալ կը ջանանք ամբողջութեամբ յատկացնել հայապահպանումին, եւ հայութիւնը հայրենիքին կապուած պահելու գործին: Բայց այդ օրհասական ճիգին քովն ի վեր կայ ցաւալի երեւոյթ մը, որ կը կաշկանդէ այդ աշխատանքները, ամուլ եւ անիմաստ կը դարձնէ զանոնք: Մարդիկ բաժանումներ կը յառաջացնեն գաղութներու մէջ՝ հատուածական միտումներով եւ այլազան իմաստագործկ պատճառաբանութիւններով:

Եւ ի՞նչպէս կարելի է յուսալ որ հայ դատի քաղաքական աշխատանք-

ներուն առնչությամբ հնարաւոր ըլլայ միասնականութիւն, ներդաշնակութիւն կամ ամենատարրական գործակցութիւնը ստեղծել երբ հայութեան մէկ հատուածը կ'ընթանայ տարբեր ուղիներով, տարբեր նպատակներով: Յոյց կուտայ անհաշտ, ժխտական, նոյնիսկ թշնամական վերաբերում:

Պէտք է շատոնց գիտակցած ըլլանք թէ, մեկուսացած դէմքերէ, դէպքերէ ու պահերէ անջատ, յոգնութեան եւ ընկրկումի, մաշումի ու խորտակման հառաչներ կուգան տեւապէս, վիատութեան ու վախի, լքումի եւ ուրացումի ձայներ կը լսուին ամէն կողմէ: Մինչ խանդավառ եւ ներշնչող կանչերը, ուրախութեան աղաղակները կը հասնին միայն հայրենական հողերէն:

Այս իրողութիւնները վերածած գիտակցութեան ու ապրումի, ազգային հասկացողութեամբ եւ առողջ սկզբունքներով զօրացած, ջանանք վերակառուցանել սփիւռքը: Համադրել ու ներդաշնակել տարտղնուած գաղութները եւ անոնց անկապ ճիգերը: Եւ սկսինք եկեղեցական հարցէն:

2. ՊԱՏՏԱՄԵԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԶԳԱՑՈՒՄ ՍԵՐՈՒՆԴՆԵՐՈՒ ԱՌՋԵՒ.

Պատմութիւնը բերեր կանգնեցուցեր է մեզ՝ Ճակատագրական օրուան մը սեմին, վճռական դարձակէտի մը դէմ յանդիման: Եւ մենք պէտք է բախտորոշ որոշում մը տանք: Կը պահանջուի մեզմէ այդ որոշումը:

Հայութեան, եկեղեցիին, հայրենիքին եւ նման սրբութիւններու անունով խօսող խոնարհ թէ ղեկավար ու բարձրաստիճան անձնաւորութիւնները, իրենց տարողութեան համապատասխան բաժին հարկ է ստանձնեն պատմական այս գործունէութեան մէջ, գտնեն իրենց վերապահուած տեղը: Սուրբ Էջմիածինի հեղինակութեան ու վարկին պաշտպանութեան պայքարին մէջ: Հայ ժողովուրդին եւ անոր ապագային ի նպաստ այս պոռթկումին ու մաքառումին մէջ:

Ժողովուրդը ղեկավարել կամեցող կամ յաւակնող ոյժերը պատասխանատուութեան զգացում պէտք է ունենան ազգին ու գալիքին առջեւ: Հարկ է անվերապահ միանան ընդհանուր աշխատանքին եւ առաջնորդեն գայն:

Նոյնը պէտք է ընեն նաեւ կազմակերպութիւններն ու միութիւնները:

Է. ՌԱԿ-ԻՆ ԴԵՐԸ

Խօսելով առանձնապէս ՌԱԿ-ի մասին, պէտք է հաստատել թէ ան առաջին մէկ օրէն բռնեց ճիշդ ընթացք եւ ուղղութիւն: Ծիշդ գնահատեց ու նախատեսեց իրադարձութիւնները եւ ճիշդ գուշակեց անոնց ցաւալի

հետեւանքները: Եւ հակառակ որ կանխահաս, մակերեսային եւ անպատրաստ կը համարէր եկեղեցական մերձեցումները, հաւատարմաբար եւ համբերատարութեամբ կեցաւ Էջմիածինի եւ օրինաւորութեան կողքին: Անվերապահ պաշտպանեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վստահ ըլլալով թէ այդ կերպով կը պաշտպանէր Հայց. Եկեղեցին: Գիտնալով թէ հայ եկեղեցիին շահերը պաշտպանելու հետ ոչ մէկ առնչութիւն ունէր Անթիլիասի «տէրն ու ղեկավարը» դառնալը՝ ընդդէմ Էջմիածինի: Ընդհակառակը, ՌԱԿ-ը կը դաւանէր թէ հարկ էր ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թոյլ չտային, որոնք արգիլէին որ Կիլիկիոյ Կաթողիկոսարանը ենթարկուէր քաղաքական ու կուսակցական տիրապետութեան կամ ազդեցութիւններու:

Բայց իր շուրջ կատարուող իրադարձութիւններուն թելադրութիւնը այլեւս կը թուի ըլլալ թէ ՌԱԿ-ի համբերատարութիւնը եւ հանդուրժողութիւնը պահանջուածէն աւելի եղած են: Տագնապալի այս խնդրին մասին լռութիւնը տեսած է պարտաճանաչութեան, հաւատարմութեան ու խոհեմութեան պարտադրածէն աւելի երկար ու լայն: Եւ լռութիւնը այլեւս ոչ թէ խոհեմութիւն եւ իմաստութիւն դադրած է ըլլալէ, այլ վտանգ մը կայ որ մերձեցայ մեղսակցութեան սահմաններուն:

ՌԱԿ-ը հարկ է ընդունի իր այդ ակամայ թերացումը եւ գործի անցնի: Անմիջապէս անցնի գործի, լուսաբանելով եւ առաջնորդելով: Խորհրդակցելով, ի հարկին, Բարեգործականի եւ այլ համակիր եւ համախոհ կազմակերպութիւններու, միութիւններու եւ եկեղեցական իշխանութիւններու հետ: Գործի անցնի, անհրաժեշտ նախապատրաստութեամբ՝ յստակ ծրագիրի մը իրագործումը հետապնդելով: Ոչ թէ գովասանք փնտռելու համար թէ ճիշդ ապացուցուեցան եկեղեցական տագնապին վերաբերեալ իր տեսակէտներն ու կեցուածքը: Ոչ թէ հատուածական շահերու հետամուտ ըլլալու համար: Ոչ թէ ինքնաշնորհաւորութեան համար: Այլ՝ միշտ ի խնդիր հայ եկեղեցիի ներքին խաղաղութեան եւ միութեան, հայ ժողովուրդի հոգեկան ամբողջականութեան, անբաժանելիութեան եւ անդորրութեան: Առաջնորդուած՝ մեր եկեղեցական իրաւասութիւններուն դարաւոր կանոններով: Գաղութներու ներդաշնակ եւ արդիւնաւոր կեանքին մտահոգութիւններէն թելադրուած: Ոչ թէ պարզապէս դատապարտելու համար յանցագործները, այլ լծուելու համար դրական, անհաշիւ եւ անսակարկ աշխատանքի: Դաւանելով թէ մէկ է հայ ժողովուրդը, մէկ է Հայց. Եկեղեցին

Ը. ՄԻԱՑԱԾ, ՄԱՔՐՈՒԲԱԾ, ՆՈՒԻՐԵԱԼ ԵՒ ՀԱՐԱՏԱՎՈՐ.

Ժողովուրդը առանց վարանելու պէտք է դատապարտէ եղածը ամէնէն

խիստ լեզուով: Պնդէ եղածին ապօրինութեան վրայ եւ մերժէ ընդունիլ ու ճանչնալ որեւէ կերպով կատարուած իրողութիւնները: Պէտք է պահանջէ հայ եկեղեցիին ներքին կեանքին օրինաւորութիւնը, միութիւնն ու խաղաղութիւնը: Հայութիւնը որպէս մէկ մարմին եւ հոգի, ոտքի կանգնի եւ Անթիլիասէն անտեղիտալի պահանջէ եկեղեցիին կողոպտուած իրաւունքները եւ պահպանէ մեր եկեղեցիին միասնականութիւնը, անբաժանելիութիւնը, հեղինակութիւնը: Պէտք է ամէն կերպով օգնէ Ս. Էջմիածինին եւ անոր Գահակալին որ անոնք վերահաստատեն կարգն ու կանոնը, վերահաստատեն հայ կեանքին անդորրութիւնը: Որպէսզի սփիւռքը կարենայ նուիրուիլ հայրենանուէր աշխատանքի, եւ հայ երագներու իրականացումին համար պատրաստէ տենչացուած հեռանկարներ: Միացած, մաքրուած, նուիրեալ եւ հաւատաւոր:

Մինչ այդ, սակայն, ժողովուրդը պէտք է մերժէ ճանչնալ այդ արարքները եւ անոնցմով կատարուածները: Մերժէ գործակցիլ Անթիլիասի Աթոռին եւ անոր Աթոռակալին: Մերժէ օգնել անոնց նիւթական կամ բարոյական տեսակէտով, կամ յարաբերութիւն ունենալ անոնց հետ, որքան ատեն անոնք չեն ճանչնար Ս. Էջմիածինի Կաթողիկոսը իբրեւ Ընդհանրական Հայրապետ եւ Գլուխը Հայց. Եկեղեցիին: Որքան ժամանակ կը պնդեն երկու Աթոռներու «հաւասարագօրութեան» տեսակէտին վրայ: Մինչեւ որ վերադարձնեն ապօրէն վիճակին շնորհիւ իրենց առածները: Մէկ խօսքով, մինչեւ որ հարցերը բերուին իրենց նախորդ դրութեան, օրինազանցութենէն առաջ գոյութիւն ունեցող կացութեան: Եւ որքան ժամանակ չէ կատարուած պահանջուածը, ժողովուրդը մերժէ անոնց հետ ունենալ որեւէ յարաբերութիւն, որքան ալ անմեղ բնոյթ ունենայ այդ յարաբերութիւնը: Եւ որքան ալ եկեղեցասիրական կամ հայրենասիրական թուի ըլլալ ան: Նոյն դիրքը բռնելու է նաեւ՝ Անթիլիասին ապօրէն միացուած թեմերու եւ եկեղեցական իշխանութիւններու նկատմամբ:

Ոտքի պէտք է ելլէ աշխարհի ամբողջ հայութիւնը՝ առանց բացառութեան: Ու տարակոյս չկայ թէ Կիլիկիոյ թեմերն ալ կրնան կատարել իրենցմէ սպասուած պարտականութիւնը այդ առնչութեամբ:

Պէտք է վերահաստատուի օրինաւորութիւնը: Եւ արդէն հասկնալի է թէ, այլապէս, Մայր Աթոռը եւ անոր իրաւասութեան տակ գտնուող թեմական իշխանութիւնները պաշտօնապէս որեւէ ձեւով չեն կրնար, եթէ նոյնիսկ ուզեն, յարաբերութիւն ունենալ Անթիլիասի Աթոռին եւ անոր միաբանութեան հետ: Կամ «բաժանեալ»ներուն:

Թ. ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ Է ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՒՆ.

Հայ Եկեղեցին եղած է, մեր պատմութեան տխուր օրերուն, մեր ժողովուրդին առաջնորդը – նոյնիսկ քաղաքական ղեկավարը:

Եղած է մշակոյթի աղբիւր ու դաշտ, մշակոյթի պահապան ու մշակ:

Եղած է հաստատութիւն մը որ քրիստոնէութիւնը հայացուցած է: Կրօնքը վերածած է ազգային ազդակի:

Եղած՝ ազգասիրութեան եւ ազգապահպանման ճիգ, եւ անոնց համար գոհաբերում:

Եղած է մեր հոգեկան միասնականութեան խորհրդանիշ ու ջատագով:

Մեր ժողովուրդին ամբողջականութեան համար կամուրջ ու խորհուրդ:

Եղած է մեր ազգային միտումներուն արտայայտութիւն եւ միակամութեան ու միութեան համար մաքառող:

Եւ հայութեան պարտքն է Եկեղեցին պաշտպանել նուիրական ու սրբազին՝ ինչպէս զայն պաշտպաներ էին մեր նախահայրերը՝ Աւարայրի ճակատամարտին:

Ինչպէս պաշտպաներ էին մեր վանականները սրախողխող՝ մեզ եւ մեր հաւատքը հալածող սուլիներուն եւ սուրերուն դէմ:

Ինչպէս պաշտպաներ էին գաղթական մեր մամիկներն ու պապիկները՝ նոյնացնելով հաւատք եւ հայութիւն: Որոնք փրկելով աւետարանն ու մատենաները, երազեր էին փրկել ապագան:

Ինչպէս նուիրեալ եւ հաւատաւոր մեր զինուորեալները, արքաները, իշխանները, խոնարհ գեղջուկները պաշտպաներ էին մեր հաւատքը՝ պաշտպաներ էին այնպէս ինչպէս իրենց էութիւնը:

Ինչպէս հայութիւնը եւ մեր պատմութիւնը պաշտպաներ են Սուրբ Էջմիածինը ամէն տեսակ ոսոխներու եւ անհաւատներու դէմ:

Ժ. ՀԱՒԱԶԱԿԱՆ ՈՅԺԵՐՈՎ ՎԱՆԵԼ ԱՄԷՆ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆ.

Մեզի նշանաբան ընտրենք դաշնակցական պաշտօնաթերթ «Հայրենիք»ի խօսքերը: Անկարկեցինք «Նոր Անկիւնադարձի մը Առջեւ» խորագիրով անոր մէկ խմբագրականին⁴⁸:

Կ'արտագրենք անկէ ուրիշ մաս մը, որ բաղկացած է ճիշդ նկատուած ու ճշմարտութեան մէջ թաթախուած խոհերէ: Որ թերեւս աւելի հրապարակային խոստովանութիւն մը է: Թերեւս անհանգիստ խիղճի մը գաղտնի աղաղակը.

⁴⁸ «Հայրենիք» Օրաթերթ, 1977 Յունիս 30-ի թիւ:

«Ակնկալելի է որ դառն փորձառությունը զարթուցիչ զանգի դեր կատարել այսուհետև: Ամեն անգամ որ օրենք մը, աւանդութիւն մը, նուիրականութիւն մը կամ իրաւունք մը կապտելու փորձ կայ մեր կեանքի ներքին ճակատներուն վրայ՝ պէտք է անդրադառնանք թէ օտարը սողոսկած է մեր շարքերէն ներս - առնուազն օտար հաշիւներ ու խաղեր կ'անդրադառնան Հայութեան շահերուն, եւ անհրաժեշտ է հաւաքական ոյժերով վանել ամէն ոտնձգութիւն»⁴⁹:

Ակնարկութիւնը շատ թափանցիկ է: Քիչ հայեր տարակարծիք պիտի գտնուէին այդ ըստածներուն: Մանաւանդ այն հաստատումին թէ Անթիլիասի հարցին մէջ «օտար հաշիւներ ու խաղեր» պէտք է փնտռել:

Իրականին մէջ այն պահուն երբ բռնութեամբ եւ հայ եկեղեցիին ըմբռնումին ու ոգիին հակառակ եղանակով տեղի կ'ունենար կաթողիկոսական ընտրութիւն մը 1956-ին, այդ պահուն իսկ արդէն գոհուած էին թէ՛ եկեղեցիին նուիրականութիւններն ու օրինաւորութիւնը եւ թէ՛ հայ ժողովուրդին միասնականութիւնը եւ հոգեկան անբաժանելիութիւնը:

Բայց «աւանդութիւն մը, նուիրականութիւն մը կամ իրաւունք մը կապտելու փորձ» չէ որ կայ այս պարագային: Եղածը անամաչ յափշտակութիւն մըն է: Կասկած չկայ «թէ օտարը սողոսկած է մեր շարքերէն ներս»: Եւ ուստի զօրաշարժի ենթարկուած՝ «անհրաժեշտ է հաւաքական ոյժերով վանել ամէն ոտնձգութիւն», ով ալ եղած ըլլայ զայն կատարողը:

ԺԱ. ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԸ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ.

Թերեւս պէտք է նաեւ պատասխանատուները կազմակերպեն Եպիսկոպոսական Համագումար մը, որ զբաղի առանձնապէս եկեղեցական հարցով կամ բաժանումով: Ինչպէս կատարուած էր 1956 Մարտին: Անկէ ի վեր աւելի քան քառորդ դար անցեր է: Եւ անհրաժեշտ է որ մեր եկեղեցին վերաքննէ ամբողջ կացութիւնը: Վերատեսութեան ենթարկել մինչեւ այսօր տեղի ունեցած բոլոր իրադարձութիւնները: Եւ անոնց լոյսին տակ՝ մեկնէ նոր իրադրութեան իմաստը: Հարկ է դիմագրաւել տագնապալից պատահարները, դաժան դիտաւորութիւնները, եւ յանգիլ անխուսափելի եզրակացութիւններու: Մանաւանդ՝ պէտք է առնել հարկաւոր քայլերը, առանց տատանումի, խիզախ նախաձեռնութեամբ որպէսզի շփոթութիւնը չարուակաւուի իր ներկայ քանդիչ ընթացքով եւ հանգամանքով:

⁴⁹ Նոյն:

Եպիսկոպոսական Համագումարը պետք է խօսի ժողովուրդին: Եւ մէկ ձայնով: Ըսէ թէ ի՞նչպէս հարկ է վերահաստատուին Հայց. Եկեղեցիին օրինաւորութիւնը եւ ներքին խաղաղութիւնը:

Մեր եկեղեցիին ու ժողովուրդին կենսական ու մնայուն շահերը կը պահանջեն վերականգնումը օրինականութեան, միութեան եւ արդիւնաւոր գործակցութեան մեր նուիրապետական պատմական Աթոռներուն միջեւ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի օրինութեան ներքեւ:

Ու Եպիսկոպոսական Համագումարը պետք է առաջնորդէ ու ներշնչէ հաւատացեալները, զանոնք բոլորելով Սուրբ Էջմիածինի շուրջ: Եւ անով հայութեան գաղափարին շուրջ:

ԺԲ. ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵ՛Հ ՊԱ՛ՀԵՐՈՒՄ ԱՐԺԱՆԻ.

Ժամանակն է որ առարկայական խստութեամբ ու քաջաբար դիմագրաւուին հարցերը եւ իրականութիւնները: Եւ զանոնք մանրագնին քննելէ ու մասնագիտական ուսումնասիրելէ յետոյ, կատարուի անհրաժեշտ ախտաճանաչումը: Եւ մանաւանդ՝ ատենն է որ այլեւս որդեգրուին դարմանումի ու բուժումի համապատասխան համարձակ միջոցները, վերահաստատելու համար գաղութային եւ սփիւռքեան առողջութիւնը: Եւ յետոյ պահպանելու զայն սրբութեան նման եւ անոր վրայ դողալու, հոգելին գուրգուրալու:

Ազգային գիտակցութիւնն ու տոհմային հաւատարմութիւնը կը հրահանգեն որ Սուրբ Էջմիածինի եւ անոր Գահակալ Ամենայն Հայոց Հայրապետին նուիրապետական եւ հոգեւոր իշխանութեան գերակայութիւնը պաշտպանուի ու պահպանուի ամէն գինով: Այս կէտին շուրջ ի գուր է վիճիլ կամ սակարկութիւն ընել փորձելը, որովհետեւ աւանդութիւններով սրբագործուած իրաւական վիճակը պատմական ու կանոնական իրողութիւն մըն է: Ու սխալ պիտի չըլլար ըսել թէ Հայց. Եկեղեցիին սկզբունքներուն ու դարաւոր աւանդութիւններուն հաստատումը եւ կիրարկումը կը կազմեն Հայց. Եկեղեցիին հիմը :Մինչ անոնք բեկանումը եւ անտեսումը պիտի առաջնորդեն մեր եկեղեցիի քայքայումին ու կործանումին:

Ս. Էջմիածինը վեր կը մնայ, վեր պահելու ենք, կողմերու եւ հատուածներու մտահոգութիւններէն ու շահերէն: Ան կը ճանչնայ միայն մէկ կողմ - Հայց. Եկեղեցին իր հաւատացեալ ժողովուրդով: Եւ այդ իմաստով՝ ան արդէն կը պատկանի ամբողջ հայութեան:

Եկեղեցական տագնապը ա՛յլ պետք է լուծուի: Բոլորս ալ համաձայն ենք այդ մասին: Մեր ժողովուրդը մաշող պառակտումը պետք է վերնայ ու կարելի եղածին չափ շուտով: Նոյնիսկ Դաշնակցութիւնը, ուղղակի կամ

Անթիլիասի բերանով եւ այլապէս, նման արտայայտութիւններ կը ստիպուի ունենալ, չհաւատալով հանդերձ իր ըսածին, հանրային կարծիքը ողորդելու մտահոգութեամբ: Անթիլիասի բանակցութիւններն ալ թերեւս մաս էին այդպիսի ճիգի մը:

Լիբանանի աղէտը եկաւ անգամ մը եւս յիշեցնելու եւ ընդգծելու թէ ինչ ահաւոր վտանգներ կը սպասեն ամէնէն ապահով իսկ կարծուած համայնքներու, եւ ինչ կործանում կրնայ սպառնալ բաժանեալ ու կոտորակեալ գաղութի մը:

Պառակտումը՝ հայ ժողովուրդին մարմինին վրայ ապաստանած վերք մըն է: Վերք մը՝ որ աւելի քան 26 տարիներէ ի վեր հետզհետէ աւելի կը խորանայ, աւելի կը տարածուի: Ու եթէ շուտով հասկացողութեան դարմանումով, եթէ հնարաւոր է այդպիսի սխրանք մը, այլապէս վիրահատումի վճռական միջամտութեամբ չկասեցուի այդ վերքին կործանարար յառաջխաղացքը, ան պիտի վերածուի քաղցկեղի: Պիտի վերածուի անյոյս հիւանդութեան մը, որ պիտի մաշեցնէ ու քայքայէ ամբողջ մարմինը: Բայց այլեւս հոգին սկսած է վարակուիլ ու մաշիլ եւ այն ձեւով ու չափով որ մարմինէն առաջ խաթարուի ու նեխի:

Եթէ թոյլ տանք որ ցեղային վերապրումի բնագոյր, քաղաքական իմաստութիւնը առաջնորդէ մեզ, եթէ փոխանցման այս շրջանը համարենք պատմական անկրկնելի պատեհութիւն մը եւ շուտով վճռենք անմիջական դարմանումի եղանակը, մեր պատմութեան մեծ պահերուն արժանի արարք մը կատարած պիտի ըլլանք ազգովին: Ազգը արթնցած պիտի ըլլայ հրաշագին՝ անհասանելի թուած սխրանքի մը ընդմէջէն:

* * *

27. ՏԱԳՆԱՊԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ ՊԱՇԱՐՈՂ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. ԷԶՄԻԱԾԻՆԸ ՄԵՐ ՀԱՒԱՏՔՆ Է, ՀԱՅՈՒԹԵԱՆ
ՅԱԲԵՐԺՈՒԹԻՒՆԸ.

Կ'անցնին ամպրոպներն ու մրրիկները, իրենց սփռած սարսափներով եւ աւերներով: Կը մնան, սակայն, հայրենիքը եւ մեր հոգեկան հարստութիւնը: Կը մնան անխորտակելի եւ անկապտելի, իրենց անդրաշխարհեան ցոլարձակումներով, յաւերժականութեան իրենց դրոշմով: Ու կը վերապրի Էջմիածինը: Մեր հայրենիքին ու հայ ժողովուրդին հետ: Մինչ կը մոռցուն անոր ոտխները, կը կորստին անոր մրցակից ու զայն փոխարինող ըլլալ յաւակնողները: Ինչպէս անհետացան դարերու մեր բոլոր թշնամիներն ու մեզի դաւադրողները: Ինչպէս անցան մեր եկեղեցիին մարմինը ցնցող, անոր կառոյցը սարսող բոլոր փոթորիկները:

Կը տապալին ու կը մոռցուն երկրէն հեռու, որբացած բոլոր աղօթատեղիները: Կը մնայ Էջմիածինը: Որովհետեւ ան խարսխուած է մայր հողին վրայ, նուիրականութիւններուն, նահատակներուն եւ հերոսներուն նշխարներուն մէջ խրած է խորունկ: Ու կը բարձրանայ անոնց հաւատամքին ու բաղձանքներուն մէջէն: Կը յառնէ հայութեան ակնկալութիւններուն ընդմէջէն: Կը կանգնի ինքն ալ որպէս նիւթացած, կենդանի սրբութիւն:

Ոչ մէկ ոյժ կրնայ Էջմիածինին սպառնալ կամ ընդդիմանալ անոր: Ան իր բարութեամբ ու մաքրութեամբ, իր ահեղ համբերութեամբ եւ ինքնավստահութեամբ, իր ետեւ թողած փոքրութիւններն ու մոլորանքները, անցաւորներն ու խաբուսիկները, կը թելածէ դէպի հեռուները, ուր ժամադրուած է պատմութեան հետ:

Էջմիածինը հայրենիքն է, հայ ժողովուրդն է, մեր անցեալն է եւ մեր ապագան: Մեր հաւատքն է՝ հայութեան յաւերժութեան: Կրօնական կառոյցէ աւելի, հայ հոգիին խորհուրդն է, գաղտնի միացած հայ հողին եւ հայութեան, տեղ մը նոյնացած անոնց հետ:

Բ. ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՄԸ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԱՐՄԱՏՆԵՐԸ Կ'ԱՐՁԱԿՈՒԻՆ
ՀՈՂԻՆ ՄԷՋ.

Ժողովուրդի մը գոյատեւման առաջին նախապայմանը անոր վերապրումն է ներկային ընդմէջէն դէպի ապագան: Եւ այս ճշմարտութիւնը

անխուսափելի պահանջք կը դառնայ երբ թիւով փոքր ազգ մըն է ենթական, որ բարդ ու բիրտ աշխարհի ցնցումներէն եւ հողմներէն կրնայ աւելի դիւրին հարուածուիլ ու հալածուիլ: Կրնայ տարտղնուիլ ու կոտորակուիլ եւ հետզհետէ անհետանալ:

Հայութեան համար ներկայիս, ինչպէս մեր դարաւոր պատմութեան ընթացքին եղած է յաճախ, ամէնէն կենսական, բախտորոշ եւ անյետաձգելի խնդիրը, ֆիզիքական ապահովութիւնը, մարմնական գոյութիւնն է: Մեռեալները անցեալին կը պատկանին: Ու եթէ զիրենք յաջողող, զիրենք շարունակող ողջեր չգտնեն, անոնք ապագայ չեն ունենար, որքան ալ հերոսական եւ հարուստ եղած ըլլայ անոնց երկրային կեանքը: Մեր ֆիզիքական վերապրումը ապահովելէ անմիջապէս յետոյ՝ կու գայ մեր հոգեկան գոյութիւնը: Եւ անով՝ մեր մշակոյթին ծաղկումը: Կու գան՝ հայեցի շունչն ու ոգին: Կու գան հայութեան գոյութեան իրաւունքը եւ աշխարհը մեր ներքին հարստութեամբ ազնուացնելու բախտը եւ ուրախութիւնը: Իսկ անոնք կը տանին ազգային վերապրումի ու ցեղային կենդանութեան:

Անկրկնելի բարիք է որ ներկայիս մեր երկրին մէջ գոյութիւն ունին հնարաւոր նախապայմանները հայեցի ծաղկումի եւ հոգեկան աճման: Չենք ըսեր թէ արդէն կատարեալ է մեր հայրենիքը: Ու չենք մոռնար դեռ անլոյծ մեր դատը: Բայց հոն ապրող մեր հարազատները ձերբազատուած են նման առօրեայ մտահոգութիւններէ:

Մինչ արտասահմանը՝ աննշան տարբերութիւններով, տխուր պատկեր մը կը ներկայացնէ: Տեղ տեղ վտանգուած է նոյնիսկ մեր ֆիզիքական գոյութիւնը: Իսկ հոգեկան վերապրումը ճգնաժամային բնոյթ ստացած է շատոնց եւ հերոսական նուիրաբերումի կը կարօտի:

Իբրեւ ժողովուրդ կրնանք վերապրիլ միայն եթէ հայրենի հողին վստահութիւնը զգանք մեր ոտքերուն տակ, անոր կենարար բոյրը շնչենք, անոր ստեղծարար շնորհները վայելենք: Երբ անոր անթափանցելի խորերն արձակենք մեր գոյութեան արմատներն ու բիւրաւոր նրբերակները: Եւ որքան ատեն զրկուած ենք հարազատ հողին բարիքէն, իբրեւ հայ վերապրելու մեր ճիգերը առժամեայ են եւ անցաւոր: Եւ անկախ մօտալուտ կամ հեռաւոր ելքէն, նոյնիսկ այդ ժամանակաւոր գոյութեան համար անհրաժեշտ են քանի մը տուեալներ:

Գ. ՊՈՐՏԱԼԱՐԸ՝ ՈՐՈՎ ԿԸ ՓՈԽԱՆՑՈՒԻՆ ՄԵՌՈՒՆԴԻՆ ՈՒ ԿԵԱՆՔԸ.

Նախ իմաստ, նպատակ պէտք է ունենայ մեր հայեցի գոյութիւնը: Պէտք է խորապէս հաւատանք այդ նպատակին ու լիակատար նուիրուինք անոր: Հարկ է կարենանք պահպանել մեր լեզուն եւ մեր հաւատքը՝ նոյն

դիտաւորութիւններէն թելադրուած: Բայց այդ բոլորը կարելի կը դառնան, կ'արգասաւորուին, միայն եթէ տեւական կապ պահենք հայրենիքին, անոր կեանքին ու մշակոյթին հետ: Անոր անումին ու ներշնչումին հետ: Անոր խռովքներուն եւ ակնկալութիւններուն հետ: Եթէ ապրինք եւ անրջենք անոնցմով: Հայրենիքը այն վարար ու թարմ հոսանքն է որ կը բխի հայութեան անմատոյց ակունքներէն ու կ'երթայ սնուցանել, մաքրել ու խռովել սփիւռքի լճակները, որոնք այլապէս կրնան անշարժանալ, ճախ-ճախուտի վերածուիլ եւ ի վերջոյ ցամքիլ: Երկրին հետ մեր առօրեայ եւ հոգեկան հաղորդակցութիւնը այն հաղորդութիւնն է որ կը մաքրէ մեզ արատներէն ու կ'ազատէ փռշիներէն ու կը զօրացնէ մեր հաւատամքը գալիքի նկատմամբ: Որ թռիչք կու տայ մեր քայլերուն, մեր թելերուն եւ հոգիին: Հայրենիքին հետ մեր կապը այն պորտալարն է որուն միջոցով կը փոխանցուին սնունդն ու կեանքը մեզի: Ու երբեք, երբեք պէտք չէ փրցնել զայն, պէտք չէ մտածել զայն փրցնելու մասին որովհետեւ նման ընդհատում մը մեզ կ'առաջնորդէ ստոյգ մաշումի ու մահուան: Անձնասպանութեան պիտի հաւասարէր այդպիսի արարք մը:

Դ. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԴԱՇՏԸ ՀԱՆԳԻՍՏ Է ԵՒ ՀԱՒԱՏԱԲՈՐ.

Հայ ժողովուրդը շատ նուիրաբերած, ուժասպառ եղած ու տառապած է անցեալին: Ոչ որ, ոչ մէկ կազմակերպութիւն ազատութիւն տալու է ինքն իրեն՝ նոր փորձանքներու, նոր արկածախնդրութիւններու առաջնորդելու զայն: Նոր պատուհասներու մատնելու զայն: Իրեն ինկած արդար բաժինէն շատ աւելին արդէն տուած է հայութիւնը:

Եթէ պահ մը նայինք մեր շուրջ, աշխարհը պիտի նշմարենք շփոթի ու շուարումի մէջ: Խռովքի մէջ ու խուճապի: Աշխարհը պիտի տեսնենք վտանգի մէջ ու վախի: Եւ ինչ խորունկ մխիթարանք է գիտակցիլ թէ նոյն ատեն մեր երկիրը վստահ է եւ յստակ, մեր ժողովուրդը անդորր է եւ ապահով: Մենք չենք ուրախանար ուրիշներուն աղէտներով ու տրտմութիւններով: Բայց իրաւունք ունինք երջանիկ զգալու որ Արարատեան դաշտը, իբրեւ պատմական բացառութիւն, հանգիստ է եւ հաւատաւոր:

Հայրենիքին իրականութիւնը հայութեան համար գալիք բախտաւոր օրերու կանչն է: Չայն պէտք է ծառայեցնենք մեր ժողովուրդին միասնակա-նութեան, ամբողջականութեան եւ անբաժանելիութեան իբրեւ միջոց ու խորհրդանիշ: Չայն դարձնենք տեւական աղբիւր խանդավառութեան եւ յոյսի: Հայթայթիչ տոկունութեան ոյժի, համբերութեան ու սիրանքի:

Ե.ՄՆԱՑԵԱԼԸ ՑՆՈՐՔ Է ՈՒ ՑԱԻ.

Ազգի մը ապագան կ'ընթանայ երկրին կտակուած բախտով, ժողովուրդին ճամբայով հաւատարիմ: Եւ անոնց հետեւելով՝ կ'երթայ ոսկի առաւօտներու, գարնան թարմութեան, կ'երթայ ցնծութեան ու երազանքի:

Մինչ օտարութեան ուղիները, պանդխտութեան մայրերն ու արահետները կ'առաջնորդեն մոլորանքի ու խաբկանքի, կը տանին սայթաքումներու, յուսաբեկումներու եւ անյայտացումի:

Իբրեւ արտասահման հարկադրուած ենք կատարել մեր ընտրութիւնը՝ հնարաւոր երկու կարելիութիւններուն միջեւ: Ընել ճակատագրական, մահու-կենաց ընտրութիւնը:

Մեր անմիջական եւ ամբողջական գուրգուրանքին առարկայ կրնանք դարձնել մեր հանրապետութիւնը եւ մեր մէջ եւ անոր շուրջ ապրող հայ ժողովուրդը: Բազմապիսի ձեւերով եւ հնարքներով օգտակար ըլլալ մեր երկրին նիւթապէս ու բարոյապէս, ծառայել անոր հոգեպէս:

Կրնանք մեր ժողովուրդը սիրել այնպէս ինչպէս որ է ան: Հարազատի նման: Իր բոլոր թերութիւններով, կռտութիւններով: Իր մեղքերով: Միամտութեամբ եւ առաքինութիւններով: Իր տրտում կամ երանաւետ բախտով: Անոր անբաժան մասը զգալ մենք զմեզ եւ զայն զգալ անանջատ մասնիկը մեր սեփական էութեան: Մեր նայուածքներն ու հոգիները դարձնել՝ դէպի հայրենական պողոտաները, դէպի երկրի բաբախուն ոստանները, դէպի այնտեղ շատցող տոհմին պաշարն ու հարստութիւնը: Լեցուիլ՝ ցեղին ներշնչումներով ու ձայներով ու կապել մեր անձնական բախտը մեր ժողովուրդի հաւաքական բախտին, մեր երկրի դաժան բախտին:

Եւ այդպէս հպարտ կրնանք շարունակել մեր գոյութիւնները, սփռփել ու խանդավառել իրար, մինչեւ որ վերջապէս օր մը կամարուի հայութեան վերել բախտի ծիրանի գօտին:

Իսկ եթէ որպէս սփիւռք, իբրեւ անձ ու սերունդ, մնանք խորթ եւ օտար երկրի յոյսերուն, պետութեան խռովքներուն ու սխրանքներուն, կը մնանք անհաղորդ մեր մշակոյթին ու լեզուին եւ ըղձանքներուն: Կը փակենք կենդանութեան մեր աղբիւրը եւ կ'առաջնորդուինք թշուառութեան, մենութեան եւ աշնան թօշնումին: Ու մեզի հետ անհետացումի կը դատապարտենք յաջորդելիք կեանքերը:

Մեր ազատ կամքով կրնանք ընտրել Էջմիածինն ու հայրենիքը եւ խնդակցիլ իրարու: Այրիլ՝ իմաստալից եւ սպասել ուրախ:

Այլապէս ժամանակը մեզի համար պիտի ընէ անխուսափելի միւս ընտրութիւնը, եւ զայն պիտի պարտադրէ անողոր խորտակումով: Մնացեալը մանրուք է եւ անիմաստ:

Մնացեալը ինքնախաբէութիւն է ու կրկնէրեւոյթ: Նահանջ է եւ ուրացում: Մնացեալը ցնորք է ու ցաւ:

* * *

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿԱՄ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԸ ԱՂԲԻՐՆԵՐ

- Լեո, «Երկերի ժողովածու», Երևան, 1967, Երկրորդ Հատոր.
- Օրմանեան, «Ազգապատում», Կ. Պոլիս, սկսեալ 1912, Հատոր Ա.
- Օրմանեան, «Ազգապատում», Կ. Պոլիս, 1914, Հատոր Բ.
- Միք. Վարանդեան, «Հայկական Շարժման նախապատմութիւն», Ժընև, 1912, Հատոր Ա.
- Օրմանեան, «Ազգապատում», Երուսաղէմ, 1927, Հատոր Գ.
- Օրմանեան, «Հայոց Եկեղեցի», Պուէնոս Այրէս, 1949.
- Բարիգի Վեհաժողովին իբրեւ հետեւանք՝ 1856 Մարտին ստորագրուած դաշնագիր.
- Ազգային՝ Սահմանադրութիւն, 17 Մարտ 1863.
- Լոզանի Դաշնագիր (1923).
- Յ. Քաջազունի, «Հ. Յ. Դաշնակցութիւնը Անեկիք Չունի Այլեւս», Վիեննա, Միսիթարեան Տպարան, 1923.
- Կիլիկիոյ Աթոռին Կանոնագրութեան թիւ 32 եւ 33 յօդուածները.
- «Էջմիածին» Ամսագիր, նոյեմբեր 1972.
- Առանձնատիպ, «Էջմիածին» Ամսագիր, Զ. համար, 1977.
- Նամակներ՝ փոխանակուած Էջմիածինի եւ Անթիլիասի միջեւ հետեւեալ կերպով.-
- Գարեգին Բ. Աթոռակից-Կաթողիկոսէն, 24 Օգոստոս 1977,
- Վազգէն Ա. Վեհափառէն, 8 Հոկտեմբեր 1977 թուակիր եւ հմր. 657,
- Էջմիածինէն, 10 Հոկտեմբեր 1977 թուակիր եւ հմր. 688.
- Անթիլիասէն, 16 Սեպտեմբեր 1980 թուականով եւ թիւ 39680
- Ամենայն Հայոց Հայրապետէն, 16 Դեկտեմբեր 1980 եւ թիւ 776.
- Կիլիկիոյ Աթոռէն, 26 Փետրուար 1981 թուակիր եւ թիւ 9781.
- «Հաղորդագրութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչներու Միջեւ Կայացած Ժողովին», Դիւան Յանձնախումբերու Ժողովին» կողմէ, 12 Հոկտեմբեր 1979 թուակիր.
- «Հասկ », Ապրիլ-Մայիս-Յունիս 1978.
- «Հասկ», Թիւ 1, Յունուար 1983.
- «Mensual» Ամսագիր, Ժընև, 1977 Յունիսի Թիւ.
- «Հայրենիք» Օրաթերթ, Պոստոն, 1977 Յունիս 30-ի թիւ.

«Նոր Օր» Եռօրեայ, Լոս Անճելլես, 1983 Յուլիս 12-ի թիւ

«Կիպրահայ Տեղեկատու», Ամսական Լրատու Ազգային Առաջնորդարանի, Բ. Տարի Թիւ 11, նոյեմբեր 1979

«Հայ Ժողովրդի Պատմութիւն», Երեւան, 1975:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՔԱՂՈՒԱԾՔՆԵՐ ՌԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՏԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԷՆ ԵՒ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԷՆ

Դ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (20-31 Յուլիս 1929)

Կրօնական Հաստատութեանց Մասին.- Ժողովը նկատի ունենալով որ Էջմիածնի գահակալի յաջորդին ընտրութեան ինչ ձեւով տեղի ունենալը դեռ յայտնի չէ, թէ Կիլիկիոյ Աթոռին Սուրիոյ մէջ վերակազմութեան յաջողապէս սկսած գործը շատ դանդաղ կը քայլէ, եւ թէ Երուսաղէմի Աթոռին քաղաքական նոր կացութեան պատշաճեցումը կանոնագրութեան մը եւ համերաշխ բնոյթ ունեցող ընտրական սիստէմի մը հաստատման անհրաժեշտ աշխատանքը դեռ չէ կատարուած, կը յանձնարարէ Կեդր. Վարչութեան.-

1. Էջմիածնի հարցի մասին՝ կատարել հարկաւոր դիմումները ապահովելու համար նոր Հայրապետի ընտրութեան աւանդական եւ ժողովրդական եղանակին պահպանումը.

2. Երուսաղէմի Աթոռի հարցի մասին ընել հարկ եղած թելադրութիւնները, ձեռք ձգելու համար արդի պայմաններուն համապատասխան կանոնագրի մը յորինումը.

3. Աջակցիլ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին եւ անոր յարակից ընծայարանին Սուրիոյ մէջ լուրջ եւ ապահով կերպով կազմակերպման: (Տեղեկագիր Դ. ԸՊԺ-ի)

2. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (6-16 Օգոստոս 1934)

Հայաստանեայց Եկեղեցի.- Վերջին ատեններս տիտուր դէպքերը⁵⁰ անհրաժեշտ դարձուցած ըլլալով որ Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը իր Ընդհ. Պատգ. Ժողովի ձայնով անգամ մը եւս յայտարարէ որ անխախտ կը մնայ իր վաղեմի դիրքին վրայ այս հարցին նկատմամբ, Ժողովը միաձայնութեամբ ընդունեց յանձնախումբին հետեւեալ բանաձեւը.

«2.րդ Ընդհ. Պատգ. Ժողովս գնահատելով անգամ մը եւս բարոյական

⁵⁰ Կ'ակնարկուի մասնաւորապէս 1933-ի Դեկտեմբերին Նիւ Եորքի Ս. Խաչ տաճարին մէջ Առաջնորդ Ղեւոնդ Արք. Դուրեանի սպանութեան:

մեծ ուժը զոր կը ներկայացնէ Հայ Եկեղեցին եւ անոր Մայր Աթոռը, իբր ազգապահպանման ազդակ, մանաւանդ գաղութահայութեան համար, անոր դիրքն ու վարկը բարձր պահելու կ'աջակցի, եւ զայն կը պաշտպանէ Դաշնակցութեան վարկաբեկող կամ շահագործող արարքներուն եւ այլ հոսանքներու զայն տկարացնել ձգտող ճիգերուն դէմ: (Տեղեկագիր Զ. ԸՊԺ-ի)

Ը. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (23 Հոկտեմբեր-3 Նոյեմբեր 1947)

Ռ. Ա. Կուսակցութեան Ը. Ընդհ. Պատգմ. Ժողովս կը յայտարարէ թէ անխախտ կը մնայ իր վաղեմի դիրքին վրայ հայ եկեղեցիին նկատմամբ, գնահատելով բարոյական եւ ազգային այն մեծ ուժը զոր կը ներկայացնէ հայ եկեղեցին եւ անոր Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իբր ազգապահպանման ազդակ մանաւանդ գաղութահայութեան համար: Անոր դիրքն ու վարկը բարձր պահելու կ'աջակցի եւ զայն կը պաշտպանէ զինք տկարացնել ձգտող ճիգերուն դէմ:

Այս առթիւ Պատգմ. Ժողովս մեծ գոհունակութեամբ կ'արձանագրէ 1945ի Յունիսին, Ս. Էջմիածնայ մէջ, Ս. Հայաստանի կառավարութեան բարեացակամ վերաբերումով եւ լայն աջակցութեամբ, ազգային-եկեղեցական Ժողովին գումարումը եւ Գեր. Զէօրէքնեան Սրբազանին միաձայնութեամբ Ամենայն Հայոց Հայրապետ ընտրութիւնը եւ գահակալումը Գեորգ Զ. անուամբ:

Պատգմ. Ժողովս կը հաւատայ նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գոյատեւման օգտակարութեան, ազգապահպանումի եւ ազգային-եկեղեցական գործերու կազմակերպումին իբրեւ ազդակ, եւ առ այդ զօրավիգ կը հանդիսանայ անոր:

Պատգմ. Ժողովս գոհունակութեամբ կ'արձանագրէ Էջմիածնի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեանց յարաբերութեանց եւ վերաբերումներու հանդիսաւոր ճշդումը, Էջմիածնի համագումարին առիթով, եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ պաշտօնական ճանաչումը Էջմիածնայ Ս. Աթոռին գերակայութեան:

Իսկ ինչ կը վերաբերի եկեղեցիին բարեկարգութեան հարցին, կը յանձնարարէ մեր շրջանակներուն լրջօրէն հսկել որ ան ծառայէ հայ եկեղեցիին զօրացման, միաժամանակ ուշադրութիւն դարձնելով որ ամէն գաղութ իր քաղաքական պայմաններուն եւ հայ եկեղեցիին աւանդական եւ պատմական տուեալներու համաձայն կազմակերպէ իր թեմերը, պահելով միշտ անվթար իր կապը Էջմիածնի հետ: (Տեղեկագիր Ը. ԸՊԺ-ի)

Թ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (20 Ապրիլ-6 Մայիս 1954)

Թ. Ընդհ. Պատգմ. Ժողովս վերագնահատութեան ենթարկելով իր նախորդ Ընդհ. Պատգմ. Ժողովներուն որդեգրած վերաբերումը Հայաստանեայց Եկեղեցւոյ ... նկատմամբ, կ'որոշէ.-

ա.- Ռ. Ա. Կ. Թ. Ընդհ. Պատգմ. Ժողովս անխախտ կը մնայ իր վաղեմի դիրքին վրայ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին նկատմամբ, գնահատելով բարոյական եւ ազգային այն մեծ ուժը զոր կը ներկայացնէ Հայց. Եկեղեցին եւ անոր Մայր Աթոռը, Ս. Էջմիածին, իբր ազգապահպանման ազդակ մանաւանդ գաղութահայութեան համար: Անոր դիրքն ու վարկը բարձր պահելու կ'աջակցի եւ զայն կը պաշտպանէ զինք հարուածել ու տկարացնել ձգտող ճիգերուն դէմ:

Ընդհ. Պատգմ. Ժողովս կը հաւատայ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գոյատեւման օգտակարութեան, ազգապահպանումի եւ ազգային-եկեղեցական գործերու կազմակերպումին իբրեւ ազդակ, եւ առ այդ զօրավիգ կը կանգնի անոր:

Պատգմ. Ժողովս գոհունակութեամբ կ'արձանագրէ միասնականութեան պահպանումը Էջմիածնայ եւ Անթիլիասի Կաթողիկոսութեանց միջեւ, եւ անհրաժեշտ կը նկատէ ամրապնդումը ստեղծուած միասնականութեան, իստիւ դատաւարտելով նուիրապետական կանոններու ոտնահարումը, անջատողական ձգտումներն ու արարքները: (Շրջաբերական, 12 Յունիս 1954)

10 Մարտ 1956 թուակիր շրջաբերական

Սիրելի ընկերներ, ծանօթ է ձեզի թէ մեր դիմումին իբր հետեւանք, Հալեայի Գաւառական Ժողովի ապօրինութիւնը հաստատող Սուրիական կառավարութեան 9 Հոկտեմբեր, 1955-ի որոշումէն ետք, երբ կը յուսայինք փրկած ըլլալ հայ եկեղեցին իրեն սպառնացող աղէտէն, դժբախտաբար Կաթ. Տեղապահ Խաղ Արք. Աջապահեան անգամ մը եւս տեղի տալով Հայց. Եկեղեցւոյ թշնամիներու ճնշումներուն, տեղապահութենէն հրաժարելու սխալը գործեց հակառակ մեր ընդդիմութեան: Նորընտիր Կաթ. Տեղապահ Խորէն Եպիսկ. Բարոյեանի առաջին քայլը եղաւ, որպէս կամակատար Հ.Յ. Դաշնակցութեան հրահանգներուն, Սուրիական Կառավարութեան ներկայացնել պաշտօնական յուշագիր մը պաշտպանելով Հիւս. Սուրիոյ ազգային մարմիններուն ենթադրեալ օրինաւորութիւնը:

Պաշտօնական հանգամանքով եղած այս դիմումը եւ Հայ Յեղ. Դաշնակցութեան կողմէ ապահովուած ու բազմազան միջամտութիւններն ու ճնշումները հարկադրեցին Սուրիոյ Կառավարութիւնը որ Հալեայի Գաւա-

ռականի լուծման հարցը վերաքննության ենթարկուի: Այս ուղղությամբ Հայկա դրևում պետական քննիչը, յայտնի ճնշումներու, ինչպէս նաեւ դրամական առատ միջոցներու ազդեցութեամբ ներկայացուց մեր կողմին համար աննպաստ տեղեկագիր մը: Արդարեւ, ան կը յանձնարարէր Սուրիական Կառավարութեան, ընդունելով հանդերձ թէ տեղի ունեցած են զանազան անկանոնութիւններ, օրինաւոր նկատել Հայկաի Գաւառական Ժողովը եւ անկէ բխող Կաթ. ընտրութեան պատգամաւորութիւնը եւ չեղեալ հռչակել այս ուղղութեամբ տրուած նախկին պաշտօնական որոշումը:

Մենք եւս այս հարցին շուրջ վերստին շարժման մէջ դնելով մեր բոլոր միջոցները, մեզի բարեկամ բոլոր կազմակերպութիւններն ու դիրքի եւ ազդեցութեան տէր ազգայինները, թէ Հայկաի եւ թէ Դամասկոսի մէջ, ինչպէս նաեւ մեզի բարեկամ Սուրիական Կուսակցութեան ղեկավարութիւնը, աշխատեցանք որպէսզի Սուրիական Կառավարութիւնը ոչ միայն պահէ լուծման նախկին որոշումը, այլեւ նոր պաշտօնագիրով մը վերստին հաստատէ զայն:

Իրերու այս կացութեան մէջ, երբ յոյս ունէինք վճռական յաղթանակ մը ապահովելու, անակնկալ կերպով կը հասներ Ս. Էջմիածնէն, Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի այցելութեան լուրը, ինչ որ մեզ կը դնէր դժուարին կացութեան մը առջեւ: Այդ այցելութիւնը, այլապէս այնքան բաղձալի, այս պայմաններուն մէջ սակայն ոչ միայն անելի պիտի մատնէր ապօրէն պատգամաւորական ժողովը յետաձգել տալու մեր աշխատանքները՝ այլ եւ պատճառ պիտի ըլլար անտեղի կասկածանքներու, օտար դիւանագիտական շրջանակներու մէջ յարուցանելով մինչեւ այդ եղածէն շատ աւելի ծանր ճնշումներու եւ միջամտութեանց:

Արդարեւ, քաղաքական նկատումներէ առաջնորդուած, օտար ազդեցութիւններ ամէն միջոց գործածեցին խանգարելու համար Վեհափառ Հայրապետին մեր արդար տեսակէտին ի նպաստ կատարելիք աշխատանքները, եւ դէպքերը սկսան զահալիժիլ արագութեամբ: Այսուհանդերձ, Հայց. Եկեղեցւոյ պաշտպանութեան ճակատը, մեր Կուսակցութեան ղեկավարութեան տակ ի մի համախմբուած, ոչ միայն զինաթափ չեղաւ, այլ աւելի բուռն կերպով շարունակեց պայքարը: Սկսան ժողովրդային հսկայ պոռթկումներ յառաջանալ Հայկաի, Պէյրութի եւ Դամասկոսի մէջ: Զանգուածային բողոքի առաջին ազդանշանը տրուած էր արդէն Հայկաի մէջ, Յունուարի վերջերը կազմակերպուած մեծ ցոյցով մը որուն կը մասնակցէին աւելի քան 5000 հոգի: Պէյրութի մէջ անոր կը յաջորդէր ուրիշ կարեւոր հանդէս-միթինկ մը շուրջ 5-6000 հոգիի ներկայութեան, ժողո-

վուրդին պարզելով ստեղծուած տազնապալի կացութիւնը եւ պահանջելով կաթողիկոսական ընտրութեան յետաձգումը մինչեւ համերաշխական լուծումի մը կարելիութեան ստեղծումը:

Ժողովրդային զանգուածներու աննախընթաց այս շարժումը իր ամենէն մեծ արտայայտութիւնը կը գտնէր Պէյրութի մէջ, կաթողիկոսական ընտրութեան նախորդ օրը, 19 Փետրուարին, աւելի քան 10,000 հաշուող տպաւորիչ բազմութեամբ մը, որ ողողելով Պէյրութի գլխաւոր փողոցները, կը դիմէր դէպի նախագահական պալատը:

Վեհափառ Հայրապետը, ինչպէս նաեւ իր հրաւերով Պէյրութ հաւաքուած Հայց. Եկեղեցւոյ բարձրաստիճան իշխանաւորները եւս տեսան ժողովուրդին այս աննախընթաց շարժումը ընդդէմ եկեղեցին քաղաքական նպատակներու ծառայեցնել փորձող ազգադաւ հատուածին եւ անմիջապէս ըմբռնեցին Հայց. Եկեղեցւոյ սպառնացող մեծ վտանգը: Անոնք եւս իրենց ամբողջ կարելին ըրին որպէսզի այդ աղետը խնայուի մեր ժողովուրդին, եւ սպառելէ ետք հաշտարար իրաւախոհութեան բոլոր միջոցները, 7 եպիսկոպոսներու պատուիրակութեամբ մը Լիբանանի նախագահ Քամիլ Շամունի տրուած այցելութեան մը ընթացքին պարզեցին իրենց տեսակէտը տիրող անբաղձալի կացութեան շուրջ եւ ցոյց տուին կաթողիկոսական ընտրութեան յետաձգումին անհրաժեշտութիւնը այս պայմաններուն մէջ:

Ժողովրդային այս շարժումները այնքան զօրաւոր էին եւ ժողովուրդին յուզումը այնքան խորունկ, որ Սուրիոյ վարչապետ Սայիտ Ղազի ստիպուեցաւ Լիբանան գալ պարզելու համար իր կառավարութեան տեսակէտը Հալէպի ապօրէն պատգամաւորներու ապօրինութեան շուրջ, յայտնելով թէ հակառակ է ընտրութեան կատարումին, բացի եթէ համաձայնութիւն գոյանայ կողմերու միջեւ: Նմանապէս Լիբանանի նախագահ Քամիլ Շամուն ստիպուեցաւ երկու անգամ տեսակցութեան ընդունիլ ցոյցերէ կազմուած ժողովրդային պատուիրակութիւնները, լսելու համար անոնց տեսակէտները, եւ խոստանալով լուրջ նկատողութեան առնել խնդիրը:

Հակառակ այս բոլորին, քաջալերուելով Սուրիոյ եւ Լիբանանի մէջ եղած արտաքին աւելի մեծ ազդեցութիւններէ եւ օտար միջամտութիւններէ եւ ապահովուելով տեղական իշխանութեանց լռելեայն հաւանութեամբ, Հ.Յ. Դաշնակցութեան ներկայացուցիչները որոշեցին 14 Փետրուարին պաշտօնապէս բանալ պատգամաւորական ապօրէն ժողովը:

Այս կացութեան առջեւ եւ ժողովի բացումէն անմիջապէս առաջ իրենց բողոքը բարձրացնելով հեռացան Դամասկոսի թեմին կրօնական եւ

աշխարհական պատգամաւորները ամբողջ կազմով, Կիլիկիոյ Աթոռի Միաբանութեան եպիսկոպոս պատգամաւորները, Ս. Էջմիածնայ պատգամաւորները, ինչպէս նաեւ Պէյրութի եւ Հալէպի չեզոք ներկայացուցիչներէն 7 անկախ պատգամաւորներ, ընդամենը 15 հոգի 51-ի վրայ: Ուստի ժողովը բացուեցաւ 14 Փետրուարի առաւօտուն, հակառակ Վեհափառ Հայրապետին յետաձգման խնդրանքին, ի ներկայութեան միայն 30 պատգամաւորներու, որոնց 14-ը Հալէպի ապօրէն Գաւառական Ժողովի ներկայացուցիչներ: Բայց վախճանով ժողովորդային զայրոյթն եւ չհամարձակելով կաթողիկոսի ընտրութիւնը կատարել նոյն օրն իսկ, զայն յետաձգեցին 20 Փետրուարին:

Այս Ժամանակամիջոցին մենք չդադրեցուցինք մեր պայքարը: Մեր աշխատանքներուն արդիւնքները եղան Կիլիկեան Միաբանութեան անդամներուն բացարձակ մեծամասնութեան դիրքորոշումը ընդդէմ կատարուող ապօրինութեանը: Միաբանութեան այս անդամները գրաւոր կերպով եւ վճռականապէս կը մերժէին ճանչնալ ներկայ պայմաններու տակ ընտրուած կաթողիկոսին իշխանութիւնը: Նոյնիմաստ յայտարարութիւններ կը հրապարակէին Հալէպի, Պէյրութի եւ Դամասկոսի թեմերուն կուսակցական, ինչպէս նաեւ անկուսակցական համախմբումները: Միւս կողմէ, կը քայքայուէր նաեւ կաթողիկոսական ընտրելիներու օրինական հնգանուն ցանկը չորս եպիսկոպոսներու գրաւոր հրաժարականովը: Կը պատահէին նաեւ կարգ մը դէպքեր ժողովուրդին խորունկ զայրոյթին իբր արտայայտութիւն, Վեհափառ Հայրապետին վշտահար մեկնումէն անմիջապէս ետք: Բայց այս բոլորը ցոյց կու տային թէ Կիլիկեան թեմերու հաւատացեալ ժողովուրդին մեծամասնութիւնը կը բաժնէր Հայց. Եկեղեցւոյ նկատմամբ մեր տեսակէտները, կը մտահոգուէր կատարուելիք ընտրութեան աղիտաբեր հետեւանքներովը եւ այդ կացութեան հակազդելու համար կը վստահէր Ռամկավար Ազատական Կուսակցութեան առողջ առաջնորդութեան:

Մանաւանդ վերջին երկու շաբաթներու եւ օրերու ընթացքին, արծարծուած ժողովորդային զայրոյթն ու ցասումը այնքան մեծ էին որ Հ.Յ. Դաշնակցութիւնը իր բոլոր յոխորտանքներով հանդերձ, չէր համարձակեր այլեւս ճակատէն չափուիլ եւ սկսած էր տատամսիլ իր առնելիք քայլերուն մէջ: Եւ սակայն պատահեցաւ անխուսափելին, որովհետեւ անոր օտար տէրերը ամուր կերպով զօրավիգ կը կանգնէին իրեն: Բայց հակառակ ատոր մեր պայքարը զօրաւոր կերպով շարունակեցինք մինչեւ վերջին վայրկեանը: Այր մարդոց կողքին, այս պայքարին մէջ պատուաւոր դրուագ մը կերտեցին մեր կիներն ու քոյրերը որոնք Ռ.Ա.Կ. Շուշանիկ ակումբի

գլխաւորութեամբ, հակառակ հարիւրաւոր ոստիկաններու գնդացիրներուն եւ հակառակ դաշնակցական դարանակալ սովահիներու զինեալ սպառնալիքներուն, անօրինակ խիզախութեամբ մը 20 Փետրուարին գրեթէ ամբողջ օրը գրաւման տակ պահեցին Անթիլիասի մայր տաճարը եւ արգիլեցին որ կաթողիկոսական ապօրէն ընտրութիւնը սարքուի այդ մայր տաճարին մէջ: Եւ սակայն, ոտնակոխելով ազգային ամէն սրբութիւն եւ եկեղեցական ամէն օրէնք, եւ դատարկուած ազգային ամէն ազնիւ զգացումէ, Դաշնակցութեան ներկայացուցիչները գործեցին ապօրինութեան նոր քայլ մը եւս, եւ Հայց. Եկեղեցւոյ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով կաթողիկոսական ընտրութիւնը կատարեցին եկեղեցիէն դուրս վայրի մը մէջ, պաշտպանութեանը տակ ոստիկանական ջոկատներու, գնդացիրներու եւ թոմիկաններու:

Սիրելի Ընկերներ, 20 Փետրուարի կաթողիկոսական այս ապօրինի ընտրութեամբ կը փակուի պայքարի հին էջը եւ կը բացուի նոր էջ մը, պայքարի աւելի բուռն շրջան մը մեզի համար: Ահա այս նոր շրջանի սկզբնաւորութեան է որ կը գտնուինք եւ սկսած ենք արդէն առնել առաջին վճռական քայլերը: Այս ուղղութեամբ մեր սկսած աշխատանքները արդիւնաւորուեցան քանի մը օր առաջ մեր գլխաւորութեամբ գումարուած պատգամաւորական Ժողովով մը, որուն կը մասնակցէին Պէյրութի, Հալէպի եւ Դամասկոսի մեզի համակիր բոլոր կազմակերպութեանց, ինչպէս նաեւ անկուսակցական ազգայիններու խմբակցութեանց ներկայացուցիչները: Այս համաժողովին մէջ գծուեցաւ այս նոր պայքարի ուղին եւ ի միջի այլոց առնուեցան հետեւեալ որոշումները.-

1.- Ապօրէն նկատել 14 եւ 20 Փետրուարին գումարուած Կաթ. ընտրութեան պատգամաւորական Ժողովները եւ հետեւաբար չճանչնալ Չարեհ Եպիսկոպոս Փայասլեանը իբր Կիլիկեան Աթոռի զահակալ:

2.- Առանց ընկրկելու շարունակել անմիջական պայքարը եւ պատրաստել աւելի ընդարձակ եւ հեռահաս պայքարի ծրագիր մը:

3.- Յառաջացնել Կիլիկեան Կաթողիկոսութեան Պաշտպան Համախմբում մը մասնակցութեամբ Դաշնակցութենէն դուրս բոլոր կազմակերպութեանց եւ խմբակցութիւններու: Օժտել զայն Կեդրոնական Վարչութեամբ մը, կեդրոնական գրասենեակ մը հաստատել Պէյրութի մէջ եւ մասնաճիւղեր հիմնել Սուրիոյ, Լիբանան եւ Կիպրոսի բոլոր քաղաքներուն մէջ:

4.- Ձեռնարկել շուտով քանի մը տասնեակ հազար ստորագրութիւններ կրող հանրագրութիւն մը այս գաղութներուն մէջ, որպէս շարժումին զօրավիզ ուժ:

Միբելի ընկերներ, ահաւասիկ ձեզի ներկայացուցինք Կիլ. Կաթողիկոսական տազնապին վերջին փուլերն ու 20 Փետրուարին կատարուած ապօրէն ընտրութեամբ ստեղծուած նոր կացութիւնը:

Փակուած է Պայքարի հին շրջանը եւ ներկայիս կը գտնուինք պայքարի նոր շրջանի մը սկզբնաւորութեան աւելի ամուր եւ աւելի հարստացած վճռակամութեամբ: Կիլիկիոյ Կաթողիկոսական ընտրութիւնը ձեւին մէջ պարտութիւն մը ըլլալով հանդերձ իր էութեան մէջ մեզի համար մեծ յաղթանակ մըն է որ ծառայեց մեր Կուսակցութեան Ժողովրդականութեան տարածումին եւ ամրացումին: Ժողովրդային այն հսկայական շարժումը որ մեր Կուսակցութեան ղեկավարութեամբ ստեղծուեցաւ, իր նախընթացը չէ ունեցած որեւէ ատեն մեր գաղութներու պատմութեան մէջ եւ չի կրնար մարիլ դիւրաւ: 20 Փետրուարի կաթողիկոսական ապօրէն ընտրութիւնը մեր եկեղեցական եւ ազգային պատմութեան մէջ պիտի արձանագրուի որպէս մեծ դէպք մը, չարաշուք աղէտ մը, որուն դէմ ծառանալով մեր Կուսակցութիւնը կերտեց հերոսական բազմաթիւ դրուագներ:

Ուրեմն Ընկերներ գործի ժամն է:

Այս առթիւ կը հրահանգենք մեր բոլոր Ծրջանային Վարչութեանց, մամուլի օրկաններուն եւ մեր բոլոր ընկերներուն.-

1.- Ծեշտել Ռամկավար Ազատական Կուսակցութեան դրական դիրքաւորումը Հայց. Եկեղեցւոյ հանդէպ, իբրեւ ազգապահպանման եւ գոյատեւման կարելոր ազդակ:

2.- Աշխատիլ բոլոր միջոցներով որպէսզի Հայց. Եկեղեցին զօրանայ եւ աւելի եւս կազմակերպուի իր այս դերը լաւագոյնս կատարելու համար:

3.- Սկզբունքով ընդունելով հանդերձ կաթողիկոսական երկու աթոռներու միութիւնը, բայց նկատի ունենալով ներկայ ժամանակներու պայմանները, զօրավիգ կանգնիլ անոնց վարչական ներքին անկախութեան, պահպանելով երկու աթոռներու միջեւ գոյութիւնը միասնականութեան ոգին եւ եղբայրական սերտ յարաբերութեան:

4.- Պայքարիլ այն բոլոր ուժերուն դէմ որոնք կը ձգտին քաղաքական եւ կուսակցական ազդեցութեանց գետին դարձնել Հայց. Եկեղեցին:

5.- Հակազդել բոլորն կերպով այն ամէն ոտնձգութիւններուն եւ յարձակումներուն որոնք կրնան փորձուիլ հակառակորդ մամուլին մէջ ամենայն Հայոց Հայրապետին հեղինակութեան եւ վարկին դէմ:

6.- Մերժել ճանչնալ 20 Փետրուարի կաթողիկոսական ապօրէն ընտրութիւնը, շեշտել անկէ յառաջ գալիք վտանգները եւ պահանջել անոր ջնջումը:

7.- Յնոր տնօրինութիւն, ամէն միջոցով արգիլել Կիլիկիոյ Կաթողիկոսարանին ըլլալիք որեւիցէ բարոյական եւ նիւթական օժանդակութիւն:

8.- Օրը օրին հետեւիլ Կուսակցութեան պաշտօնաթերթ *Չարթօնք*-ի ուղղութեան եւ ինքնազուխ որեւէ արտայայտութիւն չունենալ առանց Կեդրոնական Վարչութեանս հաւանութեան...:

3 Հոկտեմբեր 1956 թուակիր շրջաբերական

Կը փափաքինք ներկայ շրջաբերականով ձեզ տեղեակ պահել 20 Փետրուար, 1956-ի Կիլիկիոյ Կաթողիկոսական ապօրինի ընտրութենէն մինչեւ 2 Սեպտեմբերի հակականոնական օծումը կաթողիկոսական տագնապին անցուցած փուլերուն, նոյն շրջաններուն մեր կողմէ կատարուած աշխատանքներուն, ինչպէս նաեւ ներկայ եւ հետագայ մեր գործունէութեան եւ ծրագիրներուն մասին:

Նախ կը փափաքինք ընդհանուր գիծերու մէջ վերյիշել 20 Փետրուարի եւ անոր անմիջապէս յաջորդող շրջանի իրադարձութիւնները մինչեւ Մարտի սկիզբը Գահիրէի մէջ գումարուած եպիսկոպոսական Ժողովը:

1.- 20 Փետրուարի Ապօրէն Ընտրութիւնը

Ծանօթ է ձեզի թէ բազմապիսի օտար ակներեւ եւ ազդու միջամտութիւններու եւ ճնշումներու իբրեւ հետեւանք, Դաշնակցութիւնը կրցաւ իր ապօրինի ընտրական մեքանիզմը լարել եւ 20 Փետրուարին Չարեհ Եպիսկոպոսը ընտրել իբրեւ կաթողիկոս: Հալէպի Թեմական Ժողովի ապօրինութիւնը հաստատող Սուրիական կառավարութեան 9 Հոկտեմբեր, 1955-ի որոշումը, Ամենայն Հայոց Հայրապետին հաշտարար իրաւախոհութեան առաջարկը, Սահմանադրական օրէնքներու եւ եկեղեցական կանոններու աւանդութեանց ոտնակոխումը, Պատգամաւորական Ժողովի 50 անդամներէն 15-ին մերժումը մասնակցելու կաթողիկոսական ընտրութեան եւ հեռացումը Ժողովէն, ինչպէս նաեւ հաւատացեալ Ժողովուրդին վրդովումն ու ընդվզումը ոչինչ նշանակեցին Հ.Յ. Դաշնակցութեան համար, որ օտարներու հրահանգով կ'անապարէր կատարուած իրողութիւն մը ստեղծել հարիւրաւոր զինեալ ոստիկաններու պաշտպանութեան տակ:

2.- Գահիրէի Եպիսկոպոսական Ժողովը Եւ Ստեղծումը Կիլիկեան Աթոռի Պաշտպանութեան Համախմբումին

20 Փետրուարի չարանենգ ընտրութենէն ետք պայքարը աւելի եւս սաստկացաւ: Հայ բարձրաստիճան եկեղեցականութիւնը գրեթէ ամբողջութեամբ, Տանն Կիլիկիոյ միաբանութեան մեծամասնութիւնը, Ռամկավար Ազատական Կուսակցութիւնը, Հնչակեանները, Անկուսակցական Հայերու Խմբակցութիւնները Լիբանանի եւ Սուրիոյ մէջ, բազմաթիւ

երիտասարդական, մշակութային եւ հայրենակցական միություններ, մէկ խօսքով ժողովուրդին ջախջախիչ մեծամասնությունը, մերժեցին ճանչնալ 20 Փետրուարին սարքուած ապօրէն ընտրութեան արդիւնքը եւ մէկ հոգիի պէս ոտքի կանգնեցան ի պաշտպանութիւն հայ եկեղեցւոյ միասնականութեան եւ Կիլիկեան Աթոռի զուտ կրօնական հանգամանքին պահպանման եւ անոր անկախութեան ու պայծառութեան:

Եւ մինչ Ամենայն Հայոց Հայրապետին գլխաւորութեամբ հայ Եպիսկոպոսական դասը հաւաքուեցաւ Գահիրէի մէջ ի միջի այլոց նաեւ իր դիրքը որոշելու համար 20 Փետրուարի ապօրինութեամբ ստեղծուած ցաւալի կացութեան նկատմամբ, ասդին, Պէյրութի մէջ, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Սուրիոյ եւ Լիբանանի Շրջանակին աշխատանքներով եւ Կեդրոնական Վարչութեանս համախոհութեամբ կազմակերպուեցաւ մեծ համագումար մը, որուն կը մասնակցէին Կիլիկեան թեմերու օրինապահ եւ Հայց. Եկեղեցւոյ առաքելութեան հաւատարիմ բոլոր կազմակերպութեանց ներկայացուցիչները: Այս համագումարն է որ պիտի ստեղծէր Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի Պաշտպանութեան Համախմբումը անուան տակ Հայց. Եկեղեցւոյ շահերուն պաշտպանութեան ջատագով բոլոր կազմակերպութեանց եւ տարրերուն միասնական ճակատը, որ իր ներկայացուցիչներով յարաբերութիւն կը պահէր Գահիրէի Եպիսկոպոսական Ժողովին հետ:

Նմանապէս, մինչ Եպիսկոպոսական Ժողովը ԹԵՐԻ եւ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ կը գտնէր 20 Փետրուարի ընտրութիւնը եւ կ'առաջարկէր կարգ մը պայմաններ անոր օրինական ճանաչում շնորհելու համար, բայց կոպիտ կերպով կը մերժուէր Զարեհ եւ Խորէն Եպիսկոպոսներուն կողմէ, ասդին, Կիլիկեան Աթոռի Պաշտպանութեան Համախմբումին մասնակցող բոլոր կազմակերպութիւնները, նախ անջատաբար, եւ ապա հաւաքաբար, պաշտօնապէս եւ հրապարակաւ կը յայտարարէին իրենց մերժումը ճանաչում շնորհելու Զարեհ Եպիսկոպոսի կաթողիկոսացման, յայտնելով իրենց վճռականութիւնը պայքարը շարունակելու օրինաւոր բոլոր միջոցներով, մինչեւ որ օրէնքը, իրաւունքն ու Հայց. Եկեղեցւոյ աւանդութիւնները յարգուին եւ Հայց. Եկեղեցւոյ միասնականութեան սպառնացող վտանգը խափանուի:

Կիլիկեան Աթոռի Պաշտպանութեան Համախմբումը կը ստեղծէր նաեւ իր վարչական լրիւ մեքանիզմը 4 թեմերուն մէջ: Այս Համախմբումին Կեդրոնական Վարչութիւնը, որուն նախագահն է սուրիոյ եւ Լիբանանի մեր Շրջանային Վարչութեան ատենապետ եւ Կեդրոնական Վարչութեանս անդամ Ընկեր Հրաչ Սեդրակեանը, համակարգեց ճակատին

պայքարը, կազմակերպեց միթինկներ, հաւաքոյթներ եւ ցոյցեր, մամուլին, եկեղեցական եւ պետական տեղական իշխանութեանց ներկայացուց իր պահանջները, ձեռնարկեց օրինական եւ դատական հետապնդումներու, ստեղծեց իր մեծածախս պիւտճէն եւ Լիբանանի մէջ ձեռնարկեց 20 Փետրուարի ապօրինի ընտրութեան դէմ բողոքի հանրագրութիւն մը, շուրջ 5000 ստորագրութիւններով, նման Սուրիոյ մէջ նախապէս կատարուածին:

3.- *Գաղտնի Բանակցութեանց Չախողութիւնը*

Ազգասէր այս տարրերու համախմբումին մղած պայքարը եղաւ հզօր եւ արդիւնաւոր, հակառակ իր առջեւ ցցուող ամէն կարգի խոչընդոտներու եւ ուղղակի արգելքներու: Դաշնակցութիւնն ու իր եկեղեցական խամաճիկները մատնուեցան կատարեալ անելի: Անոնք իրենց առջեւ գտան եկեղեցականութեան եւ Ժողովուրդին յարաճուն ընդդիմութիւնը: Անթիլիասը հետզհետէ մատնուեցաւ նիւթական դժուարութեանց՝ մեծ մասամբ կորսնցնելով Ժողովուրդին նուիրատուութիւններն ու նիւթական օժանդակութիւնը: Անոնք կորսնցուցին նաեւ օրինաւոր օծումի եւ ձեռնադրութեան ամէն կարելիութիւն:

Արդարեւ, Գահիրէի Եպիսկոպոսական Ժողովի հաշտարար առաջարկները կոպիտ կերպով մերժելէ ետք Հ.Յ. Դաշնակցութիւնն ու անոր կամակատար երեք եպիսկոպոսները, Խորէն, Չարեհ եւ Ղեւոնդ, անդրադարձան այն ահաւոր սխալին զոր գործած էին, ուստի պահ մը տատամսելէ ետք դիմեցին ծածուկ հնարքներու եւ ռազմավարութեանց, օգտուելու համար գոնէ Ամենայն Հայոց Հայրապետին ցուցաբերած հաշտարար ոգիէն: Անոնք փորձեցին նախ Երուսաղէմի Պատր. Տեղապահ Եղիշէ Արք.ի միջնորդութեամբ եւ սակայն միայն խաբուսիկ համաձայնութեան եւ յանձնառութիւններով ստանալ Ամենայն Հայոց Կաթողիկոսին ճանաչումը 20 Փետրուարի ապօրէն ընտրութեան, իսկ ներքնապէս ալ աշխատանք տարին, որպէսզի Անթիլիասի միաբան եպիսկոպոսները ընդունին կատարուած իրողութիւնը, ներքնապէս համաձայնութեան մը գան եւ մասնակցելով ապօրէն կաթողիկոսին օծման, օրինականացնեն Անթիլիասի գրաւումը:

Այս նպատակներուն հասնելու համար Չարեհ, Խորէն եւ Ղեւոնդ եպիսկոպոսներն ու իրենց դաշնակցական տէրերը, օժանդակ ունենալով քանի մը միամիտ ամերիկահայեր, գաղտնի բանակցութեանց մտան Անթիլիասի մեզի համախոհ եպիսկոպոսներուն հետ եւ պատրաստեցին ներքին համաձայնութեան մը նախագիծը, որուն ստորագրումն ու

գործադրությունը բնականաբար անդառնալի կերպով կատարուած իրողութեան մը առջեւ պիտի դնէր մեզ եւ Ամենայն Հայոց Հայրապետը:

Շնորհիւ մեր աշխատանքներուն, այս առժամեայ համաձայնագիրը վերջնական համաձայնութեան չվերածուեցաւ, որովհետեւ մեզի համար հիմնական հարցը նախ 1941-ի Կիլիկեան անվաւեր կանոնագրութեան կախակայումն էր, ինչպէս նաեւ համաձայնութեան մը պարագային անոր գործադրութեան դրուիլը կաթողիկոսական օծումէն առաջ: Անթիլիասի եպիսկոպոսները շուտով համոզուեցան թէ դաշնակցական կողմը կ'ուզէր նախ օրինաւոր օծում ապահովել մեր համախոհ եպիսկոպոսներուն մասնակցութեամբ: Հետեւաբար յայտնի էր թէ անգամ մը որ օծումը կատարուէր, մէկ կողմ պիտի նետէին եպիսկոպոսական համաձայնագիրը, մանաւանդ որ այդ համաձայնագիրը ինքը չէր պարունակէր կանոնագրական որեւէ ապահովութիւն իր գործադրութեան վերաբերեալ: Բաց աստի, համաձայնագիրը երբեք նկատի չէր ունենար Ամենայն Հայոց Հայրապետին համաձայնությունը, մինչդեռ մեզի համար երկու Աթոռներու ապագայ միասնականությունը այդ կերպով միայն կրնար գործօն իրականութեան վերածուիլ: Հետեւաբար մեր համախոհ եպիսկոպոսները մերժեցին ստորագրել այդպիսի համաձայնագիր մը, հրաժարելով մասնակցութիւն բերելէ նաեւ կաթողիկոսի օծման եւ ձեռնադրութեան: Նոյնպէս ձախողեցան դաշնակներու կամակատար երեք եպիսկոպոսներուն փորձերը: Անոնք առանց որեւէ գործնական յանձնառութիւն ստանձնելու, կը ջանային Ամենայն Հայոց Հայրապետին հաւանությունը ապահովել որպէսզի ան արտօնէր իր եպիսկոպոսներուն մասնակցությունը սարքուելիք օծման:

4.- Ազգային Ապօրէն Ժողովներ Եւ Միաբանական Օրինաւոր Ժողով

Այս փորձերու կատարեալ ձախողանքէն ետք, Խորէն, Չարեհ եւ Ղեւոնդ եպիսկոպոսները Դաշնակ ղեկավարներու բեմադրութեամբ սարքեցին Ազգային Ընդհանուր Ժողով, ընտրեցին ապօրէն Կեդրոնական Վարչութիւն մը, ինչպէս նաեւ քաղաքական եւ կրօնական ժողովներ: Այս կերպով անոնք կը ջանային եւ կը յուսային կոտրել ամէն ընդդիմութիւն, գործնապէս ձեռք առնել ամբողջ ազգային կեանքը եւ այդ ազգային գերազոյն իշխանութեանց հրահանգով օրինական պարտաւորութեան տակ դնել մեզ լռելու եւ մեր համախոհ եպիսկոպոսներն ու միաբանները հնազանդելու իրենց:

Եւ սակայն Դաշնակցությունն ու իր եկեղեցական կամակատարները կրեցին զօրաւոր հակահարուած մը, որմէ խուսափիլ կրցած էին ամիսներէ

ի վեր: Արդարեւ, խարդախութեամբ Կաթ. Տեղապահական Աթոռը գրաւող Խորեն Եպիսկոպոս բազմաթիւ անգամներ անտես առած էր Միաբանութեան օրինական պահանջները միաբանական ընդհանուր Ժողով գումարելու համար, եւ ինքնագլուխ կերպով կը վարէր վանքին գործերը: Բայց միաբանութիւնը աւելի երկար չէր կրնար հանդուրժել որ Կաթողիկոսարանի ներքին կանոնագրութիւնը տեսաբար անտեսուի Խորեն եւ Չարեհ Եպիսկոպոսներուն կողմէ, ուստի որոշեցին հաշիւ պահանջել Տեղապահէն: Խորեն եւ Չարեհ եպիսկոպոսներ բազմաթիւ ապարդիւն սպառնալիքներէ ետք պաշտօնանկ յայտարարեցին Դպրեվանքի Տեսուչ Դերենիկ Եպիսկոպոսը եւ մեզի համախոհ միւս միաբանները իրենց պաշտօններէն եւ կախակայման սպառնալիք ըրին այլոց: Բայց, հակառակ այս բոլորին, վայելելով Ժողովուրդին թիկունքն ու պաշտպանութիւնը, 22 եւ 23 Յուլիսին Միաբանութիւնը գումարեց իր Ընդհանուր Ժողովը, նախագահութեամբ Փառէն Եպիսկոպոսի: Ժողովի ներկայ էին Լիբանան, Սուրիա եւ Կիպրոս գտնուող 19 միաբաններէն 11-ը, որոնք միաձայնութեամբ ապօրինի հռչակեցին Չարեհ եւ Խորեն եպիսկոպոսներու հակականոնական որոշումները եւ կախակայումները: Նմանապէս պաշտօնանկ հռչակեցին Խորեն Եպիսկոպոսը Կաթ. Տեղապահութենէն, առժամեայ տեղապահ ընտրեցին Խաղ Արք. Աջապահեանը, իրենց պաշտօններուն վրայ հաստատեցին Դերենիկ Եպիսկոպոսն ու միւս միաբանները եւ ընտրեցին Կաթողիկոսարանի ներքին վարչութիւնը վարելու համար նոր Տնօրէն Ժողով մը: Միաբանութիւնը հրատարակեց նաեւ պաշտօնական հաղորդագրութիւն մը, վճռակամօրէն յայտարարելով թէ կը մերժէ ճանչնալ 20 Փետրուարի ապօրէն ընտրութեան արդիւնքը եւ Անթիլիասի միակ եւ վերին իշխանութիւն կը նկատէ Խաղ Արքեպիսկոպոսը:

Հակադաշնակցական համախմբումին համար մեծ յաղթանակ մըն էր ասիկա եւ զօրաւոր հարուած մը Դաշնակցութեան, իր եկեղեցական կամակատարներուն եւ անոնց բոլոր պաշտպաններուն դէմ: Բայց իրենց կատաղութեան եւ օրինական անգօրութեան մէջ երկու եպիսկոպոսները, փոխանակ ընդունելու օրէնքին արդար պարտադրանքը, Անթիլիաս հրաւիրեցին դաշնակցական ոճրագործներ, որոնցմէ շատեր ամիսներէ ի վեր արդէն որպէս պաշտօնեայ կը կերակրուէին Կաթողիկոսարանին մէջ, եւ իրենց աչքին առջեւ եւ դաշնակ ղեկավարներու հրամանատարութեան տակ խոշտանգել տուին իրենց հակակարծիք միաբանները, Կաթողիկոսարանը ներկելով անմեղ եկեղեցականներու արիւնով: Ու վախնալով ժողովուրդին արդար վրէժխնդրութենէն, Անթիլիաս հրաւիրեցին զինեալ պետական ուժեր եւ անոնց հսկողութեամբ եւ գործակցութեամբ կոտորել

տուին Կաթողիկոսարանի Դիւանատան, Տեսչարանին եւ տպարանին դռները, որոնք օրինաւոր կերպով փակուած էին իրենց առջեւ:

Այս դէպքերը հանդիսացան վերջնական խզման արթերը: Միաբանական Ժողովը օրինականապէս տէր կանգնեցաւ Անթիլիասի իշխանութեան: Շուտով անոր որոշումներուն յարեցան եւ զօրավիզ կանգնեցան իրեն Դամասկոսի թեմը, Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի Պաշտպանութեան Համախմբումին մասնակցող բոլոր կազմակերպութիւնները, մէկ խօսքով Կիլիկեան թեմերու եւ Կիլիկեան Միաբանութեան անդամներուն ջախջախիչ մեծամասնութիւնը: Ապա Ս. Էջմիածնէն հասաւ նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին եւս ճանաչումը միաբանական ժողովի որոշումներուն:

5.- Մեպտեմբեր 2-ի Ապօրէն Օծումը

Կատարեալ ձախողութեան մատնուելով Էջմիածնայ հետ բանակցութեան մտնելու իրենց խաբէական փորձերուն մէջ եւ վճռական մերժումին եւ ընդդիմութեանը հանդիպելով Կիլիկեան Միաբանութեան հաւատարիմ եպիսկոպոսներուն, դաշնակ ղեկավարութիւնը գրկուեցաւ իր ընտրեալին օծումին համար անհրաժեշտ թիւով եպիսկոպոսներու մասնակցութիւնը ապահովելու հնարաւորութենէն: Ուստի իր աշխարհական ու կղերական միջնորդներուն միջոցաւ ան ամէն կարգի կասկածելի հնարքներու դիմեց որպէսզի անհատաբար համոզէ մի քանի այլ եպիսկոպոսներ: Անոնք մասնաւորաբար ջանացին համոզել Երուսաղիմայ միաբան եպիսկոպոսներէն մի քանին, օգտուելով վանքին մէջ ստեղծուած կարգ մը տարակարծութիւններէ: Բացի պաշտօններէ, անոնք խոստացան նաեւ դրամական մեծ կաշառքներ, եւ սակայն բախեցան վերջնական մերժումի: Արդարեւ, եկեղեցապաշտպան տարրերու հետեւողական պայքարը այնքան վճռական էր որ ոչ մէկ եպիսկոպոս համարձակեցաւ ժողովրդային դատաստանին դէմ կենալ, միանալով դաւադիր երեք եպիսկոպոսներուն, Խորէնի, Չարեհի եւ Ղեւոնդի:

Այս աշխատանքներուն շրջանին էր որ կը հասնէր նաեւ Ամենայն Հայոց Հայրապետին հեռագիրը ուղղուած Լիբանանի Նախագահին, անոր ուշադրութիւնը հրաւիրելով Հայց. Եկեղեցւոյ մէջ ստեղծուած անբաղձալի կացութեան վրայ եւ խնդրելով որ գործադրութեան դրոշին միաբանական ժողովին որոշումները ի մասին Անթիլիասի օրինական իշխանութիւնը Խաղ Սրբազանի յանձնուելու:

Դժբախտաբար Վեհափառին այս հեռագիրը, ինչպէս նաեւ բազմաթիւ կազմակերպութիւններու, եկեղեցական եւ աշխարհական կարեւոր

անձնաւորութիւններու կողմէ՝ ղրկուած բողոքի բոլոր հեռագիրները մնացին ապարդիւն: Բայց Դաշնակցութիւնը զգալով որ ասով հանդերձ հարցը պիտի բարդանայ եւ անսալով իր օտար տէրերուն անմիջական թելադրութեան եւ հրահանգին, որոշեց նոր եւ անդարմանելի ապօրինութեան մը իսկ գինով կատարել կաթողիկոսական օծում եւ ձեռնադրութիւն, կատարուած իրողութեան առջեւ դնելու համար Անթիլիասի Միաբանութիւնը, հաւատացեալ ժողովուրդն ու Ս. Էջմիածինը: Հետեւաբար այդ պայմաններուն տակ է որ, եւ պաշտպանութեանը ներքեւ աւելի քան 500 զինեալ ժանտարմաներու եւ զաղտնի ոստիկաններու, 2 Սեպտեմբեր 1956-ին կատարուեցաւ Չարեհի այսպէս կոչուած կաթողիկոսական հակակաւոնական օծումն ու ձեռնադրութիւնը: Օծման կը մասնակցէին միայն երկու հայ եպիսկոպոսներ, Խորէն եւ Ղեւոնդ, մինչդեռ Օծման եւ Ձեռնադրութեան Կանոնը կը պահանջէր նուազագոյն 6-12 եպիսկոպոսներու մասնակցութիւնը: Այս արարողութեան մասնակցեցաւ նաեւ կասկածելի պայմաններու տակ ասորի եպիսկոպոս մը, այդ ձեւով անգամ մը եւս փաստելով թէ Անթիլիասի կաթողիկոսական ամբողջ տագնապը ստեղծուած էր օտարներու քաղաքական եւ կրօնական հովանաւորութեամբ, անմիջական օժանդակութեամբ եւ ազդու միջամտութիւններով, Անթիլիասի Կաթողիկոսական Աթոռին վրայ բազմեցնելու համար Դաշնակցութեան գործակատար եկեղեցական մը, այդ կերպով Անթիլիասը գրաւելու եւ որպէս կրօնական վերին իշխանութիւն եւ հեղինակութիւն զայն հակադրելու Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան, վերջնականապէս խզելով արտասահմանը հայրենիքին կապող հոգեկան կապերը:

6.- *Անթիլիասի Հերձուածը Եւ Մեր Բաժանումը*

Ինչպէս կը տեսնէք, Սիրելի Ընկերներ, 2 Սեպտեմբերին կատարուած հակակաւոնական օծումն ու ձեռնադրութիւնը ինքնաբերաբար Անթիլիասը վերածած են եկեղեցականօրէն հերձուածի մը եւ Կիլիկիոյ կաթողիկոսարանը քաղաքական գործունէութեան կեդրոնի մը, որուն ձգտումն է կրօնական եւ եկեղեցական հեղինակութեամբ ծառանալ Ս. Էջմիածնայ դէմ եւ արտասահմանի հայութիւնը հակադրել մայր հայրենիքին:

Այս հերձուածին տուեալները արդէն բացատրուեցան մեր այս շրջաբերականին սկիզբը. անոնք են.- 20 Փետրուարի ընտրութեան ապօրէն եւ 2 Սեպտեմբերի օծման հակակաւոնական ըլլալը, Չարեհ եպիսկոպոսի մերժուիլը որպէս կաթողիկոս Հայց. Եկեղեցւոյ բոլոր նուիրապետական աթոռներուն, եպիսկոպոսական դասուն, Անթիլիասի Միաբանութեան եւ համայն հաւատացեալ ժողովուրդին կողմէ: Նոյնպէս հերձուածի փաստեր

կը կազմեն Չարեհ Եպիսկոպոսի եւ իր համախոհներուն անպատկառ դիրքը Ս. Էջմիածնայ հանդէպ, անոնց ամբողջ հակաօրինական եւ հակականոնական գործունէութիւնը Անթիլիասի մէջ, եւ վերջապէս իրենց դաշնակցական տէրերուն մղած կատաղի եւ անսահմանօրէն անուանարկիչ պայքարն ու քարոզութիւնը Ամենայն Հայոց Կաթողիկոսին դէմ:

Այս պայմաններուն տակ, Կիլիկիոյ [Կաթողիկոսական Աթոռին պատկան- Վ.Դ.] ամբողջ հայ հաւատացեալ ժողովուրդը դրուած էր դառն եւ վտանգաւոր երկրնտրանքի մը առջեւ: Կամ այն է որ պիտի ընդունէր 2 Սեպտեմբերի օծումով կատարուած աղիտալի իրողութիւնը եւ հետեւաբար ենթարկուէր Դաշնակցութեան բացարձակ իշխանութեան, զոի դառնալով անոր ազգային ու քաղաքական արկածախնդրութեանց, եւ կամ պիտի վճռէր շարունակել իր պայքարը, մէկ կողմէ Անթիլիասը որպէս հերձուած մեկուսացնելով, եւ միւս կողմէ ինք ներքնապէս եւ օրինապէս կազմակերպուելով որպէս ինքնուրոյն եւ անկախ համայնք, հետագային վերստին ձեռք առնելով նաեւ Անթիլիասը:

Մեր կուսակցութիւնը եւ Կիլիկիոյ Կաթ. Աթոռի Պաշտպանութեան Համախմբումի մասնակցող բոլոր կազմակերպութիւններն ու Անթիլիասի օրինապահ միաբանութիւնը որոշեցին հետեւիլ այս երկրորդ, խիստ դժուարին եւ սակայն միակ ուղիղ ճամբուն, կազմակերպուիլ որպէս անջատ համայնք, ունենալ իրենց անկախ եկեղեցիներն ու անոնց կապուած հաստատութիւնները: Այս ուղղութեամբ ձեռք առնուած են արդէն օրինական եւ գործնական բոլոր քայլերը եւ աւարտած են նախապատրաստական գրեթէ բոլոր աշխատանքները: Նմանապէս այս շարժումին յարած են Սուրիոյ եւ Լիբանանի մէջ 7 եկեղեցիներ, երկուքը Պէյրութի մէջ, չորսը Դամասկոսի եւ Հալէպի մէջ: Պիքֆայայի նորակառոյց վանքը եւս կը գտնուի մեր համախոհ միաբաններուն ձեռքը, որ մեր առժամեայ կրօնական կեդրոնն է: Այս բոլոր եկեղեցիներուն մէջ պատարագի ընթացքին չի կատարուիր Չարեհ Կաթողիկոսի անուան յիշատակութիւնը:

Վճռական քայլերու դիմումը է նմանապէս օրինական գետնի վրայ: Քանի մը շաբաթէն կը յուսանք հազարաւոր ստորագրութիւններով դիմել պետական իշխանութեանց եւ պահանջել, ըստ սահմանադրական օրէնքի տրամադրութեանց, Անթիլիասի ներկայ իշխանութենէն բաժնուելու եւ անջատ համայնք կազմելու իրաւունքը:

Սիրելի Ընկերներ, Ժամանակագրական կարգով եւ ամփոփ գիծերու մէջ ներկայացուցինք Կիլիկիոյ Կաթողիկոսական տագնապին վերջին տխուր փուլերն ու իրադարձութիւնները, ինչպէս նաեւ եկեղեցապաշտպան մեր համախմբումին հետագայ որոշումներն ու ծրագիրները: Այստեղ

կը փափաքինք նաեւ մեր գնահատանքի խօսքը ուղղել բոլոր անոնց որոնք բարոյապէս, նիւթապէս եւ գործնական գետնի վրայ բաժին ստանձնեցին այս մեծ պայքարին կազմակերպման եւ ղեկավարման մէջ:

... Եթէ ներկայիս չկրցանք բացարձակ յաղթանակով մը պսակել մեր ազգային այս մեծ պայքարը, ատոր պատճառը պէտք է փնտռել միայն ու միայն արտաքին ուժերու եւ միջամտութեանց մէջ: Արդարեւ, եթէ չկրցանք չարիքը խափանել հիմնովին, Անթիլիասը գերծ պահելով դաշնակ բռնազրաւումէն, ատոր պատճառը այն է որ պայքարը կը մղուէր անհաւասար ուժերու միջեւ եւ անհաւասար միջոցներով: Մենք ունէինք մեզի հետ հայ ժողովուրդը, անոր առողջ, հայրենասէր ու եկեղեցասէր զանգուածներուն բարոյական աջակցութիւնը, մարդկային ու հայ եկեղեցական օրէնքներուն բարոյական ուժը միայն, մեր սեփական կորովն ու պայքարի ու աշխատանքի օրինական միջոցները: Սակայն այս ամբողջ ուժը անբաւարար էր կռուելու համար մեր թշնամիին դէմ, որովհետեւ ան, Հ.Յ. Դաշնակցութիւնը կործնած էր գրեթէ ամբողջութեամբ բիրտ ուժի, ապօրինութեան եւ մասնաւորաբար օտար ուժերու վրայ, առատօրէն եւ ազատօրէն վայելելով օտար պետութեանց նիւթական ու բարոյական անսահման օժանդակութիւնները: Միայն օտար բազմաթիւ ազդու միջամտութիւններ է որ Սուրիոյ եւ Լիբանանի պետական շրջանակներուն մօտ, ինչպէս նաեւ մսխումը հարիւր հազարաւոր ոսկիներու զանոնք հասցնել տուին այս արդիւնքին: Դաշնակ ղեկավարութիւնը այս գործին մէջ եւս ցոյց տուաւ թէ ինք դարձած է օտարին գործակալ միայն եւ հայ արտասահմանի մէջ կուսակցական մենաստիքութիւն հաստատելու իր ձգտումը ուրիշ բան չէ եթէ ոչ արտասահմանի հայութիւնը քաղաքական շուկայի անարգ ապրանքի վերածելու իր տարիներու վատ երազը:

... Հայ եկեղեցին, հայ ժողովուրդին հետ շատ դժնդակ ու ճգնաժամային պահեր ապրած է անցեալին, բայց միշտ յաղթական գնացքով շարունակած է իր առաքելութիւնը: Ոչ մէկ կասկած որ անբարոյ քաղաքականութեան պարտադրած այս օրերն ալ պիտի անցնին եւ մենք պիտի ողջունենք հայ ժողովուրդին յաղթանակը օտար եւ օտարացած հայերու ստրկացուցիչ ուժին դէմ, շնորհիւ հայու աննկուն կամքին եւ անընկճելի ոգիին, որովհետեւ նիւթական ուժը որքան ալ մեծ ըլլայ եւ բռնամիջոցները որքան ալ ազդու, անոնք չեն կրնար յաղթել եւ պարտութեան մատնել ՈԳԵԿԱՆ ուժն ու արդարութիւնը...:

Ժ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (6-11 Հոկտեմբեր 1957)

Ռամկավար Ազատական Կուսակցութեան Ժ. Ընդհանուր Պատգամա-

Լորական Ժողովս անխախտ կը մնայ իր վաղեմի դիրքին վրայ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին նկատմամբ, գնահատելով բարոյական, ոգեկան եւ ազգային այն մեծ ուժը, զոր կը ներկայացնէ Հայց. Եկեղեցին եւ անոր Մայր Աթոռը՝ Ս. Էջմիածինը, իբրեւ ազգապահպանման ազդակ մանաւանդ գաղութահայութեան համար: Անոր դիրքն ու վարկը բարձր պահելու կ'աշխատի եւ զայն կը պաշտպանէ զինք հարուածել ու տկարացնել ձգտող ուժերուն դէմ:

Պատգամաւորական Ժողովս կը հաւատայ նաեւ Կիլիկեան Կաթողիկոսութեան գոյատեւման օգտակարութեան, որքան ստեն որ ան կը մնայ Հայաստանեայց Եկեղեցւոյ ամբողջականութեան մէջ, ազգապահպանումի եւ ազգային-եկեղեցական գործերու կազմակերպումին իբր ազդակ, եւ առ այդ զօրավիգ կը կանգնի անոր:

Ընդհանուր Պատգամաւորական Ժողովս դառնութեամբ կ'արձանագրէ Անթիլիասի ներկայ անջատողական եւ հատուածական շարժումը, անհրաժեշտ կը նկատէ միասնականութեան վերահաստատումը եւ այդ նպատակաւ տարուած պայքարը, իստիւ դատապարտելով նուիրապետական կանոններու ոտնահարումը, անջատողական ձգտումներն ու արարքները: (Ծրջաբերական, 21 Նոյեմբեր 1957)

ԺԱ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (27-30 Սեպտեմբեր 1961)

Ռ.Ա.Կ.ի Պատգամաւորական ԺԱ. Ընդհ. Ժողովը անխախտ կը մնայ իր բարեացակամ դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ Ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Եւ կ'որոշէ շարունակել իր ճիգերն ու պայքարը Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներն ու հեղինակութիւնը պահպանելու համար, իբրեւ կենսական պայման Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան:

Այս կապակցութեամբ Ժողովս կ'որոշէ մասնաւոր հանդիպումներով բացատրել Վեհափառ Հայրապետին թէ Անթիլիասի հերձուածին ստեղծման շարժառիթները ազգային-քաղաքական են իրենց բնոյթով: Ուրեմն Էական է գաղութահայութեան ներքին միութեան եւ ապահովութեան համար, որ Վեհափառը, հերձուածին վերադարձը շահելու որեւէ հիմնական ծրագիր պատրաստելու, կամ ձեռնարկ կատարելու յաջորդ փորձերուն մէջ, նախ ծանօթանայ մեր կուսակցութեան կեդրոնի ղեկավարներու տեսակէտներուն: (10 Հոկտեմբեր 1961 թուակիր շրջաբերական)

18 Յունիս 1963 թուակիր շրջաբերական

Անցեալ Փետրուարի կէսերէն, այսինքն Անթիլիասի աթոռակալ Չարեհ Սրբազանի վախճանումէն ի վեր, երեւութապէս նոր հանգրուան մը արձանագրուեցաւ ազգային-եկեղեցական ծանօթ տագնապին զարգացման մէջ: Եւ որովհետեւ յաջորդող ամիսներու իրադրութիւնը չէր թոյլատրեր նոր բան աւելցնել այդ առնչութեամբ մեր դրկած 23 Փետրուար թուակիր թիւ 6 Շրջաբերականին բովանդակութեան վրայ, եւ ոչ ալ կը թոյլատրէր պարզորոշ կեցուածքի մը բանաձեւումը, ակամայ ստիպուեցանք ցարդ լուռ մնալ այդ մասին: Կը կարծենք թէ այս պահուս բաւական յստակացած է կացութիւնը, եւ ուստի նպատակայարմար կը գտնենք ամփոփ կերպով անդրադառնալ ներկայ իրադրութեան եւ մեր պատուարժան շրջանային վարչութիւններուն փոխանցել մեր տեսակէտներն ու թելադրութիւնները:

Մեր 23 Փետրուար թուակիր շրջաբերականին մէջ արդէն յայտնած էինք թէ, մեզի բարեկամ կազմակերպութիւններու եւ երեւելի անկուսակցական ազգայիններու հետ խորհրդակցաբար յարմար տեսած էինք Չարեհ աթոռակալին անակնկալ մահուան առթիւ յարգալիք վերաբերում ցուցաբերել, եւ թաղման ու սուգի օրերուն մամլոյ պայքարի մէջ չմխրճուիլ, ի մէջ այլոց յաչս օտարներուն բարձր պահելու համար մեր ժողովուրդին վարկը, որ ծանր հարուած ստացած էր արդէն՝ դաշնակցականներու լրտեսական եւ արկածախնդրական գործունէութեանց պատճառաւ:

Նոյն ատեն, հաւատարիմ՝ իրարհասկացողութեան եւ համագործակցութեան մեր սկզբունքներուն, եւ միշտ կողմնակից՝ անարդարութեանց եւ ապօրինութեանց բարձումով Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռի բազմամեայ տագնապին համերաշխական մէկ լուծումին, մենք եւ մեր բարեկամները համաձայն եղանք որ նոր փորձ մը կատարուէր Անթիլիասի մոլորեալները ճիշդ ճամբուն բերելու, եւ Կիլիկեան Աթոռի գահակալը ընտրելու օրինաւոր եւ կանոնաւոր պայմաններու մէջ: Մանաւանդ Ս. Էջմիածնի ընդհանրական Հայրապետին կամքն ալ այս էր:

Պէտք է ըսել թէ տեսակցելու եւ բանակցելու փափաքը յայտնուեցաւ, անուղղակի միջոցներով անշուշտ, Անթիլիասի իշխանաւորներուն կողմէ, հաւանաբար օտարներու կողմէ իրենց վրայ եղած ճնշումներու իբր արդիւնք: Սակայն նկատի ունենալով որ շատ ուշ յայտնուեցաւ այդ փափաքը, այսինքն այսպէս կոչուած «կաթողիկոսական ընտրութենէն» - 5 Մայիսէն - հազիւ շաբաթ մը առաջ, մեր տպաւորութիւնը այն եղաւ թէ, Հ.Յ.Դ.-ի Պիւրօն եւ Անթիլիասի կղերական ղեկավարութիւնը նպատակադրած էին՝ օրօրելու վարքագծով ժամանակ շահիլ եւ «կատարուած իրողութիւն» մը հրամցնել ժողովուրդին: Ուստի խուսափեցանք կարթը բռնել, եւ խմբագ-

րականներով մէկ կողմէ յստակ ըրինք հաշտութեան պայմանները, եւ միւս կողմէ շեշտեցինք թէ կը սպասէինք դրական քայլի ու գործի, փոխանակ խօսքի ու սնամէջ խոստումի:

Տեղին է նշել թէ մեր Հնչակեան բարեկամները մեր գիտակցութեամբ տեսակցեցան «Կաթ. Տեղապահ» Խորէն Եպիսկ.ի եւ դաշնակ ներկայացուցիչներու հետ եւ լաւատես զեկոյցով մը հաղորդեցին մեզի իրենց բանակցութեան արդիւնքը: Խօսակցութիւնները շարունակուեցան այսպէս կոչուած «Մայիս 12-ի օծումէն» առաջ եւ ետք, եւ տարակոյս չկայ թէ Խորէն Եպս. եւ իր դաշնակցական բարեկամները յայտնեցին հաշտուելու պատրաստակամութիւն եւ ըրին անորոշ խոստումներ: Սակայն մենք համոզիչ չգտանք իրենց խոստումները, ընդհակառակը՝ հաստատեցինք թէ ոչ մէկ կարելոր կամ անհրաժեշտ զիջում կ'ընէին, եւ յօժար չէին լրջօրէն սրբագրելու անցեալի իրենց թերացումներն ու գործած ապօրինութիւնները:

Մեզի համախոհ տարրերուն հետ խորհրդակցելէ ետք՝ բանաձեւեցինք հաշտութեան մեր *նորագոյն պայմանները*, որ ահա.- Ա. Անթիլիաս առանց այլեւայլի կը ճանչնայ Ս. Էջմիածնայ նախամեծարութիւնը եւ գերակայ դիրքը, Բ. Անթիլիասի աթոռակալը Էջմիածնական բռնագրաւուած թեմերը վերադարձնելու շուրջ կը տեսակցի եւ կը համաձայնի Ամենայն Հայոց Հայրապետին հետ, Գ. Անթիլիաս կ'ընդունի օրինապահ միաբաններու վերադարձը եւ անոնց կը վստահի պաշտօններ, Դ. Կը վերակազմակերպուին ազգային կեդրոնական եւ թեմական վարչութիւնները, որոնց մէջ օրինապահ հայութիւնը կ'ունենայ իր ներկայացուցիչները:

Այս պայմաններուն շուրջ, ահա, տեղի ունեցան եւ տեղի կ'ունենան նոր տեսակցութիւններ: Նշենք ի միջի այլոց թէ՛ մէկ անգամ միայն մեր սեփական ներկայացուցիչները տեսակցեցան Անթիլիասի նոր աթոռակալին հետ, եւ իրենց տպաւորութիւնը լաւատես չէր՝ ինչ կը վերաբերի բանակցութեանց յաջող ելքին:

Ոմանք ունէին յոյսը, թէ այս տեսակցութիւնները արդիւնաւոր կ'ըլլային, եւ երբ Վեհ. Վազգէն Կաթողիկոսը Երուսաղէմ այցելէր - Յունիս 5-ին- Խորէն Աթոռակալ կրնար փութալ անոր մօտ եւ պաշտօնականացնել հաշտութիւնը եւ վերջ տալ տագնապին: Այժմ Վեհ. Կաթողիկոսը իր Երուսաղէմ այցելութիւնը յետաձգած է յառաջիկայ Հոկտեմբերին, իսկ Խորէն Եպս.ի հետ բանակցութիւնները տակաւին դրական արդիւնք չեն տուած:

Կացութիւնը այս է ուրեմն.- թէեւ հաշտութիւն եւ համերաշխութիւն ակնկալելու լուրջ եւ հիմնական պատճառներ չկան, բայց բանակցութիւնը չէ խզուած եւ փորձը կը շարունակուի: Խորէն Եպիսկոպոսի ընտրութեան

եւ օծման մեր կողմէ՝ ճանաչումի հարց գոյութիւն չունի այս պահուս. կը մնանք վերապահ եւ ամուր՝ մեր սկզբունքներուն եւ տեսակէտներուն վրայ: Կը պահանջենք վերոյիշեալ նուագագոյն պայմանները՝ ճանչնալու եւ հանդուրժելու համար: Միւս կողմէ, ներկայիս կը խուսափինք պայքարէ եւ քարոզչական յարձակումէ, որպէսզի մարդկօրէն ամբողջ կարելին փորձած ըլլանք՝ փարատելու համար ազգային-եկեղեցական մեծ տագնապը, որ կ'ալեկոծէ մեր գաղութները...:

29 Հոկտեմբեր 1963 թուակիր շրջաբերական

Հեռագրական գործակալութեանց լուրերէն եւ թերթերէն իմացաք արդէն անշուշտ, թէ Երուսաղէմի մէջ ողջագոյութեան Մայր Աթոռի եւ Անթիլիասի գահակալները՝ «Սիրոյ եւ համերաշխութեան» մթնոլորտի մը մէջ: Եւ որոշ շրջանակներու ու որոշ թերթերու կողմէ փորձ կ'ըլլայ ձգելու այն տպաւորութիւնը, թէ «պատմական այս հանդիպումով» վերահաստատուած կ'ըլլայ Հայց. Եկեղեցւոյ միասնականութիւնը եւ լուծուած կ'ըլլայ ազգային-եկեղեցական տագնապը:

Կանխելու համար ուրեմն հաւանական սխալ հետեւութիւններ, յարմար կը տեսնենք կատարելու կարգ մը ճշդումներ եւ յայտնելու կարգ մը իրողութիւններ:

Հանրաձայնօթ իրողութիւն է, որ մեր Կուսակցութիւնը միշտ կողմնակից եղած է իրարհասկացողութեան ու հաշտութեան, անընդհատ ջատագոված է բանակցութեանց ճամբով ազգային-եկեղեցական տագնապի լուծման բոլոր լուրջ փորձերը, - բայց միայն փոխադարձ զիջումներու սկզբունքով, միայն որոշ ու յստակ պայմաններով, միայն անարդարութեանց եւ ապօրինութեանց բարձումով: Եւ ասիկա այն մտահոգութեամբ՝ որ այլապէս իրագործուած հաշտութիւն մը խորքին մէջ ամուր ու տրամաբանական հաշտութիւն պիտի չըլլար, այլ պիտի հանդիսանար ցոյց ու ձեւակերպութիւն միայն:

Արդ, դժբախտ իրողութիւնը այն է, որ Վեհ. Վազգէն Կաթողիկոս Անթիլիասի նոր գահակալին ճանաչում չնորհեց առանց որեւէ պայմանի, առանց անկէ զիջումներ ու յստակ խոստումներ կորզելու: Նոյնքան դժբախտ իրողութիւն է, որ Անիկա այդ որոշումը առաւ ինքնազուլիս: Հակառակ մեզի եւ մեր բարեկամներուն տրուած հաւաստիացումներուն, թէ առանց մեր գիտակցութեան ու հաւանութեան՝ այդպիսի կարելոր քայլ մը պիտի չառնուէր, Վազգէն Հայրապետը մեզ դրաւ կատարուած իրողութեան առջեւ: Չառաւ մեր կարծիքն ու խորհուրդը, ոչ ալ հնչակեաններուն, ոչ ալ Տանն Կիլիկիոյ օրինապահ միաբանութեան անդամներուն, ոչ ալ

Կիլիկիոյ թեմի ծանօթ անկուսակցական անձնաւորութիւններուն,- այլ խորհրդակցեցաւ միայն ամերիկահայ եւ այլ քանի մը ազգայիններու եւ եկեղեցականներու հետ, ինչպէս Հ.Բ.Ը. Միութեան նախագահին եւ իր մի քանի գործակիցներուն, Էջմիածնական քանի մը եպիսկոպոսներու հետ եւայլն, որոնք ոչ մէկ անմիջական կապ ունին Կիլիկեան Թեմին հետ: Մեզի համար անըմբռնելի է անշուշտ այս գործելակերպը, բայց նկատի ունենալով Ամենայն Հայոց Կաթողիկոսին քրիստոնէական բարձր ոգին, պարկեշտութիւնը եւ հայրապետական բարեմտութիւնը, կը խորհինք թէ անիկա քրիստոնէական գերագոյն փորձ մը եւս ուզեց կատարել՝ յուսալով որ բարութեամբ կը յաղթէ չարին:

Կը մնայ մաղթել որ այդ փորձը դրական արդիւնք տայ: Ներկայիս արձանագրուածը զգացական յաջողութիւն մըն է պարզապէս: Վեհ. Վազգէն Կաթողիկոս ճանաչում չնորհած է Խորէն Կաթողիկոսին (°), իսկ այս վերջինը ընդունած է Էջմիածնի «Նախամեծար Աթոռ» ըլլալը: Անդին առկախ ու լուծելի կը մնան բուն տարակարծութիւնները, լուրջ վեճերը.- ա/ Բռնագրաւուած Էջմիածնական թեմերու հարցը, բ/ Օրինապահ միաբանութեան խնդիրը, եւ գ/ Կիլիկեան Թեմի ազգային-եկեղեցական ժողովներու անկանոնութեանց եւ այդ ժողովներէն ներս դաշնակ ապօրինի մենատիրութեան փշոտ հարցերը:

Երուսաղէմի ողջագործումը կը նկատենք ուրախատիւք քայլ մը՝ պայմանաւ որ անոր հետեւին դրական լուծումներ: Ցարդ եղածը հաշտութիւն մըն է, ոչ մէկ կարելոր տարակարծութիւն հարթուած է: Մինչեւ բարւոք լուծումներու ձեռք ձգուիլը՝ մեր խանդավառութիւնը կ'ըլլայ շատ զուսպ: Կը մնանք վերապահ դիրքի վրայ, սպասելով որ Ամենայն Հայոց Հայրապետը ջանայ այս «հաշտութիւնը» վերածել հիմնաւոր իրարհասկացողութեան մը: Գիտենք թէ այս վայրկեանին այդ ճիգն է, որ կ'ընէ Վազգէն Կաթողիկոսը:

Այս խնդրին շուրջ եթէ նորութիւններ ունենանք նոր շրջաբերականով մը կ'իմացնենք, եւ կը յստակացնենք մեր վերաբերումն ու կեցուածքը:

Յետ այսու մեր մամուլը հարկադրաբար պիտի ճանչնայ Անթիլիասի աթոռակալին «Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ» տիտղոսը:

26 Մարտ 1964 թուակիր շրջաբերական

Երուսաղէմի «պատմական» կոչուած ողջագործումէն ճիշդ հինգ ամիս ետք, հիմա, անշուշտ տեղին ու նպատակայարմար է անդրադառնալ այդ իրադարձութեան հետեւանքներուն, ինչպէս նաեւ ազգային-եկեղեցական ներկայ կացութեան:

Գաղտնիք չէ ոչ ոքի, թե 1963 Հոկտեմբեր 26-ի Վազգեն եւ Խորեն Կաթողիկոսներու սաղիմական հանդիպումին եւ ողջագուրումին նկատմամբ մեր խանդավառութիւնը զուսպ էր եւ ոչ անխառն, քանի մտահոգիչ պայմաններու մէջ էր որ տեղի ունեցաւ այդ ողջագուրումը: Բնական է, անիմաստ էին այդ առթիւ գործածուած «հաշտութիւն», «համաձայնութիւն», «իրարհասկացողութիւն» եւ նման այլ եզրեր, որովհետեւ պարզապէս գոյութիւն չունէին ոչ բանակցութիւն եւ ոչ ալ հաշտութիւն: Լաւագոյն պարագային՝ կարելի էր «ողջագուրում» որակել եղածը, ինչպէս Խորեն Կաթողիկոս ինք եւս շեշտեց «Վոյս աֆ Ամերիքայի» ձայնասփռեալ իր լուսաբանութեան միջոցաւ: Ոչ մէկ համաձայնութիւն եւ ոչ մէկ հարցի կարգադրութիւն:

Եւ արդէն տարբեր չէր կրնար ըլլալ՝ քանի տարօրինակ պայմաններու մէջ տեղի ունեցան հանդիպումն ու ողջագուրումը: Ի միջի այլոց Կիլիկեան թեմի հաւատացեալ եւ օրինապահ ժողովուրդի ազգային-եկեղեցական ճակատագիրը տնօրինելու բնոյթն ունեցող «հաշտութիւնը» կատարուեցաւ առանց նկատի ունենալու այդ ժողովուրդին զգացումները եւ անոր դեկավար տարրերուն տեսակէտները: Առանց խորհրդակցութեան, նոյնիսկ առանց իմաց տալու: Միւս կողմէ, առանց այլեւայլի առ ոչինչ նկատուեցան Գահիրէի 1956 Մարտի եպիսկոպոսական պատկառելի ժողովին որոշումները, եւ անտեսուեցան հաշտութեան մը տրամաբանական պայմաններուն մասին Էջմիածնասէր եւ հայրենասէր մամուլին շատ յստակ եւ յաճախ կրկնուած մեկնաբանութիւնները:

Մէկ խօսքով, դժբախտաբար, առանց պայմանի անձնատուութիւն էր Երուսաղէմի մէջ տեղի ունեցածը, եւ այդ պատճառով ալ՝ մեզի համար կարելի չէր մտահոգութիւններ չունենալ եւ վերապահութիւններ չյայտնել: Նկատի ունենալով մեր ամբողջական նուիրումը Մայր Աթոռին եւ խոր յարգանքը Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա.-ի հանդէպ, մենք սքօղեալ ձեւով արտայայտեցինք մեր առարկութիւններն ու մտավախութիւնները:

Մենք ցուցաբերեցինք այդպիսի կեցուածք՝ հակառակ մեր վերապահութիւններուն եւ մեր դիտած եւ տեսած սայթաքումներուն: Որոշեցինք չխանգարել ենթադրական «համանուագը»: Տեսանք թէ տարիներու մեր գործակիցները, Հնչակեանները, սկսան հեռանալ մեզմէ եւ մտածել դաշնակ-հնչակ իրարհասկացողութեան մասին, նոյնիսկ գոհանալով բոլորովին երկրորդական եւ երրորդական աթոռներով ազգային ժողովներէ ներս, բայց եղանք «շրջահայեաց» ու զուսպ: Տեսանք նոյնպէս թէ մեզի հետ գործակցող անկուսակցական անձնաւորութիւններ, ազդուած ու տարուած

խաբուսիկ «հաշտութենէն», անհարկի փութկոտութեամբ ուզեցին մերձենալ Անթիլիասի աթոռակալին եւ իշխանութեան, սակայն համբերեցինք, ու գոհացանք արձանագրելով «հաշտութեան» ամլութիւնը: Մենք ականատես եղանք նոյնիսկ այն զարմանալի երեւոյթին, որ զիրենք «գտարին հայրենասէրներ» նկատող ձախակողմեան տարրեր⁵¹ Հոկտեմբեր 26-ի ողջագործումին մէջ տեսան «հայ ժողովուրդի քաղաքական վերամիաւորման սաղմնաւորում»: ու *Զարթօնքի* մէջ պատշաճ պատասխանը տուինք իրենց Պէյրութի եւ Փարիզի թերթերուն նման արտայայտութեանց:

Գիտէինք մենք թէ գալիք դէպքերը մեզի իրաւունք պիտի տային, որովհետեւ նկատի առնելով Դաշնակցութեան անցեալը, ներկայ ծրագիրները, մտայնութիւնն ու գործելակերպը, կարելի չէր ակնկալել որ ան եւ անոր ենթակայ Անթիլիասը բարեփոխուէին, գոջային ու վերադառնային ողջմտութեան ու ճշմարիտ ազգասիրութեան ուղիներուն: Այսպէս ամիսները իրարու յաջորդեցին, սիրալիրութեան կեղծ արտայայտութիւնները շարունակուեցան, խոստումները փարիսեցիաբար կրկնուեցան, բայց վէճերն ու տարակարծութիւնները փաստօրէն չհարթուեցան, առկախ հարցերը բնաւ չլուծուեցան, մտայնութիւնը մնաց նոյնը, եւ ընդհակառակը Անթիլիաս ձեռք նետեց Մարսիլիոյ թեմին եւս:

Իրապաշտ պէտք է ըլլանք հաստատելու, թէ անցնող հինգ ամիսներուն ընթացքին ոչ մէկ խնդիր իր լուծումը գտաւ: Ա.- Անթիլիաս կը շարունակէ ուրանալ Ս. Էջմիածնի գերագահութիւնը եւ գերակայութիւնը: Բ.- Անթիլիաս ոչ միայն միտքէն չ'անցնէր վերադարձնել Էջմիածնական բռնագրաւուած Թեմերը, այլեւ ներկայիս կը գրաւէ Մարսիլիոյ Թեմը, եւ կը մտադրէ ձեռք ձգել ուրիշ Թեմեր եւս: Գ.- Անթիլիաս ոչ իսկ նուազագոյն չափով ցանկութիւն կը յայտնէ լուծելու միաբանական հարցը: Կաթողիկոսարանը եւ դպրեվանքը կը շարունակեն հանդիսանալ դաշնակցական միջնաբերդեր եւ հակահայաստանեան ու հակաէջմիածնական մտայնութեան կեդրոններ: Դ.- Անթիլիաս ի սպառ կը մերժէ վերակազմակերպել Կիլիկեան Թեմի ապօրինի ազգային իշխանութիւնները, եւ չ'ուզէր անոնց տալ համազգային բնոյթ: Դաշնակցական մենատիրութիւնը կը մնայ միապաղաղ, հակառակ Պէյրութի ազգային իշխանութեանց մէջ Հնչակեաններուն հրամցուած երեք անկարելւոր աթոռներուն: Ինչ խօսք՝ որ հիմա ամէն ոք կ'անդրադառնայ թէ այդ երեք աթոռները ժողովուրդին աչքին նետուած փոշի են, եւ նոյն ատեն կոպիտ ու ձախաւեր փորձ մը՝ Հնչակեանները ընդմիշտ հեռացնելու Ռամկավարներէն:

⁵¹ Ակնարկութիւնը կը վերաբերի յատկապէս հայ համայնավարներուն:

Երուսաղեմի «ողջագուրումը» դաշնակ ղեկավարության եւ Անթիլիասի կղերականության համար արժեք ունի լոկ իբրեւ ՃԱՆԱԶՈՒՄ: Եւ ասուկէ զատ՝ ոչինչ, եթէ ոչ առանց պայմանի անձնատուութիւն: Դաշնակ ղեկավարութիւնը միտք չունի նուագագոյն չափով իսկ զիջելու իր մենատիրութենէն, ցանկութիւն չունի հաշտուելու եւ համերաշխելու, եւ նպատակ չունի համագործակցելու հայրենասէր տարրերու հետ: Եւ իր մտայնութեան, մտադրութեանց եւ գործելակերպին խորհրդանշական նորագոյն արտայայտութիւնը կը հանդիսանայ Մարսիլիան:

Եթէ 1963 Հոկտեմբեր 26-ի վաղորդայնին միտքերու մէջ շփոթութիւն կար եւ որոշ չափով ալ ըմբռնելի էր այդ շփոթութիւնը, հիմա, հինգ ամիս ետք, հինգ երկար ամիսներու դառն փորձառութենէն ու Մարսիլիոյ պերճախօս դասէն ետք, այլեւս ներելի չեն շուարումն ու տատամսումը, միամտութիւնն ու դիւրահաւանութիւնը: Անխուսափելի էր որ հիասթափութիւնը զար եւ սկսած է ան զալ ու արագօրէն տարածուիլ: Այսօր յուսախար են ու հիասթափ բարեմիտ անկախ հայ անձնաւորութիւններ, յուսախար են Հնչակեանները, յուսախար է ամբողջ օրինապահ Ժողովուրդը, որ կը զիտակցի թէ դարձեալ շահագործուած են իր բարի տրամադրութիւններն ու հաշտասիրութիւնը:

Այս պայմաններուն մէջ մեզի անկ է դարձեալ առաջնորդութիւն տալ իրաւ եկեղեցասէր ու ազգասէր հաւաքականութիւններուն, - համախմբել զանոնք, գործի լծել եւ ընդդիմանալ դաշնակ-անթիլիասական նոր ոտնձգութիւններուն ու գայթակղալից գործունէութեանց: Հոն՝ ուր նպատակայարմար է՝ կրաւորական ընդդիմադրութիւն հիմակուհիմա, - հոն՝ ուր պէտք է՝ գործօն ընդդիմադրութիւն, ինչպէս Դամասկոս, Եգիպտոս, Մարսիլիա, Յունաստան եւ այլուր:

Անհրաժեշտ է ամուր մնալ մեր ազգանուէր դիրքերուն վրայ: Անհրաժեշտ է յուսաբանել հանրային կարծիքը: Անհրաժեշտ է հաւաքական ճիգով խափանել չարիքին տարածումը, պառակտումին խորացումը:

Մեր շրջանակներու վարիչ մարմիններուն եւ մամուլի մեր օրկաններուն վրայ պարտք կ'իյնայ, ուրեմն, պարզել ու մերկացնել դաշնակցական-անթիլիասական կեղծիքը, փարատել շփոթութիւնը միտքերէն ու վերահամախմբել բարի կամեցողութիւն ունեցող բոլոր տարրերը, որպէսզի սփիւռքի հայութիւնը չմոլորի եւ չիյնայ ազգավնաս արկածախնդրութեանց մէջ:

ԺԲ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (6-10 Մարտ 1965)

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ԺԲ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովն կը հաստատէ թէ Ռ.Ա. Կուսակցութիւնը անխախտ

կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ՝ Էջմիածնայ Մայր Աթոռին հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Եւ կ'որոշէ շարունակել իր ճիգերը եւ պայքարը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներն ու հեղինակութիւնը պահպանելու համար, իբրեւ կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան:

Նկատելով որ Երուսաղէմի մէջ 1963 Հոկտեմբերին կատարուած ողջագործումը, Ամենայն Հայոց Հայրապետին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսին միջեւ, չկրցաւ իրագործել մեր եւ սփիւռքի հայութեան բաղձացած եկեղեցական միութիւնը, եւ նկատելով որ հակառակ Կիլիկիոյ Կաթողիկոսին խոստումներուն՝ շարունակուեցան Անթիլիասի պառակտիչ ոտնձգութիւնները Յունաստանի, Մարսիլիոյ եւ այլ Էջմիածնական թեմերու մէջ:

Նկատելով նաեւ Անթիլիասի Աթոռին ապօրէն միջամտութիւնները իր սեփական թեմերու վարչական կեանքին մէջ՝ անոնց սահմանադրական իրաւունքներուն ոտնահարումով՝ Պատգմ. Ժողովս անհրաժեշտ կը նկատէ որ մեր կուսակցութիւնը շարունակէ իր կազմակերպուած ջանքերն ու պայքարը՝ հայ առաքելական համայնքները պաշտպանելու համար Անթիլիասի Աթոռին բռնազրաւիչ արարքներուն դէմ, եւ կարելի ամէն միջոցով աշխատիլ՝ Անթիլիասի Աթոռը եւ անոր թեմերը ազատելու համար Հ.Յ. Դաշնակցութեան տիրակալութենէն: (Երջաբերական, 25 Մարտ 1965)

ԺԳ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (22-25 Հոկտեմբեր 1969)

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ԺԳ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը հաստատէ թէ Ռ.Ա. Կուսակցութիւնը անխախտ կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ՝ Էջմիածնայ Մայր Աթոռին հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Ուստի ան կ'որոշէ շարունակել մեր ճիգերը եւ պայքարը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներուն եւ հեղինակութեան պահպանումին համար, իբրեւ կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան:

Նկատելով որ Երուսաղէմի մէջ 1963 Հոկտեմբերին կատարուած ողջագործումը, Ամենայն Հայոց Հայրապետին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսին միջեւ, չկրցաւ իրագործել մեր եւ սփիւռքի հայութեան բաղձացած եկեղեցական

միությունը, եւ նկատելով որ հակառակ Կիլիկիոյ Կաթողիկոսին խոստումներուն՝ շարունակուեցան Անթիլիասի պառակտիչ ոտնձգութիւնները Յունաստանի, Մարսիլիոյ եւ այլ Էջմիածնական թեմերու մէջ.

Նկատելով նաեւ Անթիլիասի Աթոռին ապօրէն միջամտութիւնները իր սեփական թեմերու վարչական կեանքին մէջ՝ անոնց սահմանադրական իրաւունքներուն ոտնահարումով՝ ԺԳ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը անհրաժեշտ կը նկատէ որ մեր կուսակցութիւնը շարունակէ իր կազմակերպուած ջանքերն ու պայքարը՝ հայ առաքելական համայնքները պաշտպանելու համար Անթիլիասի Աթոռին բռնագրաւիչ արարքներուն դէմ, եւ կարելի ամէն միջոցով աշխատիլ՝ Անթիլիասի Աթոռը եւ անոր թեմերը ազատելու համար Հ.Յ. Դաշնակցութեան տիրակալութենէն: (Երջաբերական, 10 Նոյեմբեր 1969)

ԺԴ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (18-22 Հոկտեմբեր 1972)

Ռամկավար Ազատական Կուսակցութեան ԺԴ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը հաստատէ թէ Ռ.Ա. Կուսակցութիւնը անխախտ կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ Ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ՝ Էջմիածնայ Մայր Աթոռին հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Ուստի ան կ'որոշէ շարունակել մեր ճիգերը եւ պայքարը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներուն եւ հեղինակութեան պահպանումին համար, իբրեւ կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան:

Նկատելով որ Երուսաղէմի մէջ 1963 Հոկտեմբերին կատարուած ողջագործումը, Ամենայն Հայոց Հայրապետին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսին միջեւ, չկրցաւ իրագործել մեր եւ սփիւռքի հայութեան բաղձացած եկեղեցական միութիւնը, եւ նկատելով որ հակառակ Կիլիկիոյ Կաթողիկոսին խոստումներուն՝ շարունակուեցան Անթիլիասի պառակտիչ ոտնձգութիւնները Յունաստանի, Մարսիլիոյ եւ այլ Էջմիածնական թեմերու մէջ.

Նկատելով նաեւ Անթիլիասի Աթոռին ապօրէն միջամտութիւնները իր սեփական թեմերու վարչական կեանքին մէջ՝ անոնց սահմանադրական իրաւունքներուն ոտնահարումով՝ ԺԴ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը անհրաժեշտ կը նկատէ որ մեր կուսակցութիւնը շարունակէ իր կազմակերպուած ջանքերն ու պայքարը՝ հայ առաքելական համայնքները պաշտպանելու համար Անթիլիասի Աթոռին բռնագրաւիչ արարքներուն դէմ, եւ կարելի ամէն միջոցով աշխատիլ՝ Անթիլիասի Աթոռը եւ անոր

թեմերը ազատելու համար Հ.Յ. Դաշնակցության տիրակալությունն է: (Շրջաբերական, 30 Յունիս 1973)

27 Մայիս 1977 թուակիր շրջաբերական

Ներկայ շրջաբերականով կ'ուզենք անդրադառնալ Կիլիկեան Աթոռի Աթոռակից-Կաթողիկոսի ընտրության, որ տեղի ունեցավ Կիրակի, 22 Մայիս 1977-ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, մասնակցութեամբը նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի երկու պատուիրակներուն, յանձինս՝ Արեւմտեան Եւրոպայի կաթողիկոսական պատուիրակ եւ ֆրանսահայոց առաջնորդ Գերշ. Տ. Սերովբէ Արք. Մանուկեանի եւ Անգլիոյ հայոց հոգեւոր հովիւ Գերշ. Տ. Ներսէս Եպիսկ. Պոզապալեանի: Աթոռակից-Կաթողիկոս ընտրուեցաւ Ամերիկայի Արեւմտեան թեմի Կիլիկեան Կաթողիկոսութեան առաջնորդ Գարեգին Արք. Սարգիսեան:

... Ազգային կեանքէն ներս Մեծ Եղեռնի 50-ամեակէն յետոյ որոշ բարելաւում յառաջանալով, եւ մասնաւորաբար 60-ամեակի ոգեկոչումի ձեռնարկներուն առթիւ, որոնք բազմաթիւ գաղութներու մէջ տեղի ունեցան միասնաբար, մեր ազգային երեք կուսակցութեանց - ՌԱԿ, ՍԴՀԿ եւ ՀՅԴ - միջեւ ստեղծուած գործակցութիւնը ազգային դատի հետապնդումին համար, ու ապա՝ Լիբանանի քաղաքացիական անողորմ կռիւներուն առթիւ լիբանանահայութեան սպառնացող տագնապալի կացութիւնը դիմագրաւելու առնչութեամբ այդ կազմակերպութեանց միջեւ կայացած համագործակցութիւնը, առիթներ հանդիսացած էին որ անոնց վերին մարմինները ունենան խորհրդակցական հանդիպումներ, որոնց ընթացքին օրակարգի գլխաւոր հարցերը կը կազմէին Ազգային-Եկեղեցական տագնապին լուծումը, բռնագրաւուած Հայաստանեայց Եկեղեցւոյ թեմերու հարցը եւ հայոց հողային դատի հետապնդումը՝ համազգային միասնական ճիգերով:

Գոհունակութեամբ կը տեղեկացնենք մեր պատկան մարմիններուն, թէ սոյն հանդիպումները եղած են դրական, կողմերը սկզբունքային համաձայնութիւն գոյացուցած ըլլալով առաջին հերթին լուծել Ազգային-Եկեղեցական տագնապին պատճառ հանդիսացող կէտերը - կցեալ տեսնել՝ Վազգէն Վեհափառին կողմէ ներկայացուած եւ հինգ կէտերէ բաղկացած այս հարցերը⁵²:

⁵² Ահաւասիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսին առաջարկած հինգ կէտերը.-

Ա. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը ընդունի կանոնական եւ պատմութեամբ նուիրագործուած Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան սկզբունքը հոգեւոր վերին իշխանութեանը ներքեւ Ամենայն

Միւս կողմէ, Խորէն Կաթողիկոսի 23 Յունուար 1977 թուակիր նամակ-հրաւերին ի պատասխան, որպէսզի Ս. Էջմիածինը երկու պատուիրակներով մասնակցի աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան եւ օծման արարողութեանց, Վազգէն Վեհափառ համամիտ գտնուած էր ընդառաջելու՝ պայմանաւ որ ընդունուի Ամենայն Հայոց Հայրապետութեան գերագահութեան սկզբունքը եւ Անթիլիասի կանոնագրութենէն ջնջուին 32-րդ եւ 33-րդ յօդուածները⁵³, առաջարկելով նաեւ՝ ընտրութեան եւ օծումին

Հայոց Կաթողիկոս-Պատրիարքի, որ եղած է միշտ եւ կը մնայ միակ գերագոյն պետը եւ գլուխը ամբողջ Հայ Եկեղեցւոյ եւ անոր նուիրապետութեան, որուն հաւասարագոր այլ եկեղեցական իշխանութիւն ընդունելի չէ Հայ Եկեղեցւոյ կառոյցին մէջ:

Բ. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը յարգէ Հայ Եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներու իրաւասութեանց սահմանները եւ առանց Ամենայն Հայոց Կաթողիկոսի համաձայնութեան եւ կարգադրութեան եպիսկոպոս կամ այլ հոգեւոր պաշտօնեայ չորկէ՝ Միւրիոյ, Լիբանանի եւ Կիպրոսի Թեմերէն դուրս, Թեմեր, որոնցմէ Լիբանանի եւ Դամասկոսի Թեմերը Անթիլիասին յանձնուեցան 1929-ին Երուսաղէմի պատրիարքութեան կողմէ, որով չեղեալ համարուին Անթիլիասի Կիլիկեան Աթոռի նոր կանոնագրութեան 32-րդ եւ 33-րդ յօդուածները:

Գ. Անթիլիասի Կիլիկեան Աթոռը յանձն առնէ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրաւասութեան վերադարձնել Իրանի, Յունաստանի եւ Միացեալ Նահանգաց Թեմերը եւ Գարաքասի համայնքը:

Դ. Անթիլիասի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը ընդունի սկզբունքը որով միջեկեղեցական եւ միջազգային մակարդակի կազմակերպութիւններուն եւ համաժողովներուն Հայաստանեայց Եկեղեցին ներկայացուի Ամենայն Հայոց Կաթողիկոս-Պատրիարքի կողմէ նշանակուած անձերով կամ պատուիրակութիւններով, մասնակցութեամբը նաեւ Կիլիկեան Աթոռի ներկայացուցիչներուն:

Ե. Անթիլիասի Կիլիկեան Աթոռը յարգէ սկզբունքը որ Ամենայն Հայոց Կաթողիկոս-Պատրիարքի պատժական կամ կարգալուծման վճիռները վերջնական են եւ պարտադիր Հայ Եկեղեցւոյ նուիրապետական բոլոր Աթոռներուն եւ Թեմերուն համար:

⁵³ Հերձուածէն ետք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կանոնագրութեան մէջ մուծուած 32-րդ եւ 33-րդ յօդուածները «կը կանոնականացնէին» Էջմիածնապատկան թեմերու յափշտակումը եւ ի նախագունէ կ'օրինականացնէին ծաւալապաշտական աշխատանքները, իրենց մէջ խտացնելով հետեւեալ տրամադրութիւնները.-

Յօդ. 32.- Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Առաջնորդական Թեմերը հետեւեալներն են.-

յաջորդող մէկ տարւոյն ժամանակամիջոցին ալ՝ բանակցութիւններով եւ փոխադարձ հասկացողութեամբ լուծել մնացեալ վիճելի հարցերը:

Հաճոյքով կ'արձանագրենք որ վերոյիշեալ հանդիպումներու ընթացքին Դաշնակցութիւնը պաշտօնապէս յանձնառու եղած է խնդրոյ առարկայ երկու յօդուածներու ջնջումին, եւ թէ աթոռակից-կաթողիկոսի ընտրութեան առթիւ Խորէն Կաթողիկոս Անձնապէս, ինքը՝ ընտրեալ Աթոռակից-Կաթողիկոս Գարեգին Արք. Սարգիսեան, ինչպէս նաեւ Եկեղեցական Պատգամաւորական Ժողովը պաշտօնապէս բանաձեւ որդեգրած եւ ընդունած են այդ յօդուածները ջնջել Անթիլիասի կանոնագրութենէն, եւ սիրալիր գործակցութեան նոր էջ մը բանալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ:

Այս յուսատու իրականութեամբ եւ լաւ օրերու ակնկալութեամբ կը մտղենք՝ որ Գարեգին Բ. Կաթողիկոս համերաշխութեան եւ համագործակցութեան հնարաւորութիւն ստեղծէ, հեռու հատուածական եւ մենատիրական ձգտումներէ, կարելի դարձնելով որ առկախ մնացած եկեղեցական-ազգային հարցեր շուտով լուծելէ ետք համազգային ճիգերով նուիրուինք մեր անժամանցելի դատին հետապնդումին:

Յուսադրիչ այս լուրերը հաղորդելէ ետք հարկ է մատնանշել, թէ երեք կուսակցութիւններու միջեւ բանակցութիւնները կը շարունակուին, ու անոնց յաջող ելքէն վերջ միայն պիտի ստորագրուի գործակցութեան

- 1.- Բերիոյ Թեմ.
- 2.- Դամասկոսի Թեմ.
- 3.- Լիբանանի Թեմ.
- 4.- Կիպրոսի Թեմ.
- 5.- Հիւսիսային Ամերիկայի Թեմ.
- 6.- Յունաստանի Թեմ.
- 7.- Թեհրանի Թեմ.
- 8.- Ատրպատականի Թեմ.
- 9.- Իրանա-Հնդկաստանի Թեմ.

Յօդ. 33.- Այլ Թեմեր եւս կրնան կազմուիլ կամ միանալ Կիլիկիոյ Կաթողիկոսական Աթոռին, իրենց ազգային-եկեղեցական պատասխանատու մարմիններու գրաւոր դիմումին վրայ, ուղղուած Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսին: Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովը ընդունելէ ետք կատարուած դիմումը, որոշումը կը հաղորդէ թեմին: Դիմումնագիրը կը ներկայացուի Ազգային Ընդհանուր Ժողովին առ ի հաստատումն, որմէ ետք Վեհափառ Կաթողիկոսը, Կոնդակով մը կը հռչակէ զայն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմ:

համաձայնագիր մը: Ցարդ կատարուածը կաթողիկոսներու միջեւ սիրալիր գործակցութիւնը վերահաստատելու առաջին քայլն է միայն. կան տակաւին, ինչպէս ըսինք, առկա խարցեր, որոնց բարոյք լուծումը կրնայ դժուարութեանց բաղխի: Ասկէ գատ կան մանաւանդ ազգային իշխանութիւնները միասնաբար կազմակերպելու, ազգային դատի հետապնդման եղանակները ճշդելու լուրջ հարցերը, որոնց շուրջ համաձայնութիւն գոյացնելը երկար ժամանակի ու ճիգի կարօտ է, եւ դժուար է ներկայիս լուստեսութեամբ նայիլ անոնց յաջող ելքին:

ԺԵ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (30 Սեպտեմբեր-3 Հոկտեմբեր 1977)

ա. Ռամկավար Ազատական Կուսակցութեան ԺԵ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը հաստատէ թէ Ռ.Ա. Կուսակցութիւնը անխախտ կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ Ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ՝ Էջմիածնայ Մայր Աթոռին հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Ուստի ան կ'որոշէ շարունակել մեր ճիգերը եւ պայքարը՝ Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներուն եւ հեղինակութեան պահպանումին համար, իբրեւ կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան:

բ. Նկատելով որ քսանմէկ տարիներէ ի վեր տիրող երկփեղկումը Հայաստանեայց Եկեղեցիէն ներս՝ Կիլիկեան Աթոռի ապօրինի եւ վնասակար ընթացքով՝ դժբախտաբար տակաւին չէ գտած իր լուծումը,

Եւ նկատելով որ Կիլիկիոյ Աթոռակից Գարեգին Բ. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման առիթով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հ.Յ. Դաշնակցութեան պատասխանատու ներկայացուցիչներուն կողմէ յայտնաբերուած տրամադրութիւնները՝ հարթելու տարակարծութիւնները երկու Աթոռներու միջեւ՝ կը յառաջացնեն նոր կացութիւն,

ԺԵ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը վերապահ ըլլալով հանդերձ Կիլիկեան Աթոռին եւ Հ.Յ. Դաշնակցութեան յայտնաբերած համերաշխական ոգիին անկեղծութեան, կը յանձնարարէ նորընտիր Կեդրոնական Վարչութեան շարունակել բանակցութիւնները՝ Վազգէն Հայրապետի պայմաններուն ընդունումովն ու գործադրութեամբը յառաջացնելու Հայաստանեայց Եկեղեցւոյ այս միութիւնը: (Շրջաբերական, 3 Դեկտեմբեր 1977)

ԺԶ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (10-14 Ապրիլ 1982)

ա.- Ռամկավար Ազատական Կուսակցութեան ԺԶ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը կը հաստատէ թէ Ռամկ. Ազատ. Կուսակցութիւնը անխախտ կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին, զայն նկատելով բարոյական, հոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ ժողովուրդի միասնականութիւնը պահպանելուն մէջ՝ Էջմիածնի Մայր Աթոռի հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Ուստի ան կ'որոշէ շարունակել մեր ճիգերը եւ պայքարը Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներուն եւ հեղինակութեան պահպանումին համար, իբրեւ կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան:

բ. Նկատելով որ 1956-էն ի վեր տիրող երկփեղկումը Հայաստանեայց Եկեղեցիէն ներս՝ Կիլիկեան Աթոռի ապօրինի եւ վնասակար ընթացքով դժբախտաբար տակաւին չէ գտած իր լուծումը,

եւ նկատելով որ Կիլիկիոյ Աթոռակից Գարեգին Բ. Կաթողիկոսի ընտրութեան եւ օծման առիթով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Հ.Յ. Դաշնակցութեան պատասխանատու ներկայացուցիչներուն կողմէ յայտնաբերուած տրամադրութիւնները՝ հարթելու տարակարծութիւնները երկու Աթոռներու միջեւ՝ կը յառաջացնեն նոր կացութիւն,

ԺԶ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը վերապահ ըլլալով հանդերձ Կիլիկեան Աթոռին եւ Հ.Յ. Դաշնակցութեան յայտնաբերած համերաշխական ոգիին անկեղծութեան, կը յանձնարարէ նորընտիր Կեդրոնական Վարչութեան շարունակել բանակցութիւնները՝ Վազգէն Հայրապետի պայմաններուն ընդունումովն ու գործադրութեամբը յառաջացնելու Հայաստանեայց Եկեղեցւոյ այս միութիւնը: (Շրջաբերական, 12 Մայիս 1982)

ԺԷ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողով (29 Յունիս-2 Յուլիս 1988)

Կուսակցութեանս ԺԷ. Ընդհ. Պատգմ. Ժողովը՝

ա.- Կը հաստատէ թէ Կուսակցութիւնս անխախտ կը մնայ իր հաւատարմական դիրքին վրայ հանդէպ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ՝ զայն նկատելով բարոյական, ոգեկան եւ ազգային կենսական գործօն մը Հայ ժողովուրդի միասնականութիւնը պահպանելու մէջ՝ Էջմիածնի Մայր Աթոռին հոգեւոր եւ մշակութային առանցքին շուրջ: Ուստի ան կ'որոշէ շարունակել ճիգերը Ամենայն Հայոց Հայրապետութեան նուիրապետական իրաւունքներուն եւ գերազահութեան պահպանումին համար՝ իբրեւ

կենսական պայման Հայց. Եկեղեցւոյ միութեան, պատրաստ ըլլալով սակայն քննադատելու եկեղեցական իշխանութեանց մէջ ծառայող անհատներ, որոնք անպատասխանատու ընթացք կը ցուցաբերեն մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին գերագոյն շահերուն հանդէպ:

բ. Անհրաժեշտ կը գտնէ գործօն մասնակցութիւն բերել ծխական ու թեմական մարմիններու մէջ, ինչպէս նաեւ ապահովել աշխարհականներու աջակցութիւնը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ կանոնագրութեան պատրաստութեան մէջ՝ անեղծ պահելու Հայց. Եկեղեցւոյ ժողովրդավար նկարագիրը:

գ. Նկատելով որ 1956-էն ի վեր տիրող երկփեղկումը Հայց. Եկեղեցիին մէջ՝ Կիլիկեան Աթոռի ապօրինի եւ վնասաբեր ընթացքով՝ դժբախտաբար տակաւին չէ գտած իր լուծումը, Կուսակցութիւնս կը շարունակէ ապօրինի նկատել եւ քննադատել Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ոսոնձիգ ներկայութիւնն ու ծաւալողական քաղաքականութիւնը պատմականօրէն Մայր Աթոռին ենթակայ թեմերէն ներս, եւ այդ տագնապը վերացնելու նպատակով Կեդրոնական Վարչութեան կը վերապահէ Կիլիկեան Աթոռի իշխանութեանց հետ յարաբերութիւն մշակելու իրաւունքը: Նոյնպէս, վերապահ ըլլալով հանդերձ Կիլիկեան Աթոռին եւ Հ.Յ. Դաշնակցութեան յայտնաբերած համերաշխական ոգիին անկեղծութեան նկատմամբ՝ նորրոնսիր Կեդրոնական Վարչութեան կը յանձնարարէ շարունակել բանակցութիւնները՝ Ամենայն Հայոց Հայրապետին դրած ծանօթ հինգ պայմաններուն ընդունումովն ու գործադրութեամբը յառաջացնելու Հայց. Եկեղեցւոյ միութիւնը:

դ. Երուսաղէմի Ս. Աթոռին ծանօթ տագնապին առնչութեամբ, ճիշդ կը գտնէ անցնող ժամանակաշրջանին Կեդրոնական Վարչութեան քննադատական ու դատապարտիչ դիրքը, որ կը համապատասխանէ մեր Ժողովուրդի բարոյական սկզբունքներուն եւ շահերուն, Պատրիարք Եղիշէ Արք. Տէրտէրեանին եւ Ս. Աթոռի նախկին դիւանապետ Ծահէ Արք. Անէմեանին ծանր յանցանքները նկատելով յամենայնի դատապարտելի: Սակայն մեկնելով Հայց. Եկեղեցւոյ պայծառութեան եւ հայկական արժէքներու պահպանման գծով Ս. Աթոռին առաքելութիւնը անխափան շարունակելու անհրաժեշտութենէն՝ Ժողովը Կեդրոնական Վարչութեան կը յանձնարարէ թիկունք կանգնիլ Երուսաղէմի Ս. Աթոռին կրթա-դաստիարակչական ու մշակութային գործունէութեան՝ մանաւանդ հոգածու ուշադրութիւն ընծայելով Ժառանգաւորաց վարժարանին: (Շրջաբերական, 24 Յուլիս 1988)

